

Ռեյ Բրեդբերի

Ֆարենհայթ

45°

ՈՒՅ ԲՐԵՂԸՐԻ



ՉԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

<https://l915.info>

RAY BRADBURY
FAHRENHEIT
451

A NOVEL

Translated from English by
LUSINE HAROYAN

*Fahrenheit 451 —
The temperature at which
book paper catches
fire and burns*



ՌԵՅ ԲՐԵԴԲԸՐԻ

ՖԱՐԵՆՀԱՅԹ 451

ՎԵՍ

*Թարգմանությունն անգլերենից՝
ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՅԱՆԻ*

*Ֆարենհայթ 451.
այն ջերմաստիճանը,
որում թողթը
բռնկվում է և այրվում*



ՀՏԴ 821.111(73)-31 Բրեդբորի
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Բ 900

Բրեդբորի Ռ.

Բ 900 Ֆարենհայթ 451: Վեպ/ Ռ. Բրեդբորի: Թարգմանությունն
անգլերենից՝ Լուսինն Հարոյանի.— Եր.: «Զանգակ» հրատ.,
2021.— 208 էջ:

Վեպի իրադարձությունները ծավալվում են ապագայում, երբ ամե-
րիկյան հասարակության մեջ իշխող մտայնությամբ գրքերը մարդկանց
դժբախտության աղբյուր են, և դրանք անխնա կրակի պետք է մատ-
նել: Թաքստոցներում պահվող փոքրաթիվ գրքերը հայտնաբերվում ու
հրապարակայնորեն ոչնչացվում են հատուկ այդ աշխատանքի համար
ստեղծված հրկիզողների ջոկատի կողմից: Հրկիզող Գայ Մոնթագն ու
նրա կինը՝ Միլդրեդը, ապրում են ժամանցի ու զվարճանքի, հեռուստա-
տեսությամբ քարոզվող սնամեջ հարաբերությունների թմբիլի մեջ մինչ
այն պահը, երբ Մոնթագը որոշում է փրկել ու կարդալ գրքերը:

Փախուստն անհոգի ու անմիտ իրականությունից մտածելու սովոր-
ույթին վերադառնալու միակ ճանապարհն է: Մոնթագը լքում է քա-
ղաքը, որտեղ արդեն իսկ պատերազմ է սկսվել: Գետը նրան տանում է
դեպի երկրի խորքը, որտեղ նրան դիմավորում են «գիրք-մարդիկ»:

ՀՏԴ 821.111(73)-31 Բրեդբորի
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

Առաջին հրատարակությունը՝ 2016 թ.
ISBN 978-9939-68-451-2

© 1953, renewed 1981 by Ray Bradbury
© Zangak-97 LLC (Armenian Editioq), 2016
© «Զանգակ-97» ՍՊԸ (հայերեն հրատ.), 2016

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Սույն հրատարակության որևէ հատված
չի կարող վերարտադրվել մեխանիկական,
էլեկտրոնային, լուսապատճենահանման,
տեսագրման և այլ եղանակներով՝ առանց
հրատարակչի գրավոր համաձայնության:

Այս մեկը երախտագիտությամբ՝
Դոն Քոնգոլոնին

Եթե քեզ տողանի թուղթ տան,
գրի՛ր վրան հակառակ ուղղությամբ:

Խուան Ռամոն Խիմենես

Մ Ե Կ

Սալամանդր¹ <https://1915.info>

Այրելը հաճույք էր պատճառում:

Յուրահատուկ հաճույք էր տեսնել՝ ինչպես է կրակը լափում իրերը, սևացնում, այլակերպում դրանք: Բռունցքների մեջ սեղմած փողոթակի արույրե ծայրը հսկա պիթոն էր, որի երախից թունավոր նավթ էր ժայթքում աշխարհի վրա. արյունը խփում էր գլխին, ձեռքերն ինչ-որ հրաշքով վերածվել էին խմբավարի ձեռքերի, որոնք կյանքի էին կոչում բոցավառման ու հրկիզման բոլոր սիմֆոնիաները, ոչնչացնում պատմության հնոտիքն ու փոշիացնում ածխացած ավերակները: Աչքերին իջած 451 խորհրդանշական թիվը կրող սաղավարտը յուրատեսակ հանդարտություն էր հաղորդում հայացքին, թեև աչքերն անթաքույց փայլում էին այն մտքից, թե ինչ էր հետևելու: Մի մատնազարկով շրխկացրեց բռնկիչը. տունը ցնցվեց կրակի ամենակուլ բոցերի մեջ, որոնցից շառագունեց իրիկնային երկինքը: Մեծ քայլերով մտավ թվացյալ լուսատուիկների պարսի մեջ: Հին օրերի զվարճանքը վերապրելու մեծ ցանկություն արթնացավ մեջը. կաչուն քաղցրավենիքը խրել փայտիկի վրա ու մտցնել հնոցը, հիմա, երբ

¹ ԱՄՆ հրշեջ ծառայության պատմության մեջ «Սալամանդր» անունով է հիշատակվում 1881 թ. սևամորթ կամավորների նախաձեռնությամբ հիմնադրված հրշեջ ծառայությունը, պաշտոնական անվանումը՝ «Սալամանդր հրշեջ ընկերություն»:

Այս և հետագա ծանոթագրությունները թարգմանչինն են:

աղավնաթև գրքերի վերջին թևաբախությունները մեռնում էին նախագավթում և տան առջև փռված մարգագետնում, երբ բուցեղեն մրրիկի մեջ մոխրանում էին նրանց դողդոջուն թերթերը, տրվում ծխախառն քամու հոսանքին, փռշիանում հեռվում:

Մոնթազի դեմքին դաժան հեգնական ժպիտ հայտնվեց. այդպես ժպտում են բոցերից խուսափող խանձված դեմքերով մարդիկ:

Գիտեր՝ երբ վերադառնար հրկիզողների կայան, ինքը՝ խանձված, մրաթաթախ դեմքով կրակապաշտ մոզը, գուցե աչքով աներ հայելուց իրեն նայող սեփական կերպարանքին: Ավելի ուշ՝ անկողին մտնելիս, մթության մեջ կզգար դեմքի մկանների մեջ դեռևս սեղմված ջղաձիգ ժպիտը: Այն երբեք չէր հեռանում դեմքից... այդ ժպիտը... չէր հիշում, թե այն երբևէ անհետացած լիներ իր դեմքից:

Սև բզեզի գույն ունեցող սաղավարտը փայլեցրեց և կախեց հանդերձասրահում, կողքին խնամքով կախեց հրակայուն բաճկոնը: Հաճույքով ցնցուղ ընդունեց, հետո սուվելով, ձեռքերը գրպանները դրած, անցավ կայանի վերնահարկով և հարթակի բաց անցքին հասնելուն պես կտրուկ վար սահեց: Վերջին պահին, երբ զգաց, որ վտանգն անխուսափելի էր, ձեռքերը հանեց գրպաններից և բրոնզագույն ձողից բռնվելով՝ ներքնահարկի բետոնածածկ հատակին կրունկներով դիպչելուց մի վայրկյան առաջ ճռինչով կասեցրեց իր անկումը:

Դուրս եկավ կայանից. կեսգիշեր էր: Փողոցով քայլեց դեպի մետրոյի ստորգետնյա կայարանը: Օդի մղումով ընթացող գնացքն անաղմուկ սահեց—անցավ գետնուղու՝ ամբողջովին յուղած փողրակով և տաք օդի ուժեղ հոսանք արձակելով՝ նրան դուրս բերեց դեպի քաղաքի արվարձաններից մեկը տանող բաց դեղնավուն, սալիկապատ շարժասանդուղքի մոտ:

Մինչ վերընթաց շարժասանդուղքին կանգնած՝ սուլում էր, ինքն էլ չզգաց, թե ինչպես հայտնվեց գիշերային քաղաքի լուսության մեջ: Առանձնապես չմտորելով էական որևէ

բանի մասին՝ քայլեց դեպի փողոցի անկյունը: Նախքան կհասներ շրջադարձին, այնուամենայնիվ, դանդաղեցրեց քայլերը. ասես անհայտից եկած ինչ-որ քամի խաղաց դեմքին, ասես ինչ-որ մեկն իր անունը տվեց:

Արդեն մի քանի օր էր, որ աստղակաթ գիշերով դեպի տուն քայլելիս այս շրջադարձին նույն անորոշ զգացողությունն էր ունենում: Նրան թվում էր, թե իր թեքվելուց մի վայրկյան առաջ արդեն ինչ-որ մեկը եղել էր անկյունում: Օդն այնպիսի յուրօրինակ խաղաղությամբ էր լիցքավորված լինում, ասես ինչ-որ մեկը անվրդով սպասել էր այնտեղ և իր գալուց մի վայրկյան առաջ ստվեր էր դարձել՝ իրեն իր անմարմին տիրոյթ թողնելու համար: Գուցե ռունգերը որսացին օծանելիքի թույլ բույրը, գուցե ձեռքի փերի ու դեմքի մաշկը զգաց, թե ինչպես ջերմաստիճանը մի քանի վայրկյանում տասն աստիճանով բարձրացավ մթնոլորտի այն հատվածում, որտեղ քիչ առաջ ինչ-որ մեկը կանգնած էր եղել: Անկարելի էր հասկանալ: Ամեն անգամ, երբ շրջադարձի մոտ պետք է թեքվեր, ճերմակ, ոլորուն մայթին ոչ ոք չէր լինում: Միայն մի անգամ՝ գիշերը, ինչ-որ ստվեր անէացավ մարգագետնում, նախքան կհասցներ տարորոշել՝ ինչ էր տեսածը:

Բայց այժմ՝ այս երեկո, նա քայլերը դանդաղեցրեց այնքան, որ գրեթե կանգ առավ շրջադարձին, թեև վեցերորդ զգայարանով արդեն շրջանցել էր այն. ինչ-որ թույլ շշնջյուն էր լսել: Գուցե ինչ-որ մեկի շնչառությոնն էր, կամ ինչ-որ մեկի զուսպ ներկայությամբ լիցքավորված ճղը տատանվեց:

Շրջադարձի մոտ թեքվեց:

Լուսնի լույսով ողողված մայթից քամին տերևները քշում էր այնպես, որ թեթև քայլվածքով աղջիկն անշարժության պատրանք էր թվում: Տպավորություն էր ստեղծվում, թե քամու տերևախառն հոսանքն էր նրան առաջ մղում, մինչ նա գլխահակ հետևում էր, թե ինչպես էին կոշիկների քթերը ցաքուցրիվ անում քամու բերանն ընկած տերևները: Կաթնագույն ու նուրբ դեմքին մեղմ քաղց կար, հայացքն անխոնջ հե-

տաքըքրասիրությամբ շոյում էր իրեն շրջապատող ամեն բան: Թեթև զարմանքը չէր լքում դեմքը. սև աչքերն այնպես էր սևեռում աշխարհին, որ որևէ շարժում չէր վրիպում նրանցից: Ճերմակ զգեստը շրջուն էր արձակում: Երբ քայլում էր, Մոնթագին թվում էր, թե լսում է նրա ձեռքերի շարժումը, ահա որսաց նաև անսահման փոքր հնչյունը՝ նրա դեմքի ճերմակ դողը, երբ զգաց, որ ընդամենը մի քայլ է հեռու մայթին կանգնած տղամարդուց:

Մեղմ շրջունով նրանց վրա չոր տերևների անձրև տեղաց: Աղջիկը կանգ առավ՝ անակնկալի եկած, և թվում էր՝ ընկրկելու փորձ կանի, սակայն նա կանգնել, զննում էր Մոնթագին իր սև, կայծկլտուն և այնքան կենդանի աչքերով, որ նրան թվաց, թե ինքն ինչ-որ զարմանահրաշ բան էր ասել: Սակայն նա ընդամենը հասցրել էր «ողջույն» բառն արտաբերել, և մինչ աղջիկը կախարդված նայում էր իր հագուստի պատկերանշաններին՝ թևքի սալամանդրին և կրծքի փյունիկին, շարունակեց խոսել:

— Դե, իհարկե, Դուք մեր նոր հարևանուհին եք, այնպես չէ՞:

— Դուք պետք է որ,— նա հայացքը բարձրացրեց նրա մասնագիտական խորհրդանշաններից,— հրկիզողը լինեք:— Աղջկա ծայնը նվաղեց:

— Այդ ինչ տարօրինակ կերպով ասացիք:

— Ես... ես նույնիսկ աչքերս փակ գլխի կընկնեի,— ասաց նա առանց խանդավառության:

— Այդ ինչպե՞ս, նավթի հոտից: Կինս միշտ տրտնջում է,— Մոնթագը ծիծաղեց:— Որքան էլ վաճնում ես, հոտը չի անցնում:

— Այո՛, չի անցնում,— վախով հաստատեց աղջիկը:

Մոնթագին թվաց՝ աղջիկը պտտվում էր իր շուրջը, գլխիվայր շուռ տալիս իրեն, թեթև թափահարում, դատարկում գրպանները՝ առանց շարժվելու որևէ ջանքի:

— Նավթը,— Մոնթագի խոսքի մեջ անհարմար լռությունը խախտելու միտում կար,— օծանելիք է ինձ համար:

— Իսկապէս:

— Անշուշտ, ինչո՞ն ոչ:

— Չգիտեմ,— փոքր-ինչ մտածելուց հետո պատասխանեց աղջիկը, ապա թեքվեց դեպի իրենց տներ տանող ճանապարհը:— Դեմ չե՞ք լինի, եթե քայլեմ Ձեզ հետ: Անունս Քլարիս Մըքլելըն է:

— Քլարիս: Ես Գայ Մոնթագն եմ: Գնացի՞ք: Այս ուշ ժամին ի՞նչ եք անում այստեղ: Քանի տարեկան եք:

Նրանք քայլում էին արծաթափայլ մայթով. տաք քամի էր փչում, և թվում էր՝ օդի մեջ թարմ ծիրանի ու ելակի՝ հեռունեւրից եկող բույր կար: Մոնթագը շուրջը նայեց և սթափվեց. այդպիսի բան անհնար էր ուշ աշնանը:

Իրական էր միայն իր կողքին քայլող աղջիկը՝ լուսնից կաթնագունած դեմքով: Մոնթագը գիտեր՝ նա այժմ իր հարցի շուրջ էր խորհում՝ որոնելով հնարավոր լավագույն պատասխանը.

— Դե,— ասաց,— տասնյոթ տարեկան եմ և խենթ: Մորեղբայրս ասում է, որ այս երկուսը միշտ համատեղ են: Երբ մարդիկ հարցնում են տարիքդ,— ասում է նա,— միշտ պատասխանիր՝ տասնյոթ և խելառ: Գիշերվա այս ժամը գեղեցիկ է, չէ՞, զբոսնելու համար: Ես սիրում եմ զգալ բույրերը, նայել իրերին և երբեմն ողջ գիշեր արթուն եմ մնում, թափառում ու դիմավորում եմ արևածագը:

Նրանք շարունակում էին քայլել լռության մեջ, երբ հանկարծ աղջիկն ասաց մտախոհ:

— Գիտե՞ք, ես ամենևին չեմ վախենում Ձեզսից:

— Իսկ ինչո՞ն պետք է վախենայիք:— Մոնթագի դեմքին ակնհայտ զարմանք կար:

— Այդպիսի մարդիկ շատ կան: Նկատի ունեմ մարդիկ, ովքեր վախենում են հրկիզողներից: Բայց Դուք, ի վերջո, բոլորիս նման մարդ եք, չէ՞...

Մոնթագն իրեն տեսավ նրա աչքերում, որոնք ջրի երկու գուլպա կաթիլների պես իրենց մեջ ամփոփել էին իրեն՝ փոքր

ու մռայլ, իր ամենաճշգրիտ մանրամասներով, բերանի շուրջը եղած գծերով: Իր դեմքի բոլոր երանգները տեսավ դրանց մեջ, ասես նրա աչքերը՝ որպես երկու հրաշալի մանուշակագույն սաթի կտորներ, ունակ էին ամբողջությամբ կլանելու իրեն և անվնաս պահելու իրենց մեջ: Այժմ դեպի իրեն հակված աղջկա՝ մեղմ լույսով ողողված դեմքը փխրուն էր, ջրի պես թափանցիկ: Էլեկտրական աչք ծակող լույս չէր դա: Ինչ էր հապա: Մեղմ լույս, որ ասես մոմից էր ծորում և քեզ հաղորդակից դարձնում իր անխռով թրթռումներին: Երբ ինքը դեռ երեխա էր, մի անգամ հոսանքի վթարային անջատում եղավ: Մայրը գտավ և վառեց տան վերջին մոմը: Հայտնության և պայծառակերպության այդ կարճ միջոցին էր, որ տարածությունը կորցրեց իր տարածգությունն ու սկսեց անարգել ծավալվել նրանց շուրջը, և նրանք՝ մայր և որդի, մենության մեջ այդպես կերպափոխված, հույս էին փայփայում, որ էլեկտրաէներգիայի վթարային անջատման ժամերը դեռ երկար կձգվեն:

Քլարիսն անակնկալ միջամտեց.

— Կարելի է մի հարց տալ: Որքան ժամանակ է, ինչ աշխատում եք որպես հրկիզող:

— Քսան տարեկանից: Տասը տարի է արդեն:

— Դուք երբևէ կարդում եք այն գրքերը, որոնք այրում եք: Մոնթազը ծիծաղեց.

— Ո՛չ, քրեորեն պատժելի է:

— Ա՛հ, այդպես:

— Հրաշալի աշխատանք է. երկուշաբթի այրել Միլեյին, չորեքշաբթի՝ Ուիթմենին, ուրբաթ՝ Ֆոլքներին: Այրել մոխրացնել, հետո մոխիրն այրել: Սա մեր պաշտոնական կարգախոսն է:

Նրանք շարունակեցին քայլել, հետո աղջիկը հարցրեց.

— Ճի՞շտ է, որ ժամանակին հրշեջներ են եղել, ովքեր ոչ թե ամեն բան հրի են տվել ինչպես հրկիզողները, այլ հանգցրել են հրդեհները:

— Ո՛չ, տները միշտ են հրակայուն եղել, կարող եք չկասկածել:

— Տարօրինակ է: Ինչ—որ տեղ լսել եմ, որ նախկինում տները հրդեհվել են անփութության հետևանքով, և հրշեջների կարիք է եղել կրակը հանգցնելու համար:

Մոնթագը ծիծաղեց:

Աղջիկը թռուցիկ նայեց նրան:

— Ինչո՞ւ եք ծիծաղում:

— Չգիտեմ:— Նա նորից սկսեց ծիծաղել, ապա լրջացավ.— Ինչո՞ւ եք հարցնում:

— Դուք ծիծաղում եք, թեև ես ծիծաղելի ոչինչ չեմ ասել, և հարցերիս հապճեպ պատասխաններ եք տալիս: Երբեք երկար չեք մտածում հարցերիս շուրջ:

Մոնթագը կանգ առավ.

— Արտասովոր աղջիկ եք,— ասաց՝ նրան նայելով,— կարեքի է ավելի հարգալից լինել:

— Չէի ուզում վիրավորել: Պարզապես չափազանց շատ եմ սիրում ուսումնասիրել մարդկանց:

— Իսկ սա Ձեզ համար որևէ բան չի նշանակում:— Նա մատները թեթև սահեցրեց իր սև բաճկոնի թևքին ասեղնագործած 451 թվանշանի վրայով:

— Նշանակում է...— շնչաց աղջիկը: Նա արագացրեց քայլերը:— Երբևէ նկատել եք, թե որքան արագ են հրթիռային մեքենաները սլանում ծառուղուն հարող լայն մայրուղով:

— Թեման փոխում եք:

— Երբեմն մտածում եմ՝ վարորդները չգիտեն՝ խոտը ինչ է, կամ ծաղիկներն ինչ են, որովհետև նրանք չափազանց արագ են վարում: Եթե որևէ վարորդի կանաչ բծեր ցույց տաք, նա կասի՝ դե, իհարկե, խոտ է: Վարդագույն բծեր՝ վարդերի պարտեզ է: Ճերմակ բծերը տներ են: Դարչնագույն բծերը՝ կովեր: Մի անգամ մորեղբայրս մայրուղով ընթանում էր ժամում քառասուն մղոն արագությամբ, և դրա համար

նրան երկու օրվա ազատագրկման դատապարտեցին: Եվ ծիծաղելի է, և՛ միևնույն ժամանակ տխուր, այնպես չէ:

— Դուք չափազանց շատ բաների մասին եք մտածում,— կաշկանդված ասաց Մոնթագր:

— Ես հազվադեպ եմ հեռուստանովելներ դիտում և գրեթե չեմ լինում զբոսայգիներում, չեմ սիրում պտուտարշավ կարուսելներ նստել: Այնպես որ, խելառ մտքերի համար շատ ժամանակ ունեմ: Տեսնլ եք քաղաքից դուրս տանող ճանապարհի երկու հարյուր ոտնաչափ բարձրության գովազդային վահանակները: Գիտե՞իք, որ նախկինում դրանք ընդամենը քսան ոտնաչափ բարձրության վրա են տեղադրվել, սակայն ժամանակի ընթացքում ավտոմեքենաները սկսել են այնքան արագ սլանալ դրանց կողքով, որ ստիպված են եղել ձգել, երկարացնել դրանք, որպեսզի հայտարարությունների տախտակները վայր չընկնեն:

— Չգիտեի,— Մոնթագր պոռթկաց ծիծաղից:

— Ես էլի ինչ—որ բան գիտեմ, որ Դուք չգիտեք: Առավոտյան խոտերի վրա ցող է իջնում:

Մոնթագր զգաց, որ չի կարողանում հիշել, թե երբևէ լսել է նման բան, և դրանից սաստիկ նեղւրտեց:

— Եվ եթե վեր նայեք,— նա, դունչը վեր բարձրացնելով, ակնարկեց գիշերային երկինքը,— լուսնի վրա մարդ կտեսնեք:

Մոնթագր վաղուց երկինք չէր նայել:

Ճանապարհի մնացած հատվածը նրանք լուռ անցան: Աղջկա լռակյացությունը խոհական էր, մինչդեռ Մոնթագին համակել էր մի տեսակ ճնշող, անհարմար լռություն, որի ընթացքում նա աղջկան մեղադրական հայացքներ էր նետում: Երբ հասան Բլարիսի տանը, Մոնթագր տեսավ, որ այն ամբողջովին ողողված էր լույսերի մեջ:

— Ինչ է կատարվում Ձեր տանը:— Մոնթագր հազվադեպ էր տներում այդքան շատ վառվող լույսեր տեսել:

— Ոչինչ: Պարզապես մայրս, հայրս և մորեղբայրս նստած զրուցում են: Նույնքան հազվագյուտ բան մեր օրե-

րում, որքան քայլելը, թերևս ավելի հազվագյուտ: Ասել եմ Ձեզ, որ մորեղբայրս մի անգամ էլ ձերբակալվել է քայլելու համար: Այո՛, մենք շատ տարօրինակ ենք:

— Ինչի՞ մասին եք զրուցում, երբ հավաքվում եք:

Աղջիկը ծիծաղեց նրա ասածի վրա:

— Բարի գիշեր,— ասաց նա, նախքան կշռջվեր իրենց տան կողմը: Թվաց՝ ինչ—որ բան հիշեց և հետ եկավ՝ զարմանքով ու հետաքրքրությամբ Մոնթագին նայելով.— Դուք երջանիկ եք,— հարցրեց:

— Ես ի՞նչ...— նրա հետևից ձայնեց Մոնթագը:

Սակայն աղջիկն արդեն հեռացել էր: Լուսնի լույսով ողողված շավղով նա տուն էր վազում: Նրա հետևից անաղմուկ փակվեց շքամուտքի դուռը:

* * *

«Երջանիկ եմ... ամենաանհեթեթ բանը, որ երբևէ լսել եմ»:
Մոնթագն այլևս չէր ծիծաղում:

Նա ձեռքը թեթևակի հպեց շքամուտքի դռան խոռոչին, որը ճանաչեց նրա հպումը, ու դուռը սահելով բացվեց:

«Իհարկե երջանիկ եմ: Իսկ նա ի՞նչ էր կարծում, երջանիկ չպիտի լինեի»,— մի դատարկ սենյակից մյուսն անցնելով՝ քթի տակ խոսում էր Մոնթագը: Նայեց վեր՝ նախասրահի օդանցքի վրա ամրացված ցանցին: Հանկարծ հիշեց, որ այնտեղ՝ ցանցից այն կողմ, ինչ—որ բան կա թաքցրած, որ հիմա ասես վերևից ուշիուշով հետևում է իրեն: Հայացքն արագ հեռացրեց ցանցից:

Ինչպիսի տարօրինակ հանդիպում նույնքան տարօրինակ գիշերով: Չէր հիշում, թե իրեն երբևէ նման բան պատահած լիներ, բացի թերևս մեկ տարի առաջվա դեպքից, երբ հանդիպել էր մի ծերունու և զրույցի բռնվել հետը:

Մոնթագը տարուբերեց գլուխը: Նայեց դատարկ պատին: Այնտեղ աղջկա դեմքը տեսավ, նրա գեղեցկությունն արթնա-

ցավ հիշողության մեջ. այս ամենը, անշուշտ, ապշեցուցիչ էր: Նրա վտիտ դեմքը փոքր ժամացույցի թվատախտակ էր հիշեցնում, որ աղոտ երևութանում է կեսգիշերվա մութ սենյակի մեջ, երբ արթնանում ես՝ պարզելու, թե ժամը քանիսն է, և իր լուսավոր լռությամբ չի թերանում ասել օրվա ճշգրիտ ժամը, ըրպեն և վայրկյանը, հայտնվում է դիտողին՝ որպես անտարակուսելի փաստ գիշերվա մասին, թանձրանում, ապա ճեղքում գիշերն ու ծավալվում դեպի ծագող արևը:

«Ինչ», — հարցրեց Մոնթագն իր մյուս՝ ենթագիտակցական կեսին՝ այդ ապուշին, ով ժամանակ առ ժամանակ հայտնվում և շարունակ շաղակրատում էր՝ չենթարկվելով նրա կամքին, սովորոյթներին և ողջախոհությանը:

Կրկին հայացքը սևեռեց պատին: Այժմ աղջկա դեմքը հայելու էր նման: Անհավատալի էր: Քանի՜ մարդ կարելի է գտնել, ովքեր կարող են բեկել սեփական լույսը: Մարդիկ ավելի հաճախ նման են... փորձեց համեմատություն գտնել: Հրկիզողի իր աշխատանքն օգնեց գտնելու համապատասխան բառը... կերոնների: Մարդիկ ասես կերոններ լինեն, որ տարածում են իրենց լույսն այնքան ժամանակ, մինչև մարում, մխում են: Որքան հազվադեպ է պատահում, որ ինչ-որ մեկի դեմքը քեզնից վերցնում և քեզ է վերադարձնում սեփական կերպարանքդ, քո ամենագաղտնի, թրթռուն մտքերը:

Ինչպիսի անհավատալի ներըմբռնմամբ էր օժտված աղջիկը: Նայում էր Մոնթագին և ասես խամաճիկների թատրոնի խանդավառ հանդիսատես լիներ, ով վայրկյան առաջ կանխազգում էր Մոնթագի կոպերի թարթումները, նրա ձեռքերի շարժումները, մատների թեթև ցնցումները: Որքան ժամանակ էին քայլել միասին: Երեք ըրպե, հի՛նգ: Այնուամենայնիվ, որքան երկար էր թվում այդ ժամանակն այժմ: Որքան հսկայական էր իր առջև հայտնված նրա սովերը, նրա բարեկազմ մարմնի ուրվագծերը պատի վրա: Մոնթագն այն զգացողությունն ուներ, ասես, եթե իր աչքը քոր գար, աղջիկն ինքնաբերաբար կթարթեր աչքերը, եթե ծնուտի մկաններն աննկատե-

լիորեն ձգվեին, աղջիկն արդեն վայրկյաններ առաջ հորանջե-
լիս կլիներ:

«Ինչո՞ւ,— մտածում էր Մոնթազը՝ հիշելով իրենց հանդի-
պումը,— ինչո՞ւ էր ուշ գիշերին ինձ սպասում այնտեղ՝ փո-
ղոցում...»:

Նա բացեց ննջարանի դուռը:

Թվաց, թե լուսնի մայր մտնելուց հետո հայտնվել էր
դամբարանի ցուրտ, մարմարե սենյակում: Թանձր խավար էր
շուրջը, դրսի արծաթաթույր աշխարհից՝ ոչ մի նշույլ: Պատու-
հաններն ամուր փակված էին. ինքն ասես անդրշիրիմյան
աշխարհում լիներ, ուր հսկա քաղաքի ձայներն անկարող էին
ներթափանցել: Սենյակը դատարկ չէր:

Ականջ դրեց:

Օդի մեջ տարածված ձայնը փոքրիկ մոծակի նուրբ
պարային տզզոց էր հիշեցնում, տաքուկ, վարդագույն բնիկի
մեջ ապահով թաքնված իշամեղվի էլեկտրական բզզոց:
Երաժշտությունը, թեև հազիվ լսելի, բավականին բարձր էր
հնչում, որպեսզի Մոնթազը կարողանար հետևել մեղեդուն:

Զգաց, թե ինչպես ժպիտը սահեց, անհետացավ դեմքից,
սպառվեց, անէացավ, ինչպես մաշկի տակ ճարպն է հալվում,
ինչպես երևակայական մոմի նյութն է անգոյանում ինքնայ-
րումի վերջին ճիգով: Խավար: Մոնթազը երջանիկ չէր: Նա
երջանիկ չէր: Նա շարունակ կրկնում էր այս բառերը: Ընդու-
նում էր այս փաստը որպես ճշմարտություն: Նա իր երջանկու-
թյունը կրում էր որպես դիմակ, իսկ աղջիկն այդ դիմակը խլել ու
մարգագետնով փախել հեռացել էր իրենից, և այժմ նրա դուռը
թակելու, դիմակը հետ խնդրելու ոչ մի հնարավորություն չկար:

Առանց լույսը վառելու պատկերացրեց, թե ինչ էր կա-
տարվում սենյակում: Կինը մեկնվել էր մահճակալին՝ չծածկ-
ված ու սառը, ինչպես տապանաքարի վրա պատկերված
անշունչ մարմին: Անթարթ աչքերն ասես պողպատե անտեսա-
նելի թելերով առաստաղին էին գամված: Ականջներն ամուր
խցանել էր խեցիներով՝ մատնոցի չափ փոքրիկ ականջակալ-

ներով: Ձայնի, երաժշտության խոսակցության անընդմեջ ներս հորդող, շարունակ դեպի ներս ծավալվող, դեպի իր կնոջ արթուն միտքը հոսող էլեկտրոնային օվկիանոս էր տարածվել շուրջը: Սենյակն իրոք դատարկ էր: Ամեն գիշեր ալիքները ներխուժում էին և հնչյունների հսկայական մակընթացության մեջ առնելով աչքերը լայն բացած Միլդրեդին՝ օրորելով տանում էին առավոտին ընդառաջ: Վերջին երկու տարիների ընթացքում՝ ամեն գիշեր անխտիր, Միլդրեդը լողալով անցել էր այդ ալեկոծության միջով, հոժարակամ ընկղմվել խռովահույզ ծովի հատակը:

Սենյակում ցուրտ էր, այնուամենայնիվ Մոնթագին թվաց, թե շնչահեղձ է լինում: Նա վարագույրները հետ քաշելու և ֆրանսիական պատուհանները բացելու ցանկություն չուներ. չէր ուզում՝ լուսնի լույսը ներս թափանցեր: Մթության մեջ խարխափելով՝ քայլեց դեպի իր համար առանձին բացված սառն անկողինը այնպիսի զգացողությամբ, ասես ուր որ է օդի պակասից շնչահեղձ է լինելու:

Ոտքը դեմ առավ ինչ-որ առարկայի: Վայրկյան առաջ զգացել էր, որ ոտքն ինչ-որ բանի է դեմ առնելու: Ճիշտ այն պահի նմանությամբ, երբ շրջադարձին պահ առաջ զգացել էր աղջկա բացակա ներկայությունը և հաջորդ վայրկյանին հայտնվել նրա առջև: Երբ քայլում էր, ոտքը տատանումներ ուղարկեց, որոնք, բախվելով փոքրիկ արգելքի, արձագանքներ վերադարձրին, երբ ոտքը դեռ կախված էր օդում, իսկ վայրկյան անց վար իջավ, դիպավ առարկային, և վերջինս խուլ աղմուկով գլորվեց խավարի մեջ:

Մոնթագն ուղիղ կանգնել և լսում էր անթափանց խավարի մեջ անկողնում պառկած անձնավորության շնչառությունը: Ռունգերից ելնող շունչն այնքան թույլ էր, որ կարող էր թեթև շարժել կյանքի աննշան դրսևորումները միայն՝ մի փոքրիկ տերև, մի սևաթույր փետուր, մի բարակ մազ:

Նա դեռ խուսափում էր դրսի լույսից: Գրպանից հանելով բռնկիչը՝ շոշափեց, գտավ արծաթե սկավառակի վրա փորագրված սալամանդրը և մատնագարկով շրխկացրեց այն...

Բռնկիչի լույսի մեջ երկու լուսնաքար վարից նայեցին նրան, վճիտ առվակի հատակն ընկած երկու գունատ լուսնաքար, որոնց վրայով կյանքն էր հոսում, իրենք՝ կյանքին անհաղորդ:

— Մի՛ղբեդ:

Կնոջ դեմքը ձյունածածկ կղզի էր. թե անձրև թափվեր դեմքին, նա անկարող կլիներ վայելել անձրևը, թե ամպերն իրենց հարափոփոխ ստվերները գցեին դեմքին, անկարող կլիներ զգալ դրանք: Նրա ականջների մեջ միայն կիպ խցկված մատնոցաչափ ընկալուչների բզզոցն էր: Աչքերը՝ ապակի, շնչառությունը՝ ռունգերի մեղմ, հազիվ նկատելի դող, ներշնչման և արտաշնչման միապաղաղ հաջորդակա-նություն, և նրա համակ անտարբերությունը սեփական կյանքն ապահովող այդ գործողության հանդեպ:

Առարկան, որը Մոնթազը ոտքի հարվածով ականա մի կողմ էր գլորել, այժմ պսպղում էր մահճակալի սնարի մոտ՝ հատակին: Քնաբեր հաբերի փոքրիկ բյուրեղապակյա սրվակն էր, որի մեջ առավոտյան դեռևս երեսուն հաբեր կային, իսկ այժմ առանց կափարիչի դատարկ ընկած էր բռնկիչի սակավ լույսի ներքո:

Մինչ նա կանգնած էր սենյակի մեջտեղում, երկինքը որոտաց տան վրա: Զարհուրելի աղմուկ էր, ասես երկու հսկա ձեռքեր տասնյակիազարավոր մղոն երկարությամբ քաթանե գործվածք պատռելիս լինեին: Մոնթազը կարծես երկու կես եղավ: Նրան թվաց՝ կուրծքը երերաց ու ճեղքվեց: Տան վրայով սրարշավ անցան կործանիչները. մեկ, երկու, մեկ, երկու, մեկ, երկու, արդեն վեցն էին, ինը, տասներկուսը, էլի մեկը, ևս մեկը, մեկը մյուսի հետևից օդը ճեղքում էին իրենց խլացնող աղմուկով: Նա բացեց բերանն ու թույլ տվեց, որ դրանց ճիչն ատամների արանքից ներխուժի իր ներսը, ապա նահանջի:

Տունը ցնցվեց: Ձեռքում պահած բռնկիչի կրակը մարեց: Լուսնաքարերը չքացան: Մթի մեջ ձեռքը տարավ հեռախոսին:

Կործանիչներն արդեն հեռու էին: Զգաց շուրթերի շարժվելը, դրանք թույլ հավել էին խոսափողին.

— Շտապօգնության հիվանդանոց:— Սարսափելի շշուկ:

Մոնթազն այն զգացողությունն ուներ, ասես աստղերը փոշիացել էին սև կործանիչների աղմուկից, և առավոտյան Երկիրը ծածկված էր լինելու տարաշխարհիկ ծյան փոշու շերտով: Այդ անհեթեթ միտքը չէր լքում նրան, մինչ նա կանգնել խավարի մեջ, դողում էր՝ շուրթերն անձայն շարժելով:

Նրանք իրենց հետ ինչ-որ սարք էին բերել: Ավելի ճիշտ՝ երկու սարք: Մեկը, ինչպես սև կոբրա, սողոսկում էր ստամոքսիդ մեջ և այնտեղ՝ արձագանքող ջրհոր հիշեցնող ներսումդ, կլանում էր հին ջրերն ու ժամանակի հնոտին: Դանդաղ քլթքլթոցով այն խմում էր ներսիդ կանաչ մաղձն ու դուրս փսխում: Կարո՞ղ էր սարքն արոյոք ողջ խավարը խմել: Կարո՞ղ էր կլանել այս բոլոր տարիների ընթացքում կուտակված թույնը: Սենյակի անդորրը երբեմն-երբեմն շնչահեղձության խուլ հևցներով խախտելով՝ այն ներծծում էր իրեն անհայտ մի բան: Սարքն Աչք ուներ: Այն սպասարկող մարդը, ով ասես անդեմ լիներ, կարող էր, օպտիկական սաղավարտը կրելով, սևեռուն նայել հիվանդի հոգու մեջ նախքան նրա ներսի մաղձը դուրս մղելը: Ինչ էր տեսնում Աչքը: Սպասարկող մարդն այդ մասին լռում էր: Նա տեսնում էր, սակայն ոչ այն, ինչ Աչքն էր տեսնում: Ողջ գործողությունը նման էր սեփական բակում առու փորելուն: Անկողնու վրա պառկած կինն ասես մարմարի կարծր նստվածքաշերտ լիներ, որին նրանք դեմ էին առել: Ամեն դեպքում շարունակեք, ուզում էր գոռալ Մոնթազը, հորատեք վիրապը, դուրս քաշեք դատարկությունն այնտեղից, եթե, իհարկե, իր հևցներով այդպիսի ինչ-որ բան դուրս բերելու ընդունակ է այս ներծծող օձը: Սպասարկողը կանգնել մի կողմ, ծխում էր: Եվս մի սարք էր աշխատում:

Մյուս սարքը կարմրադարչնագույն արտահագուստով մի նույնպիսի անդեմ մարդ էր կառավարում: Այն մարմնից դուրս էր քաշում ողջ արյունն ու փոխարենը ներարկում թարմ արյուն ու շիճուկ:

— Այս երկուսն էլ գործի ենք դնում օրգանիզմը մաքրելու համար,— ասաց անշարժ կնոջ գլխավերևում կանգնած բուժակը:— Ստամոքսը մաքրելն իմաստ չունի, եթե արյունը չես մաքրում: Թողնում ես թույնը արյան մեջ, և արյունը մուրճի պես խփում է ուղեղին. մի քանի հազար այդպիսի հարված, և ուղեղը տեղի է տալիս, հրաժարվում է գործել:

— Լռե՛ք,— ասաց Մոնթագր:

— Ուղղակի ուզում էի բացատրել,— արդարացավ բուժակը:

— Ավարտեցի՞ք,— հարցրեց Մոնթագր:

Նրանք սարքերը խնամքով տեղավորեցին ճամպուրկների մեջ:

— Ավարտեցինք:— Մոնթագի բարկությունն ամենևին էլ չէր ազդել բուժականների վրա: Նրանք կանգնել, ծխում էին: Ծուխը գալարվում, լցվում էր նրանց ռունգերը, նրանց աչքերն էր թափանցում: Սակայն նրանք այդպես էլ աչքերը թարթելու որևէ փորձ չարեցին:— Հիսուն դոլար:

— Նախ ինչո՞ւ չեք ասում ինձ, արդյո՞ք նրա հետ ամեն բան կարգին է:

— Իհարկե, ամեն բան լավ կլինի: Ողջ թույնն այժմ այստեղ է՝ մեր բժշկական ճամպուրկների մեջ, որտեղից այլևս նրան չի կարող վնասել: Ինչպես ասացի, դուրս ես մղում հին արյունը, ներարկում նորը, և ամեն բան կարգին է:

— Ձեզնից ոչ ոք բժիշկ չէ: Ինչո՞ւ շտապօգնության ծառայությունից բժիշկ չեն ուղարկել:

— Բժիշկ, բա չէ...- Բուժակը փստացնում էր շուրթերի արանքում պահած ծխախոտը:— Ամեն գիշեր այսպիսի ինը-տասը կանչ ենք ունենում: Վերջին մի քանի տարիների ընթացքում այս տեսակ դեպքերն այնքան շատացան, որ

ստիպված եղանք օպտիկական ուսպնյակով այս սարքը պատրաստել տալ: Նորույթը միայն ուսպնյակն է, մնացածը վաղուց էր հայտնի: Այս դեպքում բժշկի միջամտության կարիք չկա. ընդամենը երկու բուժակներ գործը կես ժամում գլուխ են բերում: Լավ,— դեպի դուռը քայլելով ասաց նա,— պետք է գնանք: Հենց նոր ռադիոկապ տվեցին: Տասը թաղամաս այն կողմ կանչ ունենք: Էլի ինչ—որ մեկը դեղահաբերի մի ամբողջ տուփ է կուլ տվել: Ջանգահարեք, եթե մեր կարիքը նորից ունենաք: Նրան հանգիստ է պետք: Մենք նրան տոնուսը բարձրացնող դեղամիջոց ենք ներարկել: Քաղցած կարթնանա: Ցտեսություն:

Այնուհետև բարակ շուրթերի արանքում ծխախոտները սեղմած տղամարդիկ՝ իժի հայացքով տղամարդիկ, վերցրին իրենց բեռը՝ սարքերն ու փողրակները, մաղձով ու դոնդողանման անանուն նյութով լի բժշկական ճամպրուկները, և հեռացան սենյակից:

Մոնթագն ընկղմվեց թիկնաթոռի մեջ և հայացքը դարձրեց իր առջև պառկած կնոջը: Կնոջ աչքերն այժմ մեղմորեն փակ էին, և Մոնթագը պարզեց ձեռքը՝ ափին նրա տաք շունչը զգալու համար:

— Միլիդեդ,— վերջապես ասաց նա:

«Մենք չափազանց շատ ենք,— մտածում էր նա,— միլիարդավոր մարդիկ... չափազանց շատ: Ոչ ոք մյուսին չի ճանաչում: Օտարներ են գալիս և բռնանում են քեզ: Օտարներ են գալիս և անդամատում են սիրտդ: Գալիս են օտարներ, տանում են արյունդ: Աստված իմ, ովքեր էին այդ մարդիկ: Կյանքումս երբեք նրանց տեսած չկայի»:

Կես ժամ անցավ:

Կնոջ երակներով հոսող օտար արյունը կարծես ուրիշ ազդեցություն էր ունեցել նրա վրա: Այտերը վարդագուներ էին, շուրթերը թարմ էին, վառ կարմիր, նրանց վրա անվրդով խաղաղություն էր իջել: Ուրիշ մեկի արյունն էր հոսում նրա երակներում: Եթե միայն հնարավոր լիներ վերցնել ուրիշ

մեկի մարմինը, ուղեղն ու հիշողությունը: Երանի իրենց հետ տանեին նրա միտքն ու չոր մաքրման տային, ինչպես հագուստը: Դատարկեին գրպանները, գոլորշու միջոցով մաքրեին, ախտահանեին այն, իսկ առավոտյան վերադարձնեին կատարյալ անբիծ: Երանի...

Նա վեր կացավ տեղից, հետ քաշեց վարագույրները, լայն բացեց պատուհանները՝ թողնելով, որ գիշերային սառն օդը ներս խուժի: Գիշերվա ժամը երկուսն էր: Միթե ընդամենը մեկ ժամ էր անցել իր և Քլարիս Մըքլելլնի հանդիպումից: Ընդամենը մեկ ժամ առանց էր, երբ ինքը մութ սենյակը մտավ, և ոտքը դիպավ փոքրիկ բյուրեղապակյա սրվակին: Ընդամենը մեկ ժամ, սակայն դրսի աշխարհը տարրալուծվել, անէացել էր, և այժմ ծնվում էր նորը՝ գունատ, անբովանդակ:

Լուսնի լույսով ողողված մարգագետնի հակառակ կողմում գտնվող տնից, որտեղ Քլարիսն էր ապրում հոր, մոր և մորեղբոր հետ, ծիծաղի ձայներ լսվեցին: Մորեղբորը կարծես էլի էր տեսել. նա այնպիսի անվրդով ժպիտ ուներ, որպիսին լրջախոհ մարդը կարող էր իրեն թույլ տալ: Մոնթագը նկատեց, որ նրանք բոլորն ի սրտե, անկաշկանդ ծիծաղում էին, և խաղաղություն էր հորդում այն տնից, որն այս ուշ ժամին վառ լուսավորված էր, մինչդեռ հարևանությամբ գտնվող խավարի մեջ ընկղմված մյուս տներն ինքնամփոփ էին: Մոնթագը լսում էր նրանց՝ մեկը մյուսին լրացնող ձայները, նրանք անընդհատ խոսում էին, հարցեր տալիս, պատասխանում՝ հյուսելով բառերի հիպնոսային ոստայնը:

Մոնթագը ապակյա դռնով դուրս եկավ և առանց մտածելու, թե ինչ է անում, կտրեց-անցավ մարգագետինը: Ստվերների մեջ կանգ առավ տան առջև, որտեղից խոսակցության ձայներ էին լսվում՝ մտածելով, որ կարող է նույնիսկ թակել դուռն ու շնչալ. «Թո՛ւյլ տվեք ինձ ներս գալ: Ոչինչ չեմ ասի: Պարզապես ուզում եմ լսել՝ ինչից եք խոսում»:

Փոխարենը տեղում կանգնած մնաց. մրսում էր, դեմքին ասես սառցե դիմակ լիներ: Լսում էր, թե ինչպես էր տղա-

մարդկանցից մեկը (հավանաբար մորեղբայրը) խոսում հանդարտ ձայնով:

— Ի վերջո մենք ապրում ենք մեկանգամյա օգտագործման անձեռոցիկների դարաշրջանում: Ու մարդու արժեքն ավելին չէ, քան անձեռոցիկինը: Սրբի՛ր քիթդ դրանով, ճմռթի՛ր, դէն նետի՛ր, վերցրո՛ւ մեկ ուրիշը, սրբի՛ր քիթդ, ճմռթի՛ր, դէն նետի՛ր: Ամենուր երեսպաշտություն է: Ինչպե՛ս կարող ես երկրպագել քո սիրելի թիմին, երբ նույնիսկ մրցամարտի ծրագիրը չունես, չգիտես նույնիսկ խաղացողների անունները: Գիտե՛ս, օրինակ, թե ինչ մարզահագուստով են նրանք խաղադաշտ դուրս գալիս:

Մոնթագը դանդաղ քայլեց դեպի տուն. պատուհանը բաց թողեց, մոտեցավ Միլդրեդին, խնամքով ծածկեց նրան, ապա ինքն էլ պառկեց: Լուսնի լույսն ընկել էր այտոսկրերին, խորշումած ճակատին: Լուսնի արծաթը կաթել էր նաև աչքերի մեջ, ու հիմա դրանք ասես կատարակտով հիվանդի աչքեր լինեին:

Ընկավ անձրևի առաջին կաթիլը: Քլարիսը: Էլի մի կաթիլ: Միլդրեդը: Եվս մեկը: Մորեղբայրը: Մեկ ուրիշը: Այսօրվա հրդեհը: Առաջինը՝ Քլարիսը: Երկրորդը՝ Միլդրեդը: Երրորդը՝ մորեղբայրը: Չորրորդը՝ հրդեհը: Առաջինը, երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը, Քլարիսը, Միլդրեդը, մորեղբայրը, հրդեհը, քնաբեր դեղահաբերը, մարդիկ, անձեռոցիկները, երեսպաշտները, մաքրի՛ր քիթդ, ճմռթի՛ր, դէն նետի՛ր, Քլարիսը, Միլդրեդը, մորեղբայրը, հրդեհը, դեղահաբերը, մարդիկ, անձեռոցիկները, մաքրի՛ր քիթդ, ճմռթի՛ր, դէն նետի՛ր: Մեկը, մյուսը, մի երրորդը: Անձրև: Փոթորիկ: Մորեղբոր ծիծաղը: Տանիքը ցնցող ամպրոպ: Ողջ աշխարհը հեղեղվում է: Հրաբխից կրակ է ժայթքում: Ամեն բան նետվում է ներքև, մոնչյունով մոլեգնում շուրջդ, հորդում առավուտին ընդառաջ:

«Այլևս ոչինչ չեմ հասկանում», — ասաց Մոնթագը և քնաբեր հաբը դրեց լեզվին: Այն դանդաղ հավլեց:

Առավոտյան ժամը իննին Միլդրեդի անկողինը դատարկ էր:

Մոնթագն արագ վեր կացավ, սրտի տրոփյունով վազեց նախասրահ և խոհանոցի դռան մոտ կանգ առավ:

Հաց բովող արծաթագույն սարքից հացի կարմրեցրած կտորներ դուրս թռան: Սարդանման մետաղական «ձեռքն» անմիջապես որսաց դրանք և թաթախեց հալեցրած կարագի մեջ:

Միլդրեդը հայացքով հետևեց, թե ինչպես հացի կարմրեցրած կտորները հայտնվեցին իր ափսեի մեջ: Նա ականջների մեջ մխրճել էր էլեկտրոնային ընկալուչները, որոնցից մեղվի բզզոց էր լսվում: Կինը հանկարծակի վեր նայեց, տեսավ Մոնթագին և գլխի շարժումով ողջունեց նրան:

— Լավ ես,— հարցրեց Մոնթագը:

Խեցի ականջակալները գործածելու տասը տարիների ընթացքում Միլդրեդը հասցրել էր լիովին տիրապետել շրթունքների շարժումներով մարդկանց հասկանալու հմտությանը: Նա կրկին գլխով արեց և բովող սարքի մեջ ևս մի կտոր հաց տեղադրեց:

Մոնթագը նստեց:

— Չեմ հասկանում՝ ինչու պիտի այսպես քաղցած լինեմ,— ասաց կինը:

— Դո՛ւ...

— Քաղցած եմ:

— Երեկ երեկոյան...— փորձեց բացատրել Մոնթագը:

— Լավ չեմ քնել: Սարսափելի վատ եմ զգում,— շարունակեց կինը,— Աստված իմ, քաղցած եմ, չեմ հասկանում՝ ինչու:

— Երեկ երեկոյան...— կրկնեց Մոնթագը:

— Ի՞նչ է պատահել երեկ երեկոյան,— կինը ցրված նայում էր նրա շուրթերին:

— Չե՛ս հիշում:

— Ի՞նչ: Կերուխոն եմք արել երեկ: Կարծես խումհարի մեջ լինեմ: Աստված իմ, քաղցած եմ, հյուրե՛ր ունե՛իրք: Ո՛վ էր եկել:

— Մի քանի մարդ,— ասաց Մոնթագրը:

— Այդպես էլ կարծում էի:— Նա ծամում էր բոված հացի կտորը:— Ստամոքսի ցավեր ունեմ, բայց սաստիկ քաղցած եմ: Հուսով եմ՝ հավաքույթին հիմարություններ չեմ արել:

— Ո՛չ,— ցածրաձայն պատասխանեց Մոնթագրը:

Բովված և կարագի մեջ թաթախված հացի մի կտոր էլ այժմ Մոնթագրի համար էր պատրաստ: Նա բռնել էր հացի կտորն ու իրեն ասես պարտավորված էր զգում:

— Դու էլ կարծես լավ չես զգում,— ասաց նրան կինը:

* * *

Կեսօրից հետո անձրևեց. ողջ աշխարհն ասես ընկղմվեց մռայլ գույների մեջ: Մոնթագրը նախասրահում բաճկոնն էր հագնում: Կրծքին շողում էր նարնջագույն սալամանդը: Նա կանգնեց և երկար նայեց օդանցքին ամրացված ցանցին: Կինը, որ հեռուստասենյակում էր, ընդհատեց սցենարի իր հատվածի ընթերցումն ու հայացքը հառեց նրան:

— Հե՛յ,— բացականչեց նա,— հապա մի տեսե՛ք, մարդը մտածում է:

— Այո՛,— պատասխանեց Մոնթագրը,— քեզ հետ խոսել էի ուզում:— Նա հապաղեց մի պահ:— Երեկ երեկոյան դու կուլ էիր տվել սրվակում եղած բոլոր հաբերը:

— Նման բան չէի անի,— ասաց կինը զարմացած:

— Սրվակը դատարկ էր:

— Ես այդպիսի բան չէի անի: Ինչո՞ւ պիտի այդպիսի բան անեի,— հարցրեց:

— Գուցե երկու հաբ ես ընդունել, հետո մոռացել ես ու էլի երկուսն ես ընդունել, հետո էլի մոռացել ես և ընդունել էլի երկուսը, իսկ հետո այնքան թմրած է եղել միտքդ, որ այդպես շարունակ կուլ ես տվել մնացած երեսուն-քառասուն հաբերը:

— Գրողը տանի, ինչո՞ւ պետք է այդպիսի հիմնարություն անելի:

— Չգիտեմ,— պատասխանեց Մոնթազը:

Ակնհայտ էր, որ Միլդրեդը սպասում էր Մոնթազի գնալուն:

— Այդպիսի բան չէի անի,— կրկնեց նա,— միլիարդ տարի մնար՝ չէի անի:

— Լավ, եթե պնդում ես, չեմ վիճում,— եզրափակեց Մոնթազը:

— Ես դա տիկնոջից իմացա,— Միլդրեդն արդեն անցել էր սցենարի ընթերցանությանը:

— Ցերեկային ծրագրում ի՞նչ կա այսօր,— հոգնած հարցրեց Մոնթազը:

Միլդրեդը հայացքն այլևս չբարձրացրեց սցենարից:

— Տասը թույլից մի ներկայացման ուղիղ հեռարձակումն է լինելու հեռուստասենյակի բոլոր չորս պատերին: Իմ դերն ինձ այսօր առավոտյան են ուղարկել՝ որպես մրցանակ անհրաժեշտ քանակի կտրոններ ուղարկելու դիմաց: Պիեսը գրված է, սակայն սցենարում բացակայում է մի ամբողջական դեր: Նոր գաղափար է: Տանտիրուհու բացակայող դերում ես եմ: Երբ գալիս է պիեսում բացակայող տողերի հատվածը, նրանք բոլորն ինձ են նայում հեռուստասենյակի երեք պատերից, և ես արտասանում եմ իմ կտորը: Ահա, օրինակ, մի հատված. տղամարդն ասում է՝ «Ի՞նչ ես կարծում այս ամենի մասին, Հելեն», և նայում է ինձ: Այդ պահին ես նստած եմ այստեղ, ինչպես բեմի ճիշտ կենտրոնում, պատկերացնում ես՝ ինչպես է ամեն բան լինելու: Եվ ես պատասխանում եմ, ես պատասխանում եմ...— նա ընդհատեց խոսելը և մատը սահեցրեց սցենարի վրայով, ապա կարդաց, — «Կարծում եմ՝ ամեն բան կարգին է»: Հետո պիեսը շարունակվում է, մինչև որ նա հարցնում է՝ «Համաձայն ես դրան, Հելեն», և ես պատասխանում եմ՝ «Իհարկե, համաձայն եմ»: Հետաքրքիր է, չէ՞, Գայ:

Մոնթազը նախասրահում կանգնել, նրան էր նայում:

— Իսկապես հետաքրքիր է,— կրկին ասաց Միլդրեդը:

— Ինչի՞ մասին է պիեսը:

— Արդեն ասացի: Երեք գործող անձինք կան՝ Բորը, Ռուֆը և Հելենը:

— Ախ, հա՛:

— Իսկապես հետաքրքիր է: Էլ ավելի հետաքրքիր կլինի, եթե մենք կարողանանք չորրորդ հեռուստապատն էլ տեղադրել: Ինչ ես կարծում՝ դեռ որքան ենք ստիպված խնայել, որպեսզի չորրորդ պատը փոխարինենք հեռուստաէկրանով: Ընդամենը երկու հազար դոլարի պատմություն է:

— Որը կազմում է իմ տարեկան վաստակի մեկ երրորդը:

— Ընդամենը երկու հազար դոլար կարժենա,— պնդեց նա,— գոնե կմտածեի, որ երբեմն ինձ կարևորում ես: Եթե չորրորդ հեռուստապատն ունենայինք, այն տպավորությունը կլիներ՝ ասես այս սենյակը միայն մեզ չի պատկանում: Այն կպատկաներ տարբեր խառնվածքների տեր տարաշխարհիկ մարդկանց: Կարող ենք ինչ—որ այլ բանում տնտեսել:

— Մենք արդեն մեզ շատ այլ բաներից ենք զրկել, որպեսզի երրորդ պատը փոխարինենք հեռուստաէկրանով: Այն ընդամենը երկու ամիս առաջ ենք տեղադրել, հիշո՞ւմ ես:

— Ընդամենը այդքան:— Նա նստել ու մտաքրիվ նայում էր Մոնթագին:— Լավ, ցտեսություն, սիրելիս:

— Ցտեսություն,— պատասխանեց նա: Քայլեց դեպի դուռը, ապա կանգ առավ և շրջվեց կնոջ կողմը:— Ֆիլմը երջանիկ ավարտ ունի:

— Դեռ չեմ հասցրել ընթերցել ավարտը:

Մոնթազը քայլեց դեպի կինը, կարդաց վերջին էջը, գլխով արեց, ապա ծալեց սցենարն ու մեկնեց կնոջը: Դուրս եկավ փողոց: Անձրևում էր:

Անձրևը նոսրանում էր. աղջիկը քայլում էր մայթի կենտրոնով՝ գլուխը հետ գցած, այնպես, որ կաթիլներն ընկնում էին դեմքին: Երբ Մոնթապին տեսավ, ժպտաց:

— Ողջո՞ւյն:

Մոնթապը պատասխանեց ողջույնին, ապա հարցրեց.— Այս անգամ ինչ եք անում:

— Դեռ նույն խենթն եմ: Անձրևը հաճելի է զգալ: Սիրում եմ քայլել անձրևի տակ:

— Չեմ կարծում՝ ինձ դուր կգար:— ասաց նա:

— Դուր կգար, եթե փորձեիք:

— Երբեք չեմ փորձել:

Աղջիկը լիզեց շուրթերը:

— Նույնիսկ անձրևի համն է հաճելի:

— Ինչ եք անում: Անընդհատ ուզում եք մի նոր բան փորձել, գոնե մեկ անգամ:

— Երբեմն երկու:— Նա նայեց ձեռքի ափի մեջ գտնվող ինչ-որ բանի:

— Ինչ կա այդտեղ, — հարցրեց նա:

— Խատուտիկ է, կարծում եմ՝ այս տարվա վերջին խատուտիկներից մեկը: Մտքովս չէր անցնի, թե մարգագետնում այս ուշ աշնանը խատուտիկ կգտնեմ: Գիտե՞ք, այսպիսի մի բան կա, երբ խատուտիկ են գտնում, քսում են կզակին: Նայե՛ք:— Նա ծաղիկը ծիծաղելով քսեց կզակին:

— Իսկ ինչո՞ւ:

— Եթե հետք մնա, նշանակում է՝ ես սիրահարված եմ:

Դե՛, ասե՛ք, դեղնե՛ց:

— Մոնթապին ոչինչ չէր մնում անելու: Նայեց:

— Հը՛, հետք մնա՛ց:

— Դեղնեց:

— Հրաշալի է: Եկեք, հիմա էլ Դուք փորձեք:

— Իմը չի դեղնի:

— Հապա տեսնենք:

Նախքան կհաջողվեր ընկրկել, աղջիկն արդեն խատուտիկը մոտեցրել էր նրա կզակին: Նա հետ քաշվեց: Աղջիկը ծիծաղեց.

— Մի՛ շարժվեք:

Նա ուշադիր նայեց Մոնթագի կզակին և մռայլվեց:

— Դե՛:

— Ափսո՛ս,— բացականչեց նա,— Դուք ոչ ոքի սիրահարված չեք:

— Ո՛չ, սիրահարված եմ:

— Չի երևում:

— Ես շատ ուժգին սիրահարված եմ:— Նա փորձեց որևէ հարազատ դեմք մտաբերել, որպեսզի ասածը հավաստի հնչի, սակայն որևէ դեմք կերպարանք չառավ հիշողության մեջ:— Ես իրոք սիրահարված եմ:

— Խնդրում եմ, այդպես մի՛ նայեք:

— Պատճառը խատուտիկն է: Դուք ծաղկափոշին ամբողջովին թողեցիք Ձեր կզակին: Դրա համար էլ իմ կզակին հետք չմնաց:

— Հաստատ, դա է պատճառը: Վշտացրի Ձեզ, տեսնում եմ՝ վշտացրի: Ներեցե՛ք, իսկապես ներեցե՛ք ինձ:— Քլարիսը հպվեց նրա արմունկին:

— Ո՛չ, ո՛չ,— շտապեց պատասխանել նա,— ամեն բան կարգին է:

— Պետք է գնամ, ասե՛ք, որ ներում եք ինձ: Չեմ ուզում այսպես բարկացած մնաք:

— Բարկացած չեմ, վշտացա պարզապես:

— Պետք է գնամ, հոգեբույժիս պետք է հանդիպեմ: Ինձ ստիպում են գնալ: Դե, ես էլ տարբեր բաներ եմ հորինում և ասում նրան: Չգիտեմ՝ ինչ կարծիք ունի իմ մասին: Ասում է, որ ես սոխի գլուխ եմ, ում շերտ առ շերտ կճպել է պետք:

— Ես էլ եմ հակված այն կարծիքին, որ Դուք հոգեբույժի կարիք ունեք,— ասաց Մոնթագը:

— Չեմ հավատում, թե այդպես եք կարծում:

Մոնթագը խոր շունչ քաշեց, արտաշնչեց և ի վերջո ասաց.

— Ո՛չ, այդպես չեմ կարծում:

— Հոգեբույժն ուզում է իմանալ, թե ինչու եմ ես դուրս գալիս և թափառում անտառներում, ինչու եմ նայում թռչուններին և թիթեռներ որսում: Մի օր ցույց կտամ Ձեզ թիթեռների իմ հավաքածուն:

— Ցույց կտաք, այո՛:

— Նրանք ուզում են իմանալ՝ ինչ եմ անում ամբողջ օրը: Ես նրանց ասում եմ, որ երբեմն պարզապես նստում և մտածում եմ: Բայց ոչ մի կերպ չեմ ասում՝ ինչի մասին: Թող ջանան գլուխ հանել: Երբեմն էլ ասում եմ նրանց, որ սիրում եմ գլուխս հետ գցել, այ՛ այսպես, և թույլ տալ, որ անձրևը բերանս լցվի: Գինու համ ունի: Երբևէ փորձե՛լ եք:

— Ո՛չ, ես...

— Դուք ներել եք ինձ, այնպես չէ՛:

— Այո՛:— Նա մտածեց այդ մասին:— Այո՛, ներել եմ, Աստծուն է հայտնի՝ ինչու: Դուք նեղացնում եք, այնուամենայնիվ Ձեզ ներելը հեշտ է: Ասում եք՝ տասնյոթ տարեկան եք:

— Մեկ ամսից, այո՛, կլրանա տասնյոթս:

— Որքան տարօրինակ է, որքան անսովոր: Կինս երեսուն տարեկան է, սակայն Դուք երբեմն շատ ավելի մեծ եք թվում, քան նա: Չեմ հասկանում, ինչն է եմ ունենում այդ զգացողությունը:

— Դուք ինքներդ էլ յուրահատուկ եք, պարոն Մոնթագ: Երբեմն նույնիսկ մոռանում եմ, որ հրկիզող եք: Հիմա կարելի է կրկին անգամ բարկացնել Ձեզ:

— Հապա փորձե՛ք:

— Ինչպե՛ս սկսվեց: Ինչպե՛ս հայտնվեցիք այնտեղ: Ինչպե՛ս ընտրեցիք Ձեր աշխատանքը: Ինչպե՛ս պատահեց, որ

մտածեցիք ընտրել հենց այն, ինչ անում եք հիմա: Դուք նման չեք մյուսներին: Ես տեսել եմ մի քանիսին: Գիտեմ: Երբ խոսում եմ, նայում եք ինձ: Երբ ինչ-որ բան ասացի լուսնի մասին երեկ գիշեր, նայեցիք լուսնին: Մյուսները երբեք չէին անի դա: Մյուսները խոսքս բերանումս կթողնեին և կհեռանային: Կամ գուցե սպառնային ինձ: Այսօր ոչ ոք այլևս ժամանակ չունի որևէ մեկի համար: Դուք այն շատ քչերից մեկն եք, ովքեր հանդուրժում են ինձ: Ահա թե ինչու եմ կարծում, որ տարօրինակ է այն, որ Դուք հրկիզող եք, դա պարզապես Ձեզ համար չէ:

Մոնթագն այն զգացողությունն ուներ, ասես մարմինը երկու մասի բաժանվեց. մի մասը վառվում էր ջերմության մեջ, մյուսը սառույց էր կտրել, մի մասը փխրուն էր, մյուսը՝ սաստիկ կարծր, մեկը դողում էր, մյուսը՝ շարունակում անդրդվելի մնալ: Եվ այդ երկու կեսերը սաստիկ ճնշում էին միմյանց:

— Լավ կանեք՝ վազեք, թե չէ կուշանաք հոգեբույժի հետ հանդիպումից, — ասաց նա:

Աղջիկը վազեց հեռացավ՝ թողնելով նրան այդպես մենակ անձրևի տակ կանգնած: Բավականին ժամանակ էր անցել, երբ նա շարունակեց քայլել:

Դանդաղ էր քայլում, հետո անսպասելի հետ գցեց գլուխը, մի քանի վայրկյան միայն, և բացեց բերանը:

Մեխանիկական շունը և՛ քնած էր, և՛ արթուն, և՛ կենդանի էր, և՛ միաժամանակ մեռած իր՝ հրկիզողների կայանի մի խուլ անկյունում գտնվող հանդարտ գվվացող, մեղմ թրթռուն լույսով լուսավորված բնում: Լուսնկա գիշեր էր. կեսգիշերից ընդամենը մեկ ժամ էր անցել: Լուսնի թույլ շողերը պարզկա երկնքից ներս էին ընկել հսկայական պատուհանի տակ աննշան ցնցվող գազանի մարմնին, որ արույրից, պղնձից ու պողպատից էր կերտված: Լույսն ալիքվում էր նրա՝ սուտակափայլ ապակուց պատրաստված գավակի, նրա նեյլոնե ռունգերի՝ մազանոթի պես բարակ, դյուրազգաց մա-

գիկների վրա: Անհասկանալի արարածը սարդի չանչեր հիշեցնող ութ ռետինապատ թաթերի վրա մեղմ երերում, հազիվ նկատելի ցնցվում էր:

Մոնթազը ցած սահեց արույրե ձողով: Դուրս եկավ՝ նայելու քաղաքին. ամպերը ցրվել էին, լուսնյակ գիշեր էր: Ծխախոտ վառեց, քիչ անց վերադարձավ և կռանալով հայացքը սևեռեց մեխանիկական շանը: Այն ասես հսկայական մեղու լիներ, որ հովիտներից իր բույնն էր վերադարձել նեկտարով: Ծաղկափոշին, որ հավաքել էր, մոլեգնություն, խելացնորություն և մղձավանջներ ծնող թույն էր: Նրա մարմինը հագեցած էր այդ թանձր մաղձով, և հիմա քնել էր, որպեսզի կարողանար այն դուրս մղել իր մարմնից:

— Ողջոյն,— շշնջաց Մոնթազը՝ ինչպես միշտ կախարդված ոչ այն է մեռած, ոչ այն է կենդանի գազանով:

Գիշերները, երբ ձանձրանում էին, իսկ դա պատահում էր ամեն օր, հրկիզողները ցած էին սահում արույրե ձողերով, գործի էին դնում շան հոտառության համակարգը, որը սկսում էր տկտկոց արձակել, և կայանի տարածք էին բաց թողնում առնետներ, երբեմն էլ՝ ճտեր կամ կատուններ, որոնց, մեկ է, խեղդելու էին, և խաղադրույքներ էին կատարում՝ տեսնելու, թե շունն առաջինը նրանցից որին կճանկեր: Բաց էին թողնում կենդանիներին, և ընդամենը երեք վայրկյան անց խաղն ավարտվում էր. առնետը, կատուն կամ ճուտը չէին հասցնում տարածության կեսն անգամ անցնել, երբ հայտնվում էին շան փափուկ թաթերի մեջ, և նրա քթից դուրս ցցված չորս մատնաչափ պողպատյա սնամեջ ասեղը խրվում էր զոհի մարմնի մեջ՝ ներարկելով մեծ քանակությամբ մորֆին կամ պրոկաին: Զոհին այնուհետև նետում էին աղբակեզ վառարանը: Նոր խաղ էր սկսվում:

Մոնթազը սովորաբար մնում էր վերևում, մինչ տեղի էր ունենում այս ամենը: Միայն մեկ անգամ՝ երկու տարի առաջ, նա մրցեց հրկիզողներից մեկի՝ ամենամուլի խաղադրույքներ անողի հետ, և տանուլ տվեց ողջ շաբաթվա աշխատավարձը:

Արդյունքը եղավ Միլդրեդի կատաղի զայրոյթը, որն իր տգեղ արտահայտությունը գտավ նրա կառավարման դեմքի ու պրկված երակների մեջ: Սակայն հիմա նա գիշերներն անցկացնում էր անկողնում պառկած՝ դեմքով դեպի պատը՝ ականա լսելով ներքևից եկող ծիծաղի պոռթկումները, առնետների խուլ ոտնաձայները վազելիս, մկների ծվծվոցը՝ ջութակի հնչյունների նմանությամբ, և այս ամենին հաջորդող հանկարծահաս լռությունը, երբ Մոնթագին պատկերանում էր շունը, որ դարանակալի իր անաղմուկ ցատկով վրա էր պրծնում, ինչպես գիշերաթիթեռը՝ ուժեղ լույսի մեջ, գտնում, բռնում էր զոհին, նրա մարմնի մեջ մխրճում ասեղը, հետ գնում իր բոյնն ու մեռնում այնպես, ասես կոճակի մեկ սեղմումով անջատել էին նրան:

Մոնթագը դիպավ նրա դնչին:

Շունը գռմռաց:

Մոնթագը հետ ցատկեց:

Շունը բնի մեջ կիսով չափ կանգնեց ոտքերի վրա ու նայեց նրան. հանկարծակի կենդանացած նրա բիբերում կապտականաչավուն նեոնային կայծեր ցլացին: Նա նորից գռմռաց. արտասովոր խոխոռոց էր, որ էլեկտրական դզզոցի, ձեթի ճարճատյունի և մետաղական ճռինչի համակցություն էր: Թվում էր՝ ատամնավոր անիվ գործի դրվեց, որը ժանգից ու մաշվածությունից կասկածելի ճռինչ էր արձակում:

— Դե՛, դե՛, ծերո՛ւկ,— ասաց Մոնթագը. նրա սիրտը սկսեց արագ բաբախել:

Նա տեսավ, թե ինչպես շան մոտթի արծաթավուն ասեղը մոտ մեկ մատնաչափ դուրս ցցվեց, ապա նորից ներս քաշվեց, ցցվեց դուրս, ներս քաշվեց: Գռմռոցն ահագնանում էր, գազանը նայում էր Մոնթագին:

Մոնթագն ընկրկեց: Շունը մի քայլ արեց և դուրս եկավ բնից: Մոնթագը կառչեց արույրե ձողից: Ձողը, ի պատասխան, վեր սլացավ և նրան առաստաղի անցքով անաղմուկ դուրս հանեց վեր: Մոնթագը ոտքը դրեց կիսով չափ լուսա-

վորված վերնահարկի հարթակին: Նա դողում էր, դեմքը դալկացել էր: Ներքևում շունը հետ էր քաշվել, նստել իր ութ՝ ասես անհրական սարդանման թաթերի վրա և կրկին գվվում էր քթի տակ. աչքերի բազմանիստ ոսպնյակները խաղաղվել էին:

Մոնթագը միառժամանակ կանգ առավ ձողի մոտ, որպեսզի ուժգին վախն անցներ: Նրա հետևում կանաչ լուսամփոփի լույսի ներքո սեղանի շուրջը չորս տղամարդիկ թղթախաղ էին խաղում: Նրանք հպանցիկ նայեցին Մոնթագին, սակայն ոչինչ չասացին: Միայն մեկը, նա, ում գլխարկը՝ վրան փյունիկի խորհրդապատկեր, հուշում էր, որ հրկիզողների պետն է, վերջապես հետաքրքրվեց նրանով, և խաղաթղթերը վտիտ ձեռքերի մեջ պահած՝ ձայնեց սենյակի հակառակ ծայրից:

— Մոնթագ:

— Նա ինձ չի սիրում:

— Ո՞վ, շո՞ւնը:— Հրկիզապետը խաղաքարտերն էր զննում:— Վերջ տվեք: Նա չի կարող սիրել կամ չսիրել: Նա միայն որոշակի գործողություններ է կատարում: Բալիստիկ զենքի սկզբունքով է աշխատում: Շարժվում է իր համար հատուկ կանխորոշված հետագծով, գտնում է թիրախը, ինքնուրույն վերադառնում է բույնը, ինքնուրույն անջատվում է: Ընդամենը պղնձալար է, կուտակչային մարտկոցներ և էլեկտրաէներգիա:

Մոնթագը թուրք կուլ տվեց:

— Նրա հոտառության համակարգը կարելի է հարմարեցնել ցանկացած քիմիական միացության, ամինաթթուների, ծծմբի, ճարպերի և ալկալիների ցանկացած համադրության, այնպես չէ՛:

— Այդ ամենը մենք գիտենք: Մեր՝ բոլոր հրկիզողներիս օրգանիզմում եղած քիմիական նյութերի հավասարակշռության նմուշները գրանցված են ներքևի ընդհանուր քարտարանում: Ցանկացած մեկի համար հեշտ կլիներ շան «հիշողությունը» մասամբ հարմարեցնել այդ նմուշին, ասենք՝ ամի-

նաթթուներին: Միայն դա բավական կլիներ, որ կենդանին աներ այն, ինչ արեց քիչ առաջ, այսինքն՝ արձագանքեց իմ ներկայությանը:

— Գրողը տանի,— ասաց հրկիզապետը:

— Ընդամենը գրգռված է, սակայն ոչ կատաղած: «Հիշողությունը» ինչ—որ մեկի կողմից միայն մասամբ է հարմարեցված իմ նմուշին, այնպես, որ շունն ընդամենը գոմռում է, երբ հպվում եմ նրան:

— Ո՞վ այդպիսի բան կաներ,— հարցրեց հրկիզապետը,— Դուք այստեղ թշնամիներ չունեք, Գայ:

— Որքան ինձ հայտնի է՝ ոչ:

— Վաղը տեխնիկական սպասարկման աշխատակիցները կստուգեն շանը:

— Առաջին անգամ չէ, որ սպառնում է ինձ,— ասաց Մոնթապը,— երկու այսպիսի դեպք էլ անցյալ ամիս է եղել:

— Վաղն ամեն բան կկարգավորենք, մի՛ անհանգստացեք:

Սակայն Մոնթապը տեղից չշարժվեց. նա կանգնել մտածում էր իր տան նախասրահի օդանցքը ծածկող ցանցի մասին և այն մասին, թե ինչ կար դրա հետևում: Եթե այստեղ՝ հրկիզողների կայանում, որևէ մեկն իմանար օդանցքի պարունակության մասին, չէր «հայտնի» արդյոք շանը:

Պետը մոտեցավ ելքի մոտ կանգնած Մոնթապին և խուզարկու հայացքով նրան նայեց:

— Հետաքրքիր է,— մտախոհ ասաց Մոնթապը,— այնտեղ՝ ներքևում, ինչի՞ մասին է մտածում շունը գիշերները: Արդյո՞ք հարձակման պահին նա կենդանանում է: Արյունս սառչում է երակներիս մեջ այդ մտքից:

— Նա մտածում է միայն այն, ինչ մենք ենք ուզում, որ մտածի:

— Տխուր է,— ասաց Մոնթապը ցածրաձայն,— որովհետև այն, ինչ մենք ծրագրում ենք նրա մեջ, որսալը, գտնելն

ու սպանելն է: Ցավալի է, որ դա այն ամենն է, ինչ նրան վիճակված է իմանալ:

Հրկիզապետը, ում անունը Բիթի էր, անտարբեր փնջացրեց:

— Անհետթություն է Ձեր ասածը: Այս շունը մարդկային հանճարի հրաշալի ստեղծագործություն է, կարգին զենք, որը կարող է որսալ թիրախն ու երբեք չվրիպել:

— Ես էլ դա եմ ասում: Չէի ուզենա նրա հաջորդ զոհը լինել:

— Ինչո՞ւ եք այդպես կարծում: Որևէ առիթով մեղքի զգացում ունեք:

Մոնթագն ականա վեր բարձրացրեց հայացքն ու նայեց նրան:

Բիթին կանգնել ու սևեռուն նրան էր նայում. հրկիզապետի շրթունքներն ասես իրենից անկախ հեռացան միմյանցից, և նա սկսեց մեղմ ծիծաղել:

Մեկ օր, երկու օր, երեք, չորս, հինգ, վեց, յոթ օր: Եվ ամեն անգամ այս օրերի ընթացքում տնից դուրս գալիս նա գիտեր, որ Քլարիսն այնտեղ է՝ ինչ-որ տեղ՝ մոտերքում: Մի անգամ նա տեսավ, թե ինչպես էր Քլարիսը թափահարում ընկուզենու ճյուղերը, մեկ այլ անգամ տեսավ, թե ինչպես էր մարգագետնում նստած՝ կապույտ սվիտեր գործում, երեք թե չորս անգամ իր տան շքամուտքի մոտ նա ուշ աշնան ծաղիկների փունջ գտավ, հետո՝ շագանակներով լի մի փոքրիկ տոպրակ, իսկ ավելի ուշ՝ սպիտակ թղթին գնդասեղով ամրացված աշնանային տերևների փունջ՝ իր տան դռանը կպցրած: Ամեն օր Քլարիսը նրա հետ քայլում էր մինչև փողոցի անկյունը: Մի օր անձրևում էր, հաջորդ օրը երկինքն անամպ էր, մեկ օր անց սաստիկ քամի էր, որին հաջորդող օրը մեղմ ու անքամի էր լինում, իսկ հետո այնպես շոգ էր լինում, ինչպես ամռան տապին, որ ուշ կեսօրին Քլարիսի դեմքին զգալի արևայրուք էր լինում:

— Ինչի՞ց է,— ասաց մի օր Մոնթազը, երբ հասել էին մետրոյի մուտքին,— այն զգացողությունն ունեմ, ասես Ձեզ երկար տարիներ է, ինչ ճանաչում եմ:

— Որովհետև Դուք ինձ դուր եք գալիս,— պատասխանեց աղջիկը,— և որովհետև ինձ Ձեզնից ոչինչ պետք չէ: Եվ որովհետև մենք լավ ենք ճանաչում միմյանց:

— Դուք ստիպում եք, որ ես ինձ Ձեր հայրը լինելու չափ ծեր զգամ:

— Բացատրեք՝ հասկանամ,— ասաց աղջիկը,— ինչո՞ւ ինձ պես մի աղջիկ չունեք, եթե այդքան շատ եք սիրում երեխաներին:

— Չգիտեմ:

— Կատակում եք:

— Նկատի ունեմ...— Նա լռեց ու գլուխն օրորեց:— Դե... կինս... նա երբեք չի ուզել երեխաներ ունենալ:

Ժպիտը մարեց աղջկա դեմքին:

— Ներեցե՞ք, իսկապես ներեցե՞ք ինձ, կարծում էի՝ հոգուս հետ եք խաղում: Հիմարի մեկն եմ:

— Ո՛չ, ո՛չ,— ասաց նա,— լավ հարց էր: Վաղուց ոչ ոք իմ հանդեպ բավարար հոգածություն չէր դրսևորել այդ հարցը տալու համար: Ճիշտ հարց տվեցիք:

— Եկեք ուրիշ բանից խոսենք: Երբևէ հին տերևների բույրը զգացե՞լ եք: Դարչինի բույր ունեն: Հապա փորձե՞ք զգալ:

— Ինչո՞ւ: Այո՛, դարչին են բուրում:

Աղջիկն իր փայլող մուգ աչքերով նրան նայեց:

— Դուք միշտ անակնկալի եք գալիս:

— Այդ նրանից է, որ երբևէ ժամանակ չեմ ունեցել...

— Իսկ հսկայական բարձրության վրա տեղադրված գովազդային վահանակներին նայեցի՞ք: Հիշո՞ւմ եք՝ ասել էի:

— Կարծում եմ՝ նայել եմ:— Մոնթագն ակամա ծիծաղեց:

— Հիմա ավելի հմայիչ եք ծիծաղում, քան առաջ:

— Իրո՞ք:

— Շատ ավելի անբռնազբոս:

Մոնթազն անկաշկանդ ու թեթև էր զգում:

— Ինչո՞ւ դպրոցում չեք: Տեսնում եմ՝ ինչպես եք ամեն օր դեսուդեն թափառում:

— Հավատացե՛ք, նրանք ինձ չեն կարոտում,— ասաց աղջիկը,— ասում են՝ ես մարդամոտ չեմ, շփվող չեմ: Այնքան տարօրինակ է: Իրականում ես շատ մարդամոտ եմ: Նայած թե ինչպես ես մեկնաբանում մարդամոտ լինելը, ճիշտ չէ: Իմ կարծիքով մարդամոտ լինել նշանակում է հենց այսպիսին լինել, այսպիսի բաներից խոսել:— Նա ափերի մեջ շխկշխկացրեց մի քանի շագանակներ, որոնք գտել էր իրենց ետնաբակում՝ ծառի տակ թափված:— Կամ խոսել այն մասին, թե որքան տարօրինակ է աշխարհը: Մարդկանց հետ լինելը գեղեցիկ է: Սակայն չեմ կարծում, թե մի խումբ մարդիկ հավաքելն ու թույլ չտալը, որ խոսեն, շփվել է նշանակում: Ճիշտ չեմ: Մեկ հեռուստադասաժամ, բասկետբոլի, բեյսբոլի կամ վազքի մեկ դասաժամ, այնուհետև պատմության դասաժամ կամ նկարչության, հետո էլի մարզական դասաժամեր: Սակայն, գիտե՛ք, մենք երբեք հարցեր չենք տալիս, համենայն դեպս՝ մեծամասնությունը, միայն մեր չհնչեցրած հարցերի պատասխանների տարափն է տեղում մեր գլխին՝ դը՛նգ, դը՛նգ, դը՛նգ, որից հետո մի չորս ժամ էլ նստում ու հետևում ենք հեռուստաէկրանին, որտեղից ուսուցիչը դասախոսություն է կարդում: Այս ամենն ինձ համար ամենևին էլ շփվել չի նշանակում: Դատարկ տեղը ջուր են ծեծում ու հետն էլ հավատացնում, թե գինի է: Օրվա վերջում այնքան հյուծված ենք լինում, որ ոչինչ չենք կարողանում անել, միայն քնել ենք ուզում կամ զբոսայգի գնալ՝ մարդկանց հետ կռիվ սարքելու, կամ պատուհաններ կոտրելու համար նախատեսված հատուկ սրահ՝ ապակիներ փշրելու, կամ հատուկ տաղավար՝ պողպատե մեծ գնդերով մեքենաներ ջախջախելու: Կամ էլ մեքենաներով փողոցներ ենք դուրս գալիս՝ մրցելու իրար հետ: Մի խաղ կա. հաղթում է նա, ով ամենաշատն է համարձակվում մոտենալ

փողոցային լապտերների պոնտերին կամ հարևան մեքենաների անվադողերին: Համաձայն եմ, հա՛, ես այն եմ, ինչ նրանք ասում են իմ մասին. ընկերներ չունեմ, դրանից կարելի է ենթադրել, որ խախտված եմ: Սակայն այն ամենը, ինչ իմ հասակակիցներն անում են շուրջս, գոռալը կամ վայրենու պես պարելն է կամ միմյանց ծեծելը: Նկատել եք՝ ինչպես են մարդիկ վիրավորում միմյանց մեր օրերում:

— Այնպես ես խոսում, ասես տարեց կին լինես:

— Երբեմն ինձ հենց այդպիսին էլ զգում եմ: Իմ հասակակիցներն ինձ վախ են ներշնչում: Նրանք սպանում են միմյանց: Նախկինում է՛լ է այդպես եղել: Մորեղբայրս ասում է, որ ոչ: Միայն անցյալ տարի իմ ընկերներից վեցը մահացան հրազենային կրակոցներից: Տասը ավտովթարի զոհ դարձան: Նրանք ինձ վախ են ներշնչում, նրանք դա զգում են, հենց այդ պատճառով էլ չեն սիրում ինձ: Մորեղբայրս ասում է, որ նախկինում երեխաներն իրար չեն սպանել: Նրան իր պապն է այդպես ասել: Սակայն դա շատ վաղուց է եղել, երբ ամեն բան բոլորովին այլ էր, քան հիմա: Հորեղբայրս ասում է՝ նրանք կարևորել են պատասխանատվությունը: Ես պատասխանատու աղջիկ եմ, գիտե՞ք: Ինձ մեկ-երկու անգամ ապտակել են, երբ խուսափել եմ պատասխանատվությունից: Եվ այժմ ես ինքս եմ անում մեր գնումներն ու տունն էլ ինքս եմ կարգի բերում: Ես ամենից շատ,— շարունակեց Քլարիսը,— սիրում եմ մարդկանց դիտել: Երբեմն ողջ օրն անցկացնում եմ մետրոյում, նայում ու լսում եմ մարդկանց: Ընդամենն ուզում եմ ինձ համար պարզել, թե նրանք ովքեր են, ինչ են ուզում և ուր են գնում: Երբեմն նույնիսկ կեսգիշերին զբոսայգի եմ գնում և հրթիռային ավտոմեքենաներով զբոսնում քաղաքի արվարձաններով: Ոստիկանների պետքն էլ չէ, կարևորը, որ մեքենաներն ապահովագրված լինեն: Բավական է, որ նրանք վճարեն իրենց տասը հազար դոլար արժողությամբ ապահովագրության համար, և՛ նրանք են գոհ ու երջանիկ, և՛ ոստիկանները: Երբեմն գաղտնի ականջ եմ դնում մարդկանց

խոսակցություններին մետրոյում կամ էլ հանքային ջրերի կրպակների մոտ: Եվ գիտե՞ք ինչ:

— Ի՞նչ:

— Մարդիկ ոչ մի բանի մասին էլ չեն խոսում:

— Ո՞նց կարող է պատահել:

— Այո՛, ոչ մի բանի մասին: Անընդհատ խոսում են մեքենաներից, հագուստից, լողավազաններից և ամեն ինչի վերջում անիմաստ բացականչում են՝ փառահեղ է: Սակայն նրանք բոլորը նույն բանն են ասում, բոլորն անխտիր: Իսկ սրճարաններում գրեթե միշտ միևնույն հումորային հոլովակներն են պտտվում, գրեթե միշտ, իսկ երաժշտական պատերին միշտ միևնույն գունավոր նախշերն են վետվետում. ամբողջը միայն գույների խաղ է, անիմաստ, վերացական մի բան: Թանգարանների մասին էլ չասեմ, եղել էք որևէ թանգարանում: Ամեն բան վերացական է: Այսօր մեր շուրջն ամեն բան վերացական է ու անիմաստ: Մորեղբայրս ասում է, թե մի ժամանակ ամեն բան այլ է եղել: Շատ վաղ ժամանակներում նկարներում պատկերված իրերը հասկանալի են եղել, նույնիսկ մարդիկ են պատկերված եղել կտավներում:

— Մորեղբայրս ասում է, մորեղբայրս ասում է, անընդհատ դա եք կրկնում: Նա պետք է որ նշանավոր մեկը լինի:

— Այո՛, իհարկե: Իհարկե այդպես է: Դե լավ, ես պետք է գնամ: Ցտեսություն, պարո՛ն Մոնթապ:

— Ցտեսություն:

— Ցտեսություն...

Մեկ օր, երկու օր, երեք օր, չորս, հինգ, վեց, յոթ օրեր. հրկիզողների կայան:

— Մոնթապ, այդ սյունը մագլցում եք այնպես, ինչպես թռչունն է թեթև նստում ճյուղին:

Երրորդ օր:

— Մոնթապ, տեսնում եմ՝ ետնաբակով եք ներս մտնում: Շունն անհանգստացնում է Ձեզ:

— Ո՛հ, ո՛հ:

Չորրորդ օր:

— Մոնթապ, զվարճալի դեպք պատմեմ՝ լսեք: Այսօր առավոտյան եմ լսել: Սիեթլում մի հրկիզող մեխանիկական շան հոտառության համակարգը միտումնավոր հարմարեցրել է իր քիմիական նմուշին և ազատ է արձակել նրան: Ինքնասպանության ինչպիսի տարբերակ:

Հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ օրեր:

Հետո Քլարիսն անհետացավ: Նա չգիտեր՝ ինչ էր կատարվում այդ երեկոյան, սակայն աշխարհի այն հատվածում, որտեղ ինքն էր, Քլարիսն այժմ չկար: Մարգագետինը դատարկ էր, ծառերն անսաղարթ էին, փողոցը՝ ամայի, և Մոնթագը նույնիսկ չէր հասցրել հասկանալ՝ կարոտում էր արդյոք աղջկան, չէր հասցրել գիտակցել անգամ՝ փնտրում էր արդյոք նրան, փաստն այն էր, որ երբ մետրոյի կայարանին հասավ, անորոշ տագնապ էր արթնացել նրա ներսում: Ինչ-որ բան այն չէր: Նրա վերջին մեկ շաբաթվա առօրյայում ինչ-որ բան էր խախտվել: Ճիշտ է, այդ կարգ ու կանոնը ընդամենը մի քանի օր առաջ էր հաստատվել, բայց այնուամենայնիվ... քիչ մնաց շրջվեր ու հետ դառնար, նորից քայլեր տնից կայարան ընկած հատվածը, որպեսզի աղջկան հայտնվելու առիթ տար: Նա վստահ էր՝ եթե անցներ նույն ճանապարհը, ամեն բան իր տեղը կընկներ: Չհասցրեց: Գնացքը մոտենում էր: Ոչինչ անել չէր կարող այլևս:

Խաղաթղթերի շրշուն, ձեռքերի շարժում, կոպերի թրթիռ և կայանի առաստաղից եկող ձայնային ազդարար ժամացույցի միալար գվվոցը՝ գիշերվա ժամը մեկն անց է երեսունհինգ րոպե, հինգշաբթի, նոյեմբերի չորսը. մեկն անց է երեսունվեց րոպե, մեկն անց է երեսունյոթ րոպե: Խաղաթղթերի խշշոց սեղանին: Բոլոր ձայները հասնում էին Մոնթագին, այդ ձայներից ծնված մտապատկերները թափանցում էին նրա կոպերից ներս, որոնցով նա փորձում էր մի

պահ պարսպել իր կապը շրջապատի հետ: Փակ աչքերով էլ տեսնում ու զգում էր ամեն բան՝ լույսերի մեջ ողողված կայանը, շրջապատի լռությունը, ոսկեգույն, արծաթագույն, պղնձագույն մետաղադրամների փայլը, խաղաքարտերը ձեռքների մեջ պահած տղամարդկանց հոգոցները սեղանի մյուս ծայրից, նրանց սպասումը և ձայնային ազդարար ժամացույցի՝ նյարդեր սղոցող ընդմիջումները՝ մեկն անց է քառասունհինգ րոպե... այսպիսի ցուրտ տարվա ցրտաշունչ առավուտի առավել ցրտաշունչ այս ժամին:

— Ինչ է պատահել, Մոնթագ:

Մոնթագը բացեց աչքերը:

Սենյակի հեռու անկյունում բվվում էր ռադիոն. «...ամեն ժամ պատերազմ կարող է բռնկվել: Երկիրը ոտքի է ելել պաշտպանելու իր...»:

Հրակայանը ցնցվեց, երբ ռմբակոծիչները սուրացին առավուտվա խավար երկնքում:

Մոնթագը թարթեց աչքերը: Բիթին նրան էր նայում՝ որպես թանգարանային նմուշի: Ցանկացած պահի Բիթին կարող էր վեր կենալ և քայլել դեպի նա, հավել նրան, թափանցել նրա ինքնագիտակցության խորին շերտերը, շոշափել նրա մեղքը: Մեղքը: Ինչ մեղք էր դա:

— Քո հերթն է, խաղա՛, Մոնթագ:

Մոնթագը նայեց իր շուրջը խմբված տղամարդկանց: Նրանց դեմքերը թխագունել էին հազարավոր իրական և տասնյակ հազարավոր երևակայական հրդեհների բոցերից, հրկիզողի աշխատանքը շառագույն էր դարձրել նրանց այտերը, բորբոքել նրանց աչքերը: Նրանք անթարթ նայում էին իրենց պլատինե բռնկիչների բոցերին, երբ վառում էին շուրթերի արանքում գրեթե միշտ պահած իրենց ծխամորճները: Այս տղամարդիկ սև սաթի գույնի մազեր ունեին, թուփ հոնքեր, և, թեև կոկիկ սափրված էին, մոխիրն ասես թափանցել էր նրանց մուգ կապտագույն այտերի մեջ՝ որպես մասնագիտությամբ պայմանավորված ժառանգություն: Մոնթագն

ասես արթնացավ թմբիրից, բերանը ակամա բացվեց. նա երբևէ հանդիպել էր որևէ հրկիզողի, ում մազերը և հոնքերը սև եղած չլինեին, և որի դեմքին դաջված չլինեք պողպատի կապտագույնը նույնիսկ այն դեպքում, երբ նա կոկիկ սափրված էր: Այս բոլոր տղամարդիկ իր հայելային արտապատկերներն էին: Ինչ է, նրանց ըստ իրենց արտաքինի և հակումներին էին ընտրել այս աշխատանքի համար: Ասես ծնվել էին մոխրի մրագույնը դեմքներին, իսկ նրանց մշտապես վառ ծխամորճներից շարունակ խանձահոտ էր գալիս: Հրկիզապետ Բիթին վեր կացավ աթոռից, ծխի քուլաների մեջ ծխախոտի նոր տուփ բացեց՝ ափի մեջ ճմռելով վրայի պոլիէթիլենային շերտը. ձայնը կրակի ճարճատյուն հիշեցրեց:

Մոնթագը նայեց ձեռքի խաղաքարտերին:

— Ես... ես մտքերով էի ընկել: Անցյալ շաբաթվա հրդեհը մտաբերեցի, այն մարդուն, ում գրադարանը հրդեհեցինք: Ինչ եղավ նրան:

— Նրան հոգեբուժարան տարան: Խենթի պես ճչում էր:

— Բայց նա խելագար չէր:

Բիթին լուռ խառնեց խաղաթղթերը:

— Ցանկացած մեկը, ով կարծում է, թե կարող է հիմաբացնել կառավարությանն ու մեզ, խելագար է:

— Ես փորձել եմ ինձ նրանց տեղը դնել: Ինչ զգացողություն կունենայինք: Նկատի ունեմ, եթե հրկիզողներն այրեին մեր տներն ու գրքերը:

— Մենք գրքեր չունենք:

— Իսկ եթե ունենայինք;

— Ինչ է, Դուք ունեք:

Բիթին հայացքը մեխեց Մոնթագի վրա:

— Ո՛չ:— Մոնթագի հայացքը շրջանցեց տղամարդկանց և նրանց թիկունքում սևեռվեց պատին փակցված արգելված գրքերի անվերջանալի ցուցակներին: Դրանց վերնագրերը մոխրանում էին կրակի ճիրաններում. տարիներ ու դարեր էին կործանվում իր իսկ կացնի հարվածների ներքո իր իսկ ձեռ-

քում սեղմած փողոկից ցայտող շիթից, որ ջուր չէր, այլ նավթ:— Ո՛չ,— կրկնեց նա ու իրեն պատկերացրեց իր տան նախասրահում. զով քամի փչեց՝ հանդարտ ու թեթև, հետ հրեց օդանցքի ցանցը, մարմանդ հոսանքով հասավ իրեն, զովացրեց քրտնած դեմքը: Հաջորդ վայրկյանին նա արդեն կանաչ զբոսայգում էր և զրուցում էր ծեր, շատ ծեր մի մարդու հետ. այգում նույնպես պաղ քամի էր փչում:

— Մոնթագը երկմտեց, ապա հարցրեց.— մի՞շտ է մեր աշխատանքն այսպիսին եղել: Հրկիզողների ջոկատներ մի՞շտ են եղել: Ասում են՝ եղել են ժամանակներ, երբ...

— Եղել են ժամանակներ, եղել են ժամանակներ,— ընդհատեց նրան Բիթին,— ինչ է նշանակում այս ամենը:

— Հիմար,— քթի տակ ինքն իրեն հանդիմանեց Մոնթագը,— ինքդ քեզ մատնում ես: Վերջին հրդեհի ժամանակ նրա աչքով ընկավ հեքիաթների մի գիրք, և ինքը հասցրեց ընթերցել առաջին տողը:— Նկատի ունեմ,— սթափվեց Մոնթագը,— նախկինում տները բացարձակ հրակայուն են եղել:— Հանկարծ նրան թվաց՝ շատ ավելի երիտասարդ ձայն էր խոսում իր փոխարեն, նա ընդամենը բացեց բերանը, իսկ խոսողը Քլարիս Մըքլեյլնն էր:— Նախկինում հրկիզողները հրշեջներ չէն կոչվել արդյոք, սեփական նախաձեռնությամբ հրդեհներ հրահրելու փոխարեն մարել են դրանք, կանխել դրանց տարածումը:

— Բավական է:— Սթոնմենն ու Բլեքը կայծակնային արագությամբ սեղանին դրեցին իրենց կանոնագրքերը, որտեղ նաև Ամերիկայի հրկիզողների պատմությունն էր ամրագրված, որպեսզի Մոնթագը, որ վաղուց արդեն ծանոթ էր դրանց, կրկին կարողանար կարդալ:

Հիմնադրվել է 1790 թվականին՝ այրելու համար անգլամետ գրականությունը գաղութներում: Առաջին հրկիզողը Բենջամին Ֆրանկլինն է եղել:

Կանոն

1. Արագ արձագանքել տագնապի ազդանշանին:
2. Արագ իրականացնել հրկիզելու գործողությունը:
3. Այրել ամեն բան:
4. Արդյունքների մասին անմիջապես զեկուցել կայան:
5. Պահպանել զգոնություն մինչև հաջորդ տագնապի ազդանշանը:

Բոլորը նայում էին Մոնթագին: Նա չէր շարժվում:

Հանկարծ որոտաց տագնապի ազդանշանը:

Առաստաղին տեղադրված կոչնակը երկու հարյուր ահագանգ հնչեցրեց: Չորս աթոռները վայրկենապես դատարկվեցին: Խաղաքարտերը ձյան փաթիլների պես ներքև թափվեցին: Արույրե ձողը ցնցվեց: Տղամարդիկ անհետացան:

Մոնթագը մնացել էր աթոռին նստած: Ներքևում նարնջագույն վիշապն ասես կենդանացավ:

Նա, ինչպես արթմնի երագի մեջ, ձողով ցած սահեց:

Մեխանիկական շունը ոտքի ելավ բնի մեջ՝ աչքերում կանաչ կրակներ:

— Մոնթագ, Ձեր սաղավարտն եք մոռացել:

Նա արագ ճանկեց պատին կախված սաղավարտը, վազեց, ցատկեց մեքենայի մեջ, և նրանք հեռացան: Մթության մեջ քամին տարածում էր տագնապի ազդանշանը և շարժիչի զորեղ մետաղական հռնդյունը:

Ծեփաթափ եռահարկ տուն էր քաղաքի հին թաղամասերից մեկում: Մեկ դար առաջ էր կառուցվել, և մյուս տների նման շատ տարիներ առաջ այն հրակայուն նյութի շերտով էին պատել: Այդ պաշտպանիչ շերտը, ըստ երևոյթին, միակ գրավականն էր այն բանի, որ տունն այժմ կանգուն էր:

— Տեղ հասանք:

Շարժիչի աղմուկը մարեց: Բիթին, Սթոնմենը և Բլեքը վազքով մայթ բարձրացան. իրենց ծանր հրակայուն արտա-

հագուստներով նրանք կերպափոխվել, անճոռնի էին դարձել: Մոնթազը հետևեց նրանց:

Նրանք ջարդեցին շքամուտքի դուռն ու հարձակվեցին կնոջ վրա, ով փախչելու որևէ փորձ չէր էլ պատրաստվում անել: Նա պարզապես կանգնել, մեղմ օրորվում էր, ասես հավասարակշռությունը կորցրած լիներ. աչքերը գամել էր դիմացի պատի դատարկությանը, կարծես ինչ-որ բանով ուժգին հարվածել էին գլխին: Լեզուն շարժվում էր բերանի մեջ, աչքերը փորձում էին ինչ-որ բան մտաբերել: Երբ հիշեց՝ ինչ է ուզում մտաբերել, շրթունքները շարժվեցին:

— Արիացեք, վարպետ Ռիդլի, Աստծու ողորմածությամբ այսօր մենք այնպիսի մոմավառություն կսարքենք Անգլիայում, որ անհնար կլինի հանգցնել, վստահեցնում եմ¹:

— Դե բավական է, — ասաց Բիթին, — որտեղ են դրանք:

Նա կնոջն այնպիսի անմիջականությամբ ապտակեց, ասես, ըստ էության, դա միակ ճշգրիտ քայլն էր այդ պահին, և կրկնեց հարցը: Ծեր կինը աչքերը սևեռեց Բիթիի վրա:

— Դուք գիտեք՝ դրանք որտեղ են, հակառակ դեպքում չէիք գա, — ասաց նա:

Սթոնմենը գրպանից հանեց հեռախոսային ահազանգի քարտի պատճենը, որի հակառակ կողմում բողոք-ահազանգի տեքստն էր. «Հիմքեր կան կասկածելու համար 11 տան ձեղնահարկը, Էլմ Սիթի — Ի. Բ.»:

— Հավանաբար տիկին Բլեյքն է՝ հարևանուհիս, — ասաց կինը՝ կարդալով անվան և ազգանվան սկզբնատառերը:

— Լավ, տղաներ, գտնենք դրանք:

¹ Հեղինակն ակնարկում է Անգլիայի թագուհի Մերի I-ի (1553–1558) հալածանքների գոհ դարձած օքսֆորդյան նահատակներից մեկի՝ Հյու Լաթիմերի՝ 1555 թվականի հոկտեմբերի 16-ի ողջակիզման հանրային արարողության ժամանակ արտասանած կոչը՝ ուղղված իր բախտակից Նիքոլաս Ռիդլիին: Այդ օրը նրանք երկուսն էլ ավելի քան մեկ տարի տևած դատավարությունից հետո Օքսֆորդի Բալիոլ քոլեջի հրապարակում ողջակիզվեցին իրենց ուսմունքների և դավանանքի համար:

Հաջորդ վայրկյանին նրանք արդեն հնաբույր վերնահարկում էին՝ խավարի մեջ: Դեսուդեն ճոճելով արծաթափայլ կացինները՝ դռներ էին ջարդում, այնպիսի հարայ-հրոցներով էին այս ու այն կողմ վազվզում, բախվում իրար, որ վայել էր պատանիներին: Գրքերի տարափ տեղաց Մոնթագի գլխին, մինչ նա սարսռալով վեր էր բարձրանում ոլորապտույտ աստիճաններով: Որքան անհարմարություններ կային այժմ: Առաջ մոմ փչելու չափ հեշտ էր ամեն բան: Նախ հայտնվում էին ոստիկանները, կաչուն ժապավենով փակում էին զոհի բերանը, ապա կապկպում էին նրան, զցում իրենց փայլվիլուն բզեզ մեքենայի մեջ և ինչ-որ տեղ տանում: Այնպես, որ հրկիզողներն արդեն դատարկ տունն էին մտնում: Նրանք ստիպված չէին լինում վիրավորել որևէ մեկին, միայն իրերն էին վնասում: Իսկ իրերը ցավ չեն զգում, իրերը ոչինչ չեն զգում, չեն ճշում, չեն հեծկտում, ինչպես որ կարող էր ճշալ ու գոռալ այս կինը: Եվ հետո ոչինչ չէր տանջում խիղճը: Պարզապես մաքրում էիր տունն ավելորդություններից. մաքրարարի պարզագույն աշխատանք: Ամեն բան արագ էր արվում. լցնում էիր նավթը, ապա հարցնում՝ ո՞վ լուցկի ունի:

Սակայն այժմ՝ այս գիշեր, ինչ-որ մեկը թերացել էր: Կինը փչացնում էր ողջ արարողակարգը: Տղամարդիկ չափազանց բարձր էին աղմկում, ծիծաղում, կատակում էին, որպեսզի գոնե ինչ-որ բանով լցնեին ներքևում թանձրացող նրա դատապարտող լռությունը: Հետզհետե սաստկացող այդ լռությամբ նա դատարկ սենյակներին ստիպում էր ոռնալ անտեղի դատապարտվածության ցավից և պատերից մեղադրանքի փոշի մաղել, որը ներծծվում էր նրանց ռունգերի մեջ, մինչ նրանք խորանում էին դեպի տան հեռավոր անկյունները: Այս ամենն ընդունելի չէր, ճիշտ չէր: Մոնթագին սարսափելի նյարդայնացնում էր այս ամենը: Կինը չպետք է այստեղ լիներ, այս ամենի կենտրոնում:

Գրքերը թափվում էին նրա ուսերին, ձեռքերին, նրա վեր պարզած դեմքին: Մի գիրք, թեթև օրորվելով, ձեռնասուն ճեր-

մակ աղավնու հնազանդ թևաբախությամբ իջավ նրա ձեռքերի մեջ: Աղոտ, երերուն լուսի մեջ մի էջ բացվեց ու ձյունաթույր փետուրի պես կախ ընկավ՝ վրան վայելչագիր տառեր: Այդ ամբողջ եռուզեռի մեջ Մոնթազն ընդամենը մի ակնթարթ որսաց տողերից մեկը, որը վայրկենապես շամփրեց նրա ուղեղն ու դեռ երկար էր խարանի պես դաջված մնալու այնտեղ. «ժամանակը նիրի է մտել կեսօրվա տապին»¹: Նա վայր գցեց գիրքը: Հաջորդ վայրկյանին մեկ այլ գիրք հայտնվեց նրա ափերի մեջ:

— Մոնթազ, վերն բարձրացեք:

Մոնթազի ձեռքը մեքենայաբար փակվեց, անզուսպ անձնվիրությամբ գիրքը ճզմեց—մոտեցրեց կրծքին. այդ պահին նա մոլագարի էր նման: Ձեղնահարկում տղամարդիկ, փոշու ամպ բարձրացնելով, ամսագրերի կապոցներ էին նետում ցած: Ամսագրերն ընկնում էին մորթված թռչունների պես. նրանց անկենդան մարմիններով շրջապատված՝ կինը կանգնել էր ներքևում: Նա ասես փոքրիկ աղջիկ լիներ:

Մոնթազը ոչինչ չէր արել: Իր ձեռքն էր արել ամեն բան, ձեռքը, որ իր սեփական ուղեղն ուներ, դողացող մատները, որոնցից յուրաքանչյուրն իր խղճմտանքն ու հետաքրքրությունն ուներ: Ու հիմա ձեռքն իրեն գողության դրդեց: Ձեռքն ինքը աճպարարի հմտությամբ գիրքը մղեց թևի տակ, ամուր սեղմեց այն քրտնած կոնատակին և դատարկ դուրս եկավ այնտեղից: «Տեսե՛ք: Մեղավոր չեմ: Հապա նայե՛ք, ես ոչինչ չեմ արել»:

Մոնթազը դողահար, ակնապիշ նայում էր այդ սպիտակ ձեռքին: Մերթ հեռացնում էր իրենից, ասես կարճատես լիներ, մերթ մոտեցնում իրեն՝ ասես կուրացած:

— Մոնթազ:

Մոնթազը ջղաձիգ շրջվեց դեպի ձայնը:

— Մի՛ կանգնեք այդտեղ, տխմար:

¹ Քաղված է շոտլանդացի բանաստեղծ Ալեքսանդր Սմիթի «Դրիմթորփ, գյուղում գրված էսսեներ» երկից, 1863:

Գրքերը թափված էին իրար վրա, ինչպես չորանալու հանված ձկների կոյտեր: Հրկիզողները ցատկում էին դրանց վրայով, սայթաքում, ընկնում: Վերնագրերը մի պահ առկայծում էին նրանց տենդագին աչքերի մեջ ու մարում:

— Նավթ:

Հրկիզողների ուսերին ամրացված 451 թվակիր բաքերից սառը հեղուկը հորդեց՝ ողողելով բոլոր սենյակներն այնտեղ ամփոփված գրքերով:

Ապա փութկոտ իջան սանդուղքներով: Նավթի ծխի ու գոլորշու մեջ Մոնթագը երերալով հետևեց նրանց:

— Դ՛նրս եկեք,— կարգադրեցին նրանք կնոջը:

Կինը ծնկի էր իջել գրքերի մեջ, հավում էր թրջված կաշվե և ստվարաթղթե կազմերին, մատները սահեցնում ոսկեգօծ վերնագրերի վրայով, մինչդեռ աչքերը մեղադրանքով հառել էր Մոնթագին:

— Ձեզ երբեք չի հաջողվի ոչնչացնել իմ գրքերը,— ասաց նա:

— Սթափվեք, տիկին, Դուք ծանոթ եք օրենքին: Այդ գրքերում ամեն ինչ հակասական է: Տարիներ ի վեր փակվել եք այստեղ՝ այս անիծյալ Բաբելոնյան աշտարակում: Դ՛նրս եկեք այդ մեռյալ աշխարհից: Այդ գրքերի հերոսները երբեք իրական չեն եղել: Հետևեք մեզ:

Կինն օրորեց գլուխը:

— Քիչ հետո ողջ տունը մոխրի վերածված կլինի,— ասաց Բիթին:

Հրկիզողներն անճոռնի քայլածքով ուղղվեցին դեպի դուռը: Նրանք փութկոտ հայացքներ գցեցին Մոնթագի վրա, որ կանգնել էր կնոջ կողքին:

— Հո մտադիր չե՞ք նրան այստեղ թողնելու,— ըմբոստացավ նա:

— Նա ոչ մի կերպ չի ուզում հեռանալ:

— Ուրեմն ուժով հեռացրեք:

Բիթին բարձրացրեց ձեռքը, որի մեջ բռնկիչն էր:— Կայան վերադառնալու ժամանակն է: Բացի այդ՝ այս մոլեռանդները միշտ ինքնասպանության փորձ են անում. ծանոթ վարքագիծ է:

Մոնթագը բռնեց կնոջ թևը:

— Կարող եք ինձ հետ գալ:

— Ո՛չ,— պատասխանեց կինը,— ամեն դեպքում շնորհակալ եմ Ձեզ:

— Հաշվում եմ մինչև տասը:— Լսվեց Բիթիի ձայնը,— մեկ, երկու:

— Խնդրում եմ,— կնոջը հորդորեց Բիթին:

— Հեռացե՛ք,— առարկեց կինը:

— Երեք, չորս:

— Այս կողմ,— Մոնթագը քաշեց կնոջ թևից:

— Այստեղ կմնամ,— ցածրաձայն պատասխանեց կինը:

— Հինգ, վեց:

— Կարող եք այլևս չհաշվել,— ասաց կինը: Նա բացեց բռունցքված ափը, որտեղ Մոնթագը ինչ-որ բարակ բան տեսավ:

Սովորական խոհանոցային լուցկու հատիկ էր:

Հրկիզողներն ակնթարթորեն դուրս նետվեցին տնից և հեռու փախան: Հրկիզապետ Բիթին, փորձելով պահպանել արժանապատվությունը, դանդաղ նահանջեց դեպի ջրամուտքի դուռը՝ վարդագույն դեմքին հազարավոր կիզիչ հրդեհների և գիշերային տագնապների կապույտին տվող փայլը: «Աստված իմ,— մտածեց Մոնթագը,— ինչպիսի ճշգրտությամբ է կատարվում այս ամենը: Միշտ միայն մութ գիշերներին է ազդարարվում տագնապի ահազանգը: Օրը ցերեկով՝ երբեք: Մի՞թե պատճառն այն է, որ հրդեհն ավելի գեղեցիկ է գիշերը: Առավել ակնառու տեսարան, ավելի գեղեցիկ բեմադրություն»: Դռների մեջ Բիթիի վարդագույն դեմքին թույլ տագնապ նշմարվեց: Կինը ձեռքերի մեջ ջղաձգորեն սեղմել էր լուցկու միակ հատիկը: Նա կանգնել էր նավթի գոլորշու

մեջ: Մոնթազը զգում էր, թե ինչպես էր կրծքավանդակին սեղմած գիրքը սրտի նման բաբախում իր թաքստոցում:

— Հեռացե՛ք,— կրկնեց կինը, և Մոնթազն ակամա ընկրկեց դեպի դուռը, Բիթիի հետևից իջավ աստիճաններով, հատեց փոքրիկ մարգագետինը, որտեղ նավթի՝ խխունջ հիշեցնող չարագուշակ արահետ էր գոյացել:

Կինը մոտեցել էր ճակատամուտքին և անշարժ կանգնել էր այնտեղ: Նրա հանդարտ հայացքը սահում էր դրսում խմբված հրկիզողների վրայով: Աչքերի թեթևությունը դատապարտող էր:

Բիթին մի մատնազարկով պատրաստվում էր բռնկելու նավթը:

Բայց արդեն ուշ էր: Մոնթազի շնչառությունն արագացավ:

Ճակատամուտքին կանգնած կինը, նրանց քամահրական հայացք նետելով, լուցկին քսեց բազրիքին:

Մարդիկ տներից դուրս թափվեցին:

Կայան վերադառնալու ճանապարհին բոլորը լուռ էին: Նրանցից ոչ ոք մյուսին չէր նայում: Մոնթազն առջևում էր նստած՝ Բիթիի և Բլեքի կողքին: Նրանք նույնիսկ իրենց ծխամորճները չէին ծխում: Հսկա սալամանդրի մեջ նստած՝ լուռ նայում էին ճանապարհին: Մեքենան շրջադարձին թեքվեց ու առաջ սլացավ:

— Վարպետ Ռիդլի,— վերջապես խոսեց Մոնթազը:

— Ի՞նչ,— հարցրեց Բիթին:

— Նա ասաց՝ վարպետ Ռիդլի: Ինչ—որ տարօրինակ բան ասաց, երբ ներս մտանք: «Արիացե՛ք, վարպետ Ռիդլի»,— ասաց նա: Էլի ինչ—որ բան ասաց:

— Աստծու ողորմածությամբ այսօր մենք այնպիսի մոմավառություն կսարքենք Անգլիայում, որ անհնար կլինի հանգցնել, վստահեցնում եմ,— ավելացրեց Բիթին:

Սթոնմենը և Մոնթազը ցնցված նայեցին Բիթիին:

Բիթին շփեց կզակը:

— Լաթիմեր անունով մի մարդ այդ բառերն ասել է Նիքըլլաս Ռիդլի անունով մի մարդու, երբ նրանց 1555 թվականի հոկտեմբերի 16-ին Օքսֆորդում ողջակիզում էին որպես հերետիկոսների:

Մոնթազը և Սթոնմենը իրենց հայացքները կրկին սկեռեցին անիվների տակ փախչող ճանապարհին:

— Ուղեղս լիքն է ամեն տեսակ քաղվածքներով և մեջբերումներով,— ասաց Բիթին,— շատ հրկիզապետներ պետք է որ այսպիսին լինեն: Երբեմն նույնիսկ ինքս ինձ եմ զարմացնում: Ուշադիր, Սթոնմեն:

Սթոնմենը արգելակեց:

— Գրողը տանի,— ասաց Բիթին,— հենց նոր անցանք կայան տանող շրջադարձը:

— Ո՞վ է:

— Էլ ո՞վ պետք է լինի, ես եմ,— ասաց Մոնթազը՝ մթության մեջ հենվելով ննջարանի դռանը:

— Ի՞նչ ես կանգնել, լո՛յսը վառիր,— վերջապես խոսեց Միլդրեդը:

— Լոյսն ինձ պետք չէ:

— Դե՛, պառկիր քնելու:

Մոնթազը լսեց, թե ինչպես կինն անհանգիստ շուռումուռ եկավ անկողնում: Մահճակալի զսպանակները ճռռացին:

— Հարբած ես,— հարցրեց ամուսնուն:

Ամեն բան սկսվեց ձեռքից: Նա զգաց, թե ինչպես սկզբում մի ձեռքը, ապա մյուսը արձակեցին վերարկուի կոճակները, հանեցին այն, ապա նետեցին հատակին: Հանեց տաբատն ու նետեց մթության մեջ, ասես անդունդը նետելիս լիներ: Ձեռքերը վարակվել էին, վարակը շուտով թևերն էլ կհամակեր: Նա զգում էր, թե ինչպես էր թույնը կամաց-կամաց տարածվում դեպի դաստակները, հասնում արմունկներին, համակում ուսերը, մի թիակից կայծի թեթևությամբ մյուսն անցնում: Ձեռքերը ազահությամբ էին տոգորված,

աչքերի մեջ քաղց կար, դրանք փափագում էին նայել ինչ-որ բանի, ցանկացած բանի, միայն թե նայել:

— Ի՞նչ ես անում,— մթության մեջ հարցրեց կինը:

Գիրքը քրտնած, սառը ափերի մեջ սեղմած՝ Մոնթազը հազիվ էր հավասարակշռությունը պահում մթության մեջ:

Մեկ րոպե անց կինն ասաց.

— Ի՞նչ ես այդպես կանգնել մնացել սենյակի մեջտեղում:

Մոնթազն ինչ-որ ձայն արտաբերեց:

— Ի՞նչ ասացիր,— հարցրեց կինը:

Մոնթազն էլի ինչ-որ անհասկանալի բառեր արտաբերեց: Նա խարխափելով հասավ մահճակալին, ձեռքի փուփուկոտ, անճոռնի շարժումով գիրքը խցկեց սառը բարձի տակ և փլվեց անկողնուն: Կինը վախից ճչաց: Միլդրեդի կողքին՝ նույն սենյակում պառկած՝ նա ասես հազարավոր կիլոմետրեր հեռու էր նրանից՝ մի սառցե կղզու վրա՝ օվկիանոսից այն կողմ: Նրան թվաց, թե Միլդրեդը բավականին երկար ժամանակ էր, ինչ խոսում էր իր հետ, նա խոսում էր դեսից-դենից, սակայն նրա ասածները սոսկ բառեր էին՝ ճիշտ նույնպիսի չկապակցված և անիմաստ բառեր, որպիսիք նա մի անգամ լսել էր իր ընկերոջ տան մանկասենյակում, երբ նրա փոքրիկը փորձում էր միմյանց կապակցել անհասկանալի բառակույտեր, արտաբերել գեղեցիկ հնչյուններ, որոնց արդյունքում ծնվում էր մի ուրույն ծածկալեզու՝ միայն իրեն հայտնի: Սակայն Մոնթազը չէր պատասխանում կնոջ ասածներին: Երկար ժամանակ էր անցել, և այդ ընթացքում Մոնթազը միայն զառանցանք հիշեցնող բառեր էր արտաբերում: Վերջապես Միլդրեդը մոտեցավ նրա մահճակալին և ձեռքը նրա այտին հպեց: Երբ կինը հեռացրեց ձեռքը, Մոնթազը զգաց, որ նրա ափը խոնավացել էր:

Կեսգիշերից բավականին ժամանակ էր անցել: Մոնթազը նայեց Միլդրեդին: Կինն արթուն էր: Օդի մեջ ինչ-որ մեղեդի էր թևածում: Նրա ռադիոխեցին, ինչպես միշտ, ամուր

մխրճված էր ականջի մեջ: Միլդրեդն այժմ էլ հեռավոր վայրերում ապրող հեռավոր մարդկանց էր լսում: Աչքերը լայն բացված էին, հայացքը սևեռել էր վեր՝ դեպի խավարը, որ այժմ թանձրացել էր նրանց շուրջը:

Մոնթազը մի հին անեկդոտ հիշեց: Մի կնոջ մասին էր, ով այնքան էր շատախոսում հեռախոսով, որ նրա հուսահատ ամուսինը ստիպված էր մոտակա խանութը վազել և այնտեղից գանգահարել կնոջը՝ հարցնելու, թե ինչ է մատուցվելու ճաշին: Մոնթազը մտածեց, թե ինչու ինքն էլ իր համար խեցի ականջակալ չի գնում, որպեսզի ուշ գիշերներին խոսի կնոջ հետ, շշնջա նրա ականջին, փսփսա, գոռա, ճչա, բղավի: Սակայն ի՞նչ շշնջա, ի՞նչ բղավի: Ի՞նչ կարող է Մոնթագն ասել նրան:

Հանկարծ կինը Մոնթագին այնքան օտար թվաց, որ նա չէր հավատում, թե երբևէ ճանաչել է նրան: Նա ասես ուրիշ մեկի տանը լիներ, ճիշտ մեկ այլ անեկդոտի նման, որը պատմում էր, թե ինչպես է մի տղամարդ գիշերը հարբած տուն գալիս, բացում օտար բնակարանի դուռը, մտնում օտար մի սենյակ, անկողին մտնում օտար մի կնոջ հետ, առավոտյան վաղ վեր կենում և աշխատանքի գնում, և ոչ նա, ոչ կինը գլխի չեն ընկնում, թե ինչ է կատարվել:

— Մի՛լի,— շշնջաց նա:

— Ի՞նչ:

— Չէի ուզում վախեցնել քեզ, պարզապես ուզում էի իմանալ...

— Այո՛...

— Ե՛րբ ենք մենք հանդիպել: Եվ որտե՞ղ:

— Ինչի՞ համար ենք հանդիպել:

— Չէ, մեր առաջին հանդիպումը նկատի ունեմ:

Նա գիտեր, որ կինը մթության մեջ խոժոռել էր դեմքը:

Փորձեց պարզաբանել:

— Երբ առաջին անգամ տեսանք իրար, ե՛րբ էր և որտե՞ղ:

— Ինչո՞ւ ես հարցնում: Հիմա ասեմ...

Նա լռեց: Հետո ավելացրեց.

— Չգիտեմ:

Մոնթապի մարմնով դող անցավ:

— Չե՞ս կարող հիշել:

— Այնքան վաղուց էր դա:

— Տասը տարի առաջ, ընդամենը տասը:

— Մի վրդովվիր: Փորձում եմ հիշել:— Միլդրեդը տարօրինակ ծիծաղեց, գնալով ձայնն ավելի ու ավելի հնչեղ էր դառնում:— Զվարճալի է, որքան զվարճալի է. չհիշել, թե որտեղ ես առաջին անգամ հանդիպել ամուսնուդ կամ կնոջդ:

Մոնթապը պառկած դանդաղ տրորում էր աչքերը, ճակատը, ծոծրակը: Նա ասիերը ամուր սեղմել էր աչքերին, ասես փորձում էր կորած հիշողությունը վերականգնել: Հանկարծ զգաց, որ այդ պահին իր համար աշխարհում ամենակարևորն այն էր՝ կհիշի արդյոք, թե որտեղ է հանդիպել Միլդրեդին:

— Ի՞նչ մի կարևոր բան է,— Միլդրեդն էր, որ վեր էր կացել անկողնուց և լոգարան էր գնացել: Մոնթապը հոսող ջրի ձայն առավ, ապա՝ ջուրը կում-կում խմելու ձայնը:

— Երևի ճիշտ ես, այո՛,— պատասխանեց Մոնթապը:

Փորձեց հաշվել, թե քանի հաբ կուլ տվեց կինը, և աչքերի առաջ եկան այն երկուսը՝ սիգարետները բարակ շուրթերի արանքում պահած: Նրանց դեմքերը ցինկի լուծույթի կապտագույնն ունեին: Հիշեց էլեկտրական աչքով օձին, որ գալարվելով շերտ առ շերտ խորանում էր խավարի գարշահոտ ջրերի մեջ, և ուզեց բղավել, հարցնել Միլդրեդին՝ քանի հաբ էր արդյոք կուլ տվել այս անգամ: Այդ հաբերը... դեռ քանիսն էր կուլ տալու՝ առանց գիտակցելու՝ ինչ է անում: Եվ այդպես շարունակ, եթե ոչ այս գիշեր, ապա հաջորդ գիշեր: «Իսկ ես պետք է շատ երկար արթուն մնամ այս գիշեր, վաղը գիշեր և դրան հաջորդող գիշերներին, հիմա, երբ ամեն բան վերսկսվել է»,— մտածում էր Մոնթապը: Նա պատկերացրեց Միլդրեդին անկողնու մեջ պառկած, երկու բուժակները նրա գլխավերևում կանգնած, ոչ թե սրտացավորեն խոնարհված,

այլ ուղիղ կանգնած՝ ձեռքերը կրծքներին խաչած: Հիշեց, թե ինչպես էր այն ժամանակ մտածում, որ եթե Միլդրեդը մահանա, ինքը լաց չի լինի, քանի որ նրա մահն իր համար հավասարազոր էր անծանոթ մեկի մահվանը, ում դեմքը պատահաբար տեսել էր փողոցում կամ ամսագրի շապիկին, և նա անակնկալ սկսեց լաց լինել, ոչ թե մահվան մտքից, այլ այն մտքից, որ նա այդ մահը չի կարող սգալ. հիմար, դատարկ տղամարդ, ով հայտնվել է հիմար, դատարկ կնոջ կողքին, ում այդ ժամանակ ավելի ու ավելի էր դատարկում էլեկտրական աչքով քաղցած օձը:

«Ո՞նց կարելի է այդպես դատարկ լինել,— միտք էր անում Մոնթագը,— ղվ է մարդուն զրկում իր ներքին հարստությունից: Ու հանկարծ... այն օրվա խատուտիկը: Խատուտիկը կարծես տվել էր բոլոր հարցերի պատասխանները: «Շատ ափսոս, Դուք որևէ մեկին սիրահարված չեք: Ինչո՞ւ է այդպես»:

Երբ խորհում էր իր և Միլդրեդի հարաբերությունների մասին, զգում էր, որ իրենց միջև միշտ էլ պատ էր եղել: Դեռ ավելին՝ մեկի փոխարեն երեք ամբողջ պատ, որոնք շատ թանկ էին արժեցել: Ինչպես նաև բոլոր այն հորեղբայրները, հորաքույրները, զարմիկ-զարմուհիները՝ իրենց երեխաներով, ովքեր ապրում էին այդ պատերի մեջ՝ կապկազգիների մոթմոթացող ոհմակ, որոնք շարունակ շաղակրատում էին՝ բացարձակ ոչինչ չասելով, և դա անում էին բարձր, չափազանց բարձր: Հենց սկզբից նա սովորություն դարձրեց նրանց ազգականներ կոչելը. «Ինչպես է հորեղբայր Լուին այսօր: Իսկ մորաքույր Մաոդին»: Միլդրեդը Մոնթագին հաճախ պատկերանում էր որպես ծառահատված անտառում հայտնված մի փոքրիկ աղջիկ, որքան էլ տարօրինակ հնչի սա, կամ ավելի հաճախ՝ որպես փոքրիկ աղջիկ, որ մոլորվել էր լայնարձակ հարթավայրում, որտեղ մի ժամանակ ծառեր էին եղել (և ծառերի տեսիլքներն ամենուր զգացնել էին տալիս իրենց Մոնթագի հիշողության մեջ): Եվ այս ամենը՝ այն դեպքում, երբ Միլդրեդն ընդամենը նստած էր լինում

հյուրասենյակի մեջտեղում: Հյուրասենյակ... ինչպիսի պիտակավորում: Կապ չունի, թե նա օրվա որ ժամին էր տուն գալիս, պատերը միշտ խոսում էին Միլդրեդի հետ:

— Ինչ-որ բան պետք է արվի:

— Այո՛, դու ճիշտ ես, ինչ-որ բան պետք է արվի:

— Դե, ուրեմն արի կանգ չառնենք և խոսենք:

— Թող քո ասածը լինի:

— Կատաղությունից քիչ է մնում թքեմ:

Ինչի՞ մասին էր այս ամենը: Միլդրեդը չգիտեր: Ո՛վ, ո՛ւմ վրա էր բարկացած: Միլդրեդն այնքան էլ լավ չէր հասկանում: Ի՞նչ էին նրանք պատրաստվում անելու:

— Դե,— ասում էր նա Մոնթագին,— սպասիր և կտեսնես:

Մոնթագը սպասում էր, փորձում էր հասկանալ:

Երեք պատերից ձայների անծավալ հեղեղ թափվեց սենյակ: Երաժշտությունն այնպիսի հսկայական տարափով էր ռմբակոծում Մոնթագին, որ նրա ոսկորներն ու ջլերը ցնցվում էին: Նա զգում էր՝ ինչպես է կզակը թրթռում, աչքերը երերում էին ակնակապիճներում: Ասես կաթվածահար էր եղել: Երբ վերջապես երաժշտությունը դադարեց, Մոնթագն այն զգացողությունն ուներ, ասես իրեն նետել էին անդունդը, հանձնել հողմապտույտի տարերքին, ապա շարտել ջրվեժի մեջ, որը թափվում ու թափվում էր դատարկության ու միայն դատարկության մեջ, որը երբեք, երբեք չէր հասնում հատակին, հատակին չէր հասնում երբեք... և Մոնթագն այն զգացողությունն ուներ, ասես ինքն այնպես արագ էր գահավիժում, որ չէր հավում... երբեք չէր դիպչում... որևէ բանի:

Ամպրոպը մարել էր: Երաժշտությունը՝ լռել:

— Հը՛, ո՞նց էր,— հարցրեց Միլդրեդը:

Այն, ինչ պատահեց, իրոք ցնցող էր: Ինչ-որ անսովոր բան էր եղել: Չնայած սենյակի պատերի մեջ ապրող մարդիկ գրեթե չէին շարժվել, և այդ ողջ ընթացքում որևէ նշանակալից բան տեղի չէր ունեցել, այնպիսի տպավորություն էր, ասես ինչ-որ մեկը քեզ լվացքի մեքենան էր գցել կամ կլա-

նել էր վիթխարի փոշեկուլով ու խեղդել կատարյալ անճաշակ խառնածայն երաժշտության մեջ: Նա լքեց հեռուստասենյակը քրտինքի մեջ կորած. թվում էր՝ ուր որ է կտապալվեր: Նրա հետևում Միլդրեդն էր՝ աթոռին նստած, իսկ պատերից կրկին լսվում էին մարդկանց ձայներ:

— Ամեն բան կարգին է արդեն,— ասաց մի «մորաքույր»:

— Այդքան վստահ պետք չէ լինել,— առարկեց մի «գարմիկ»:

— Դե լավ, մի՛ գայրացեք:

— Այդ ո՛վ է գայրանում:

— Դու:

— Դու խելագար ես:

— Այդ ինչո՞ւ եմ ես խելագար:

— Որովհետև:

— Շատ լավ,— բղավեց Մոնթագը,— բայց ինչի՞ վրա են նրանք բարկացած: Ովքեր են այս մարդիկ: Ո՛վ է այդ տղամարդը, և ո՞վ է այդ կինը: Նրանք ամուսիններ են, ամուսնալուծված են, նշանված, թե՛ ինչ: Տե՛ր Աստված, ոչ մի բան մյուսի հետ կապակցված չէ:

— Նրանք,— ասաց Միլդրեդը,— նրանք... վիճում էին: Նրանք հաճախ են վիճում: Պետք է լսես: Կարծում եմ՝ նրանք ամուսնացած են: Այո՛, հաստատ ամուսիններ են: Ինչո՞ւ ես հարցնում:

Ինչի՞ նման էր նրանց կյանքը: Կամ այս երեք պատերն էին, որոնց շուտով չորրորդն էր ավելանալու, և Միլդրեդի երազանքը կատարյալ կդառնար, կամ բաց մեքենան, որը Միլդրեդը քաղաքում վարում էր ժամում հարյուր մղոն արագությամբ: Ինքը բղավում էր կնոջ հետ խոսելիս, կինն էլ իր հերթին էր ճշում, բղավում, բայց, մեկ է, միմյանց չէին լսում, մեքենայի աղմուկը խլացնում էր ամեն բան:

— Արագությունը նվազեցրո՛ւ,— բղավում էր Մոնթագը:

— Ի՞նչ,— ճշում էր կինը ի պատասխան:

— Արագությունը նվազեցրո՛ւ, հասցրո՛ւ հիսունհինգ մղոն ժամում, նվազագույն արագությամբ քշիր,— դարձյալ գոռում էր Մոնթագը:

— Ինչ,— ճշում էր նա:

— Արագությունը,— բղավում էր Մոնթագը:

Այդ ժամանակ Միլդրեդը սեղմում էր գագի ոտնակը և արագությունը հասցնում ժամում հարյուր հինգ մղոնի. Մոնթագի շունչը կտրվում էր: Երբ արդեն իջնում էին մեքենայից, Միլդրեդը խեցիներն արդեն խրած էր լինում ականջների մեջ:

Միայն քամու սոսափյունն էր խախտում լռությունը:

— Միլդրեդ,— Մոնթագը թեթև շարժվեց անկողնում:

Նա առաջ ձգվեց և կնոջ ականջից դուրս քաշեց փոքրիկ երաժշտական միջատը:

— Միլդրեդ... Միլդրեդ:

— Այո՛,— ցածրաձայն պատասխանեց կինը:

Մոնթագն այն զգացողությունն ուներ, ասես ինքն այդ էլեկտրոնային ձայնագունային պատերի մեջ զետեղված արարածներից մեկը լիներ, ով խոսում էր, սակայն իր խոսքը չէր թափանցում բյուրեղապակյա արգելքից ներս: Ասես խավարի մեջ մնջախաղի դերասանի նման շարժումներ անելիս լիներ, այն հույսով, որ Միլդրեդը պատահաբար իր կողմը կթեքվեր և կտեսներ իրեն: Բյուրեղապակյա ապակու երկու տարբեր կողմերում հայտնված՝ նրանք չէին կարողանում հպվել միմյանց:

— Միլդրեդ, դու ճանաչո՞ւմ ես այն աղջկան, ում մասին մի անգամ ասացի քեզ:

— Ո՛ր աղջկան,— քնաթաթախ պատասխանեց Միլդրեդը:

— Մեր հարևանությամբ ապրող աղջկան:

— Հարևանությամբ ապրո՞ղ:

— Դե, այն դպրոցական աղջկան, Քլարիս է անունը:

— Ախ, հա՛,— պատասխանեց կինը:

— Արդեն մի քանի օր է, ինչ չեմ տեսել նրան, ավելի ստույգ՝ չորս օր: Գուցե դո՛ւ տեսած լինես:

- Չեմ տեսել:
- Քեզ հետ նրա մասին էի ուզում խոսել: Տարօրինակ է, չէ՞:
- Ճանաչում եմ նրան:
- Գիտեի, որ կճանաչես:
- Նա...— մութ սենյակում հնչեց Միլդրեդի ձայնը:
- Նա ինչ,— հարցրեց Մոնթագը:
- Ես պատրաստվում էի քեզ ասելու, բայց մոռացա... մոռացա:
- Ինչ էիր պատրաստվում ասելու: Հիմա՛ ասա:
- Կարծում եմ՝ նա այլևս չկա:
- Այլևս չկա՛:
- Նրանց ընտանիքը տեղափոխվել է ինչ-որ տեղ: Բայց նա այլևս նրանց հետ չէ: Կարծեմ մահացել է:
- Մենք հավանաբար տարբեր աղջիկների մասին ենք խոսում:
- Ո՛չ, հենց նա է: Մըքլելընը: Մըքլելըն էր անունը: Ընկել է մեքենայի տակ: Չորս օր առաջ: Վստահ չեմ, բայց կարծեմ մահացել է: Համենայն դեպս, ընտանիքը այլ վայր է տեղափոխվել: Չգիտեմ: Նա կարծեմ մահացել է:
- Սակայն համոզված չես:
- Ո՛չ, համոզված չեմ: Չէ, լիովին համոզված եմ:
- Ինչո՞ւ շուտ չէիր ասում:
- Մոռացել էի:
- Չորս օր է անցել:
- Բոլորովին մոռացել էի:
- Չորս օր առաջ է եղել,— ցածրաձայն կրկնեց Մոնթագն անշարժ պառկած:
- Միլդրեդը նույնպես անշարժ պառկած էր մթության մեջ:
- Բարի գիշեր,— ասաց կինը:
- Մոնթագը մեղմ խշշոց լսեց: Միլդրեդի ձեռքը սահեց բարձի վրայով: Էլեկտրական ռադիոընդունիչը նրա ձեռքի տակ՝ բարձին, կենդանի ճպուռ էր հիշեցնում: Մյուս վայրկյանին այն արդեն բզզում էր:

Նա ականջ դրեց. կինը մրմնջում էր քթի տակ:

Դրսում ստվեր սահեց: Մի ականթարթ աշնան քամի զգացվեց, վեր բարձրացավ ու մարեց: Սակայն լռության մեջ Մոնթագի լսողությունն էլի ինչ-որ հնչյուն որսաց. պատուհանին ասես ինչ-որ մեկի շնչառությունը դիպավ, որ կարծես կանաչավուն, ֆոսֆորափայլ ծխի թույլ հոսանք լիներ, որ աշնանային հսկա մի տերևի թեթևությամբ փարվեց ապակուն, ապա քշվեց հեռացավ մարգագետնի վրայով:

«Մեխանիկական շունն է,— մտածեց Մոնթագը,— այսօր նա այստեղ է, թափառում է տան հարևանությամբ: Եթե պատուհանը բացեմ...»:

Չբացեց:

Առավոտյան Մոնթագը ցնցվում էր դողերոցքի մեջ:

— Դու չես կարող հիվանդ լինել,— ասաց Միլդրեդը:

— Հիվանդ եմ,— պատասխանեց Մոնթագը և տենդի մեջ փակեց աչքերը:

— Բայց երեկ երեկոյան միանգամայն առողջ էիր:

— Սխալվում ես,— հեռուստասենյակից Մոնթագի ականջին էին հասնում «ազգականների» բղավոցները:

Միլդրեդը, հետաքրքրությունից դրդված, հայտնվեց նրա մահճակալի մոտ: Մոնթագն աչքերը փակ զգում էր, որ իր գլխավերևում կանգնած՝ նա այժմ իրեն է զննում: Կինը պատկերացավ նրան քիմիական նյութերի պատճառով ծղոտի պես փշրվող մազերով, աչքերի մեջ՝ բիբերի հետևում, թաքնված աներևույթ փառով, կարմիր շրթներից փքված անբնական շուրթերով, յուրահատուկ սննդակարգի պատճառով նիհարած, սմբած մարմնով, որը խոզաճարպի սպիտակն էր հիշեցնում: Նա այլ կերպ չէր պատկերացնում Միլդրեդին:

— Ինձ ասպիրին և ջուր կբերես:

— Քեզ վեր կենալ է պետք,— ասաց կինը,— կեսօր է արդեն: Հինգ ժամ ավել ես քնել, քան սովորաբար:

— Հեռուստասենյակի պատերը կանջատես,— խնդրեց Մոնթագը:

- Նրանք իմ ընտանիքն են:
- Հանուն հիվանդ մարդու կանջատեն:
- Ձայնը կիջեցնեն:
- Նա հեռուստասենյակ գնաց, ոչինչ չարեց և վերադարձավ:
- Այսպես ավելի լավ է:
- Շնորհակալ եմ:
- Իմ սիրած հաղորդումն է,— ասաց կինը:
- Ասպիրին չե՞ս բերում:
- Նախկինում երբեք չէիր հիվանդանում,— կինը կրկին դուրս ելավ սենյակից:
- Այո՛, իսկ հիմա հիվանդ եմ: Աշխատանքի գնալ չեմ կարող այս երեկո: Հեռաձայնի՛ր և տեղեկացրո՛ւ այդ մասին Բիթիին:
- Երեկ գիշեր տարօրինակ էիր պահում քեզ,— Միլդրեդը վերադարձավ՝ քթի տակ ինչ-որ մեղեդի մրմնջալով:
- Ասպիրինն ո՞ր է,— ասաց Մոնթագը՝ հպանցիկ նայելով իրեն պարզած ջրով լի բաժակին:
- Ախ, հա՛:— Միլդրեդը կրկին լոգարան վերադարձավ:— Ինչ-որ բան էր պատահել:
- Հրդեհ, դա հենց բավական էր:
- Ես հրաշալի երեկո անցկացրի,— բացականչեց նա լոգարանից:
- Ի՞նչ էիր անում:
- Հեռուստասենյակում էի:
- Ի՞նչ կար հեռուստացույցով:
- Ծրագրեր:
- Ի՞նչ ծրագրեր:
- Լավագույնները իմ երբևէ դիտած ծրագրերի մեջ:
- Ովքե՛ր էին:
- Ողջ անձնակազմը, պատկերացնո՞ւմ ես:
- Այո՛, ողջ անձնակազմը, ողջ անձնակազմը, ողջ անձնակազմը:— Նա տրորեց ցավող աչքերը: Հանկարծ նավթի հոտ առավ և անսպասելի փսխեց:

Միլիդրեդը ներս մտավ՝ դարձյալ քթի տակ երգելով:

— Այդ ո՞նց եղավ, — զարմացած բացականչեց նա:

Մոնթազը այլայլված նայեց հատակին:

— Մենք երեկ մի ծեր կնոջ ողջ-ողջ այրեցինք իր գրքերի հետ:

— Լավ է, գոնե գորգը հնարավոր է լվանալ:— Նա, հատակի փայտին լաթի մի կտոր փռած, ներս մտավ ու գործի անցավ:

— Անցյալ երեկո Հելենին հյուր էի գնացել:

— Չէի՞ր կարող քո հեռուստասենյակում դիտել ծրագրերը:

— Իհարկե, կարող էի, բայց հյուրընկալվելը երբեմն հաճելի է:

Նա մրմնջալով դուրս գնաց և մտավ հեռուստասենյակ:

— Միլիդրեդ, — ձայն տվեց Մոնթազը նրա հետևից:

Կինը վերադարձավ՝ երգելով և թեթևակի ճտճտացնելով մատները:

— Չես ուզում իմանալ՝ ինչ է եղել երեկ երեկոյան, — հարցրեց Մոնթազը:

— Իսկ ի՞նչ է եղել:

— Մենք մոտ հազար գիրք այրեցինք, մենք ողջակիզեցինք մի կնոջ:

— Ե՛վ:

Հեռուստասենյակը թնդում էր ձայներից:

— Մենք այրեցինք Դանթեի, Սվիֆթի, Մարկոս Աուրելիոսի հատորները:

— Այդ վերջինը եվրոպացի չէ՞ր:

— Կարծեմ, այո՞:

— Արմատական հայացքներ չունե՞ր:

— Երբեք չեմ կարդացել նրա գործերը:

— Արմատական է եղել:— Միլիդրեդը հավաքեց կայանի հեռախոսահամարը:— Դու ինքդ Բիթիին կհաղորդես, որ չես պատրաստվում աշխատավայր գնալու, ու այնպես չէ՛:

— Ո՛չ, դու կասես:

— Մի՛ գոռա:

— Չէի գոռում:— Նա վեր կացավ, նստեց անկողնում՝ հանկարծակի կարմրատակած, կատաղությունից դողալով: Հեռուստասենյակը թնդում էր գաղջ օդի մեջ:— Ես չեմ կարող զանգահարել նրան: Ես չեմ կարող նրան ասել, որ հիվանդ եմ:

— Ինչո՞ւ:

«Որովհետև վախենում ես,— ինքն իր մասին մտածեց Մոնթագը,— հիվանդ ձևացող երեխայի նման, ով վախենում է զանգահարել, որովհետև գիտի, որ մի երկու բառ փոխանակելուց հետո ստիպված է լինելու համաձայնել. այո՛, հրկիզապետ, արդեն լավ եմ զգում, երեկոյան տասին աշխատավայրում կլինեմ»:

— Դու հիվանդ չես,— ասաց Միլդրեդը:

Մոնթագը հետ ընկավ անկողնու մեջ: Ձեռքը երկարացրեց և ստուգեց՝ արոյոք թաքցրած գիրքը դեռ բարձի տակ էր: Գիրքն այնտեղ էր:

— Միլդրեդ, ի՞նչ կասես, եթե առժամանակ թողնեմ աշխատանքս:

— Ուզում ես թողնել ամեն բան: Այս բոլոր տարիների ընթացում աշխատելուց հետո՞ և միայն այն բանի համար, որ մի գիշեր ինչ-որ կնոջ և նրա գրքերը...

— Եթե միայն տեսած լինեիր նրան, Միլի:

— Նա ինձ համար բոլորովին նշանակություն չունի: Նա չպետք է այդ գրքերն ունենար: Նա պարտավոր էր նախօրոք մտածել այդ մասին: Ես նրա հանդեպ ատելությամբ եմ լցված: Նա է քեզ այսպիսին դարձրել, և շուտով մենք դրսում կհայտնվենք, առանց տանիքի, առանց աշխատանքի, ոչինչ չենք ունենա:

— Դու այնտեղ չէիր, դու ոչինչ չես տեսել,— ասաց Մոնթագը,— գրքերում ինչ-որ բան կա, ուրեմն, մեզ համար աներևակայելի մի բան, որը կարող էր կնոջը ստիպել ողջակիզվել դրանց հետ. գրքերում, անշուշտ, ինչ-որ բան կա: Հենց այնպես նա չէր մնա հրկիզվող տան մեջ:

— Տնորամիտ կին է եղել:

— Նա նույնքան ողջամիտ էր, որքան դու և ես, առավել ողջամիտ, թերևս, իսկ մենք ողջակիզեցինք նրան:

— Անցած-գնացած բան է:

— Ո՛չ, անցած-գնացած չէ: Հրդեհ: Երբևէ այրված տուն տեսնել ես: Օրեր շարունակ միտում է: Այս մի հրդեհը ես մինչև կյանքիս վերջ կհիշեմ: Աստված իմ: Ողջ գիշեր ջանում էի հիշողությանս մեջ մարել այն: Խենթի պես ջանում էի մարել:

— Հրկիզող դառնալուց առաջ էր պետք մտածել այդ մասին:

— Մտածել...— կրկնեց Մոնթագը,— իսկ ինձ ընտրության հնարավորություն տրված էր: Պապս ու հայրս հրկիզողներ են եղել: Երազիս մեջ անգամ վազում էի նրանց հետևից:

Հեռուստասենյակում պարեղանակ էր հնչում:

— Հենց նոր հիշեցի, որ այսօր քո ցերեկվա հերթափոխի օրն է: Երկու ժամ առաջ պետք է գնացած լինեիր:

— Խնդիրը միայն մահացած կինը չէ,— ասաց Մոնթագը,— գիշերը ես մտածում էի այն ամբողջ նավթի մասին, որ օգտագործել եմ նախկին տասը տարիների ընթացքում: Մտածեցի գրքերի մասին: Եվ առաջին անգամ հասկացա, որ յուրաքանչյուր գրքի հետևում մի մարդ է եղել: Յուրաքանչյուր գիրք ծնվել է մի մարդու շնորհիվ: Նա հսկայական ժամանակ է ներդրել իր մտքերը թղթին հանձնելու համար: Իսկ նախկինում մտքովս նման բաներ չէին անցնում:

Նա վեր կացավ անկողնուց:

— Ինչ-որ մեկը մի ամբողջ կյանք է գուցե նվիրաբերել իր մտքերը գրի առնելու համար՝ խորամուխ լինելով իրեն շրջապատող աշխարհի ու կյանքի իմաստի մեջ, ու հանկարծ գալիս եմ ես. ընդամենը մեկ-երկու րոպե, և բում... ամեն բան այլևս մոխրի է վերածված:

— Մենակ թող ինձ,— ասաց Միլդրեդը,— ես ոչ մի բանում մեղավոր չեմ:

— Քեզ մենակ թողնել: Այդ անել ես կարող եմ: Սակայն ինչպէս ինքս մենակ մնամ այս մեղքի հետ: Պետք չէ մեկուսանալ: Ժամանակ առ ժամանակ մենք պարտավոր ենք մտահոգվել: Վերջին անգամ երբ է ինչ—որ էական բան իրապես մտահոգել քեզ:

Մոնթապը ձայնը կտրեց: Նա հիշել էր անցյալ շաբաթվա միջադեպը. առաստաղին հառած Միլդրեդի աչքերը՝ որպես երկու լուսնաքարեր, օձ հիշեցնող փողոթակը՝ ծայրին զննածող, և երկու ճերմակադեմ տղամարդիկ, որ խոսում էին՝ ծխախոտների ատամների արանքում սեղմած: Սակայն նա մեկ այլ Միլդրեդ էր, ում ինչ—որ բան խորապես մտահոգել էր, սակայն այն մեկն այնքան խորն էր թաքնված այս Միլդրեդի ներսում, որ անհնար էր դարձնում նրանց երբևէ հանդիպած լինելու հավանականությունը: Մոնթապը շրջեց դեմքը:

— Քո ուզածը եղավ,— ասաց Միլդրեդը պատուհանից դուրս նայելով,— մի տես՝ ով է գալիս:

— Ինձ համար միևնույնն է:

— Սև բաճկոն հագած մի մարդ է՝ թևքին նարնջագույն օձ ասեղնագործած: Հենց նոր դուրս եկավ «Փյունիկ» մեքենայից և քայլում է տան կողմը:

— Հրկիզապետ Բիթին է:

— Հրկիզապետն է, այո՛:

Մոնթապն անշարժացավ: Լուռ կանգնել էր՝ աչքերը դիմացի պատի սառը ճերմակին սևեռած:

— Գնա՛, դիմավորի՛ր նրան, լմվ: Ասա՛, որ հիվանդ եմ:

— Ինքդ ասա:— Միլդրեդն անիմաստ դեսուդեն վազվզեց սենյակում, հետո քարացավ՝ աչքերն անսովոր լայն բացած, երբ շքամուտքի բարձրախոսը կամացուկ նրա անունը տվեց. «Տիկին Մոնթապ, տիկին Մոնթապ, ինչ—որ մեկն այստեղ Ձեզ է հարցնում, տիկին Մոնթապ, տիկին Մոնթապ, Ձեզ են հարցնում»: Ապա ձայնը մարեց:

Մոնթապը ստուգեց՝ արդյո՞ք գիրքն ապահով թաքցրել էր բարձի տակ: Նա դանդաղ անկողին մտավ և հազիվ էր

հասցրել թիկնել բարձին և ծածկոցը գցել վրան, երբ Միլդրեդը դուրս եկավ սենյակից, և նույն րուպեին էլ հրկիզապես Բիթին անշտապ ներս մտավ՝ ձեռքերը գրպանները դրած:

— «Ազգականների» ձայնը կտրե՞ք,— ասաց Բիթին՝ աչքի անցկացնելով ամեն բան՝ բացի Մոնթագից և նրա կնոջից:

Այս անգամ արդեն Միլդրեդն իրոք շտապեց հեռուստասենյակ: Դատարկաբանող «ազգականների» բղավոցները կտրվեցին:

Հրկիզապես Բիթին ընտրեց ամենահարմարավետ աթոռն ու նստեց կարմիր դեմքի խաղաղ արտահայտությամբ: Նա քմահաճ դանդաղկոտությամբ լցրեց արույրե ծխամորճը, վառեց այն և ծխի մի մեծ քուլա արձակելուց հետո ասաց.

— Որոշեցի հիվանդատես գալ:

— Այդ ինչպե՞ս կռահեցիք:

— Բիթին ժպտաց՝ ի ցույց դնելով վարդագույն լնդերը և մանրիկ, շաքարի պես սպիտակ ատամները:— Իմ աչքի առաջ եղավ ամեն բան: Գիտեի, որ մեկ հերթափոխ բաց թողնելու թույլտվություն կխնդրեք:

Մոնթագը նստեց անկողնում:

— Ոչինչ,— ասաց Բիթին,— մեկ օր հանգիստ վերցրեք:— Նա մատների մեջ զննում էր իր անբաժան բռնկիչը, որի կափարիչին «Երաշխավորված է մեկ միլիոն բռնկման համար» գրությունն էր: Սկսեց ցրված վառել, ապա հանգցնել, վառել, մի երկու բառ ասել, ապա հանգցնել: Նայեց բոցին: Հանգցրեց: Նայեց մարող ծխին:

— Ե՛րբ կապաքինվեք:

— Վաղը: Գուցե մյուս օրը: Հաջորդ շաբաթվա առաջին օրը:

Բիթին փստացնում էր ծխամորճը:

— Յուրաքանչյուր հրկիզող վաղ թե ուշ բախվում է սրան: Ինչ-որ մեկը պետք է նրանց համար պարզաբանի, թե ինչպես ամեն բան սկսվեց: Հարկ է, որ նրանք իմանան իրենց մասնագիտության պատմությունը: Այժմ սկսնակ հրկիզողնե-

րին չեն բացատրում այդ ամենը, ինչպես նախկինում: Փֆֆֆ,— կրկին փնչացրեց Բիթին:— Մեր օրերում միայն հրկիզապետներն են իրազեկ այդ ամենին: Փֆֆֆ: Հիմա ես Ձեզ կբացատրեմ՝ ինչպես սկսվեց ամեն բան:

Միլդրեդն անհանգիստ շարժում արեց, սակայն մնաց տեղում կանգնած:

Բիթին ավելի հարմար տեղավորվեց աթոռին, ապա մի ամբողջ ռուպե խորհեց, նախքան կսկսեր խոսել:

— Չեք հարցնում՝ ինչպես ամեն բան սկսվեց, դե, մեր աշխատանքը նկատի ունեմ: Որտե՞ղ, էրբ: Ասեմ Ձեզ, ամեն բան սկսվեց մի պատմական միջադեպի արդյունքում, որ Քաղաքացիական պատերազմ կոչվեց: Չնայած մեր կանոնագրքում ամրագրված է, որ առաջին հրկիզողների կայանն ավելի վաղ է հիմնադրվել: Սակայն միայն լուսանկարչության գյուտից հետո մենք կարողացանք գտնել մեզ և էլ ավելի բարձավաճեցինք քսաներորդ դարի սկզբին կինոարվեստի, ռադիոյի, հեռուստատեսության զարգանալուն զուգահեռ, երբ զարկ տրվեց զանգվածային արտադրությանը:

Մոնթագը անշարժ նստել էր անկողնում:

— Զանգվածային արտադրությունը շատ բան հեշտացրեց,— ասաց Բիթին:— Ինչ—որ ժամանակ գրքերով քիչ մարդիկ էին հրապուրված՝ հատուկենտ մարդիկ այսուայնտեղ: Այդպես էր ամենուր: Եվ այդ պատճառով գրքերը կարողանում էին բազմազան ու հետաքրքիր թվալ: Աշխարհն ընդարձակ էր: Հետո աչքերի, արմունկների և բերանների առատությունից աշխարհը սեղմվեց, փոքրացավ: Բնակչությունը կրկնապատկվեց, եռապատկվեց, քառապատկվեց: Ֆիլմերի, ռադիոյի, թերթերի, գրքերի մակարդակն իջավ, դրանք վերածվեցին համընդհանուր ստանդարտի, հասկանո՞ւմ եք:

— Կարծում եմ՝ այո:

Բիթին հետաքրքրությամբ նայում էր իր արձակած ծխի քուլաներին:

— Պատկերացրեք տասնիններորդ դարի մարդուն՝ իր ձիերով, շներով, սայլերով. ինչպիսի դանդաղ ընթացք: Այնուհետև խուժում է քսաներորդ դարը՝ կյանքի առավել արագ ընթացքով: Գրքերը սկսում են դառնալ ավելի փոքրածավալ: Սեղմավեպեր: Ամփոփ ժողովածուներ: Համառոտագրեր: Ամեն բան արվում է երկարաշունչ խոսքը լռեցնելու համար: Ամեն բան հանգում է իր վայրկենական ավարտին:

— Վայրկենական ավարտին,— գլխի շարժումով հաստատեց Միլդրեդը:

— Դասականների գործերը վերածվում էին տասնհինգ րոպեանոց ռադիոներկայացումների, ավելի կրճատվելով՝ դառնում գրքում զետեղված մի սյունակ՝ երկու րոպեի ընթերցանություն, հետո էլ ավելի սեղմվում՝ վերածվելով տասը-տասներկու տողանոց հանրագիտարանային ամփոփման: Ես չափազանցնում եմ, անշուշտ: Հանրագիտարանները միայն քաղվածքների համար էին նախատեսված: Սակայն քիչ չէին մարդիկ, որոնց իրազեկվածությունը Համլետի մասին (Դուք, իհարկե, ծանոթ եք վերնագրին, Մոնթագ, սակայն Ձեզ համար, տիկին Մոնթագ, այն ընդամենը աղոտ հիշողություններ է արթնացնում), այն էի ասում, որ քիչ չէին մարդիկ, որոնց իրազեկվածությունը Համլետի մասին սահմանափակվում էր ժողովածուի մեջ զետեղված մեկէջանոց ամփոփագրով. «Հիմա դուք վերջապես կարող եք կարդալ բոլոր դասականներին, հետ մի՛ մնացեք ձեր հարևաններից»: Տեսնո՞ւմ եք. մանկապարտեզից մինչև համալսարան և հետ՝ դեպի մանկասենյակ. սա է վերջին հինգ հարյուրամյակների ընթացքում իշխող ինտելեկտուալ ձևաչափը:

Միլդրեդը վեր կացավ և սկսեց վեր ու վար անել սենյակում այս կամ այն իրն անիմաստ վերցնելով տեղից և էլի տեղը դնելով: Բիթին շարունակեց. ասես նրան չէր էլ նկատում.

— Արագ պտտեք տեսաժապավենը, Մոնթագ, արագ: Սեղմե՛ք կոճակը, կադր, նայե՛ք, ոսպնյակ, նայե՛ք, հապա, հապա, մատնազարկ, այստեղ, այնտեղ, արագ, տեմպ, վերև,

ներքև, ներս, դուրս, ինչու, ինչպես, ով, ինչ, որտեղ, էի, ահ, դրժխկ, շրժխկ, թրժխկ, դրժմփ, թրժմփ, շրժմփ, բում... Ամփոփագիր—ամփոփագրեր, ամփոփագիր—ամփոփագիր—ամփոփագրեր: Քաղաքականություն: Մի սյունակի, երկու նախադասության համար մի հսկա վերնագիր: Վայրկյան անց ամեն բան հողս է ցնդում: Հանձնել մարդու միտքը հրատարակիչների, շահագործողների, հաղորդավարների հողմապտույտ սադրանքին, որտեղից կենտրոնախույս ուժերը դուրս կնետեն բոլոր անկարևոր, ժամանակ վատնող մտքերը:

Միլիոնները սկսեց անկողինը հարդարել: Մոնթագի սիրտը նվաղեց, թվում էր՝ ուր որ է կայայթի, երբ կինը թեթև թփթփացրեց բարձին: Հիմա նա արդեն քաշում էր Մոնթագի թևից՝ փորձելով մի փոքր առաջ բերել նրան, որպեսզի հաներ բարձը, ինչպես հարկն է թափ տար այն և կրկին մեջքի հետևը դներ: Ով գիտի, գուցե մի վայրկյան անց կինը ճչար և անկապիշ իրեն նայեր կամ, որ ավելի վատ է, երկարեր ձեռքը, բարձի տակից հաներ թաքցրած գիրքը, ցուցադրաբար բարձրացներ այն իր գլխավերևում և հուզիչ անմեղությամբ հարցներ. «Սա ինչ է»:

— Ուսուցման տևողությունը դպրոցներում կրճատվում է, կարգապահությունը՝ ընկնում, փիլիսոփայությունը, պատմությունը, օտար լեզուները հանվում են ուսումնական ծրագրերից, անգլերենը և ուղղագրությունը գնալով ավելի քիչ հոգածության են արժանանում և ի վերջո դուրս են մղվում կրթական համակարգից: Կյանքն ակնթարթ է, աշխատանքն է, որ կարևորվում է ամենից շատ, հետո միայն՝ զվարճանքը, աշխատանքից հետո մնացած ամեն բան զվարճանք է: Էլ ինչո՞ւ որևէ բան սովորել՝ կոճակը սեղմելուց, անջատիչի բռնակը քաշելուց, մանեկն ու հեղույսը ձգել—հարմարեցնելուց բացի:

— Թող հարմարեցնեմ բարձր,— ասաց Միլիոնը:

— Կարիք չկա,— շշնջաց Մոնթագը:

— Կայծակաճարմանդը փոխարինելու եկավ կոճակին, և մարդկանց հենց այդ մի քիչ ժամանակը չի հերիքում, որպեսզի

լուսադեմին՝ փիլիսոփայելու մելամաղձոտ այդ ժամին, կարողանան խորհել, մինչ հագնվում են:

— Մի կո՛ղմ քաշվիր,— ասաց Միլդրեդը:

— Հեռացիր,— պատասխանեց Մոնթագը:

— Կյանքն աստիճանաբար վերածվում է խառնաշփոթի, Մոնթագ, ամենուրեք դրժխկ, շրժխկ և... օհո՛:

— Օհո՛,— բացականչեց Միլդրեդը՝ դեպի իրեն քաշելով բարձր:

— Աստծու սիրուն, վերջապես հանգիստ թող ինձ,— մոլեգնած գոռաց Մոնթագը:

Բիթին զարմանքից պլշած աչքերով նայեց նրան:

Միլդրեդի ձեռքը քարացել էր բարձի տակ: Նրա մատները շոշափում էին գրքի կազմը, և երբ կաղապարը նրան ծանոթ թվաց, հայացքը նախ զարմանք, ապա շփոթմունք արտահայտեց: Շուրթերը հեռացան միմյանցից, ասես պատրաստվում էին հարց հնչեցնելու...

— Դատարկել թատրոնները և բեմերը թողնել միայն ծաղրածուներին, սենյակները կահավորել ապակե պատերով, որոնց վրա կվետվետան կոնֆետների գեղեցիկ երանգներ, արյան երանգներ, խերեսի և սոտերնի երանգներ: Բեյսբոլ սիրում եք, այնպես չէ՞, Մոնթագ:

— Բեյսբոլը հրաշալի խաղ է:

Այժմ Բիթին գրեթե անտեսանելի էր, ձայն, որ հնչում էր ծխի վարագույրից այն կողմ:

— Սա ի՛նչ է,— գրեթե հիացմունքով բացականչեց Միլդրեդը: Մոնթագը հետ ընկավ բարձին՝ ուղիղ կնոջ թևերի վրա:— Ի՛նչ է այստեղ:

— Նստի՛ր,— գոռաց Մոնթագը: Կինը ձեռնունայն հետ ցատկեց:— Խոսում ենք, չ՛ես տեսնում:

Բիթին շարունակեց, ասես ոչինչ էլ չէր պատահել:

— Բոուլինգ սիրում եք, այնպես չէ՞, Մոնթագ:

— Բոուլինգ, այո՛:

— Իսկ գո՛լֆ:

- ԳուՖը հիանալի խաղ է:
- Բասկետբոլ:
- Հիանալի խաղ է:
- Բիլիարդ, ֆուտբոլ:
- Հիանալի խաղեր են, բոլորն էլ լավն են:

— Ավելի ու ավելի շատ մարզաձևեր բոլորի համար, խմբային ոգի, զվարճանք, և մարդիկ ստիպված չեն լինի մտածելու: Կազմակերպեք, ուրեմն, վերակազմակերպեք, գերկազմակերպվածությունն ցուցաբերեք սպորտի հանդեպ՝ որպես գերագույն հաճույքի, գերագույն զվարճության: Ավելացրեք պատկերազարդումները գրքերի մեջ, ավելի շատ ֆիլմեր նկարահանեք: Եվ միտքը ավելի ու ավելի քիչ ոգեղեն սնունդ կստանա: Արդյունքում՝ անհամբերություն: Մայրուղիներ, որ լեփ-լեցուն են մարդկանցով, ովքեր շարունակ շտապում են ինչ-որ տեղ, ինչ-որ տեղ, ինչ-որ տեղ, ոչ մի տեղ: Բենզինի հերթեր: Քաղաքները վերածվում են էփանագին հյուրանոցների, մարդիկ՝ քոչվոր հորդանների, որ մակընթացության ալիքի նման այս ափից այն ափ են ծփում՝ գիշերելով մի սենյակում, որտեղ Դուք քնել եք այսօր կեսօրին, իսկ ես՝ նախորդ գիշեր:

Միլիոններ, դուռը շրխկացնելով, դուրս եկավ սենյակից: Հեռուստասենյակի «մորաքույրները» ծիծաղում էին հեռուստասենյակի «հորեղբայրների» վրա:

— Հիմա եկեք քննարկենք մեր քաղաքակրթության մեջ ապրող փոքրամասնություններին, լավ: Որքան մեծ է բնակչությունը, այնքան շատ են փոքրամասնությունները՝ շների կամ կատուների սիրահարներ, բժիշկներ, իրավաբաններ, առևտրականներ, տնօրեններ, մորմոններ, մկրտականներ, ունիթորներ, երկրորդ սերնդի չինացիներ, շվեդներ, իտալացիներ, գերմանացիներ, տեխասցիներ, բրուքլինցիներ, իռլանդացիներ, Օրեգոն կամ Մեխիկո նահանգների բնակիչներ: Աշխատեք չտրորել նրանց ոտքը: Որևէ գրքի, պիեսի կամ հեռուստանովելի հերոս չպետք է մարմնավորի իրական

նկարչի, քարտեզագրի, արհեստավորի: Հիշե՞ք, Մոնթագ, որքան մեծ է շուկան, այնքան կարևոր է հարթել տարածայնությունները: Բոլոր փոքրամասնություններին և նրանց ներսում առկա խմբավորումներին հարկավոր է զգույշ վերաբերվել: Հիվանդագին մտայնություն ունեցող գրողներին հանձնարարվեց կողպել իրենց գրամեքենաները: Նրանք այդպես էլ արեցին: Ամսագրերը վերածվեցին դյուրամարս անուշեղենի: Գրքերն անհամ, ջրալի դարձան, ինչպես ասում էին գրաքննադատները՝ այդ անիծյալ պճամուղները: Եվ զարմանալի չէ, որ դրանք դադարեցին վաճառվելուց, ինչպես նրանք էին ասում: Սակայն հասարակությունը, որ հստակ գիտեր՝ ինչ է ուզում, զվարճանքի խելահեղ գլխապտույտի մեջ թույլատրեց, որ կոմիքսները գոյատևեն, ինչպես նաև սեքսին առնչվող եռաչափ հանդեսները, իհարկե: Տեսնո՞ւմ եք, Մոնթագ, այս ամենը կառավարությունը չի պարտադրել: Ոչ մի կառավարական հայտարարություն չի եղել, ոչ մի հռչակագիր, ոչ մի գրաքննություն, որից կարող էր սկսված լինել այս ամենը: Ոչինչ: Տեխնոլոգիան, զանգվածային շահագործումը և փոքրամասնությունների գործադրած ճնշումն էր, որի մեջ, փառք Աստծու, թաքնված էր հնարքը: Այժմ նրանց շնորհիվ է, որ դուք կարող եք միշտ երջանիկ լինել, և նրանց շնորհիվ է, որ ձեզ թույլատրվում է կարդալ կոմիքսներ, հին ու բարի դավանանքներ կամ առևտրային ամսագրեր:

— Այո՛, բայց ինչ կասեք այն ժամանակվա հրկիզողների մասին,— հարցրեց Մոնթագը:

— Ա՛հ,— Բիթին, ծխամորճից ելնող ծխի թույլ մշուշով պարուրված, առաջ հակվեց:— Նրանց մասին խոսելուց էլ հեշտ բան: Երբ դպրոցները սկսեցին ավելի շատ վագորդներ, ցատկորդներ, ձիարշավորդներ, արհեստավորներ, հարստահարողներ, կեղեքիչներ, օդաչուներ և լողորդներ «արտադրել», հետազոտողների, մեկնաբանների, ուսյալների և հարուստ երևակայություն ունեցող արվեստագետների փոխարեն «ինտելեկտուալ» բառը, իհարկե, իրավացիորեն դարձավ

հայհոյանք: Մարդիկ միշտ սարսափում են անսովորից: Վստահ եմ՝ կհիշեք Ձեր դասարանի այն տղային, ով «բացառիկ» ընդունակություններ ուներ, արտասանում էր բոլոր անգիրներն ու պատասխանում բոլոր հարցերին, մինչ մյուսները, արձանների նման կապարի ծանրությամբ նստած, ատում էին նրան: Եվ ղում էին ընտրում դասերից հետո ծեծելու և տանջանքների ենթարկելու համար, եթե ոչ այդ «բացառիկ» տղային: Բոլորն անխտիր պետք է նման լինեն միմյանց: Ոչ թե մենք բոլորս ծնվում ենք ազատ և հավասար, ինչպես սահմանադրության մեջ է ասված, այլ բոլորիս դարձնում են հավասար: Յուրաքանչյուր մարդ մյուսի նմանությամբ պետք է լինի, և բոլորը երջանիկ կլինեն. այդպես նրանց շուրջը լեռներ չեն լինի, որոնց առաջ ստիպված կլինեն խոնարհվել, որոնց համեմատությամբ ստիպված կլինեն դատել իրենք իրենց: Այսպիսի պայմաններում գիրքը հարևանիդ տանը պահվող լիցքավորված զենք է, որն այրել է պետք, լիցքաթափել, ճնշել մարդկային բանականությունը: Ի՞նչ իմանաս՝ վաղն ով կարող է դառնալ կարդացած մարդու թիրախը: Միգուցե էս: Ես նրանց մեկ բոլոր անգամ հանդուրժել չեմ կարող: Եվ ահա երբ ողջ աշխարհում տներն ի վերջո ամբողջովին հրակայուն դարձան (Դուք երեկ ճիշտ էիք Ձեր այն ենթադրության մեջ, որ նրանք մի ժամանակ հանգցնում էին հրդեհները), հրշեջներն այլևս պետք չէին իրենց նախկին նպատակների համար: Նրանց վրա նոր պարտականություններ դրվեցին. նրանք դարձան մեր ոգու անդորրի պահապանները, այլոց կողքին ստորադաս երևալու մեր արդարացի և հասկանալի սարսափի կիզակետը, մեր պաշտոնական գրաքննադատները, դատավորներն ու դատական կատարածուները: Նրանք, այսինքն՝ ես և Դուք, Մոնթագ:

Հեռուստասենյակի դուռը բացվեց, և դռների մեջ երևաց Միլդրեդը, որ նրանց էր նայում՝ մեկ Բիթին, մեկ Մոնթագին: Նրա հետևում սենյակի պատերը հեղեղված էին դեղնականաչավուն և նարնջագույն հրավառությունների թշուր-ճայթյուն-

ներով, որոնք ուղեկցվում էին թմբուկների, տամտամների և ծնծղանների նվագակցությամբ: Միլիդերդը շարժում էր շուրթերը, նա ինչ-որ բան էր ասում, սակայն երաժշտության աղմուկը խլացնում էր նրա ձայնը:

Բիթին ծխամորճը թափ տվեց իր վարդագույն ափի մեջ, զննեց մոխիրը, ասես այն ինչ-որ կարևոր բանի խորհրդանիշ լիներ, որն ինքն այժմ փորձում էր վերծանել և իմաստավորել:

— Դուք պետք է հասկանաք, որ մեր քաղաքակրթությունն այնքան հսկայական է, որ մենք չենք կարող դրա կազմի մեջ մտնող փոքրամասնությունների շրջանում հուզումներ և բախումներ թույլ տալ: Ինքներդ Ձեզ հարցրեք՝ ինչ ենք մենք բոլորս ամենից առավել ուզում այս երկրում: Մարդիկ երջանկություն են տենչում, այնպես չէ՛: Ողջ կյանքում այդ չեք լսել: Մենք ուզում ենք երջանիկ լինել, ասում են մարդիկ: Մի՞թե նրանք երջանիկ չեն: Մի՞թե մենք նրանց անընդհատ շարժման մեջ չենք պահում: Մի՞թե նրանց զվարճանալու հնարավորություն չենք ընձեռում: Հաճույք և զվարճանք. մի՞թե մենք բոլորս սրա համար չենք ապրում: Չեք կարող չհամաձայնել, որ մեր մշակույթը առավելագույնս տալիս է մարդկանց այդ հնարավորությունը:

— Այո՛:

Մոնթագը դռների մեջ կանգնած Միլիդերդի շուրթերի շարժումից կարողացավ կռահել, թե նա ինչ էր ասում: Խուսափում էր նայել նրա կողմը, որովհետև վախենում էր, որ Բիթին էլ գուցե շրջվի և հասկանա, թե ինչ է ուզում ասել Միլիդերդը:

— Սևամորթներին դուր չի գալիս «Փոքրիկ սևամորթ Սամբոն»¹: Ուրեմն այրել է պետք: Սպիտակամորթներին

¹ Հելեն Բաներմանի «Փոքրիկ սևամորթ Սամբոյի» պատմությունը մանկական պատում է, որն առաջին անգամ լույս է տեսել 1899 թ. հեղինակի նկարազարդումներով: Կես դար շարունակ պատմվածքաշարը եղել է երեխաների սիրելին ԱՄՆ-ում, նախքան «սամբո» բառը որոշ երկրներում կսկսեր ընկալվել որպես սևամորթներին ուղղված ռասայական խտրականություն, որից հետո թե՛ գրքի նկարազարդումները և թե՛ սյուժեն զգալի վերափոխությունների ենթարկվեցին:

հաճելի չէ «Քեռի Թոմասի խրճիթը»¹: Այրել: Ինչ-որ մեկը գիրք է գրել ծխախոտի և թոքերի քաղցկեղի մասին: Ծխախոտ արտադրող ընկերությունները տաճնապի մեջ են: Այրել է պետք: Անդորր է հարկավոր, Մոնթազ, անվրդով կյանք: Իսկ երբ գրքերը խռովություն են ծնում մեջդ, մոխրացնել է պետք դրանք: Հուղարկավորությունները, այդ հեթանոսական ծեսերը. դժբախտությո՞ւն են ներշնչում, վերացնել ուրեմն: Մահից ընդամենը հինգ րոպե անց մարդը «կրակարանի» ճանապարհին է: Ամբողջ երկրի տարածքում դիակիզարաններն իրենց պատկանող ուղղաթիռներն ունեն: Մահից տասը րոպե անց մարդը վերածվում է մի պտղունց սև փոշու: Մարդու կորստյան ցավից չես խուսափի նրան հիշելով: Մոռանալ է պետք: Այրել ամեն բան: Տալ կրակի լուսավոր մաքրությամբ:

Հեռուստատեսյակի հրավառությունը մարեց Միլդրեդի թիկունքում: Ծիշտ նույն ժամանակ երջանիկ զուգադիպությամբ նա դադարեց խոսելուց: Մոնթագը շունչը պահել էր:

— Հարևանությամբ մի աղջիկ էր ապրում,— դանդաղ ասաց նա,— նա այլևս չկա, կարծում եմ՝ մահացել է: Նույնիսկ դեմքը չեմ հիշում: Բայց զգում էի՝ տարբերվում էր բոլորից: Ինչպէս: Ինչպէս կարող էր դա պատահել:

Բիթին ժպտաց:

— Երբեմն նման պատահականություններն անխուսափելի են: Քլարիս Մըքլենլըն էր անունը: Նրա ընտանիքի մասին տեղեկություն կա պահպանված կայանի արձանագրություններում: Մենք հանգամանորեն հետևել ենք նրանց: Ժառանգականությունը և միջավայրը տարօրինակ բաներ են: Ընդամենը մի քանի տարում անհնար է ազատվել բոլոր արտասովոր մարդկանցից: Ընտանեկան միջավայրը ջնջում է շատ

¹ Ամերիկացի հեղինակ Հերիեթ Բիչեր Սթոուի 1852 թ. տպագրված վեպը, որի հակաստրկատիրական սյուժեն իր ժամանակին ոգևորում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուսիսի հակաստրկատիրական ուժերին՝ միևնույն ժամանակ հրահրելով հարավի գայրոյթն ու քննադատությունը:

բաներ, որոնք սերմանում են դպրոցում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ մեր հասարակությունը մանկապարտեզ հաճախելու տարիքը տարեցտարի նվազեցնում է, այնպես, որ այժմ մենք երեխաներին խլում ենք դեռևս օրորոցից: Մենք մի քանի անհիմն ահազանգեր էինք ստացել Մըքլելլններից, երբ նրանք դեռ Չիկագոյում էին ապրում: Սակայն երբեք որևէ գիրք չէինք հայտնաբերել: Արձանագրության մեջ աղջկա հորեղբոր մասին շատ հակասական բաներ էին գրված: Շատ մարդախոյս էր: Իսկ աղջիկը... դե, նա դանդաղ գործողության ռումբ էր: Ընտանիքը տարիներ շարունակ սնել էր նրա ենթագիտակցությունը: Սա վստահ եմ ասում, որովհետև աչքի եմ անցկացրել նրա մասին դպրոցի կազմած արձանագրությունը: Նրան չէր հետաքրքրում՝ ինչպես է ինչ-որ բան արվում: Աղջիկն ուզում էր իմանալ՝ ինչու է արվում դա: Այդ հարցադրումը կարող է շատ դժվարամարս հետևանքներ ունենալ: Եթե շատ բաների բացատրություն ես ուզում իմանալ, վերջում կորցնում ես երջանկությունդ, եթե, իհարկե, հասնում ես վերջին: Լավ է՝ գոնե շուտ մեռավ խեղճ աղջիկը:

— Այո՛, մեռավ:

— Բարեբախտաբար նրա նման տարօրինակ մարդիկ հաճախ չեն հանդիպում: Մենք կարողանում ենք շատ վաղ՝ դեռևս սաղմում, չեզոքացնել նրանց մեծ մասին: Առանց փայտի և մեխերի տուն չես սարքի: Եթե չես ուզում, որ տունը կառուցվի, թաքցրո՛ւ փայտն ու մեխերը: Եթե չես ուզում քո հասարակության մեջ տեսնել դժբախտ քաղաքացիների, թույլ մի՛ տուր նրանց հասկանալ հարցի երկու կողմերն ու մտահոգվել այդ առիթով: Հարցի միայն մի կողմին հաղորդակից դարձրու նրանց, դեռ ավելին՝ ընդհանրապես հնարավորություն մի՛ տուր քննարկելու այդ հարցը: Այնպես արա, որ մոռանան «պատերազմ» երևույթի մասին: Եթե կառավարությունն անարդյունավետ ծանր բյուրոկրատական համակարգ է, որը հարկախեղդ է անում բնակչությանը, թող որ այդպես լինի, միայն թե պետք է թույլ չտալ, որ ժողովուրդն ըմբոստանա: Ամենակարևորը

անդորրն է, Մոնթագ: Մարդկանց հնարավորությունն ընձեռիր մասնակցելու մրցույթների, որտեղ նրանք հեշտությամբ կարող են հաղթող դառնալ. բավական է միայն պատասխանել այնպիսի տարրական հարցերի, ինչպիսիք են, օրինակ, հանրահայտ երգերի բառերը, նահանգային մայրաքաղաքների անունները կամ, ասենք, Այովա նահանգի նախորդ տարվա եգիպտացորենի մթերման չափը: Հագեցրո՞ւ նրանց ավտոժակը դյուրամարս տվյալներով, բտի՞ր նրանց անիմաստ «փաստերով» այնպես, որ հագուրդ ստանան, դեռ ավելին՝ կարծեն՝ իբրև կրթված են, նրանց թվա՝ իբրև մտածում են, իբրև թե շարժվում են առաջ, երբ ընդամենը դոփում են տեղում: Եվ նրանք երջանիկ կլինեն, որովհետև այն տեսակի փաստերը, որով բտել են նրանց, երբեք չեն փոխվում: Թույլ մի՞ տվեք, որ նրանք հետաքրքրվեն այնպիսի անվստահելի բաներով, ինչպիսին փիլիսոփայությունն է կամ սոցիոլոգիան, որպեսզի չկարողանան փաստերը կապել միմյանց, եզրակացություններ անել, թե չէ մելամաղձության գիրկը կընկնեն: Ցանկացած մարդ, ով կարող է ինքնուրույն մասերի բաժանել իր հեռուտասենյակի պատը, ապա նորից դրա բաղադրիչ մասերը կցել միմյանց և տեղադրել (իսկ մեր օրերում մարդկանց մեծ մասը կարողանում է անել դա), ավելի երջանիկ է, քան նրանք, ովքեր տիեզերքի մասին չափումներ և հաշվարկներ են փորձում կատարել. այն պարզապես անհնար է չափել ու հաշվարկել՝ առանց անասնական լինելդ ու մենությունդ զգալու: Գիտեմ, փորձել եմ: Գրողի ծոցը թող գնա: Լցրե՞ք ուրեմն նրանց կյանքը ակումբային զվարճանքներով և խնջույքներով, լարախաղացներով և մոզերով, կրկեսային համարձակ համարներով, հրթիռային մեքենաներով, ուղղաթիռ-մոտոցիկլետներով, սեքսով և հերոինով: Այն ամենով, ինչը հարուցում է մեքենայական ռեֆլեքսներ: Եթե դրաման վատն է, կինոնկարը՝ անիմաստ, իսկ ներկայացումը՝ դատարկաբանություն, ինձ շատ բարձր

հնչողության ցնցման ենթարկեք, ցանկալի է՝ տերմեն՝ լինի, և ինձ կթվա, թե արձագանքում եմ ներկայացմանը, մինչդեռ այն, ինչ կատարվում է ինձ հետ, ձայնային տատանումների հանդեպ պարզագույն հակազդումն է: Բայց ինձ համար միևնույնն է. սիրում եմ կարգին զվարճանալ:

Բիթին վեր կացավ:

— Պետք է գնամ: Դասախոսությունն ավարտվեց: Հուսով եմ՝ կարողացա ամեն բան պարզաբանել: Մոնթագ, ամենակարևոր բանը, որ պետք է հիշեք, այս է՝ մենք երջանկության առաջամարտիկներ ենք, Դուք, ես և մյուսները: Մենք դիմակայում ենք այն մակընթացության ալիքին, որն առաջ են բերում մարդիկ՝ այն քչերը, ովքեր իրենց հակասական տեսություններով և գաղափարներով փորձում են դժբախտացնել ուրիշներին: Մենք, մեր մատն ամբարտակի անցքը խոթած, սպասում ենք²: Պարտավոր ենք միշտ այստեղ մնալ: Թույլ չտաք, որ մելամաղձության և փիլիսոփայության մոայլ հոսանքը ողողի մեր աշխարհը: Մենք կախում ունենք ձեզնից: Չեմ կարծում, որ գիտակցում եք, թե որքան կարևոր ենք ես և Դուք այս երջանիկ աշխարհում, ինչպիսին որ դարձրել ենք այն:

¹ Էլեկտրոնային երաժշտական գործիք՝ ստեղծված 1918 թ. ռուս գյուտարար Լև Տերմենի կողմից, ում գործիքի հեղինակային իրավունքը շնորհվել է 1928 թ.: Տերմեն նվագում են առանց գործիքին դիպչելու՝ փոփոխելով ձեռքի և գործիքի ալեհավաքի միջև հեռավորությունը, ինչի արդյունքում փոփոխվում է տատանումների կոնտուրի տարողունակությունը և հետևաբար ձայնի հաճախականությունը:

² Հեղինակն ակնարկում է հոլանդացի տղայի մասին լեգենդը: Համաձայն ավանդապատումի՝ մի օր մի փոքր տղա դպրոցի ճանապարհին ծովամերձ ամբարտակի կողքով անցնելիս նկատում է, որ ամբարտակի վրա բացված անցքից ջուր է հոսում: Թեև դասից ուշանում է, տղան մատով ծածկում է ամբարտակի վրա բացված անցքը և սպասում այնքան ժամանակ, մինչև մի անցորդ նկատում է նրան: Տղան պատմում է եղելությունը, և անցորդը գնում է օգնական ուժերի հետևից, ովքեր նորոգում են ամբարտակի անցքն ու փրկում քաղաքը հնարավոր հեղեղից: Պատումն իրականում հոլանդական լեգենդ է: Հեղինակը ամերիկացի գրող Մերի Մեյփս Դոջն է: Նրա՝ «Հոլանդացի տղայի մասին լեգենդն» առաջին անգամ տպագրվել է 1865 թ. ԱՄՆ-ում և մինչ օրս շատ հայտնի ու սիրված է: Նիդերլանդներում լեգենդի մասին փոքրաթիվ մարդիկ գիտեն:

Բիթին սեղմեց Մոնթագի ընդարմացած ձեռքը: Նա նստած էր անշարժ, ասես տունը փլվում էր գլխին, իսկ ինքն անկարող էր շարժվել անկողնում: Միլդրեդը չքացել էր դռների միջից:

— Վերջում մի բան էլ ավելացնեմ, Մոնթագ,— ասաց Բիթին:— Ծառայության ընթացքում ամեն մի հրկիզողի մեջ առաջանում է հետաքրքրասիրություն: Ուզում է իմանալ՝ ինչ է գրված գրքերում, ցանկանում է բավարարել իր հետաքրքրասիրությունը: Հավատացե՛ք ինձ, Մոնթագ, ինքս էլ իմ ժամանակին ստիպված եմ եղել կարդալ մի քանի գրքեր՝ հասկանալու համար անելիքս, և դրանց մեջ ոչինչ չեմ գտել: Դրանց մեջ չկա մի բան, որին կարելի է հավատալ կամ սովորեցնել ուրիշներին: Եթե գեղարվեստական գրականություն է, ապա պատմում է երևակայական մարդկանց մասին, ովքեր երբևէ գոյություն չեն ունեցել. կեղծիք, հորինվածք: Եթե գիտական գրականություն է, ավելի վատ. մի գիտնականը մյուսին տխմար է անվանում, մի փիլիսոփան իր բղավոցով խլացնում է մյուսի ձայնը: Բոլորն ասես մրցավազքի ելած լինեն, որ փորձում են մարել աստղերը, խավարեցնել արևը: Կարդում ես ու կորցնում առողջ դատելուդ կարողությունը:

— Այդ դեպքում ի՞նչ կլինի, եթե հրկիզողը պատահաբար, իրականում առանց որևէ դիտավորության, իր հետ գիրք բերի տուն:

Մոնթագը ջղաձիգ շարժում արեց: Բաց դուռը նրան էր նայում իր հսկայական դատարկ աչքով:

— Սովորական սխալմունք է: Պարզ, մարդկային հետաքրքրասիրություն:— ասաց Բիթին:— Մենք շատ չենք մտահոգվում այդ առիթով, չենք զայրանում: Թույլ ենք տալիս, որ հրկիզողը գիրքն իր մոտ պահի քսանչորս ժամ: Եթե այդ ընթացքում նա հրկիզած չի լինում գիրքը, մենք պարզապես այցելում ենք նրա տուն և անում դա նրա փոխարեն:

— Իհարկե,— Մոնթագի բերանը չորացել էր:

— Դե ինչ, Մոնթագ: Կգան գիշերային հերթափոխին
այսօր: Այսօր հավանաբար դեռ կհանդիպենք, այդպես չէ:

— Չգիտեմ,— ասաց Մոնթագը:

— Ինչ:— Բիթիի դեմքին թեթև զարմանք նշմարվեց:

— Մոնթագը փակեց աչքերը:— Այսօր ավելի ուշ կգամ:

Գուցե:

— Եթե չգաք, Ձեր կարիքը կզգանք,— մտախոհ ասաց
Բիթին՝ ծխամորճը գրպանը դնելով:

«Ես էլ երբեք չեմ գա»,— մտածեց Մոնթագը:

— Առողջացե՛ք և հետևե՛ք Ձեզ,— ասաց Բիթին:

Նա շրջվեց և բաց դռնով դուրս եկավ սենյակից:

Մոնթագը պատուհանից հետևեց, թե ինչպես էր Բիթին
հեռանում ածխագույն անվադողերով իր՝ արևի տակ փայլող
դեղնավուն բզեզ մեքենայով:

Փողոցի երկայնքով ձգվում էին հարթ ճակատներով
տների անվերջանալի շարքերը: Ինչ էր Քլարիսը փորձում
ասել իրեն մի օր. «Տեսե՛ք, ոչ մի ճակատամուտք: Մորեղբայրս
ասում է՝ մի ժամանակ տները ճակատամուտքեր են ունեցել:
Մարդիկ հաճախ երեկոները նստել են նախագավթում և զրու-
ցել, երբ ցանկացել են զրուցել, կամ ճոճվել են իրենց ճոճա-
թոռների մեջ, եթե չեն ցանկացել զրուցել: Երբեմն պարզա-
պես նստել ու խորհել են, ծանրութեթև արել երևույթները:
Մորեղբայրս ասում է, որ ճարտարապետներն ազատվել են
ճակատամուտքերից, որովհետև դրանք գեղեցիկ չեն համա-
րել: Բայց մորեղբայրս ասում է՝ նրանք այդ բացատրությամբ
պարզապես փորձել են կոծկել իրական պատճառը, իսկ իրա-
կան պատճառն այն է, որ նրանք չեն ցանկացել՝ մարդիկ այդ-
պես անհոգ նստեն և ճոճվեն, զրուցեն և ոչինչ չանեն: Դա,
ըստ նրանց, սխալ կենսաձև է: Նրանց կարծիքով մարդիկ չա-
փազանց շատ էին խոսում և մտածելու ժամանակ ունեին:
Ուստի նրանք ոչնչացրին ճակատամուտքերը: Պարտեզները
նույնպես: Տների շուրջն այլևս պարտեզներ չկան, որտեղ

հնարավոր լինի նստել: Նայե՛ք կահույքին. ճոճաթռռներ նույն-
պես չկան: Դրանք չափից շատ հարմարավետ են: Հարկա-
վոր է մարդկանց ստիպել, որ վեր կենան և դեսուդեն վազվզեն:
Մորեղբայրս ասում է... և... մորեղբայրս... մորեղբայրս...»:
Քլարիսի ձայնը մարեց:

* * *

Մոնթագը հայացքը հեռացրեց պատուհանից և նայեց
կնոջը: Նա, հեռուստասենյակի կենտրոնում նստած, խոսում էր
հաղորդավարի հետ, ով այդ պահին ինչ–որ բան էր ասում:

— Տիկին Մոնթագ,— լսվում էր նրա ձայնը: Նա խո-
սում էր դեսից–դենից, և էլի,— տիկին Մոնթագ,— էլի ինչ–որ
բաներ էր ասում այս ու այն մարդկանցից:

Փոխակերպիչ սարքը, որը նրանք ձեռք էին բերել
հարյուր դոլարով, մեքենայաբար արտաբերում էր նրա անունն
ամեն անգամ, երբ հարկ էր լինում, որ հաղորդավարը դիմեր
իր անանուն հանդիսատեսին: Այդպիսի պահերին հաղորդա-
վարն ընդհատում էր խոսքը, սարքը նրան էր հաղորդում նա-
խօրոք ներբեռնած անունը, որից հետո հատուկ ծածկագիրը
փոխակերպում էր հաղորդավարի հեռուստապատկերը այն-
պես, որ շուրթերը ճշգրտորեն կարողանում էին արտաբերել
տվյալ հանդիսատեսի անվան ձայնավորների և բաղաձայն
հնչյունների հաջորդականությունը: Այլևս կասկած չէր կարող
լինել, որ նա ընկեր էր, հարազատ մեկը:

— Տիկին Մոնթագ, այժմ այստեղ նայե՛ք՝ ճիշտ այս կողմը:
Միլիդեդը թեքեց գլուխը, թեև ականհայտ էր, որ չէր լսում:
Մոնթագն ասաց.

— Բավական է այսօր աշխատանքի չգնալ, վաղն էլ
չգնալ, և արդեն մի քայլ կմնա անելու, որ էլ ընդհանրապես
կայան չգնամ:

— Բայց դու այսօր կգնաս աշխատանքի, այնպես չէ,—
ասաց Միլդրեդը:

— Չեմ որոշել: Այժմ միայն ամեն բան փշրելու և ոչնչաց-
նելու սարսափելի ցանկություն ունեմ:

— Գնա՛, մեքենան վերցրո՛ւ:

— Ո՛չ, շնորհակալ եմ:

— Բանալիները զարդասեղանի վրա են: Երբ այդպիսի
զգացողություն եմ ունենում, մեքենան շատ արագ վարելու
ցանկություն եմ զգում: Ժամում իննսունհինգ մղոն արագու-
թյամբ սլանում եմ՝ ուր աչքս կտրի, և հրաշալի զգացողություն է
համակում ինձ: Երբեմն այդպես վարում եմ որջ գիշեր և վերա-
դառնում միայն լուսաբացին, իսկ դու ոչինչ չես իմանում: Հատ-
կապես հաճելի է քաղաքից դուրս վարելը: Վրաերթի ես ենթար-
կում ճագարների, երբեմն շների: Գնա՛, վերցրո՛ւ մեքենան:

— Ո՛չ, այսօր վարելու ցանկություն չունեմ: Ուզում եմ այս
տարօրինակ զգացողությունը մի քիչ մնա ներսումս: Աստված
իմ, սրանից մեծ պատմություն է ծնվելու: Գրողը տանի, որքան
դժբախտ եմ զգում, որքան կատաղած: Այնպիսի տպավորու-
թյուն է, ասես փքվել եմ, գիրացել: Չգիտեմ՝ ինչից է, բայց
անչափ շատ բան եմ ամբարել իմ մեջ, նույնիսկ չգիտեմ էլ, թե
ինչ: Գուցե նույնիսկ սկսեմ գրքեր կարդալ:

— Բայց չէ՞ որ դրա համար քեզ բանտ կնստեցնեն:—
Միլդրեդն այնպես նայեց ամուսնուն, ասես նա ապակե
պատից այն կողմ խոսելիս լիներ:

Մոնթագը սկսեց հագնվել՝ անհանգիստ վերուվար անե-
լով ննջասենյակում:

— Այո՛: Եվ լավ միտք է, գիտե՛ս: Վատ չէր լինի, քանի
դեռ ես որևէ մեկին չեմ վնասել: Լսեցի՞ր Բիթիին, լսում էիր՝
ինչից էր խոսում: Նա գիտի բոլոր պատասխանները: Նա
ճիշտ է: Երջանիկ լինելը կարևոր է: Զվարճանքն ամեն ինչ
արժի: Իսկ ի՛նչ էի անում ես նրա կողքին նստած: Լսում էի
նրան ու մտքիս մեջ շարունակ կրկնում. «Ես երջանիկ չեմ: Ես
երջանիկ չեմ»:

— Ես երջանիկ եմ:— Միլդրեդի դեմքին ժպիտ շողաց:—
Եվ հպարտ եմ, որ երջանիկ եմ:

— Ես ինչ—որ բան պետք է անեմ,— ասաց Մոնթագը,—
դեռևս չգիտեմ՝ ինչ, բայց շատ կարևոր մի բան:

— Ես հոգնել եմ այս աղբը լսելուց,— ասաց Միլդրեդը՝
հայացքը նրանից դեպի հաղորդավարը շրջելով:

Մոնթագը դիպավ պատի մեջ տեղադրված ձայնի կար-
գավորիչին, և հաղորդավարը լռեց:

— Մի՛լի:— Մոնթագը մի պահ լռեց:— Սա քո տունն է,
ինչպես նաև իմը: Արդար կլինի, եթե ես քեզ մի բան ասեմ
հիմա: Վաղուց պետք է ասած լինեի, բայց նույնիսկ ինքս ինձ
չէի կարողանում խոստովանել եղածը: Մի բան կա, որ ուզում
եմ՝ տեսնես, մի բան, որ վերջին մեկ տարվա ընթացքում մի
կողմ եմ դրել, թաքցրել բոլորից: Մի ամբողջ տարի մեկ առ
մեկ հավաքել եմ, ժամանակ առ ժամանակ բերել, համարել:
Զգիտեմ ինչու, բայց արել եմ դա, և քեզ չեմ կարողացել ասել:

Նա մի թիկնաթոռ վերցրեց, հանդարտ ու անշտապ տա-
րավ նախասրահ, դրեց մուտքի դռան մոտ, բարձրացավ աթո-
ռին և մի պահ արձանի պես անշարժ կանգնած մնաց վրան,
ասես աթոռը պատվանդան լիներ: Կինը, կողքին կանգնած,
սպասում էր: Նա ձգվեց, մի կողմ տարավ օդափոխիչի վրայի
ցանցը, ձեռքը երկարացրեց, ներս տարավ, ևս մի մետաղա-
կան ծածկ հեռացրեց և մի գիրք հանեց: Առանց նայելու՝
նետեց հատակին: Կրկին երկարացրեց ձեռքը, երկու գիրք
հանեց, նետեց հատակին: Նա շարունակ ներս էր տանում
ձեռքն ու գրքեր էր դուրս բերում, նետում հատակին՝ փոքր
գրքեր, մեծածավալ գրքեր, դեղին, կարմիր, կանաչ շապիկ-
ներով գրքեր: Երբ ավարտել էր, նայեց ներքև. Միլդրեդի
ոտքերի մոտ գրեթե երկու տասնյակ գրքեր էին թափված:

— Ների՛ր ինձ,— ասաց Մոնթագը:— Ես սա առանց
մտածելու եմ արել: Սակայն հիմա կարծես մենք երկուսով ենք
հայտնվել այս ամենի մեջ:

Միլդրեդն ընկրկեց. ասես իր առջև հատակից դուրս ելած անհամար մկներ լինեին: Մոնթագը զգաց, թե ինչպես Միլդրեդի շնչառությունն արագացավ, դեմքը գունատվեց, և աչքերը սառեցին: Նա մեկ անգամ արտաբերեց Մոնթագի անունը, ապա կրկնեց երկրորդ անգամ, ապա՝ նորից մի երրորդ անգամ, էլի ու էլի: Հետո հառաչանքով առաջ նետվեց, մի գիրք ճանկեց և վազեց դեպի խոհանոցի աղբակեզ վառարանը:

Մոնթագը հասավ նրա հետևից: Ամուր բռնեց նրան, մինչդեռ կինը ծղրտալով ու ճանկռելով փորձում էր ազատվել:

— Ո՛չ, Միլի, ո՛չ: Սպասիր: Վերջ տուր, հա՛մ: Դու ոչինչ չես հասկանում, վերջ տուր:— Նա ապտակեց Միլդրեդին, կրկին բռնեց նրան և թափահարեց:

Կինը կրկին արտաբերեց նրա անունը և սկսեց լաց լինել:

— Միլի,— ասաց նա,— լսիր: Մի պահ լսիր ինձ, լսմ: Մենք ոչինչ չենք կարող անել: Չենք կարող այրել այս գրքերը: Ուզում եմ նայել դրանց: Գոնե մեկ անգամ նայել: Իսկ հետո, եթե այն, ինչ ասում է հրկիզապետը, ճիշտ է, մենք միասին կայրենք դրանք, հավատամ, կայրենք միասին: Դու պետք է օգնես ինձ:

Նա խոնարհեց հայացքն ու նայեց կնոջ դեմքին, շոյեց կզակն ու ամուր բռնեց նրա ուսերը: Միայն կնոջը չէ, որ նայում էր. Միլդրեդի դեմքին Մոնթագն իրեն էր փնտրում, որոնում իր անելիքը:

— Ուզենք թե չուզենք, արդեն սրա մեջ ենք: Այս բոլոր տարիների ընթացքում շատ բան չեմ խնդրել քեզ: Հիմա խնդրում եմ, աղերսում եմ քեզ: Հիմա ստիպված ենք փորձել գլուխ հանել, թե ինչու ենք հայտնվել այս խառնաշփոթի մեջ: Դու, դեղահաբերը, գիշերային ուղևորություններդ մեքենայով, ես, իմ աշխատանքը: Այսպես մենք անդունդն ենք գլորվում, Միլի: Աստված իմ, ես չեմ ուզում անցնել այն ամենի միջով, ինչ սպասվում է մեզ: Հեշտ չի լինելու: Մենք այլևս այսպես շարունակել չենք կարող, սակայն գուցե դեռ կարող ենք վերլուծել եղածը և օգնել իրար: Չես պատկերացնում, թե այս պահին որքան ունեմ քո կարիքը: Եթե գոնե մի փոքր

սիրում ես ինձ, կկարողանաս հանդուրժել սա քսանչորս ժամ, գուցե քառասունութ, սա այն ամենն է, ինչ խնդրում եմ քեզ անել, հետո այս ամենը կավարտվի: Խոստանում եմ: Երդվում եմ: Եվ եթե գրքերում իրոք ինչ-որ բան կա, այս ամբողջ խառնաշփոթի մեջ գոնե մի փոքր, աննշան մի լույս, գուցե կարողանանք այն փոխանցել ինչ-որ մեկին:

Կինն այլևս չէր փորձում ազատվել: Մոնթազը հեռացրեց ձեռքերը և թողեց, որ նա գնա: Միլդրեդը երերալով մի քանի քայլ արեց, ստվերի նման սահեց պատի երկայնքով և նստեց հատակին՝ հայացքը գրքերի վրա: Ուտը դիպավ դրանցից մեկին: Նա նկատեց և հեռացրեց ոտքը:

— Երեկվա կինը, Միլի, դու այնտեղ չէիր: Դու չես տեսել նրա դեմքը: Եվ Քլարիսը: Նրա հետ երբեք չես խոսել: Ես խոսել եմ: Բիթիի նման մարդիկ վախենում են նրանից: Չեմ կարողանում հասկանալ: Ինչո՞ւ պետք է Քլարիսի պես աղջնակը վախեցնի նրանց: Երեկ ողջ երեկո նրան համեմատում էի կայանի հրկիզողների հետ, և հանկարծ հասկացա, որ բոլորովին չեմ սիրում նրանց, որ ինքս ինձ էլ այլևս չեմ սիրում: Եվ մտածում էի՝ գուցե լավ կլիներ, որ հրկիզողներն իրենք այրվեին գրքերի փոխարեն:

— Գայ:

Շքամուտքի դռան ձայնային ազդանշանը կրկին մեղմ հնչեց. «Տիկին Մոնթագ, տիկին Մոնթագ, ինչ-որ մեկն այստեղ Ձեզ է հարցնում, տիկին Մոնթագ, տիկին Մոնթագ, Ձեզ են հարցնում»:

Ապա մեղմ մարեց:

Նրանք շրջվեցին ու հայացքները հառեցին այստեղ-այնտեղ կույտերով թափված գրքերին:

— Բիթին է,— ասաց Միլդրեդը:

— Նա չի կարող լինել:

— Վերադարձել է,— շշնջաց կինը:

Շքամուտքի դռան ձայնային ազդանշանը կրկին մեղմ խոսեց. «Ինչ-որ մեկն այստեղ...»:

— Չենք պատասխանի:— Մոնթազը հենվեց պատին, ապա դանդաղ կռացավ ու սկսեց մոլորյալի պես թեթև հրել գրքերը մերթ քթամատով, մերթ ցուցամատով: Նա ցնցվում էր ողջ մարմնով և այժմ ամենից շատ ուզում էր գրքերը թաքցնել օդափոխման համակարգի մեջ, սակայն Բիթիի հետ առերեսման այլևս պատրաստ չէր: Կուչ եկավ, նստեց. շքամուտքի դռան ազդանշանը կրկին սկսեց խոսել, այս անգամ՝ ավելի համառ: Մոնթազը հատակից մի փոքր հատոր վերցրեց:— Որտեղի՞ց սկսենք:— Նա բացեց գիրքը պատահական ինչ-որ էջի վրա և ուշադիր նայեց դրան:— Պարզապես սկսել է պետք, կարծում եմ:

— Նա ներս կգա,— ասաց Միլդրեդը,— և մեզ էլ գրքերի հետ կայրի:

Շքամուտքի դռան ազդանշանը վերջապես մարեց: Լռություն տիրեց: Դռան հակառակ կողմում Մոնթազը զգում էր ինչ-որ մեկի ներկայությունը, որ ականջ դրած սպասում էր: Հետո հեռացող ոտնաձայներ լսվեցին, սկզբում՝ աստիճանների վրա, ապա՝ մարզագետնից:

— Արի տեսնենք՝ ինչ է գրված,— ասաց Մոնթազը:

Նա դադարներով էր խոսում, խորին ինքնագիտակցումով: Այս ու այն տեղից մի քանի տասնյակ էջեր կարդաց, ապա վերջապես կանգ առավ այս տողերի վրա. «Հաշվարկել են, որ տարբեր ժամանակներում տասնմեկ հազար մարդ նախընտրել են մեռնել, քան հնազանդվել և ծուն սուր ծայրով կտրել»¹:

Միլդրեդը նստել էր նախասրահի հակառակ կողմում՝ նրա դիմաց:

— Դա ի՞նչ է նշանակում: Ոչ մի իմաստ էլ չկա այդտեղ: Հրկիզապետը իրավացի էր:

— Սպասի՛ր,— ասաց Մոնթազը,— մենք ամեն բան կսկսենք սկզբից:

¹ Ջոնաթան Սվիֆթ, Գուլիվերի ճանապարհորդությունները, մաս առաջին, գրվա IV:

ԵՐԿՈՒ

Մաղ և ավազ

Մինչ նոյեմբերյան պաղ անձրևը երկնքից թափվում էր խաղաղ տան վրա, նրանք կարդում էին ողջ երեկո: Նախա-սրահում էին նստել, որովհետև հեռուստասենյակը գորշ տեսք ուներ առանց իր էկրանների վրա վետովետացող կոնֆետներ հիշեցնող նարնջադեղնավուն երանգների, երկնքում սլացող հրթիռների, այք ծակող ոսկեգույն զգեստներով կանանց և սև, թավշյա կոստյումներով տղամարդկանց, ովքեր իրենց արծաթավուն լայնեզր գլխարկներից հարյուր ֆունտ կշռող ճագարներ էին դուրս բերում: Հեռուստասենյակում մեռյալ լռություն էր տիրում, իսկ Միլդրեդը շարունակ բացակա հայացքը գամում էր մութ էկրաններին, մինչ Մոնթագը քայլում էր հատակի գրքերի մեջ, ընտրում մեկը, ապա վերադառնում ու պազած ավելի քան տասն անգամ բարձրաձայն կարդում իր ընտրած մի էջ:

«Ոչ ոք չի կարող որոշել այն ճշգրիտ պահը, երբ մարդկանց միջև ծնվում է ընկերությունը: Դա նման է անոթը կաթիլ առ կաթիլ ջրով լցնելուն. ի վերջո հասնում ես այն վերջին կաթիլին, որից հետո ջուրը դուրս է թափվում անոթից: Ճիշտ այդպես մի բարությունից մյուսը չես էլ նկատում, թե երբ ավելացրիր բարությանդ վերջին կաթիլը, որը ստիպեց, որ դիմացինիդ սիրտը հեղեղվի քեզնով»:

Մոնթագը նստել, ականջ էր դնում անձրևին:

— Միթե սա հենց այն է, ինչ հատուկ էր մեր հարևանությանը ապրող աղջկան: Որքան կուզեի հասկացած լինել նրան:

— Նա մեռած է: Ի սեր Աստծու, արի խոսենք մարդկանցից, ովքեր ապրում են:

Մոնթազը, առանց կնոջ վրա հայացք նետելու, երերալով քայլեց դեպի խոհանոց, որտեղ երկար ժամանակ կանգնել նայում էր, թե ինչպես էր անձրևը թմբկահարում պատուհանները, ապա, երբ արդեն բավականին մթնել էր, վերադարձավ նախասրահ՝ ջանալով հանդարտեցնել իրեն համակած դողը:

Մեկ այլ գիրք բացեց:

— Մարդկանց սիրելի թեման իրենք են:

Խոժոռ հայացքով նայեց պատին:

— Մարդկանց սիրելի թեման իրենք են:

— Ա՛յ սա հասկանալի է,— ասաց Միլդրեդը:

— Բայց Քլարիսի սիրելի թեման ինքը չէր: Նրա սիրելի թեման մարդիկ էին, այդ թվում և ես: Այս երկար ու ձիգ տարիների ընթացքում նա առաջին մարդն էր, ում իսկապես սիրեցի: Այն բոլոր մարդկանցից, ում հիշում եմ, նա առաջինն էր, որ նայեց ուղիղ աչքերիս մեջ, այնպես, ասես ես նրա համար նշանակություն ունեի:— Նա վերցրեց երկու գրքերը:— Այս մարդիկ վաղուց արդեն մահացել են, սակայն ես գիտեմ, նրանք բառերն այս կամ այն կերպ առնչվում են Քլարիսին:

Դրսում հորդառատ անձրևի խուլ աղմուկը ճեղքեց և նրանց ականջին հասավ մի ձայն. ասես ինչ-որ մեկը մեղմ ճանկոեց ջրամուտքի դուռը:

Մոնթազը տեղում քարացավ: Նա տեսավ, թե Միլդրեդն ինչպես նետվեց դեպի պատն ու հևասպառ, կցկտուր արտաբերեց հետևյալ բառերը.

— Ինչ-որ մեկը... դուռը... ինչո՞ւ ձայնային ազդանշանը չի տեղեկացնում մեզ...

Ես այն անջատել եմ:

Դռան սեմին դանդաղ, ասես ինչ-որ բան ստուգող ֆսֆսոց լսվեց, էլեկտրական գոլորշու արտաշնչում:

Միլդրեդը ժպտաց.

— Ահա թե ինչ, ընդամենը շուն է: Կուզեն գնամ, հեռու քշեմ:

— Մնա՛ այնտեղ, որտեղ կանգնած ես:

Լռություն տիրեց: Պաղ անձրև էր թափվում: Կողպված դռնից ներս էր թափանցում կապույտ էլեկտրականության բոլորը:

— Արի՛ վերադառնանք ընթերցանությանը,— հանդարտ սասաց Մոնթապը:

Միլդրեդը ոտքով հարվածեց պատահական մի գրքի:

— Գրքերը մարդիկ չեն: Դու կարդում ես, իսկ ես նայում եմ շուրջս ու ոչ ոքի չեմ տեսնում:

Մոնթապը հայացքը դարձրեց դեպի հեռուստասենյակը, որը գորշ էր ու մեռյալ՝ օվկիանոսի ջրերի պես, որոնց մեջ, սակայն, կյանքը կարող էր եռալ, եթե էլեկտրական արևը միացնեին:

— Լսի՛ր, Մոնթապ,— սասաց Միլդրեդը,— իմ ընտանիքը մարդիկ են: Նրանք ինձ ինչ-որ բաներ են պատմում, ես ծիծաղում եմ, նրանք ծիծաղում են: Հապա գույները հեռուստապատերին:

— Այո՛, գիտեմ:

— Բացի այդ, եթե հրկիզապետ Բիթին իմանա այս գրքերի մասին...— Միլդրեդը մի պահ խորհեց իր ասածի շուրջ: Դեմքն այլայլվեց, ապա ծամածռվեց սարսափից:— Նա գուցե գա և այրի տունը, «ընտանիքն» էլ՝ հետը: Սարսափելի է: Հապա հիշի՛ր՝ որքան ներդրում ենք ունեցել այս ամենի վրա: Ինչո՞ւ պետք է կարդամ, հանուն ինչի՛:

— Ինչո՞ւ, հանուն ինչի՛,— սասաց Մոնթապը:— Օրեր առաջ ես տեսել եմ աշխարհի ամենանողկալի օձին, որին միայն կարելի է պատկերացնել: Մեռած օձ էր, բայց ողջ էր: Կարող էր տեսնել, բայց չէր տեսնում: Ուզում ես տեսնել: Դու կարող ես տեսնել օձին շտապօգնության հիվանդանոցում, որտեղ հասուկ արձանագրություն են կազմել այն ամբողջ աղտի վերաբերյալ, որն օձը դուրս է քաշել քո ներսից: Կուզես

գնալ հիվանդանոցի արխիվ և կարդալ նրանց կազմած արձանագրությունը: Գուցե *Գայ Մոնթագ* անվան տակ փնտրես, գուցե *Վախ* կամ *Պատերազմ*: Գուցե գնաս տեսնես երեկ այրված տունը: Քրքրես մոխիրներն ու փնտրես կնոջ ոսկորները, ով հրկիզեց իրեն իր սեփական տան մեջ: Հապա Քլարիս Մըքլեյլը: Որտեղ փնտրենք նրան: Դիարանում: Լսիր:

Կործանիչները թնոյուն–որոտներով ճեղքեցին երկինքը տան վերևում, սրարշավ անցան՝ հսկա անտեսանելի օդափոխիչների նման սուրալով երկնքի դատարկության մեջ:

— Աստված իմ,— ասաց Մոնթագը,— որքան շատ անիծյալ երևոյթներ են շարունակ հայտնվում երկնքում: Եվ ինչպե՞ս են կարողանում այս գրողի տարած մրբակոծիչները ամեն վայրկյան հայտնվել մեր գլխավերևում: Ինչո՞ւ որևէ մեկը չի ուզում խոսել այդ մասին: 2022 թվականից ի վեր մենք երկու ատոմային պատերազմ ենք հրահրել և երկուսում էլ հաղթանակել ենք: Գուցե պատճառն այն է, որ այստեղ՝ տանը, մենք այնքան շատ ենք զվարճանում, որ մոռացել ենք աշխարհի մասին: Գուցե պատճառն այն է, որ մենք այսքան հարուստ ենք, իսկ աշխարհի մնացած մասը՝ աղքատ, և մեզ չի էլ հուզում այդ հանգամանքը: Ինձ լուրեր են հասել, որ աշխարհը սովամահ է լինում, մինչ մենք կուշտ ենք: Ճիշտ է արդյոք, որ աշխարհն աշխատում է, որպեսզի մենք վայելենք: Դրա համար են մեզ այդպես ատում: Տարիների ընթացքում ինձ նաև լուրեր են հասել այդ ատելության մասին: Գիտե՞ս՝ ինչու: Ես վստահ կարող եմ ասել, որ չգիտեմ: Գուցե գրքերը կարողանան դուրս բերել մեզ այս անձավից: Դրանք գուցե օգնեն, որպեսզի մենք խելագարի պես չկրկնենք նույն անիծյալ սխալները: Ես երբևէ չեմ լսել, որ հեռուստասենյակի քո այդ տխմար վիժվածքները խոսեն այդ մասին: Աստված իմ, Միլի, չե՞ս տեսնում: Օրը մեկ–երկու ժամ կկարդանք, և գուցե...

Հեռախոսի զանգը հնչեց: Միլդրեդը ճանկեց լսափողը:

— Ա՛ն,— ծիծաղելով դիմեց նա զանգահարողին,— այո՛, «Ճերմակ ծաղրածուն» է այսօր երեկոյան ծրագրով:

Մոնթազը խոհանոց գնաց և վայր նետեց գիրքը: «Մոնթազ,— կիսաձայն ասաց նա ինքն իրեն,— դու իսկապես հիմար ես: Հիմա ինչ անենք: Հանձնենք գրքերն այրելու: Երբեք»: Նա բացեց գիրքն ու սկսեց կարդալ, մինչ Միլդրեդը ծիծաղելով խոսում էր հեռախոսով:

«Խեղճ Միլի,— մտածեց նա:— Խեղճ Մոնթազ, ո՞նց ես գլուխ հանելու այս թնջուկից: Բայց որտեղի՞ց ես օգնություն գտնելու, այսքան ուշացած՝ որտե՞ղ ես ուսուցիչ գտնելու»:

Մտածել է պետք: Նա փակեց աչքերը: Դե՛, իհարկե: Նա կրկին մտովի հայտնվեց կանաչ այգում, ինչպես մեկ տարի առաջ: Վերջին ժամանակներս այս միտքը շատ անգամներ էր հուզել նրան: Հիմա նա հստակ հիշում էր, թե ինչ էր կատարվել այդ օրը քաղաքային այգում, երբ տեսավ, թե ինչպես սև կոստյումով ծերունին շատ արագ ինչ-որ բան թաքցրեց վերարկուի գրպանում:

...Ծերունին վեր էր ցատկել տեղից և վազելու փորձ արել: Մոնթազն ասել էր՝ սպասե՛ք:

— Ես ոչինչ չեմ արել,— բղավել էր ծերունին դողացող ձայնով:

— Իսկ ո՞վ ասաց, թե արել եք:

Նրանք մի պահ նստել էին դուրեկան կանաչների մեջ՝ առանց որևէ բառ արտաբերելու, հետո Մոնթազը խոսել էր եղանակից, իսկ ծերունին դողդոջուն ձայնով արձագանքել էր նրա ասածին: Ոչ սովորական, անխուճապ հանդիպում էր: Ծերունին ասել էր, որ ժամանակին անգլերեն լեզու և գրակա-նություն էր դասախոսել և արդեն քառասուն տարի էր, ինչ գործազուրկ էր, աշխարհի կողմից մոռացված, ճիշտ այն ժամանակից ի վեր, երբ հումանիտար գիտությունների վերջին քուլեջը բավարար ուսանողներ և հովանավորներ չունե-նալու պատճառով փակվել էր: Անունը Ֆաբեր էր, և երբ նա ի վերջո հաղթահարել էր Մոնթազի հանդեպ ունեցած վախը, սկսել էր խոսել ավելի համաչափ, աշխույժ ձայնով, նայել էր երկնքին, ծառերին և կանաչ այգուն, և երբ ևս մեկ ժամ էր

անցել, ծերունին ինչ-որ բան էր ասել Մոնթագին, և Մոնթագն այն տպավորությունն էր ստացել, ասես առանց հանգերի բանաստեղծություն ասմունքելիս լիներ: Հետո էլ ավելի էր քաջալերվել և ինչ-որ բան էր ասել, որ նույնպես բանաստեղծություն էր եղել: Ողջ գրույցի ընթացքում Ֆաբերը ձեռքը չէր հեռացրել իր վերարկուի ձախ գրպանից և խոսել էր հանդարտ, և Մոնթագն իմացել էր, որ եթե երկարացներ ձեռքը, դուրս կհաներ պոեզիայի ժողովածու նրա վերարկուի գրպանից: Սակայն նա ձեռքը չէր երկարացրել: Նրա ձեռքերը թմրած ու անօգնական ընկած էին եղել ծնկներին: «Ես երևոյթներից չեմ խոսում, սըր, ես խոսում եմ երևոյթների իմաստներից: Նստում եմ այստեղ և հասկանում, որ կենդանի եմ»:

Այս ամենն իսկապես պատահել էր: Ընդամենը մեկ ժամ տևած մենախոսություն, մի բանաստեղծություն, մի մեկնաբանություն, և հետո, առանց իրեն հաշիվ տալու, որ Մոնթագը հրկիզող է, իր հասցեն գրել էր թղթի կտորի վրա և տվել նրան՝ ասելով. «Սա Ձեզ՝ արձանագրություն կազմելու համար, եթե որոշեք բարկանալ ինձ վրա»: «Ձեմ բարկանում», — պատասխանել էր Մոնթագը զարմացած:

Նախասրահում Միլդրեդը ծիծաղից պոռթկաց:

Մոնթագը մտավ ննջարանին կից իր առանձնասենյակը, գտավ թղթապանակը և քարտարանում «Հետաքննություն իրականացնել» խորագրի ներքո սկսեց փնտրել Ֆաբերի անունը: Գտավ հասցեն: Չէր ներկայացրել կայան, ոչ էլ դեն էր նետել: Մոտեցավ օժանդակ հեռախոսին: Հավաքեց հեռախոսահամարը: Ընդունող հեռախոսն արդեն ավելի քան տասն անգամ ազդարարել էր «Ֆաբեր» անունը, երբ վերջապես պրոֆեսորը պատասխանեց նվաղուն ձայնով: Մոնթագը ներկայացավ: Հեռախոսագծի հակառակ կողմում տևական լռություն տիրեց: Հետո միայն հնչեց պատասխանը. «Այո՛, պարոն՝ Մոնթագ»:

— Պրոֆեսոր Ֆաբեր, ես Ձեզ բավականին տարօրինակ հարց ունեմ տալու: Աստվածաշնչի քանի՞ օրինակ է դեռևս մնացել մեր երկրում:

— Ես չեմ հասկանում, թե Դուք ինչի մասին եք խոսում:

— Ուզում եմ իմանալ՝ քանի օրինակ է մնացել, եթե, իհարկե, մնացել է:

— Սա ծուղակ է: Ես չեմ կարող ամեն պատահած մարդու հետ խոսել հեռախոսով:

— Շեքսպիրի, Պլատոնի ստեղծագործությունների քանի՞ օրինակ է մնացել:

— Ոչ մի օրինակ: Ես էլ, Դուք էլ գիտենք, որ ոչ մի օրինակ էլ չի մնացել:

Ֆաբերը կախեց ընկալուչը:

Մոնթագը նույնպես: Ոչ մի: Մի բան, որը նրան, իհարկե, հայտնի էր կայանի ցուցակներից: Սակայն, չգիտես ինչու, նա դա ուզում էր լսել Ֆաբերից:

Հյուրասրահում նրան հանդիպած Միլդրեդի աչքերը փայլում էին ոգևորությամբ:

— Այո՛, այսօր «Տիկնանց» նոր եթերաշրջանն է վերսկսվելու:

Մոնթագը նրան մի գիրք ցույց տվեց:

— Հին և Նոր Կտակարանն է, և...

— Նորից մի՛ սկսիր այդ ամենը:

— Աշխարհի այս հատվածում, ուր մենք ենք ապրում, սա գուցե վերջին օրինակը լինի:

— Դու ստիպված ես դա հանձնել այս երեկո, չգիտեմ: Հրկիզապես Բիթին գիտի, որ այն քեզ մոտ է, այնպես չէ՛:

— Չեմ կարծում, թե նա գիտի՝ ինչ գիրք եմ գողացել: Սակայն ինչպե՞ս եմ սրան փոխարինող որևէ այլ գիրք գտնելու, որպեսզի վերադարձնեմ: Պարոն Ջեֆերսոնին վերադարձնեմ, պարոն Թոբոյին: Ինչպե՞ս ընտրեմ ամենապակաս արժեքավոր գիրքը: Իսկ եթե փոխարինող գտնեմ, և հանկարծ այնպես պատահի, որ Բիթին արդեն տեղյակ է, թե ինչ գիրք եմ

գողացել, նա միանգամից գլխի կընկնի, որ մենք այստեղ մի ամբողջ գրադարան ունենք:

Միլդրեդի շուրթերը ջղաձգվեցին:

— Տես, թե ինչ ես անում: Դու մեզ կկործանես: Ո՞վ է ավելի կարևոր՝ ես, թե՞ այդ Աստվածաշունչը:

Նա արդեն ճշում էր իր տեղը նստած մոմե տիկնիկի պես, ով հավում, հոսում էր սեփական ջերմությունից:

Մոնթագի ականջներում այժմ հնչում էր Բիթիի ձայնը: «Նստե՛ք, Մոնթագ: Այստեղ նայե՛ք: Որքան նրբորեն են այրվելու, ճիշտ ծաղկի թերթիկների պես: Վառե՛ք առաջին էջը, երկրորդը վառե՛ք: Հիմա հերթով սև թիթեռնիկներ կդառնան: Գեղեցիկ է, չէ՞: Երրորդ էջը վառե՛ք, անմիջապես երկրորդից հետո, և այդպես շարունակ շղթայաբար կպցրե՛ք մի էջը մյուսից, գլուխ առ գլուխ, այրե՛ք բոլոր հիմար իմաստները, որ բառերը կարող են նշանակել, բոլոր սուտ խոստումները, բոլոր ծեծված հասկացությունները և մաշված փիլիսոփայությունները»: Ահա Բիթին, թեթև քրտնած, նստած է մի կողմում, հատակին թափված են սև գիշերաթիթեռների խառնիխառն պարսեր, որոնք մեռել են մի բռնկումից:

Միլդրեդը դադարեց ճչալուց նույնքան հանկարծակի, որքան որ սկսել էր: Մոնթագը չէր լսում նրան:

— Միայն մի բան է մնում անել,— ասաց նա,— նախքան ես գիրքը երեկոյան կտամ Բիթիին, հարկավոր է ինչ—որ կերպ պատճենել այն և ունենալ կրկնօրինակը:

— Կհասցնես տանը լինել «Տիկնանց» և «Ճերմակ ծաղրածուի» դիտումի ժամին,— նրա հետևից գոռաց Միլդրեդը:

Մոնթագը կանգ առավ դռան մոտ՝ մեջքով դեպի կինը:

— Մի՛լի:

Լռություն:

— Ի՞նչ կա:

— Մի՛լի,— Մոնթագը ատամներով տրորեց շուրթերը,— քո ընտանիքը սիրո՞ւմ է քեզ, սիրո՞ւմ է ողջ հոգով, պատասխանիր, Մի՛լի:

Մոնթազը զգաց, թե ինչպես էր իր թիկունքում Միլդրեդը դանդաղ թարթում աչքերը:

— Ինչո՞ւ ես այդպիսի հիմար հարց տալիս:

Մոնթազը զգաց, որ ուզում է լաց լինել, սակայն աչքերն անխռով մնացին, բերանը որևէ կերպ չջղածգվեց:

— Եթե դրսում հանդիպես այդ շանը,— ասաց Միլդրեդը,— մի աքացի տուր նրան իմ կողմից:

Մոնթազը վարանեց: Մի պահ լարեց լսողությունը, ապա բացեց դուռն ու կանգնեց շեմին:

Անձրևը դադարել էր: Պարզկա երկնքում իր թույլ շողերն էր տարածել մայրամուտի արևը: Փողոցը, մարգագետինն ու նախագավիթը դատարկ էին: Մոնթազը խոր շունչ քաշեց:

Դուռը շրխկոցով փակվեց նրա հետևից:

Քիչ անց նա արդեն ստորգետնյա թունելի մեջ էր:

«Ողջ մարմինս ընդարմացած է,— մտածեց նա:— Երբ վանինց է այս թմրությունն իջել դեմքիս, մարմնիս: Գուցե այն գիշերվանից, երբ ոտքով հարվածեցի դեղահաբերի սրվակին, ինչպես հողում թաղված ականի: Թմրությունը կանցնի,— մտածեց,— ժամանակ է պետք, բայց ես ամեն բան կանեմ, որ անցնի, կամ Տաբերը կօգնի ինձ այդ հարցում: Ինչ—որ տեղ ինչ—որ մեկը կա, ով կօգնի ինձ վերստանալու նախկին դեմքս, ձեռքերս: Նույնիսկ ժպիտս, նախկին ժպիտս անհետացել է խանձված դեմքիցս: Առանց ժպիտի ես կորած եմ»:

Մետրոյի գնացքը սուրաց Մոնթազի կողքով: Բաց դեղնավուն վագոններ, սև սաթի պես մթություն, բաց դեղնավուն վագոններ, սև սաթի պես մթություն, թվանշաններ, մթություն, ավելի շատ մթություն, համատարած մթություն:

Մի անգամ՝ երեխա ժամանակ՝ մի պարզկա ու շոգ ամառային օր, նա նստել էր ծովափին՝ ավազաթմբի վրա, և փորձում էր լցնել մաղը ավազով, որովհետև նրա դաժան զարմիկներից մեկն ասել էր. «Ավազով լցրո՞ւ մաղը և տասը ցենտանոց կստանաս»: Եվ որքան ավելի արագ էր նա լցնում, այդքան ավելի արագ էր ավազը տաք խշշոցով դուրս հոսում

մաղի անցքերից: Նրա ձեռքերը հոգնել էին, ավազն այրում էր մատները, մաղը դատարկ էր: Այնտեղ՝ ծովափին՝ հուլիսի բարկ արևի տակ անձայն նստած, նա զգում էր, որ արցունքները ողողել էին այտերը:

Հիմա, երբ սուրացող վակուումային ստորգետնյա գնացքը նրան ցնցելով տանում էր քաղաքի մեռյալ նկուղներով, Մոնթազը հիշեց մաղի սարսափելի տրամաբանությունը: Նա ներքև նայեց ու տեսավ, որ Աստվածաշունչը բաց վիճակում բռնել էր ձեռքում: Ստորգետնյա գնացքում էլի մարդիկ կային, բայց նա գիրքը պահել էր ձեռքում, և հիմա անհեթեթ բան անցավ մտքով. եթե նա հասցներ շատ արագ կարդալ ամբողջը, գուցե ավազի ինչ—որ մաս մնար մաղի մեջ: Սակայն նա կարդում էր, և բառերը հոսում էին մաղի անցքերով, և նա մտածում էր, որ մի քանի ժամ անց ինքը Բիթիին է հանձնելու գիրքը, ուրեմն ոչ մի արտահայտություն չպետք է մոռացվեր, ոչ մի տող չպետք է խոյս տար իրենից: Ես ինձ կատիպեմ: Ես պարտավոր եմ դա անել:

Նա սեղմեց գիրքն ափի մեջ:

Վագոնում գվվում էին բարձրախոսները:

— Դենըմ ատամի մածուկ...

«Լռե՛ք,— մտածում էր Մոնթազը:— Նայե՛ք վայրի շուշաններին»¹:

— «Դենըմ» ատամի մածուկ...

«Ոչ աշխատում են...»:

— «Դենըմ»...

«Նայե՛ք վայրի շուշաններին, լռե՛ք, լռե՛ք»:

— Ատամի մածուկ...

Մոնթազը բացեց գիրքը և սկսեց թերթել էջերը: Նա այնպես էր շոշափում դրանք, ասես կոյր լիներ, ակնդետ նայելով տառերին՝ սահեցնում էր մատները դրանց վրայով:

¹ «Իսկ հագուստի համար ինչո՞ւ եք մտահոգվում: Նայե՛ք վայրի շուշանին՝ ինչպես է աճում. ո՛չ ջանք է թափում և ո՛չ հյուսում» (Մատթեոսի 6.28):

— Խանութներում փնտրե՛ք «Դենըմ» ապրանքանիշը հետևյալ գրությամբ՝ Դ-Ե-Ն...

«Ոչ աշխատում են, ոչ...»:

Տաք ավազի կատաղի խշշոց մաղի անցքերից:

— «Դենըմը» կարող է...

«Նայե՛ք վայրի շուշաններին, շուշաններին, շուշաններին»:

— «Դենըմ» ախտահանող մածուկ...

— Լռե՛ք, լռե՛ք, լռե՛ք...— բառեր, որոնք հնչում էին որպես աղերսանքի սարսափելի ճիչ: Մոնթագը չէր զգացել, թե ինչպես էր ոտքի ելել նստած տեղից: Աղմկոտ վագոնի ցնցված ուղևորները ակնապիշ նայում էին նրան, խոյս տալիս նրանից: Ինչ-որ բանի ծարավ դեմքով, խզված ձայնով անորոշ արտահայտություններ մոթմոթացող Մոնթագը նրանց խելագար էր թվում, ում ձեռքի մեջ տարուբերվում էր բացված գիրքը: Մարդիկ, ովքեր, վայրկյան առաջ վագոնում նստած, ոտքերը թեթև թփփփացնում էին հատակին գովազդային հայտարարության համաչափությամբ՝ «Դենըմ» ատամի մածուկ, «Դենըմ» ատամի հիանալի ախտահանող մածուկ, մածուկ, մածուկ, մեկ, երկու, մեկ, երկու, երեք, մեկ, երկու, մեկ, երկու, երեք: Մարդիկ, ում շրթունքները հազիվ նկատելի շարժվում էին՝ կրկնելով «ատամի մածուկ, հիանալի ախտահանող մածուկ» արտահայտությունը: Գնացքի բարձրախոսներից գովազդային հոլովակի մետաղաձայն տարափը անագի, պղնձի, արծաթի, քրոմի և արույրի շառագյունով թափվում էր Մոնթագի գլխին: Մարդիկ ստիպված էին հարմարվել վագոնում տիրող իրավիճակին. փախչելու տեղ չկար: Հսկա ստորգետնյա գնացքը համաչափ ընթացքով սլանում էր գետնուղով:

— Վայրի շուշաններ:

— «Դենըմ»:

— Ասացի՛ շուշաններ:

Մարդիկ կրկին զարմացած նայեցին:

— Ուղեկցորդին կանչե՛ք:

— Այս մարդը գծվել է:

— Նոյ Վյու:

Գնացքը թշուրոցով կանգ առավ կայարանում:

— Նոյ Վյու, — բարձրաձայն:

— «Դենըմ», — շշուկով:

Մոնթագի շուրթերը հագիվ էին շարժվում:

— Շուշաններ...

Գնացքի դուռը ֆշշալով բացվեց: Մոնթագը տեղից չշարժվեց: Դուռն ասես հեղցով դանդաղ սկսեց փակվել: Եվ միայն այդ ժամանակ նա, ուղևորներին հրմշտելով, առաջ նետվեց (սեփական ականջների մեջ զրնգում էր զսպված ճիչը), և փակվող դռան ճեղքից հագիվ հասցրեց դուրս պրծնել վագոնից: Սպիտակ հախճաասալերի վրայով վազեց գետնուղով՝ անտեսելով շարժասանդուղքները, որովհետև ուզում էր զգալ, թե ինչպես են շարժվում ոտքերը, օրորվում ձեռքերը, ինչպես են կծկվում և թուլանում թոքերը, ինչպես է շնչառության ընթացքում կոկորդը սեղմվում սառն օդից: Նրան դեռևս հետապնդում էր ձայնը՝ «Դենըմ», «Դենըմ», «Դենըմ»: Օձի նման ֆշշալով՝ գնացքն անհետացավ գետնուղու խավարի մեջ:

— Ո՞վ է:

<https://1915.info>

— Մոնթագը:

— Ինչ եք ուզում:

— Ներս թողեք ինձ:

— Ես ոչինչ չեմ արել:

— Ես մենակ եմ, գրոհը տանի, ներս թողեք ինձ:

— Երդվում եք:

— Երդվում եմ:

Շքամուտքի դուռը դանդաղ բացվեց: Ֆաբերը դուրս նայեց: Ցերեկային լույսի ներքո նա ավելի ծեր էր երևում: Այս պահին նա անպաշտպան և ակնհայտ վախեցած մարդու տպավորություն էր թողնում: Այնպիսի տեսք ուներ, ասես տարիներ ի վեր տնից դուրս չէր եկել: Երբ արդեն ներսում էին,

նրա դեմքը տան պատերի ծեփի գույնն ուներ: Շուրթերն ու այտերը ճերմակ էին, մազերը՝ նույնպես, իսկ աչքերի կապույտ մշուշի մեջ առաջվա փայլը չկար: Սակայն երբ հայացքն ընկավ գրքին, որը Մոնթազը պահել էր թևի տակ, աշխուժացավ, քիչ առաջվա պես անպաշտպան չէր թվում այլևս: Աստիճանաբար վախն անցավ:

— Ներեցե՛ք, հարկավոր է զգույշ լինել:

Նա նայեց Մոնթազի թևի տակ թաքցրած գրքին և չկարողացավ զսպել ասելիքը:

— Ուրեմն այս ամենը ճիշտ է:

Մոնթազը ներս մտավ: Դուռը փակվեց:

— Նստե՛ք, խնդրեմ:— Ֆաբերը հետ քաշվեց՝ աչքը գրքից չկտրելով, ասես վախենում էր, որ գիրքը կջքանա, եթե ինքը հայացքը հեռացնի դրանից: Նրա հետևում ննջարանի դուռը կրնկի վրա բաց էր. ներսում՝ գրասեղանի վրա, մեքենաներ և պողպատե սարքեր ու գործիքներ էին ընկած: Մոնթազը միայն թռուցիկ հայացք հասցրեց նետել դրանց վրա, երբ Ֆաբերը, գլխի ընկնելով, թե ինչն էր գրավել հյուրի ուշադրությունը, արագ շրջվեց և փակեց ննջարանի դուռը և այնտեղ կանգնած մնաց՝ դողացող ձեռքը չհեռացնելով բռնակից: Ապա երերուն հայացքը դարձրեց Մոնթազին, ով արդեն տեղավորվել էր աթոռին՝ գիրքը ծնկներին դրած:

— Գիրքը... որտեղից եք այն...

— Գողացել եմ:

Առաջին անգամ Ֆաբերը բարձրացրեց հայացքն ու նայեց ուղիղ Մոնթազի աչքերի մեջ:

— Դուք քաջ եք:

— Ո՛չ,— ասաց Մոնթազը,— բանն այն է, որ կինս մահանում է, մի աղջիկ կար, ով իմ լավ բարեկամն էր, արդեն մահացել է: Մի կին կար, ով կարող էր իմ ընկերը դառնալ, ինքնահրկիզվեց երեկ: Իմ ճանաչած մարդկանցից Դուք միակն եք, ով կարող է օգնել ինձ, որպեսզի կարողանամ տեսնել... Օգնե՛ք ինձ տեսնելու...

Ֆաբերի՝ ծնկներին ընկած ձեռքերը ջղաձգվեցին:

— Կարելի է:

— Այո՛, իհարկե, ներեցե՛ք:— Մոնթագը նրան մեկնեց գիրքը:

— Որքան ժամանակ է, ինչ ձեռքս չեմ վերցրել այս գիրքը: Ես կրոնասեր չեմ: Բայց որքան ժամանակ է անցել...— Ֆաբերը թերթում էր էջերը՝ այսուայնտեղ կանգ առնելով և մանրամասն ընթերցելով:— Ամեն բան ճիշտ այնպես է, ինչպես առաջ էր: Հենց այսպիսին եմ ես հիշում Աստվածաշունչը: Տեր Աստված, ինչպես են աղճատել այն մերօրյա հեռուստանովելների մեջ: Քրիստոսը «ընտանիքի» անդամներից մեկն է դարձել: Հաճախ ինձ հարց եմ տալիս՝ արդյոք Աստված ճանաչում է իր սեփական Որդուն հիմա, երբ կամ զգեստավորում ենք նրան արտասովոր հանդերձանքով, կամ մերկացնում: Նա մի սովորական անանուխի սառնաշաքար է այժմ, դյուրամարս անուշեղեն, եթե իհարկե քողարկված կերպով չի գովազդում ինչ-որ ապրանքանիշեր, որոնք, ինչպես հավատացրել են Աստծու երկրպագուներին, ծայրահեղ անհրաժեշտ են նրանց:— Ֆաբերն ըմբռնում էր գրքի բույրը:— Գիտե՛ք, գրքերը մշկընկույզ են բուրում և հեռու ինչ-որ երկրի բնորոշ անսովոր համեմունք: Երբ փոքր տղա էի, սիրում էի վայելել այդ բույրը: Աստված իմ, որքան հիասքանչ գրքեր կային մի ժամանակ, երբ մենք դրանք դեռևս ավելորդ չէինք համարում մեր կյանքում:— Ֆաբերը շարունակում էր թերթել էջերը:— Պարո՛ն Մոնթագ, նա, ով կանգնած է Ձեր առջև, վեհերոտ մեկն է: Շատ տարիներ առաջ ես ականատեսն էի այն ամենի, ինչ կատարվում էր: Ես լուռ հետևում էի: Ես մեկն եմ այն պարզամիտներից, ովքեր կարող էին բարձրաձայնել եղածը, երբ ոչ ոք չէր լսում «մեղավորներին», սակայն ընտրեցի լռել, և ինքս դարձա մեղավոր: Եվ երբ նրանք ի վերջո ներմուծեցին գրքերն այրելու համակարգը՝ հրշեջներին հրկիզողների վերածելով, ես մի քանի անգամ փնթփնթացի, հետո հանդարտվեցի, որովհետև այն ժամա-

Նակ արդեն չկային մարդիկ, ովքեր ինձ հետ պատրաստ էին բողոքելու և աղմուկ բարձրացնելու: Հիմա չափազանց ուշ է:— Ֆաբերը փակեց Աստվածաշունչը:— Լավ, համարենք, որ արդեն հասկացա՝ ինչու եք այստեղ եկել:

— Ինձ այլևս ոչ ոք չի լսում: Պատերի էկրանների հետ խոսել չեմ կարող, որովհետև դրանք գոռում են վրաս: Կնոջս հետ նույնպես խոսել չի լինում. նա միայն հեռուստապատերին է լսում: Ես ընդամենն ուզում եմ, որ մեկն ինձ լսի, լսի, թե ինչ եմ պատրաստվում ասելու: Ով գիտի, երբ ինձ լսեն, և ես կարողանամ մի որոշ ժամանակ անընդմեջ խոսել, գուցե ինձ հաջողվի իմաստուն մտքեր հղանալ: Ես ուզում եմ, որ Դուք ինձ սովորեցնեք հասկանալ կարդացածս:

Ֆաբերը խորազնի՛ն նայեց Մոնթագի շիկնած դեմքին:

— Ինչն այդպես ցնցեց Ձեզ: Ինչը ստիպեց Ձեզ վայր դնել հրկիզողի ջահը:

— Չգիտեմ: Մենք ամեն ինչ ունենք երջանիկ լինելու համար, սակայն երջանիկ չենք: Ինչ—որ բան պակասում է: Փորձեցի փնտրել, հասկանալ, թե ինչ է դա: Միակ բանը, որ վստահաբար գիտեի, որ անվերադարձ կորցրել ենք, գրքերն էին, որոնք այրել էի տասը—տասներկու տարիների ընթացքում: Մտածեցի՝ գուցե գրքերը կարողանային օգնել:

— Դուք անհույս երազող եք, — ասաց Ֆաբերը, — եթե այսքան լուրջ չլինեք ամեն ինչ, գուցե և ծիծաղելի լինեք: Դուք գրքերի կարիքը չէ, որ ունեք, այլ այն ամենի, ինչ մի ժամանակ եղել է գրքերում: Այդ ամենը կարող էր այսօր լինել հեռուստասենյակի «բարեկամների» զրոյցներում: Նույն անսահման մանրամասերն ու իրազեկությունը կարող էին արտացոլվել այսօրվա ռադիո— և հեռուստատեսային հաղորդումներում, սակայն այդպես չէ: Այն, ինչ փնտրում եք, ամենևին էլ գրքերը չեն: Ձեր փնտրածը կարելի կլինի գտնել հին լուսանկարներում և ֆիլմերում, հին ընկերների շրջանում և բնության մեջ: Այն նաև Ձեր մեջ փնտրեք: Գրքերը շտեմարանի ընդամենը մի տեսակ են, որտեղ մենք ամբարել ենք այն

ամենը, ինչը, վախեցել ենք, թե կարող ենք մի օր մոռանալ: Նրանցում ոչինչ այլևս կախարդական չէ: Կախարդանքը միայն այն է, ինչ գրված է գրքերում, այն, թե ինչպես են գրքերը՝ որպես պարունակ, իրենց մեջ ամփոփում տիեզերքի բյուրավոր փշրանքները: Իհարկե, Դուք չէիք կարող այս ամենն իմանալ, Դուք, իհարկե, հիմա՛ էլ չեք հասկանում, թե ես ինչ նկատի ունեմ: Դուք ներըմբռնումով եք հանգել այն ճշմարտությանը, որը ես հիմա կփորձեմ լուսաբանել: Մեզ երեք բան է պակասում:

Առաջին: Դուք գիտեք, թե ինչու են մեզ համար կարևոր այսպիսի գրքերը: Որովհետև դրանք որակ ունեն: Գիտեք՝ ինչ ասել է որակ: Ինձ համար դա թղթի յուրահատուկ հյուսվածքն է: Այս գիրքը ծակոտիներ ունի, դիմագծեր: Այն կարելի է ուսումնասիրել մանրադիտակով, և Դուք կտեսնեք, թե ինչպես է տեսապակու տակ կյանքը հոսում դեպի անսահմանություն: Որքան ավելի շատ են ծակոտիները, որքան ավելի շատ եք կարողանում կյանքի խորապես ուսումնասիրված մանրամասներ արտացոլել թղթի ամեն մի քառակուսի դյույմի վրա, այնքան ավելի գեղարվեստական է Ձեր ընկալումը: Սա իմ սահմանումն է: Մանրամասներ, հնարավորինս շատ նոր մանրամասներ պատկերել: Լավ գրողները կյանքը զգում են իրենց մեջ: Միջակներն ընդամենը հպանցիկ հայացք են նետում դրա վրա: Վատերը բռնաբարում են այն և թողնում ճանճերին:

Այժմ տեսնում եք,— շարունակեց Ֆաբերը,— թե ինչու են գրքերն այդպիսի ատելություն և վախ հարուցում: Նրանք ի ցույց են դնում կյանքի ծակոտիները: Հարմարավետ կյանք որոնողները կամենում են տեսնել միայն մեղրամուսն դեմքեր՝ առանց ծակոտիների, մազաթափ ու անարտահայտիչ: Մենք մի այնպիսի ժամանակաշրջանում ենք ապրում, երբ արգավանդ սև կավահողերի վրա՝ կենսատու անձրևների տակ, աճել, բազմանալու փոխարեն ծաղիկները փորձում են ապրել ծաղիկների հաշվին: Եվ նույնիսկ հրավառությունը իր ողջ

գեղեցկությամբ ծնվում է Երկրի քիմիայից: Սակայն, չգիտես ինչու, մեզ թվում է, թե կարող ենք սնվել ծաղիկներով և հրավառությամբ՝ ավարտին չհասցնելով մեզ իրականություն վերադարձնող շրջափուլը: Ձեզ ծանոթ չե՞ Հերկուլեսի և Անթեյի մասին առասպելը: Անթեյը անհավատալի ուժի տեր հսկա մարզիկ էր, քանի դեռ ամուր կանգնած էր հողին: Սակայն երբ Հերկուլեսը կտրեց Անթեյին հողից, օդ բարձրացրեց, նրան հեշտ եղավ պարտության մատնել: Պատմածս նույնությամբ այսօր առնչվում է մեզ՝ քաղաքում ապրողներիս, եթե ոչ, ուրեմն ես կատարյալ խենթ եմ: Այսպես՝ առաջին բանը, որի կարիքն ունենք, ինչպես ասացի, որակն է, մեր իմացության հյուսվածքը:

— Իսկ երկրորդը ո՞րն է:

— Ազատ ժամանակը:

— Մի՞թե: Մենք բավականաչափ ազատ ժամանակ ունենք:

— Ազատ ժամանակ ունենք, այո՛, սակայն մտածելու ժամանակ՝ հազիվ թե: Եթե ժամում հարյուր մղոն արագությամբ չեք սլանում մեքենայով, երբ որևէ այլ բանի մասին, բացի սպառնացող վտանգից, անկարելի է մտածել, ուրեմն հաստատ ինչ-որ խաղ եք խաղում կամ էլ վատնում եք Ձեր ժամանակը հեռուստասենյակում, որտեղ անհնար է վիճել չորս հեռուստապատերի հետ: Կհարցնեք՝ ինչու: Որովհետև հեռուստացույցն «իրական» է: Այն անմիջական է, ծավալային: Հեռուստաէկրանների հերոսները թելադրում են Ձեզ ինչ մտածել, նրանք ճշում են այդ մասին, ուրեմն ճիշտ են: Նրանք իրական են թվում: Նրանք այնպիսի գլխապտույտ արագությամբ են Ձեզ արդեն պատրաստի հետևություններ հրամցնում, որ Ձեր բանականությունը չի հասցնում առարկել: Ինչպիսի՞ անհեթեթություն:

— Միայն «Ընտանիքի» անդամներն են իրական մարդիկ:

— Ներեցեք, չհասկացա:

— Կինս ասում է՝ գրքերն իրական չեն:

— Եվ փառք Աստծու, որ իրական չեն: Դուք կարող եք փակել գրքերը, ասել՝ սպասեք, Դուք նրանց տերն ու տիրակալն եք, սակայն ո՞ւմ է երբևէ հաջողվել դուրս պրծնել հեռուտասենյակների ճիրաններից, այն բանից հետո, երբ նրանք սխալմամբ մեկ անգամ հայտնվել են այնտեղ: Դրանք կերպափոխում են ձեզ, իրենց ուզած կաղապարը տալիս: Հեռուտասենյակին հաջողվում է իրական աշխարհի պատրանք ստեղծել: Այն դառնում և մնում է որպես միակ ճշմարիտ իրականություն: Գրքերին մենք կարող ենք հաղթել բանականության ուժով: Սակայն գիտելիքների իմ ողջ խորությամբ և թերահավատությամբ ինձ երբեք չի հաջողվել բանավիճել գունավոր հեռուտապատերից ինձ նայող եռաչափ պատկերների և հարյուր նվագարաններից բաղկացած սիմֆոնիկ նվագախմբի հետ, թեև հայտնվելով հեռուտասենյակում՝ ականա դարձել եմ այդ անհավանական իրականության մի մասը: Ինչպես տեսնում եք, հեռուտասենյակ չունեմ, միայն այս չորս ծեփասվաղով ծածկված պատերն են: Իսկ սրանք,— նա ցույց տվեց երկու փոքր ռետինե ականջակալները,— նրա համար են, որ ականջներս խցկեմ, երբ երթևեկում եմ մետրոյով:

— «Դենըմ» ատամի մաքրող միջոց, նայե՛ք շուշանների, ո՛չ աշխատում են, ո՛չ մանում...— կամացուկ ասաց Մոնթազը՝ աչքերը փակ:— Դեպի ո՞ր ենք գնում այսպես: Գրքերը կօգնեն մեզ:

— Միայն այն դեպքում, եթե մեզ տրվի երրորդ անհրաժեշտ պայմանը: Առաջինը, ինչպես ասացի, իմացության որակն է: Երկրորդը՝ ազատ ժամանակը, որպեսզի հասցնենք մարսել, յուրացնել այն: Եվ երրորդն այն իրավունքն է, որը մեզ թույլ կտա գործողությունների դիմել՝ հիմնվելով այն ամենի վրա, ինչը մենք յուրացրել ենք առաջին երկու պայմանների փոխազդեցությունից: Եվ ես կարծում եմ, որ ինչ—որ ծեր մարդ և մի ըմբոստ հրկիզող հազիվ թե կարողանան այսքան ուշ ինչ—որ բան փոխել արդեն կայացած խաղի կանոնների մեջ...

- Ես կարող եմ գրքեր ձեռք բերել:
- Դուք վտանգում եք Ձեր կյանքը:
- Մեռնելու լավ կողմերից մեկն էլ հենց դա է. երբ կորցնելու ոչինչ չունես, կյանքդ վտանգելու գնով պատրաստ ես հասնել ուզածիդ:
- Տեսեք, թե ինչ հետաքրքիր միտք հայտնեցիք,— ծիծաղեց Ֆաբերը,— առանց որևէ տեղ այն կարդացած լինելու:
- Մի՞թե գրքերում այս տեսակ բաներ են գրում: Բայց ես դա հենց այնպես, առանց մտածելու ասացի:
- Ավելի լավ: Կնշանակի, որ Դուք այն չհնարեցիք իմ կամ որևէ մեկի համար, ոչ էլ նույնիսկ Ձեր:
- Մոնթազը հակվեց Ֆաբերի կողմը:
- Այսօր երեկոյան մտածում էի, որ եթե պարզեմ, որ գրքերն իրականում արժեքավոր են, մենք կարող ենք տպագրահաստոց ձեռք բերել և հավելյալ օրինակներ տպագրել...
- Մե՞նք:
- Դուք և ես:
- Օ՛, ո՛չ,— Ֆաբերն անհանգիստ շարժում արեց նստած տեղը:
- Թույլ տվեք Ձեզ ներկայացնել իմ ծրագիրը...
- Եթե պնդում եք շարունակել այդ մասին խոսել, պետք է խնդրեմ, որ հեռանաք:
- Մի՞թե Ձեզ չի հետաքրքրում այս ամենը:
- Ո՛չ, քանի դեռ չեք դադարել խոսելուց այնպիսի բաների մասին, որոնք կարող են իմ ողջակիզման պատճառը դառնալ: Միակ բանը, որ կարող է ստիպել ինձ լսել Ձեզ, հրկիզողների համակարգի հնարավոր ոչնչացման մասին խոսելն է: Առաջարկում էիք տպել հավելյալ օրինակներ: Ի՞նչ կասեք, եթե դրանք կազմակերպված ձևով ողջ երկրով մեկ թաքցնել տանք հրկիզողների տներում, որպեսզի այս կերպ հնարավոր լինի կասկածի ծիլեր սերմանել այդ սադրիչների շրջանում: Ա՛յ, այսպիսի ինչ—որ բան առաջարկեք, ասեմ՝ կեցցե՛ք:

— Գրքերը պահ տալ, ապա ահազանգել և տեսնել, թե ինչպես են կրակի բաժին դառնում հրկիզողների տները: Սա՛ նկատի ունեք:

Ֆաբերը բարձրացրեց հոնքերը և նայեց Մոնթագին, ասես առաջին անգամ էր տեսնում նրան:

— Ես կատակում էի:

— Կարծում եք՝ այդպիսի ծրագիրն արժի՞ փորձել: Քայլերի դիմելուց առաջ ինձ Ձեր երաշխիքն է պետք, որ այն արդյունք կտա:

— Այս դեպքում երաշխիքներ տալն անհնար է: Հիշենք, ի վերջո, մի բան: Երբ մենք ունեինք բոլոր այն գրքերը, որոնք անհրաժեշտ էին մեզ, միևնույնն է, դեռևս ցանկանում էինք ամենաբարձր ժայռից վայր նետվել: Մի բան ակնհայտ է. մեզ դադար առնել է պետք: Մեզ գիտելիքներ են պետք: Գուցե հազար տարի անց մենք սովորենք թռիչքների համար ավելի փոքր ժայռեր ընտրել: Գրքերն են, որ մի օր հիշեցնելու են մեզ, թե ինչպիսի տխմար ավանակներ ենք մենք: Գրքերն ասես Կեսարի Պրետորական պահակախումբը լինեն, որը զորահանդեսի ցնձագին ընդունելության ժամանակ շարունակ շնջում էր. «Հիշիր, Կեսար, դու մահկանացու ես»: Մեզ-նից շատերը ժամանակ չունեն դեսուդեն ընկնելու, սրա-նրա հետ շաղակրատելու, աշխարհի բոլոր քաղաքները ճանաչելու: Մենք ժամանակ և բավականաչափ փող չունենք դա անելու համար: Ոչ էլ նույնիսկ ընկերներ: Այն ամենը, ինչ փնտրում եք, Մոնթագ, գոյություն ունի աշխարհում, սակայն միակ եղանակը, որով հասարակ երիտասարդը կարող է տեսնել այդ ամենի իննսուն ինը տոկոսը, գրքերն են: Ինձնից երաշխիքներ մի՛ պահանջեք: Եվ փրկություն մի՛ փնտրեք որևէ բանի մեջ կամ որևէ մեկից՝ լինի մարդ, մեքենա թե գրադարան: Ինք-ներդ՝ փորձեք փրկության լույս դառնալ և եթե խեղդվեք ճանապարհին, գոնե կիմանաք, որ դեպի ափն էիք լողում:

Ֆաբերը ուռքի ելավ և սկսեց քայլել սենյակում:

— Ուրեմն...— հարցրեց Մոնթագը:

— Դուք բացարձակ լիւրջ եք տրամադրված:

— Բացարձակ:

— Նենգ ծրագիր է, ընդունում եմ:— Տաբերը ջղաձիգ նայեց ննջասենյակի դռանը:— Տեսնել, թե ինչպես են հրկիզողների կայաններն այրվում ողջ երկրով մեկ, կործանվում՝ որպես դավաճանության օջախներ: Սալամանդրը խժռում է իր սեփական պոչը: Աստված իմ:

— Ես ունեմ երկրի տարածքում ապրող բոլոր հրկիզողների հասցեները: Եթե մենք ունենայինք որևէ ընդհատակյա...

— Մարդկանց չի կարելի վստահել, ամենավատն էլ հենց սա է: Դուք և ես, ուրիշ էլ ո՛վ կրակի կտա նրանց կայանները:

— Մի՞թե Ձեզ պես պրոֆեսորներ չկան՝ նախկին գրողներ, պատմաբաններ, լեզվաբաններ:

— Մեռած են արդեն կամ էլ շատ ծեր:

— Որքան ծեր, այնքան լավ: Կասկած չեն հարուցի: Խոստովանե՛ք, որ մի քանի տասնյակ այդպիսի մարդկանց ճանաչում եք:

— Օ՛, անշուշտ, միայն մի քանի տասնյակ դերասաններ կան, ովքեր շատ երկար տարիներ չեն խաղացել Պիրանդելոյի, Շեքսպիրի, Շոուի դրամաներում այն պատճառով, որ նրանց գործերը չափազանց բազմաշերտ են արտացոլում կյանքը: Կարող ենք մեզ ծառայեցնել նրանց զայրույթը, ինչպես նաև արդարացի վրդովմունքն այն պատմաբանների, ովքեր արդեն քառասուն տարի ոչ մի տող չեն գրել: Իրոք, մենք կարող ենք դպրոց հիմնել և կարդալ ու մտածել սովորեցնել:

— Այո՛:

— Սակայն այս ամենը միայն մի կաթիլ է ծովում: Մի ամբողջ մշակույթ ոչնչացրել են: Ողջ հենքը հալեցնել և նոր կաղապար ձուլել է պետք: Գրողը տանի, այնքան էլ դյուրին բան չէ, ինչպես, ասենք, կես դար առաջ վայր դրած գիրքը կրկին ձեռքդ վերցնելը: Հավատացե՛ք, Մոնթագ, հրկիզողների միջամտությունը միայն հազվադեպ է անհրաժեշտ լինում: Հանրությունն ինքն է լուռ համաձայնությամբ եկել ընթերցա-

նությունը թողնելու մտքին: Դուք՝ հրկիզողներդ, միայն ժամանակ առ ժամանակ տներ եք կրակի տալիս՝ ապահովելու համար կրկեսը, և մարդիկ են հավաքվում՝ հրավառությունը դիտելու: Սակայն այդ ամենն ընդամենը փոքրիկ միջախաղ է, որը հազիվ թե որևէ կարևորություն կարողանա ներկայացնել այս ինքնակառավարվող համակարգում: Մեր օրերում այնքան քչերն են պատրաստ ըմբոստանալու, և այդ քչերի մեջ էլ մեծամասնությանը, այդ թվում նաև ինձ, հեշտությամբ կարելի է վախեցնել: Կարող եք ավելի արագ պարել, քան «Ճերմակ ծաղրածուն», ավելի բարձր բղավել, քան Հեռուտաաճապարարը և հեռուստասենյակի «ընտանիքի» անդամները: Եթե կարող եք, ուրեմն Ձեզ կհաջողվի հարթել Ձեր ճանապարհը, Մոնթաֆ: Ամեն դեպքում Դուք հիմար եք: Մարդիկ զվարճանում են:

— Ինքնասպան լինում: Սպանում միմյանց:

Նրանց զրոյցի ընթացքում ռեակոծիչներ էին սլանում դեպի արևելք, և միայն այժմ նրանք դադարեցին խոսել և ականջ դրեցին. երկուսն էլ այն զգացողությունն ունեին՝ ասես հրթիռների դղրոյունն արձագանքում էր իրենց ներսում:

— Համբերություն, Մոնթաֆ, այ կտեսնեք, պատերազմը կլռեցնի «բարեկամներին»: Մեր քաղաքակրթությունն ինքնակործանման է գնում: Հեռու մնացեք կենտրոնախոյս ուժերից:

— Բայց չէ՞ որ մեկը պետք է պատրաստ լինի նորից սկսելուն, երբ ամեն ինչ կործանվի:

— Եվ ովքեր են դա անելու: Մարդիկ, ովքեր կարող են մեջբերել Միլթոնին, նրանք, ովքեր կարող են ասել՝ «ես դեռ հիշում եմ Սոֆոկլեսին»: Եվ այդ ինչ են անելու նրանք. հիշեցնելու են ողջ մնացածներին, որ մարդիկ նաև լավ կողմեր ունեն: Միակ բանը, որ նրանք կանեն, այն է, որ կհավաքեն քարեր ու իրար վրա կշարտեն: Տոն գնացեք, Մոնթաֆ: Գնացեք քնելու: Ինչո՞ւ պետք է վատնեք Ձեր վերջին ժամերը՝ փակ վանդակում գալարվելով՝ հերքելով, որ սկյուռ եք:

— Ինչ է, Ձեզ այլևս չի հետաքրքրում այս ամենը:

— Հետաքրքրում է, այնքան է հետաքրքրում, որ խելագարվել եմ:

— Եվ Դուք չե՞ք պատրաստվում օգնելու ինձ:

— Բարի գիշեր, Մոնթագ, բարի մնաք:

Մոնթագն ակամա ձեռքն առավ Աստվածաշունչը: Նա, այդ արտասովոր մղումից զարմացած, նայեց սեփական ձեռքերին:

— Կուզեի՞ք, որ այս գիրքը Ձերը լիներ:

— Աջ ձեռքս կտայի այն ունենալու համար:

Մոնթագը պարզապես կանգնել ու սպասում էր, թե հիմա ինչ է լինելու: Նրա ձեռքերը, իր կամքից անկախ, միևնույն մղումից դրոպած երկու մարդկանց համառությամբ սկսեցին պատահոտել էջերը: Սկզբում այդ կատաղի ճիրաններում հայտնվեց անվանաթերթը, հետո՝ առաջին էջը, ապա՝ երկրորդը:

— Այդ ինչ եք անում, տխմար:— Ֆաբերն այնպես վեր ցատկեց տեղից, ասես նրան հարվածել էին: Հարձակվեց Մոնթագի վրա, սակայն վերջինս նրան մի կողմ հրեց և թույլ տվեց, որ ձեռքերը շարունակեն: Վեց էջեր թափվեցին հատակին: Նա վերցրեց դրանք և ճմռեց Ֆաբերի քթի տակ:

— Մի՛ արեք, խնդրում եմ, այդպես մի՛ արեք,— բղավեց ծերունին:

— Ո՞վ կարող է ինձ խանգարել: Ես հրկիզող եմ: Կարող եմ կործանել Ձեզ:

Ծեր մարդը կանգնել նայում էր նրան:

— Չեք անի այդպիսի բան:

— Կարող եմ, եթե կամենամ:

— Գիրքը... Մի՛ պատռեք այն այլևս:— Ֆաբերը փլվեց աթոռին. դեմքը գունատ էր, շուրթերը դողում էին:— Մի՛ տանջեք ինձ: Ի՞նչ եք ուզում:

— Ուզում եմ՝ սովորեցնեք ինձ:

— Լավ, շատ լավ:

Մոնթազը վայր դրեց գիրքը: Նա սկսեց հարթել ճմռթված էջերը: Ծերունին հոգնատանջ աչքերով հետևում էր նրան:

Տաբերը թափ տվեց գլուխը. ասես սթափվելու փորձ էր անում:

— Մոնթազ, Դուք փող ունե՞ք:

— Մի քիչ ունեմ: Չորս կամ հինգ հարյուր դոլար: Ինչո՞ւ եք հարցնում:

— Կբերե՞ք այդ փողը: Ես մի մարդ գիտեմ, ով կես դար առաջ մեր համալսարանական թերթն էր տպագրում: Դա հենց այն տարին էր, երբ նոր կիսամյակի սկզբում լսարան մտա և պարզեցի, որ միայն մեկ ուսանող էր ցուցակագրվել թատերագիտության դասընթացին, որն ընդգրկում էր էսքիլեսից մինչև Յուջին Օ'նիլ ընկած ժամանակահատվածը: Տեսնո՞ւմ եք: Միթե նման չէ արևի տակ հալվող գեղեցկագույն սառցե արձանի: Հիշում եմ՝ ինչպես էին ամսագրերը մեռնում կրակին հանձնված գիշերաթիթեռների պես: Ոչ ոք չէր էլ փորձում հետ բերել դրանք: Ոչ ոք չէր հիշում: Եվ կառավարությունը, հասկանալով, թե որքան շահավետ է, երբ մարդիկ կարդում են միայն կրքոտ շուրթերի և ծեծկռտուքի մասին, շրջանառության մեջ դրեց հրկիզողների գաղափարը: Ինչ էի ուզում ասել, հա՛, լսե՞ք, Մոնթազ, մի գործազուրկ տպագրիչ գիտեմ: Մենք կարող ենք սկսել մի քանի գրքերից, ապա կսպասենք այնքան ժամանակ, մինչև պատերազմ բռնկվի, կործանի իրերի ներկայիս դրությունը և մեզ անհրաժեշտ լիցք տա: Մի քանի ռումբեր բավական կլինեն, որպեսզի հեռուստասենյակի պատերից շաղակրատող «ազգականները»՝ այդ խեղկատակ առնետները, լռեն բոլոր տներում: Իսկ լռության մեջ մեր այլաշխարհիկ շշուները գուցե լսելի լինի:

Նրանք երկուսն էլ կանգնած նայում էին սեղանին դրված գրքին:

— Ես փորձել եմ հիշել, — ասաց Մոնթազը, — սակայն, գրողը տանի, աչքս թարթում եմ թե չէ, մոռանում եմ ամեն բան: Աստված իմ, որքան եմ ցանկանում ինչ-որ բան ասել

հրկիզապետին: Նա բավականին շատ է կարդացել, նա բոլոր հարցերի պատասխաններն ունի, կամ գոնե այդպես է թվում: Նրա ձայնն այնքան համոզիչ է: Վախենամ՝ նրան հաջողվի ինձ հակառակը համոզել: Ընդամենը մեկ շաբաթ առաջ էր, երբ փողրակը բռունցքիս մեջ սեղմած՝ մտածում էի. «Աստված իմ, որքան հրաշալի է նավթն այրում»:

Ծեր մարդը գլխով արեց:

— Նրանք, ովքեր չեն կառուցում, պետք է այրեն: Հայտնի բան է՝ պատմության չափ հին՝ ճիշտ և ճիշտ անչափահաս հանցագործների ոգով:

— Ուրեմն ես այդպիսի մեկն եմ:

— Այդպիսի մեկն ապրում է մեր բոլորի մեջ:

Մոնթագը քայլեց դեպի շքամուտքի դուռը:

— Կարո՞ղ եք ինձ որևէ կերպ օգնել այս երեկո: Գնում եմ հրկիզապետի հետ զրուցելու: Ինձ անձրևանոց է պետք, որպեսզի չթրջվեմ: Սարսափելի վախ կա մեջս, որ կխեղդվեմ, եթե նորից նրա քարոզների հորձանուտն ընկնեմ:

Ծերունին ոչինչ չասաց: Փոխարենը մեկ անգամ ևս նյարդայնացած նայեց ննջարանի դռան կողմը: Մոնթագը որսաց նրա հայացքը:

— Դե՛:

Ծեր մարդը խոր հոգոց հանեց: Ամուր փակեց աչքերը, սեղմեց շուրթերը, նորից հոգոց հանեց և նվաղ ձայնով արտաբերեց Մոնթագի անունը:

Վերջապես շրջվեց և ասաց.

— Եկե՛ք ինձ հետ: Քիչ էր մնում՝ թողնեի, որ հեռանայիք առանց սա տեսնելու: Ահա թե ինչպիսի վախկոտ, ծեր հիմարի մեկն եմ ես:

Ֆաբերը բացեց ննջարանի դուռն ու Մոնթագին ներս հրավիրեց մի փոքր սենյակ, որտեղ ընդհանուր խառնաշփոթի մեջ աչքի էր զարնում մի սեղան՝ վրան մետաղյա գործիքներ, բարակ մետաղալարերի կծիկներ, հենքակոճեր, բյուրեղապակու կտորներ:

— Սրանք ինչեր են:

— Իմ սարսափելի վեհերոտության վկայությունը: Այն-քան երկար տարիներ եմ մենակ ապրել, որ երևակայությանս արգասիքը մտովի դաջել եմ պատերին: Էլեկտրոնիկան և ռադիոհաղորդիչ սարքեր բզբզելը այս բոլոր տարիների ընթացքում դարձել են իմ նախասիրությունը: Վեհերոտությունս կամաց-կամաց այնպիսի չափերի հասավ, որ իմ ներսում ծվարած հեղափոխականի ոգին սկսեց խարխափել դրա ստվերում, և ընդվզումս իր արտահայտությունը գտավ ահա այս սարքի նախագծման մեջ:

Նա սեղանից վերցրեց 5,45 մմ տրամաչափի փամփուշտի մեծության մի առարկա:

— Ինչպե՞ս եմ վճարել այս ամենի համար: Սթոք Մարքեթ խաղալով, իհարկե, վտանգավոր գործազուրկ մտավորականի վերջին ապաստանը աշխարհում: Մարքեթ էի խաղում, զուգահեռ նախագծում էի սա և սպասում: Կես կյանք դողով սպասել եմ, որ մի օր ինչ-որ մեկը խոսք բացի սրանից: Ինքս վախեցել եմ խոսք բացել սրա մասին: Այն օրը, երբ միասին այգում նստած զրուցում էինք, գիտեի, որ մի օր թակելու եք դուռս. հրկիզողի թշնամանքով թե որպես բարեկամ՝ դժվար էր կռահել: Իսկ այս փոքրիկ սարքը պատրաստ էր Ձեր գալուց դեռևս ամիսներ առաջ: Մինչդեռ այսօր քիչ էր մնում՝ թողնեի, որ գնայիք: Ահա այդչափ վախկոտ եմ ես:

— Ասես Խեցի ռադիոընդունիչ լինի:

— Իմ նախագծած սարքն ընդունակ է ավելին անելու: Այն նաև լսում է: Եթե սա դնեք Ձեր ականջի մեջ, Մոնթագ, ես կարող եմ հանգիստ տանը նստել՝ տաքացնելով վախից կույ եկած ոսկորներս, և զուգահեռ լսել ու վերլուծել հրկիզողների աշխարհը, բացահայտել դրա թուլությունները՝ առանց վտանգելու իմ անձը: Այս սարքի օգնությամբ ես փեթակում ապահով ապրող մայր մեղուն կլինեմ, Դուք կլինեք աշխատավոր մեղուն՝ ճամփորդող ականջը: Ի վերջո ինձ կհաջողվի բազմաթիվ մարդկանց միջոցով ականջներ ունենալ քաղաքի

բոլոր ծայրերում: Ես կկարողանամ լսել և եզրակացություններ անել: Եթե աշխատավոր մեղուները մահանան, ես, միևնույնն է, տանն ապահով նստած կլինեմ՝ հավասարակշռելով վախս առավելագույն հարմարավետությամբ և վտանգի նվազագույն հնարավորությամբ: Տեսնում եք՝ որքան անվտանգ եմ ես այս խաղում և որքան արգահատելի:

Մոնթագը փամփուշտ հիշեցնող կանաչ իրը ականջը մտցրեց: Նմանատիպ մի գնդիկ էլ ծերունին իր ականջը խոթեց և շարժեց շուրթերը:

— Մոնթագ:

Ձայնը հնչեց Մոնթագի ուղեղի մեջ:

— Լսում եմ Ձեզ:

Ծերուկը ծիծաղեց:

— Ես էլ Ձեզ եմ լավ լսում:— Խոսում էր շշուկով, սակայն նրա ձայնը պարզորոշ լսելի էր Մոնթագին:

— Երբ ժամանակը գա, գնացե՛ք հրկիզողների կայան: Ես Ձեզ հետ կլինեմ: Եկե՛ք միասին հետևենք, թե ինչ է ասում Ձեր այդ հրկիզապետ Բիթին: Ո՛վ գիտի, գուցե նա մեզնից մեկն է: Ես Ձեզ կհուշեմ Ձեր ասելիքը: Մենք նրա համար մի լավ ներկայացում կբեմադրենք: Հիմա ասեք՝ տեսնեմ, Դուք ինձ ատում եք իմ այս էլեկտրական սարքի հետևում սքողված երկյուղածության համար: Ես Ձեզ ուղարկում եմ խավարի գիրկը, իսկ ինքս մնում եմ գծի այս՝ առավել ապահով կողմում, որտեղից գուցե հետևեմ, թե ինչպես են թոցնում Ձեր գլուխը:

— Մենք բոլորս անում ենք մեր անելիքը,— ասաց Մոնթագը: Նա Աստվածաշունչը դրեց ծերունու ձեռքերի մեջ:— Ահա՛, վերցրե՛ք: Ես կփորձեմ վաղը ուրիշ գիրք հանձնել սրա փոխարեն: Վաղը...

— Ես կհանդիպեմ գործազուրկ տպագրիչին: Այդքանը հաստատ կարող եմ անել:

— Բարի՛ գիշեր, պրոֆեսոր:

— Բարի գիշեր կարող եք չասել: Չէ՞ որ ողջ գիշեր Ձեզ հետ եմ լինելու. մոծակի պես խուտուտ եմ տալու Ձեր ականջը,

երբ Դուք իմ կարիքն ունենաք: Սակայն ամեն դեպքում թող բարի լինի գիշերը, հաջողություն եմ մաղթում Ձեզ:

Դուռը բացվեց և իսկույն փակվեց: Մոնթագը կրկին իրեն գտավ փողոցի խավարում, ուր նա մեն-մենակ էր աշխարհի դեմ:

Այդ գիշեր երկինքն ասես պատերազմի էր պատրաստվում: Տեղ-տեղ կուտակվում, ապա ցրվում էին ամպերը, որոնցից վեր, ինչպես թշնամու զորքերի ժամապահներ, միլիոնավոր աստղեր էին լողում: Հրե բոցերի մեջ վեր էր բարձրանում արնագույն լուսինը: Այնպիսի զգացողություն էր, ասես երկինքն ուր որ է փուլ կգար քաղաքի վրա, կվերածեր այն կավճափոշու:

Մոնթագը, գումարը գրպանում, դուրս եկավ մետրոյի կայարանից (նա հասցրել էր դրամատուն մտնել, որը բաց էր ողջ գիշեր, և որտեղ, ինչպես լինում էր ամեն գիշեր, այս անգամ էլ հաճախորդներին ծառայություններ էին մատուցում սպասարկու անձնակազմի ռոբոտները): Փողոցում քայլելիս ականջի մեջ շարունակ գվվում էր ռադիոխեցին. «Մեկ միլիոն մարդ է զորակոչվել: Եթե պատերազմ սկսվի, մեր զորքերը արագ հաղթանակ կտանեն...»: Հանկարծակի խուժած երաժշտության մեջ հաղորդավարի ձայնը խլացավ, մարեց:

— Տասը միլիոն մարդ է զորակոչվել,— շշնջաց Ֆաբերի ձայնը մյուս ականջում,— սակայն մեկ միլիոն են հայտարարում: Այդպես ավելի հանգիստ է:

— Ֆաբեր:

— Այո՛:

— Ես չեմ մտածում: Ընդամենը վարվում եմ այնպես, ինչպես ասվել է: Ինչպես միշտ եմ վարվել: Ասել եք՝ վերցնեմ գումարը, վերցրել եմ: Ինքս չեմ մտածել վարմունքիս մասին: Երբ եմ վերջապես երևոյթներն անձամբ վերլուծելու:

— Արդեն այդպես էլ անում եք՝ դատելով Ձեր՝ քիչ առաջ ասածից: Պարզապես առայժմ վստահեք ինձ:

— Նրանց նույնպես վստահում էի:

— Այո՛, բայց տեսնում եք, թե ուր են նրանք մեզ հասցրել: Այժմ որոշ ժամանակ ստիպված եք կույրի պես հետևել ինձ: Ահա Ձեզ պարզած ձեռքս: Ապավինե՛ք ինձ:

— Ձեմ ուզում պարտավորություններս հանձնել մեկ ուրիշին և կուրորեն հետևել մեկ ուրիշի ասածներին:

— Իմաստնացել եք:

Մոնթագի ոտքերը նրան սովորույթի ուժով տանում էին դեպի մայթը՝ դեպի տուն:

— Շարունակե՛ք, պրոֆեսոր:

— Կուզե՞ք՝ ինչ-որ բան կարդամ Ձեզ համար: Ես կկարդամ, իսկ Դուք կփորձեք հիշել: Ես գիշերն ընդամենը հինգ ժամ եմ կարողանում քնել: Ոչինչ չունեմ անելու: Այնպես որ, եթե ուզում եք, ես կարող եմ կարդալ Ձեզ համար գիշերները: Ասում են՝ նույնիսկ քնած ժամանակ մարդու ուղեղը մտապահում է, եթե ինչ-որ բան ես շշնջում նրա ականջին:

— Այո՛:

— Դե՛, ուրեմն սկսե՛ք:— Հեռվում՝ քաղաքի հակառակ կողմում, գիշերվա մեջ թերթվող էջերի մեղմ շրշյուն լսվեց:— Հոբի գիրքը:

— Երկնքում շողում էր լուսինը. Մոնթագը քայլում էր՝ գրեթե աննկատ շարժելով շուրթերը:

Երեկոյան իննին Մոնթագն իր թեթև ընթրիքն էր վայելում, երբ շքամուտքի խոսափողն ազդարարեց հյուրերի գալուստը: Միլդրեդը հեռուստասենյակից դեպի դուռը նետվեց ժայթքած Վեզուվից փախչող բնիկի փութաջանությամբ: Տիկին Ֆելիսը և տիկին Բաուրլզը ներս մտան և մարտինիի շշերը ձեռքներին՝ անհետացան հյուրասրահում: Մոնթագն ընդհատեց ընթրելը: Կանայք ասես հրեշավոր բյուրեղապակյա ջահեր լինեին, որոնց անթիվ-անհամար դատարկ զրնգոցները լցնում էին տարածությունը: Նույնիսկ պատերից այն կողմ նա տեսնում էր նրանց՝ չեշիրյան կատվի ժպիտնե-

րով: Հիմա նրանք արդեն սարսափելի ժխոր էին սարքել՝ ճիչ ու աղմուկով միմյանց հետ խոսելով:

— Բոլորս հիանալի տեսք ունենք, այնպես չէ՛:

— Այո՛, այո՛, այդպես է:

— Հրաշալի տեսք ունես, Միլի:

— Շքեղ:

— Բոլորդ հոյակապ տեսք ունեք այսօր:

— Հոյակապ:

Մոնթագը անխոս հետևում էր նրանց:

— Համբերություն,— շնչաց Ֆաբերը:

— Ես այստեղ չպետք է լինեի,— քթի տակ շնչաց Մոնթագը,— ես հիմա պետք է գումարը գրպանումս Ձեր տան ճանապարհին լինեի:

— Վաղն էլ ուշ չէ: Զգո՛ւյշ եղեք, Մոնթագ:

— Ներկայացումը հրաշալի է, չէ՛,— բացականչեց

Միլդրեդը:

— Հոյակապ է:

Հեռուտասենյակի պատերից մեկի վրա մի կին ժպտում և միևնույն ժամանակ նարնջի հյութ էր խմում: «Ինչպե՛ս է նրան հաջողվում այդ երկուսն անել միաժամանակ»,— մտածեց Մոնթագը հիվանդագին ատելության զգացումով: Մյուս պատերի վրա ռենտգենյան ճառագայթների միջոցով կարելի էր տեսնել, թե ինչպես էր զովացուցիչ ըմպելիքը մարսողության օրգանների միջով ի վերջո հայտնվում նրա հրաշալի ստամոքսում: Հանկարծ հրթիռային մի ինքնաթիռ ամպերի մեջ մխրճվեց (այն տպավորությունն էր, ասես պոկել էր հյուրասենյակը հիմքից), ապա ընկղմվեց ծովի դեղնականաչավուն ջրերի մեջ, որտեղ կապույտ ձկները խժռում էին կարմիր ու դեղին ձկներին: Մի րոպե անց երեք ճերմակ մուտիպլիկացիոն ծաղրածուներ մեկը մյուսի վերջույթներն էին կտրում հանդիսատեսի հավանության աղաղակների ուղեկցությամբ: Եվս երկու րոպե, և հյուրասենյակի հանդիսատեսներն արդեն քաղաքից դուրս էին՝ հրթիռային մեքենաների խելահեղ

սլացքի մեջ, որոնք բախվում էին իրար, հետ մղվում, կրկին բախվում: Մոնթազը տեսավ, թե ինչպես մի քանի մարդկային մարմիններ օդ թռան:

— Մի՛լի, տեսա՛ր:

— Տեսա, տեսա:

Մոնթազը ձեռքը հեռուստասենյակի պատի խոռոչը խոթեց և պտտեց գլխավոր անջատիչը: Էկրանի պատկերները մարեցին, ասես ինչ—որ մեկը դատարկեց ջուրը հսկայական բյուրեղապակյա ակվարիումից, որտեղ հիպնոսային շարժումներով դեսուդեն էին նետվում ձկները:

Երեք կանայք անշտապ շրջվեցին և անթաքույց բարկությամբ, ապա ատելությամբ նայեցին Մոնթազին:

— Ի՞նչ եք կարծում, երբ կսկսվի պատերազմը,— հարցրեց նա:— Տեսնում եմ, որ ձեր ամուսիններն այսօր այստեղ չեն:

— Ա՛հ, նրանք շարունակ գալիս ու գնում են, գալիս ու կրկին գնում,— ասաց տիկին Ֆելիսը:— Դեռ չեկած՝ գնում են: Երեկ Փիթին զորակոչեցին: Հաջորդ շաբաթ կվերադառնա: Այդպես են ասել: Կարճատև պատերազմ է: Ասել են՝ ընդամենը քառասունութ ժամ է տևելու: Հետո բոլորը կրկին տանը կլինեն: Այդպես են ասել, կարճատև պատերազմ է, ընդամենը քառասունութ ժամ, Փիթը երեկ է զորակոչվել, ասել են՝ հաջորդ շաբաթ տանը կլինի: Կարճատև...

Երեք կանայք իրար էին անցել և նյարդայնացած նայում էին դատարկ գորշավուն պատերին:

— Ես չեմ անհանգստանում,— ասաց տիկին Ֆելիսը,— թող Փիթն ինքն անհանգստանա:— Նա քրքջաց:— Թող ծերուկ Փիթն ինքն անհանգստանա: Ես չեմ անհանգստանում:

— Այո՛,— ասաց Միլին,— թող ծերուկ Փիթն անհանգստանա:

— Ասում են՝ միշտ ուրիշների ամուսիններն են մահանում:

— Ես էլ եմ այդպես լսել: Ես որևէ մեկին չեմ ճանաչում, ով պատերազմում սպանված լինի: Լսել եմ, որ շենքերից են ցած նետվել ու մահացել, այն, ինչ Գլորիայի ամուսինն արեց

անցյալ շաբաթ, բայց որ պատերազմի ժամանակ մեռնեն...
չէ՛, չեմ լսել:

— Այո՛, այդպես է, պատերազմի ժամանակ չեն մեռնում,— ասաց տիկին Ֆելիսը,— ամեն դեպքում ես և Փիթը միշտ քննարկել ենք դա. ոչ մի կաթիլ արցունք, ոչ մի նման բան: Իմ երրորդ ամուսնությունն է, Փիթը նույնպես երրորդ անգամ է ամուսնանում: Եվ մենք միանգամայն անկախ ենք: Մենք միշտ ասել ենք իրար, որ պետք է անկախ լինել: Նա ասում էր. «Եթե սպանվեմ, շարունակիր ապրել, լաց մի՛ եղիր, կրկին ամուսնացիր և մոռացիր ինձ»:

— Դա ինձ հիշեցնում է...— ընդմիջեց Միլդրեդը,— երեկ երեկոյան հեռուստապատին դիտեցիք Քլարա Դովի հինգ բողոքանոց սիրավեպը: Մի կնոջ մասին էր, ով...

Մոնթագը լռելյայն նայում էր կանանց դեմքերին. հիշեց, թե ինչպես էր երեխա ժամանակ մի օր այլադավան եկեղեցի մտել ու նայել սրբերի դեմքերին: Այդ արծնապատ արարածների դեմքերն այն ժամանակ ոչինչ չէին արտահայտել, թեև նա երկար կանգնել էր եկեղեցում ու փորձել էր խոսել նրանց հետ, փորձել էր իրեն այդ կրոնի հետևորդը զգալ, հասկանալ՝ ինչ էր այն նշանակում, ռունգերի մեջ պահել էր խոնավ խնկի բույրը, շնչել էր միայն այդ վայրին հատուկ փոշին, առել թոքերի մեջ, որ հաջորդ վայրկյանին արյան պտույտի հետ կարողանար մերձենալ ճենապակյա աչքերով և սուտակագույն շուրթերով գունագեղ այդ կանանց ու տղամարդկանց առեղծվածին: Սակայն ոչինչ, բացարձակ ոչինչ չէր պատահել. ասես հերթական խանութն էր մտել մի օտար երկրում, որտեղ իր երկրի արժույթն անկայուն էր ու խորթ՝ տեղաբնակներին, և նույնիսկ այն դեպքում, երբ նա փորձ էր արել հավելու փայտից, ծեփից ու կավից պատրաստված նրանց արձանիկներին, որևէ հույզ չէր խռովել հոգին: Եվ հիմա այստեղ՝ իր սեփական հեռուստասենյակում, նույնպիսի կանայք էին, ովքեր իր հայացքի ներքո գալարվում էին իրենց աթոռների վրա, ծխախոտներ էին վառում, ծխի քուլաներ արձակում,

հարդարում իրենց՝ արևից խանձված մազերն ու զննում եղունգները: Այն տպավորությունն էր, ասես Մոնթապի սևեռուն հայացքը հրկիզել էր նրանց: Նրանց դեմքերին լռություն էր իջել: Կանայք փոքր-ինչ առաջ խոնարհվեցին՝ տեսնելու, թե ինչպես էր Մոնթապը վերջապես կուլ տալիս կերակուրի վերջին պատառը: Լսում էին՝ ինչպես էր նրա շնչառությունը գնալով ավելի տենդագին դառնում: Հեռուստասենյակի երեք դատարկ պատերն այժմ աներազ քնով քնած հսկաների գունատ ճակատների էին նման: Մոնթապին թվաց՝ եթե հավեր այս երեք իրեն հառած ճակատներին, մատների վրա աղի քրտինքի բարակ շերտ կմնար: Կանանց ենթաձայնային դողերին, սենյակում կախված լռությանը զուգահեռ քրտինքը հեռուստապատերի վրա էլ ավելի էր թանձրանում: Կանայք լարվածությունից այրվում էին: Ցանկացած պահի նրանց մեջ կուտակված ճնշվածությունը կարող էր ժայթքել և դուրս հոսել:

Մոնթապի շուրթերը շարժվեցին:

— Եկեք զրուցենք:

— Կանայք ջղաձիգ ինչ-որ շարժումներ արեցին և սևեռուն նայեցին Մոնթապին:

— Ինչպե՞ս են Ձեր երեխաները, տիկին Ֆելիս, — հարցրեց նա:

— Դուք գիտեք, որ ես երեխաներ չունեմ: Ոչ մի խելքը գլխին մարդ, Աստված է վկա, երեխաներ չէր ունենա, — ասաց տիկին Ֆելիսը՝ չհասկանալով, թե ինչու է այս մարդն այսքան նյարդայնացնում իրեն:

— Ես այդպես չեմ կարծում, — ասաց տիկին Բաուելսը: — Ես երկուսն ունեմ: Երկու երեխաներիս ծնվելուց էլ ինձ կեսարյան հատում են արել: Ինչ իմաստ ունի այդ ողջ հոգեվարքի միջով անցնել երեխայի համար: Աշխարհը պետք է վերարտադրվի, հասկանո՞ւմ եք, մարդկային ցեղը պետք է շարունակվի: Բացի այդ՝ երեխաները հաճախ ճիշտ մեզ նման են լինում, և դա շատ զվարճալի է: Երկու կեսարյան հատում, և

գործն ավարտված էր, այո՛, սըր: Բժիշկս ասում էր՝ «Կեսարյաններն անհրաժեշտ չեն, Ձեր կազմվածքը թույլ է տալիս ծննդաբերել, ամեն բան կարգին է», սակայն ես պնդեցի:

— Կուզեք՝ կեսարյան հատումով ունեցեք նրանց, կուզեք՝ ծննդաբերեք, մեկ է, երեխաները կործանում են մեզ, ցնդել էք, ինչ է,— ասաց տիկին Ֆելիսը:

— Տասն օրից ինը նրանք դպրոցում են լինում: Ես ստիպված եմ լինում հանդուրժել նրանց, երբ տուն են գալիս ընդամենը երեք օր մեկ ամսվա ընթացքում: Ամենևին էլ վատ չէ: Նրանց շարտում ես հյուրասենյակ և սեղմում կոճակը: Ճիշտ այնպես, ինչպես լվացք ես անում. լցնում ես կեղտոտ շորերն ու շրխկացնում կափարիչը:

Տիկին Բաուելը քմծիծաղ տվեց.

— Նրանք ինձ ավելի հաճախ աքացի են տալիս, քան համբույր: Եվ, փառք Աստծու, ես դեռ կարողանում եմ պատասխան հարվածներ տալ:

Կանայք, լեզուները բերաններից դուրս հանած, ծիծաղում էին:

Միլդրեդը նստեց մի պահ, ապա տեսնելով, որ Մոնթագը դեռ դռների մեջ է՝ ձեռքերն իրար զարկեց.

— Եկեք քաղաքականությունից խոսենք, որպեսզի գոհացնենք Գային:

— Հրաշալի միտք է,— պատասխանեց տիկին Բաուելը:— Նախորդ ընտրություններին ես, ինչպես բոլորը, քվեարկել եմ, իմ ձայնը տվել եմ նախագահ Նոբելին: Ես կարծում եմ, որ երբևէ նախագահ դարձած տղամարդկանց մեջ նա ամենաբարետեսն է:

— Տեսել եք, թե ով էր նրա ընդդիմադիրը:

— Մի բան չէր, չէ՛: Մի տեսակ փոքրամարմին և անբարետես, երբեք կոկիկ չէր սափրվում և նույնիսկ մազերը կարգին չէր սանրում: Ինչ էր մտածում ընդդիմությունը, երբ առաջադրում էր նրա թեկնածությունը: Ինչպե՞ս կարելի է առաջադրել նրա պես փոքրամարմին մեկի թեկնածությունը, երբ

ընդդիմադիրն այդչափ բարձրահասակ է: Եվ հետո, նա քթի տակ էր խոսում: Նրա ասածների գրեթե կեսը չէի հասկանում: Իսկ լսածս բառերն էլ ինձ անհասկանալի էին:

— Նա նաև գեր էր և այնպես չէր հագնվում, որ կարողանար կոծկել գիրությունը: Այնպես որ, զարմանալի չէ, որ Ուինսթոն Նոբելն ընտրվեց ձայների զգալի մեծամասնությամբ: Նույնիսկ նրանց անուններն ինչ—որ բանով օգնեցին նրանց: Տասը վայրկյան համեմատեք Ուինսթոն Նոբել անունը Հյուբերթ Հոագ անվան հետ և կարող եք մեծ հավանականությամբ կանխատեսել արդյունքները:

— Գրողը տանի,— բղավեց Մոնթագը,— դուք ինչ գիտեք Հոագի և Նոբելի մասին:

— Շատ լավ էլ գիտենք, դեռ վեց ամիս էլ չի անցել այն օրից, երբ նրանք նույն այդ հեռուստասենյակում էին: Մեկն անընդհատ քիթն էր քչփորում, ու դա ինձ կատաղության հասցրեց:

— Եվ Դուք, պարոն Մոնթագ,— վրա բերեց տիկին Ֆելիսը,— ուզում եք, որ մենք այդպիսի մի մարդու օգտին քվեարկենք:

— Չքվիր դռների միջից, Մոնթագ,— ժպտալով ասաց Միլդրեդը,— և մի նյարդայնացրու մեզ:

Սակայն Մոնթագը միայն մի պահ անհետացավ, ապա վերադարձավ՝ ձեռքին մի գիրք:

— Գայ:

— Գրողի ծոցն ամեն բան, գրողի ծոցը:

— Այդ ինչ է Ձեր ձեռքին, գիրք է: Կարծում էի՝ մեր օրերում բոլոր տեսակի ուսուցողական դասընթացները հոլովակների միջոցով են անցկացվում,— տիկին Ֆելիսի աչքերը շողում էին:— Դուք հրկիզողների գործի տեսությունն եք կարդում:

— Տեսություն, գրողը տանի,— պատասխանեց Մոնթագը,— սա պոեզիա է:

— Մոնթագ,— Ֆաբերի շշուկն էր:

— Ինձ մենակ թողեք:— Մոնթազն այնպիսի զգացողություն ուներ, ասես աղմուկի, գվվոց-բվվոցի մի հսկայական շրջապտոյտ իրեն իր հորձանուտի մեջ էր առել:

— Մոնթազ, սպասիր, պետք չէ:

— Դու լսեցիր նրանց: Դու լսեցիր, թե ինչպես էին այս ճիվաղներն արտահայտվում այլ ճիվաղների մասին: Աստված իմ, ինչպես են նրանք շաղակրատում մարդկանց մասին, իրենց սեփական երեխաների մասին, իրենց մասին, ինչպես են արտահայտվում իրենց ամուսինների մասին, պատերազմի մասին, գրողը տանի, կանգնել եմ այստեղ և չեմ կարողանում հավատալ ականջներիս:

— Ես մի բառ անգամ չասացի որևէ պատերազմի մասին: Նկատի ունեցեք, խնդրում եմ,— ասաց տիկին Ֆելիսը:

— Ինչ վերաբերում է պոեզիային, ես ատում եմ այն,— ասաց տիկին Բաուելը:

— Երբևէ որևէ բան կարդացել եք:

— Մոնթազ,— Ֆաբերի ծայնը խզզոցով հասավ իրեն,— ամեն ինչ կկործանես: Լռիր, հիմար:

Երեք կանայք էլ վեր էին կացել նստած տեղերից:

— Նստե՛ք:

Նրանք նստեցին:

— Ես տուն եմ գնում,— դողդոջուն ձայնով ասաց տիկին Բաուելը:

— Մոնթազ, Մոնթազ, խնդրում եմ, Աստծու սիրուն, ինչ եք պատրաստվում անելու,— թախանձեց Ֆաբերը:

— Ինչո՞ւ պարզապես որևէ բանաստեղծություն չեք կարդում ձեր փոքրիկ գրքից,— գլխով արեց տիկին Ֆելիսը:— Կարծում եմ՝ շատ հետաքրքիր կլինի:

— Չի կարելի,— ողբաձայն ասաց տիկին Բաուելը,— մենք չենք կարող դա անել:

— Բայց նայե՛ք պարոն Մոնթազին, նա ուզում է դա անել: Տեսնում եմ՝ ցանկանում է: Եթե մենք մի պահ նստենք և ուշադիր լսենք, ապա կգոհացնենք պարոն Մոնթազին և այդ

ժամանակ գուցե կարողանանք մեկ այլ բանով զբաղվել:—
Նա նյարդային հայացք գցեց իրենց շրջապատող հեռուստա-
պատերի հսկայական դատարկությանը:

— Մոնթագ, եթե Դուք դա անեք, ես կխզեմ կապը: Կթող-
նեմ Ձեզ մենակ:— Նրա ականջին բզեզի տզզոց հիշեցնող
ձայնն էր:— Ի՞նչ օգուտ դրանից: Ի՞նչ եք ուզում ապացուցել
դրանով:

— Մահու չափ կվախեցնեմ նրանց, ահա թե ինչ եմ ուզում
անել, այնպես վախեցնեմ, որ սրանց աչքերի լույսը մարի:

Միլդրեդը նայեց դատարկ տարածությանը:

— Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Գայ:

Արծաթե ասեղը շամփրեց Մոնթագի ուղեղը:

— Մոնթագ, լսե՛ք, միայն մի ելք ունեք, կատակի՛ վերա-
ծեք այս ամենը, կոծկե՛ք, թող անցնի, ձևացրե՛ք, թե Դուք ամե-
նևին էլ կատաղած չեք: Այնուհետև քայլե՛ք դեպի պատի մեջ
փորված կիզարանն ու գիրքն այնտեղ նետեք:

Սակայն Միլդրեդն արդեն նախազգացել էր՝ ինչպես կա-
րելի էր փրկել իրավիճակը, ու այժմ դողդոջուն ձայնով հայ-
տարարում էր.

— Տիկնայք, սովորության համաձայն՝ յուրաքանչյուր
հրկիզողի տարին մեկ անգամ թույլ է տրվում մի գիրք բերել
տուն՝ ցույց տալու համար իր ընտանիքին, թե որքան անհե-
թեթ է եղել ամեն բան նախկինում, որքան նյարդային կա-
րող է դարձնել մարդուն այդ գիրք կոչվածը, ինչպես կարող է
նրան խելագարության հասցնել: Գայն այսօր անակնկալ ունի
մեզ համար. նա մի հատված կկարդա՝ ցույց տալու համար,
թե որքան անհեթեթ է եղել ամեն բան, որպեսզի մեզնից որևէ
մեկի մտքով երբևէ չանցնի մեր գլուխներն այդպիսի աղբով
լցնել: Այդպես չէ՛, սիրելիս:

Մոնթագը գիրքը ջղաձգորեն ճզմում էր ափի մեջ:

— Ասացե՛ք՝ այո՛:

Նրա շուրթերով Ֆաբերն էր խոսում այժմ:

— Այո՛:

Միլլրեդը ծիծաղելով խլեց գիրքը նրա ձեռքից:

— Ահա՛, սա՛ կարդա: Չէ՛, սա չէ՛, ահա այստեղ մի իսկապես զվարճալի բանաստեղծություն կա, որն այսօր ինձ համար կարդացիր բարձրաձայն: Աղջիկներ, մի բառ անգամ չեք հասկանա: Հեղինակը ջուր է ծեծում: Դե սկսիր, Գայ, ահա այդ էջը, սիրելիս:

Նա նայեց բացված էջին: Ականջի մեջ հնչած մեկ հատիկ բառը նրա զգայարաններին հաղորդվեց բզեզի թևաբախումի թեթևությամբ:— Կարդա՛:

— Վերնագիրն ինչ է, սիրելիս:

— «Դուվրի ափը»¹:— Նրա լեզուն ընդարմացել էր:

— Հիմա ընթերցիր. գեղեցիկ, հստակ ծայնով և դանդաղ:

Սենյակում անտանելի շոգ էր: Նրա մարմինն ասես կրակի մեջ լիներ, և միևնույն ժամանակ պաղ քրտինք եկավ վրան: Կանայք ասես ամայի անապատի մեջտեղում լինեին՝ երեք աթոռների վրա նստած, ինքը՝ ոտքերի վրա հազիվ կանգնած, սպասելիս, թե տիկին Ֆելիսը երբ կդադարի փեշն ուղղել, և երբ տիկին Բաուելը մատները կհեռացնի մազերից: Ապա սկսեց կարդալ ցածր, կերկերուն ծայնով, որն աստիճանաբար, մի տողից մյուսն անցնելիս դարձավ ավելի վճռական, հատեց նրա շուրջը գոյացած անապատի սահմաններն ու ճերմակ տարածությունը, երեք նստած կանանց վրայով տարրալուծվեց հսկայածավալ ամայությանը:

Լիքն է եղել մի ժամանակ ծովը հավատի.

Ծփանքներով մեղմիկ՝ որպես զմրուխտ հովիտ,

Որպես լուսե քամար՝ շուրջառել է ոլորուն ափերը Երկրի:

Սակայն այժմ լսում եմ լոկ

Հեծեծանքը նրա, և կոհակվող ալիքների նահանջն

աղեկտուր,

¹ Անգլիացի բանաստեղծ Մաթյու Աննոլի (1822–1888) բանաստեղծությունը:

*Ընկրկումի փշրանքները, որ շնչի մեջ գիշերային քամու,
Հեռանում են դեպի հսկայածավալ եզերքները մռայլ, դեպի
Աշխարհի խոռոչները մերկ:*

Աթոռները ճոճուացին:

Մոնթագը շարունակեց ընթերցել մինչև վերջ:

*Ա՛հ, սե՛ր իմ, արդարացի լինե՛նք
Մենք մեկմեկու հանդեպ, քանզի աշխարհն այս, որ ասես
Ծավալվում է մեր առջև որպես երագ՝
Այնքան բազմազան, այնպես հրաշալի և այնքան նոր,
Չի ճանաչում ո՛չ խինդ, ո՛չ սեր, ո՛չ լույս,
Չունի որոշակիություն, սպեղանի չէ ցավին մեր,
չունի անդորր,
Իսկ մենք այստեղ ենք՝ մթնող տափաստանի
տեղաբնիկներս,
Որ ճախրի ու պայքարի պահին տագնապներով լցված՝
Քամիների հետ սուրում ենք այնտեղ, ուր
Անտեղյակ բանակներ են բախվում կեզգիշերին:*

Տիկին Ֆելիսը լաց էր լինում:

Մյուս կանայք անապատի մեջտեղում հետևում էին, թե ինչպես էին նրա հեծկտոցները գնալով ավելի ուժգին դառնում, և ինչպես դեմքը ծամաճռության վերածվեց: Նրանք նստել էին և Ֆելիսին հավելու որևէ փորձ չէին անում. նրա պահվածքը շփոթեցրել էր նրանց: Նա չէր կարողանում զսպել հեկեկանքները: Մոնթագն ինքն էլ ապշել, կարկամել էր:

— Դե լավ, լավ,— ասաց Միլդրեդը,— ամեն բան կարգին է, Քլարա, վերջ տուր, քեզ ինչ եղավ ախր:

— Ես... ես...— հեկեկում էր տիկին Ֆելիսը,— չգիտեմ, չգիտեմ, ոչինչ չեմ հասկանում...

Տիկին Բաուելը վեր կացավ և սևեռուն հայացքով նայեց Մոնթագին.— տեսնո՞ւմ եք, այդպես էլ գիտեի, հենց սա էի

ուզում ապացուցել: Գիտեի, որ սա կպատահի: Ես միշտ եմ
ասել՝ որտեղ պոեզիա, այնտեղ արցունք և ինքնասպանու-
թյուն, այնտեղ լաց ու կոծ և սարսափելի զգացողություններ.
պոեզիան ամեն ինչ վերածում է խելագարության, խառնա-
շփոթի: Ես դրանում այժմ մեկ անգամ ևս համոզվեցի: Դուք
նողկալի եք, պարոն Մոնթագ, նողկալի:

Տաբերն ասաց.

— Հիմա...

Մոնթագն ակամա շրջվեց, քայլեց դեպի պատի մեջ ներ-
կառուցված կիզարանը և գիրքը նետեց կրակի բոցերի մեջ:

— Անիմաստ բառեր են, անիմաստ, սարսափելի, ցա-
վեցնող բառեր,— ասաց տիկին Բաուելսը,— ինչո՞ւ են մար-
դիկ ցանկանում վիրավորել միմյանց: Մի՞թե քիչ է աշխար-
հում եղած ցավը, ինչո՞ւ է պետք ծաղրել մարդկանց այդպիսի
բաներով:

— Քլարա, Քլարա, դե՛, դե՛,— աղերսեց Միլդրեդը՝ նրա
թևից քաշելով,— վերջ տուր, թեթև տար, հիմա կմիացնեմ
հեռուստապատը, «բարեկամներին» կդիտենք, կասենք, կխո-
սենք, կուրախանանք, լաց մի՛ եղիր, հիմա այստեղ մի հրա-
շալի խնջույք կկազմակերպենք:

— Ո՛չ,— պատասխանեց տիկին Բաուելսը,— ես ուղիղ
տուն կգնամ, եթե ցանկանում եք այցելել իմ տուն և այնտեղ
միանալ «բարեկամներին», բարի: Սակայն ես էլ երբեք ոտք
չեմ դնի այս խելագար հրկիզողի տուն:

— Գնացեք տո՛ւն,— հայացքը սևեռելով նրա վրա՝ հոր-
դորեց Մոնթագը,— հանգիստ տո՛ւն գնացեք և մտածեք Ձեր
առաջին ամուսնու մասին, ումից ապահարզան պահանջեցիք,
Ձեր երկրորդ ամուսնու մասին, ով սպանվեց հրթիռային մե-
քենայում, և Ձեր երրորդ ամուսնու մասին, ում ուղեղը ցրվ
կտան այս պատերազմում: Գնացեք տո՛ւն և մտածեք այն
բոլոր արհեստական վիժումների մասին, որոնց դիմել եք, այն
կեսարյան հատումների մասին, որ կատարել եք, և Ձեր երե-
խաների մասին, ովքեր ի սրտե ատում են Ձեզ: Տո՛ւն գնացեք

և մտածե՛ք, թե ինչպես պատահեց այդ ամենը, և թե ինչ եք արել դա կանխելու համար: Գնացե՛ք, Ձեր տո՛նն գնացե՛ք,— բղավում էր նա,— քանի դեռ Ձեզ գետնին չեմ տապալել և դուրս շարտել իմ տնից:

Դռները շրխկոցով փակվեցին, և տունը դատարկվեց: Մոնթագը մենակ կանգնած էր սենյակի սառնության մեջ՝ հեռուստապատերի՝ ցեխախառն ձյուն հիշեցնող ճերմակի առջև:

Լոգարանում հոսող ջրի ձայն լսվեց: Նա լսեց, թե ինչպես էր Միլդրեդը, թեթև շխկշխկացնելով սրվակը, ափի մեջ լցնում քնաբեր հաբերը:

— Դուք հիմար եք, Մոնթագ, անխ, Աստված իմ, ինչ հիմարն եք Դուք:

— Լռե՛ք,— նա ականջից դուրս քաշեց փամփուշտ հիշեցնող կանաչ իրը և գրպանը խոթեց:

Գրպանում այն դեռ թույլ խշշում էր՝ հիմար... հիմար...

Մոնթագը ողջ տնով մեկ փնտրեց և գտավ գրքերը. Միլդրեդը դրանք միմյանց վրա դարսել, խցկել էր սառնարանի հետևը: Որոշ գրքեր բացակայում էին, և Մոնթագը գիտեր, որ Միլդրեդն արդեն մեկնարկել էր իր տանը հայտնված ուժանակը կամաց-կամաց ոչնչացնելու գործընթացը: Մոնթագն այլևս մոլեգնած չէր, սակայն հյուծված էր և շփոթահար: Նա գրքերը ետնաբակ տարավ և թաքցրեց ծառուղու երկայնքով ձգվող ցանկապատի մոտ աճած թփերի մեջ: «Թող այստեղ մնան,— մտածում էր նա,— միայն այս գիշեր, թող ապահով լինեն, մեկ էլ տեսար՝ Միլդրեդը որոշեր դրանցից մի քանիսը ևս այրել»: Տուն վերադարձավ.

— Միլդրե՛դ,— կանչեց մութ ննջարանի մոտ:

Պատասխան չեղավ:

Դրսում՝ աշխատանքի ճանապարհին, երբ հատեց-անցավ մարգագետինը, փորձեց չնկատել, թե որքան մթին ու ամայի էր Քլարիս Մըքլեյլնի տունը...

Դեպի քաղաքի կենտրոն ուղևորվելիս Մոնթագը սարսափելիորեն մենակ էր մնացել իր գործած սխալի հետ և ան-

հրաժեշտություն էր զգում լսելու գիշերվա մեջ խոսող իրեն ծանոթ մեղմ ձայնը, որն անսովոր ջերմության և բարության զգացողություն էր ներշնչում: Դեռ մի քանի ժամ էլ չէր անցել, սակայն այն տպավորությունն էր՝ ասես նա մի ամբողջ կյանք ճանաչել էր Ֆաբերին: Այժմ նա հասկանում էր, որ իր մեջ երկու մարդիկ էին բնակվում. նախևառաջ՝ Մոնթազը, ով ոչինչ չգիտեր, ով նույնիսկ չէր գիտակցում իր հիմար լինելու փաստը և միայն որոշ տարակուսանքներ ուներ այդ մասին, և մյուսը՝ ծերուկը, ով շարունակ խոսում էր նրա հետ, մինչ գնացքը գիշերային քաղաքի մի ծայրից մյուսն էր սլանում երկարաշունչ տկար հևցով: Այս միջադեպին հաջորդող օրերին՝ ցերեկ լինելը թե գիշեր, անլուսին լինելը գիշերը թե պարզկա, ծերունին կշարունակեր խոսել, և նրա բառերը կաթիլ առ կաթիլ, հատիկ առ հատիկ փաթիլի թեթևությամբ կիջնեին նրա խռոված հոգուն, կծուվեին մտքերին և վերջապես դուրս կհորդեին իրենց նեղ պարունակից, և նա այլևս նախկին Մոնթազը չէր լինի: Այդ մասին նրան ծերունին էր հավաստիացնում, նա խոստանում էր, որ այդպես կլինի: Մի օր նա կդառնա Մոնթագի և Ֆաբերի համադրումը, կրակի ու ջրի համադրումը, և հետո, երբ ամեն բան անձայն ձուլվի ու եփ գա, էլ ջուր և կրակ չի լինի. այդ ամենի արդյունքը գինի կլինի: Երկու հակոսնյա երևույթներից կծնվի երրորդը: Եվ մի օր նա հետադարձ հայացք կգցի անցյալի վրա ու կճանաչի նախկին հիմարին: Նույնիսկ այժմ այդ երկար ճամփորդության մեկնարկը զգացնել էր տալիս իրեն. դա այն պահն էր, երբ նա պատրաստվում էր հեռանալու իր սեփական եսից:

Հաճելի էր լսել ծանոթ բզզոցն իր ականջին՝ այդ քնկոտ մոծակային տզզոցը, որ ասես նուրբ ժանյակ գործելիս լինելը ծերունական փխրուն ձայնով: Ֆաբերը սկզբում կշտամբեց նրան, ապա սփոփեց գիշերվա այդ ուշ ժամին, երբ նա ստորգետնյա հեղձուկից վեր ելավ ու քայլեց դեպի հրկիզողների աշխարհ:

— Գթացե՛ք նրանց, Մոնթագ, կարեկի՛ց եղե՛ք: Մի՛ վիճեք նրանց հետ, մի՛ նյարդայնացրե՛ք. բոլորովին վերջերս Դուք

ինքներդ էլ նրանցից մեկն էիք: Նրանք այնքան հավատացած են, որ միշտ այդպես են ապրելու: Սակայն նրանք այսպես երկար չեն գոյատևի: Նրանք դեռ չգիտեն, որ այս ամենը նման է տիեզերքում այրվող հսկա ասուպի, որ գեղեցիկ է, քանի դեռ բոցավառվում է, սակայն մի օր նրան ի վերջո վիճակված է վայր ընկնել: Նրանք միայն փայլն են տեսնում, գեղեցիկ հուրը, ինչպիսին որ Դուք էիք տեսնում այս ամենը: Մոնթապ, ինձ նման ծեր մարդը, ով, տանը երկյուղած նստած, խնայում է իր փխրուն ոսկորները, իրավունք չունի որևէ մեկին քննադատելու: Սակայն Դուք քիչ էր մնում հենց սկզբից ամեն բան փչացնեիք: Ջգոն եղեք: Ձեզ հետ եմ, հիշեք: Հասկանում եմ՝ ինչպես պատահեց: Պետք է ընդունեմ, որ Ձեր անխոհեմ մոլեգնությունը արհացրեց ինձ: Աստված իմ, որքան երիտասարդ էի զգում այդ պահին: Սակայն հիմա ես հակառակն եմ կամենում: Ուզում եմ, որ Ձեզ ինձ պես ծեր զգաք, միայն այս երեկո իմ երկյուղածությամբ համակվեք: Հաջորդ մի քանի ժամերի ընթացքում, երբ հանդիպեք կապիտան Բիթիին, խստագույն զգուշությունն ցուցաբերեք, ոտնաթաթերի՛ վրա քայլեք նրա կողքով, թո՛ւյլ տվեք՝ լսեմ նրան, որպեսզի կարողանամ ճիշտ գնահատական տալ իրավիճակին: Մեր այցեքարտը գոյատևել կարողանալը պետք է լինի: Մոռացեք այդ խղճուկ հիմար կանանց...

— Ես նրանց զգացնել տվեցի իրենց իրական դժբախտությունը, այն, ինչ տարիներ ի վեր նրանք չէին գիտակցում,— ասաց Մոնթագը:— Ես ցնցվեցի, երբ տեսա, թե ինչպես էր տիկին Ֆելիսը լաց լինում: Գուցե նրանք իրավացի են, գուցե պետք չէ առերեսվել խնդիրներին, գուցե փախչել է պետք, զվարճանալ: Չգիտեմ: Մեղավորության զգացում ունեմ...

— Պետք չէ մեղավոր զգալ: Եթե պատերազմ չլիներ, եթե աշխարհում խաղաղություն լիներ, ես կասեի՝ լավ, զվարճացեք: Սակայն, Մոնթագ, Դուք չպետք է վերադառնաք Ձեր անցյալին և շարունակեք հրկիզել: Ինչ—որ բան այն չէ աշխարհում:

Մոնթազը քրտնել էր:

— Մոնթագ, լսում եք:

— Ուտքերս,— պատասխանեց նա վերջապես,— ուտքերս չեն շարժվում: Գրողը տանի, այս ինչ անհեթեթ վիճակում եմ, ուտքերս չեն ուզում շարժվել:

— Լսեք, Մոնթագ, հանգստացե՛ք,— մեղմաձայն հորդորեց ծերունին,— գիտեմ, հասկանում եմ՝ վախենում եք սխալների անելուց: Մի՛ վախեցե՛ք: Սխալներից միշտ կարելի է դասեր քաղել: Լսե՛ք, երբ ես երիտասարդ էի, տգիտությունս մարդկանց աչքն էի խոթում: Նրանք ինձ գանահարում էին դրա համար: Երբ արդեն քառասուն տարեկան էի, բթությունս հղկվել, ինձ պաշտպանող բարակ շեղքի էր վերածվել: Եթե չիմացությունդ ի ցույց չդնես, ոչ ոք չի հղկի քեզ, և դու երբեք չես սովորի: Հիմա Ձեր ուտքերը մի կերպ հրկիզողների կայան քարշ տվե՛ք: Մենք երկվորյակ հոգիներ ենք, այլևս մենակ չենք: Մեզ հեռուստասենյակի պատեր չեն բաժանում՝ պատնեշելով մեր հնարավոր շփումը: Եթե օգնության կարիք ունենաք, երբ Բիթին կասկածելի հայացք նետի Ձեզ վրա, վստահ եղե՛ք, ես հենց այստեղ Ձեր թմբկաթաղանթի միջոցով կատարեմ Ձեզ:

Մոնթագը զգաց, թե ինչպես ականա շարժվեցին ուտքերը. սկզբում՝ աջը, ապա՝ ձախը:

— Բարեկամս, մնացե՛ք ինձ հետ,— ասաց նա:

Մեխանիկական շունը չկար: Բույնը դատարկ էր: Կայանի ծեփապատ շենքն ընկղմված էր լռության մեջ, նարնջագույն սալամանդրը նիրհում էր. որովայնում՝ կերոսին, կողքերին՝ հրցիրներ: Մոնթագն ասես լռության միջից հայտնվեց, բռնեց արույրե ձողից, մագլցեց վեր, ուր խավար էր տիրում, հետ նայեց դատարկ բնին ու զգաց, թե ինչպես էր սիրտը տրոփում: Ֆաբերն ասես գիշերաթիթեռ լիներ, որ այժմ լուռ ննջում էր իր ականջում:

Ելքի մոտ Բիթին կանգնած սպասում էր, սակայն մեջքով դեպի ելքը շրջված՝ նա այն տպավորությունն էր թողնում, ասես ոչ ոքի չէր սպասում:

— Ահա,— ասաց նա թղթախաղի սեղանի շուրջը նստած հրկիզողներին,— ձեր առջև կանգնած է մի չափազանց տարօրինակ արարած, որն աշխարհի բոլոր լեզուներով հիմար է կոչվում:

Նա չշրջվեց, սակայն մեկնեց ձեռքը՝ ասին ի վեր, և Մոնթազը նրան մեկնեց գիրքը: Նույնիսկ առանց վերնագրին նայելու՝ Բիթին գիրքը նետեց աղբամանն ու վառեց սիգարետը.

— «Չափավոր իմաստունները, անշուշտ, ամենամեծ տխմարներն են»: Բարի՛ վերադարձ, Մոնթազ, հուսամ՝ հիմա, երբ Ձեր տենդը նահանջել է, և Դուք միանգամայն առողջ եք, կմնաք մեզ հետ: Նստե՛ք՝ փոքեր խաղանք:

Նրանք նստեցին, բաժանեցին խաղաթղթերը: Բիթիի ներկայությամբ Մոնթազն առավել ուժգին էր զգում իր ձեռքերի մեղավորությունը: Նրա մատներն ասես խուզարկուներ լինեին, որոնք չարիք էին գործել և այժմ կորցրել էին իրենց անդորրը: Դրանք Բիթիի՝ ասես ակոհուլից մշուշված հայացքի ներքո շարունակ շարժվում էին, դիպչում ինչ-որ բանի, թաքնվում գրպաններում: Մոնթազն այն տպավորությունն ուներ, որ եթե Բիթին հանկարծ փչեր դրանց վրա, մատները կթորշումեին, կչորանային տեղում և երբեք այլևս կենդանության նշաններ ցույց չէին տա, իր կյանքի մնացած տարիների ընթացքում մոռացված, թաղված կմնային իր վերարկուի թեզանիքների մեջ: Եվ այս ամենը՝ այն պարզ պատճառով, որ իր ձեռքերն իրենց թույլ էին տվել գործել սեփական նախաձեռնությամբ: Եվ հենց այստեղ՝ սեփական ձեռքերի մեջ էր դրսևորվել Մոնթազի կամքը, և նա ձեռքն էր առել գրքերն ու հեռացել Հոբի, Հռուֆի և Վիլլի Շեքսպիրի հետ: Եվ այժմ այս-

¹ Անգլիացի բանաստեղծ Ջոն Դոնի (1573–1631) «Եռապատիկ հիմարը» բանաստեղծության վերջին երկտողը:

տեղ՝ հրկիզողների կայանում, նրա ձեռքերն իրեն արյան մեջ թաթախված էին թվում:

Կես ժամվա ընթացքում Մոնթազը երկու անգամ ստիպված եղավ ընդհատել խաղն ու գնալ զուգարան՝ վլացվելու: Երբ վերադառնում էր, ձեռքերը թաքցնում էր սեղանի տակ:

Բիթին ծիծաղեց:

— Թողեք տեսնենք Ձեր ձեռքերը, Մոնթազ: Բանն այն չէ, որ չենք վստահում Ձեզ, հասկացե՞ք, սակայն...

Նրանք բոլորը ծիծաղեցին:

— Դե,— ասաց Բիթին,— ճգնաժամն անցել է, ամեն ինչ կարգին է. մոլորյալ ոչխարը միանում է հոտին: Մենք բոլորս էլ ժամանակին մոլորված գառներ ենք եղել: Մենք բղավում էինք. «Ճշմարտությունը մինչև վերջ էլ ճշմարտություն կմնա»¹: «Միայնակ չեն նրանք, ովքեր ազնիվ մտքերով են առաջնորդվում²,— գոռում էինք մենք: «Ճշմարտացիորեն արտահայտված իմաստնության քաղցր պտուղներ»³,— ասել է սըր Ֆիլիպ Սիդնին: Սակայն մյուս կողմից ի՞նչ է ասել Ալեքսանդր Փոուփը. «Բառերը նման են սաղարթների, և որքան շատ են, // Այնքան հազվադեպ է պտուղ հանդիպում ստվերում դրանց»⁴: Ի՞նչ եք մտածում այս մասին, Մոնթազ:

— Չգիտեմ:

— Զգո՛ւյշ,— շնջաց Ֆաբերը մեկ այլ՝ հեռու աշխարհից:

— Կամ այս մեկը. «Թե սակավ ուսյալ ես, դատապարտված ես վտանգի: Ցմրուր խմիր ուրեմն իմաստնության գինին կամ մնա՛ հեռու լուսի կաճառից, // Քանզի թույլ չափաբաժինը կթունավորի միտքդ, և միայն ցմրուր խումը կարող է սթափեցնել այն նորից: Այս տողերը ևս հանդիպում են Փոուփի

¹ Քաղված է Վիլյամ Շեքսպիրի «Չափն ընդդեմ չափի» պիեսից (1603–1604), արար V, տեսարան I:

² Քաղված է անգլիացի բանաստեղծ, հասարակական գործիչ Սըր Ֆիլիպ Սիդնիի (1554–1586) «Ի պաշտպանություն պոեզիայի» երկից (1579):

³ Նույն տեղում:

⁴ Քաղված է անգլիացի բանաստեղծ Ալեքսանդր Փոուփի (1688–1744) «Ակնարկ քննադատության» պոեմից (1711):

մոտ՝ միևնույն աշխատության մեջ¹: Սրա տրամաբանությունն ինչ է տանում:

Մոնթազը շուրթերն էր կծոտում:

— Հիմա բացատրեմ,— ասաց Բիթին խաղաթղթերից այն կողմ:— Դուք ասես հարբած լինեիք: Մի քանի տող էիք կարդացել ընդամենը, հարբել էիք առաջին կումից և պատրաստ էիք ջարդել—փշրել Ձեր շուրջը եղած ամեն բան, Երկիր մոլորակը դուրս հանել իր ուղեծրից, գլուխներ թռցնել, տապալել կանանց ու երեխաների, ոչնչացնել իշխանություններին: Գիտեմ, այդ ամենի միջով ես էլ եմ անցել:

— Ինձ հետ ամեն բան կարգին է,— նյարդայնացած ասաց Մոնթազը:

— Դադարե՛ք ամոթահար շիկնելուց: Ես Ձեզ անհարմար վիճակի մեջ դնելու միտում չունեմ: Գիտե՞ք, մեկ ժամ առաջ երազ տեսա: Մի պահ ուզեցի աչք կպցնել և ահա թե ինչ տեսա: Ես և Դուք գրքերի շուրջ կատաղի վեճի էիք բռնվել: Դուք մոլեգնած ձիու պես ծառս էիք լինում, գլխիս գրքերից մեջքերումների տարափ էր տեղում, իսկ ես անվրդով հետ էի մղում Ձեր բոլոր հարվածները: «Իշխանություն»,— ասում էի ես, իսկ Դուք, մեջքերելով դոկտոր Ջոնսոնին, ասացիք. «Գիտելիքն ուժի համարժեքը լինելուց ավելին է»²: Հետո ես ասացի. «Լավ, բայց դոկտոր Ջոնսոնը մեկ այլ բան էլ է ասել, տղանս. «Իմաստուն չէ նա, ով, ակնհայտը թողած, անորոշի հետևից է ընկնում»³: Մնացե՛ք հրկիզողների կողքին, Մոնթազ, մնացյալ ամեն բան մթին քառս է»:

— Մի լսեք,— շնչաց Ֆաբերը,— նա փորձում է շփոթեցնել Ձեզ: Նրա խոսքերը մոլորեցնող են: Զգո՛ն եղեք:

¹ Նույն տեղում:

² Քաղված է անգլիացի գրող Սեմյուրը Ջոնսոնի (1709–1784) «Աբիսինիայի արքայազն Ռասելի պատմությունը» առականուց (1759):

³ Քաղված է անգլիացի գրող Սեմյուրը Ջոնսոնի (1709–1784) «Դատարկապորտը» (1758–1760) ակնարկների ժողովածուից:

Բիթին քրքջալով շարունակեց.

— Հետո Դուք մեջբերեցիք հետևյալը. «Ճշմարտությունը ջրի երես դուրս կգա, սպանությունը երկար չես կոծկի»¹: Իսկ ես հումորով հակադարձեցի. «Աստված իմ, նա միայն իր էշն է քշում,— և ավելացրի.— սատանան Սուրբ գիրքն է իր օգտի համար վկայակոչում»²: Եվ Դուք գոչեցիք. «Մեր օրերում ավելի մեծ է արժեքն իմաստազուրկ պճնամոլի, քան դպրության կաճառ մտնող ցնցոտիներ հազած իմաստունի»³: Իսկ ես մեղմ ձայնով շնջացի. «Կատաղի պաշտպանությունը խամրեցնում է ճշմարտության փայլը»⁴: Իսկ Դուք բղավեցիք. «Մեռյալներն արյունաքամ են լինում մարդասպանի տեսքից»⁵: Իսկ ես, Ձեր ուսին թփթփացնելով, հարցրի. «Մի՞թե այդպես դառնացրել եմ Ձեզ»: Եվ Դուք ճչացիք. «Գիտելիքն ուժ է: Հսկայի ուսերին նստած թզուկն ավելի հեռուն է տեսնում»: Իսկ ես եզրափակեցի ասելիքս մի անասելի հանգստությամբ. «Փոխաբերությունն իբրև ապացույց, դատարկախոսության հեղեղն իբրև ճշմարտության ակունք ընդունելու և սեփական անձը մարգարե համարելու հիմարությունը հատուկ է բոլորիս», ինչպես մի առիթով ասել է պարոն Վալերին»⁶:

Մոնթաֆի գլուխը պտտվեց: Նրան թվում էր՝ ասես անխնա կերպով հարվածների տարափ էր տեղում հոնքերին, աչքերին, քթին, ծնոտին, շուրթերին, ուսերին, վեր պարզած ձեռքերին: Նա ուզում էր բղավել. «Ո՛չ, լռե՛ք, Դուք խճճում եք

¹ Վիլյամ Շեքսպիր, Վենետիկի վաճառականը, (1596–1598), արար I, տեսարան II:

² Նույն տեղում, տեսարան III:

³ Քաղված է անգլիացի գրող Թոմաս Դեքերի (1572–1632) «Ծեր հաջողակը» ստեղծագործությունից (1599):

⁴ Քաղված է անգլիացի գրող Բենջամին Ջոնսոնի (1572–1637) «Կատիլի-նայի դավադրությունը» պիեսից (1611), արար III, տեսարան II:

⁵ Քաղված է անգլիացի գիտնական Ռոբերթ Բըրթոնի (1577–1640) «Տխրության անատոմիա» աշխատությունից (1621):

⁶ Քաղված է ֆրանսիացի գրող Փոլ Վալերիի (1871–1945) «Լեոնարդո դա Վինչիի մեթոդի ներածություն» ստեղծագործությունից (1895):

ամեն բան, վերջ տվեք»: Բիթին պարզեց իր նրբագեղ մատները՝ Մոնթագի դաստակը բռնելու:

— Աստված իմ, ինչպես է տրոփում Ձեր զարկերակը: Ես կարողացա կարգին հուզել Ձեզ, այնպես չէ՛, Մոնթագ: Տե՛ր Աստված, Ձեր զարկերակն այնպես է տրոփում, ասես պատերազմը միայն երեկ է սկսվել: Մնում էր միայն Ձեր շուրջը տագնապի ազդանշաններ հնչեին: Շարունակե՛մ: Ինձ դուր է գալիս Ձեր տագնապած տեսքը: Խոսե՛ք: Կարող եմ Ձեզ հետ զրուցել սվահիլի լեզվով, հնդկերեն, գրական անգլերեն: Բոլոր այս լեզուներով խոսում եմ: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ տաղտկալի բանավեճ կստացվի, Վիլլի Շեքսպիր:

— Դիմացե՛ք, Մոնթագ:— Նրա ականջը խուտուտ տվեց գիշերաթիթեռը:— Նա ջանում է զուլալ ջրեր պղտորել:

— Ա՛խ, Դուք սարսափեցիք,— շարունակեց Բիթին,— քանզի ես դաժան վարվեցի՝ մեջբերումներ անելով ճիշտ այն գրքերից, որոնց Դուք էիք փորձում կառչել: Ես կարողացա հերքել Ձեր յուրաքանչյուր մեջբերում, հետ մղել Ձեր պնդումները: Ինչպիսի դավաճաններ կարող են լինել գրքերը: Դուք կարծում եք՝ դրանք սատարում են Ձեզ, մինչդեռ, արի ու տես, դրանք մեջքից են խոցում: Ձեր դիմացիները նույնպես մեջբերումներ են անում գրքերից, և ահա Դուք կորած եք, ճահճուտի կեսին՝ գոյականների, բայերի և ածականների խառնաշփոթի մեջ: Գիտե՛ք, իմ երազի ավարտին ես սալամանդրով մոտեցա Ձեզ և հարցրի՝ գալի՞ս եք մեզ հետ: Դուք նստեցիք մեքենան, և մենք վերադարձանք կայան: Երանելի լռություն էր տիրում: Մենք խաղաղվել էինք՝ ես և Դուք: Բիթին բաց թողեց Մոնթագի դաստակը, և այն ծանրորեն ընկավ սեղանին:

— Ամեն ինչ լավ է, երբ լավ է վերջանում:

Լռություն տիրեց: Մոնթագն անշարժ նստել էր, ասես քարացած արձան լիներ: Գանգին ստացած մուրճի հարվածի վերջին արձագանքը մարեց ականջի խոռոչում, որտեղ Ֆաբերն էր սպասում, մինչև ամեն բան կհանդարտվեր: Քիչ

անց, երբ անհանգիստ փոթորիկը հանդարտվեց Մոնթագի ուղեղում, Ֆաբերը սկսեց խոսել մեղմաձայն:

— Վերջ, նա ասաց իր ասելիքը: Լսեցիք: Հասկացաք: Հաջորդ մի քանի ժամերի ընթացքում ես եմ խոսելու: Ստիպված կլինեք ինձ էլ լսել: Ապա կփորձեք մարսել այդ ամենը, կշռադատել և վճիռ կայացնել, թե որ կողմին եք ուզում հարել: Սակայն ես ուզում եմ, որ դա Ձեր որոշումը լինի, ոչ թե իմը կամ հրկիզապետ Բիթիինը: Հիշե՛ք, որ հրկիզապետը պատկանում է ճշմարտության և ազատության ամենավտանգավոր թշնամիների բանակին՝ կարծրացած, հետադեմ մեծամասնությանը: Ա՛խ, Աստված իմ, մեծամասնության այդ սարսափելի բռնապետությունը: Մենք երկուսս էլ մեր քնարն ենք նվագում: Այժմ որոշողը Դուք եք, թե ում եք կամենում լսել:

Մոնթագն ականա շարժեց շուրթերը Ֆաբերին պատասխանելու ճիգով, սակայն կայանում այդ պահին հնչած տագնապի ազդանշանը կանխեց անզգուշությունը, որ նա կարող էր դրսևորել ներկաների առջև: Առաստաղից գուժեց ահազանգը: Սենյակի մյուս կողմում հեռախոսային սարքը միալար տկտկոցով ազդարարեց հասցեն: Բիթին, փոքրի խաղաթղթերը վարդագույն ձեռքի մեջ պահած, ցուցադրական դանդաղ քայլվածքով մոտեցավ հեռախոսասարքին և պոկեց հասցեն պարունակող թղթի ժապավենը, երբ տկտկոցները դադարեցին: Հպանցիկ նայեց թղթին, անփութորեն գրպանը խոթեց, վերադարձավ իր տեղն ու նստեց: Բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի նա:

— Ինձ ընդամենը քառասուն վայրկյան է անհրաժեշտ, որպեսզի բոլորիդ պարտության մատնեմ և վերցնեմ փողերը,— երջանիկ ասաց Բիթին:

Մոնթագը վայր դրեց խաղաքարտերը:

— Հոգնե՛լ եք, Մոնթագ: Թողնո՛ւմ եք խաղը:

— Այո՛:

— Դե լավ, կարող ենք այս պարտիան հետո շարունակել: Պարզապես խաղաթղթերը երեսնիվայր դրեք սեղանին և

գործի՝ անցեք: Արահ, արահ:— Բիթին կրկին վեր կացավ:— Մոնթազ, լավ չեք: Տհաճ է մտածել անգամ, որ Ձեզ վրա կրկին տենդ է իջնում:

— Ինձ հետ ամեն բան կարգին է:

— Ձեզ հետ ամեն բան կարգին է: Եկեք մեզ հետ ուրեմն: Սա առանձնահատուկ դեպք է: Դե՛, եկեք: Օգտվեք առիթից:

Հրկիզողները ցատկեցին և թռիչքի մեջ կառչեցին արույրե ձողից այնպիսի հավատարմությամբ, ասես այն իրենց վերջին նեցուկը լինե՛ր՝ խուսափելու համար ներքևում հոսող մակընթացության ալիքից: Սակայն ձողը, ի սարսափ իրենց, նրանց վար էր ձգելու դեպի խավարը՝ դեպի այն գազային հրեշը, որը, պայթյուններ արձակելով, շնչահեղձ փղծկալով և իրեն պատահած ամեն բան խժռելով, գոյատևում էր:

— Դե՛, դե՛:

Երբ հրկիզողները շրջանցեցին կայանը, տագնապի ազդանշանը դեռ հնչում էր: Ռետինե անվադողերը շառաչյունով լցրին լռելայն խավարը, կայանի հրապարակը ցնցվեց մեքենաների անիվների տակ, որոնք բեռնված էին նավթով լի արույրե բաքերով, ինչպես հսկայի որովայնն է բեռնված լինում սնունդով: Մոնթազի մատներն ասես ուժով պոկվեցին մեքենայի բռնածողից և այժմ տարուբերվում էին սառը տարածության մեջ: Ցրտաշունչ քամին ցաք ու ցրիվ էր անում սև մազերը, սուրում ատամնաշարի արանքում: Եվ այդ ողջ ժամանակը նա մտածում էր այն կանանց մասին, ում այս երեկո հանդիպել էր իր տան հեռուստասենյակում, այն պոռոտախոս կանանց, ում նեոնային քամուն տված ուղեղներում բանականության հետք անգամ չէր մնացել: Մտածում էր, թե որքան հիմարաբար նա ընթերցանության այդ անիծյալ միտքը հղացավ, որը նման էր հսկայական հրդեհը փոքրիկ ջրցան ատրճանակներով հանգցնելուն: Որքան անհեթեթ և անխոհեմ էր այդ ամենը: Մոլեգնության մի պոռթկումին հաջորդում էր մյուսը: Զայրոյթի մի բռուն դրսևորումը տեղի էր տալիս մյուսին: Երբ էր

վերջապես նա հրաժարվելու կատարյալ անհեթեթություններ թույլ տալուց, երբ էր հանդարտվելու նրա խռոված հոգին:

— Ճամփա ընկանք:

Մոնթազը բարձրացրեց հայացքը: Բիթին սովորաբար սալամանդրի դեկին չէր լինում, սակայն այսօր նա էր վարում շրջադարձերին կտրուկ թեքելով ընթացքի ուղղությունը: Վարորդի նստատեղին բարձր նստած, փոքր-ինչ առաջ հակված, սև ծառայողական վերարկուն քամուն տված՝ նա նման էր հսկա սև չղջիկի, ով թռչում էր շարժիչի վերևում արույրե համարանիշից վեր՝ իրեն քամու տարերքին տված:

— Ահա՛, գնում ենք, որ աշխարհն էլ ավելի երջանիկ լինի, Մոնթազ:

Բիթիի վարդագույն այտերը շողում էին, անդարդարձնում լույսը խավարի մեջ. նա ջղաձիգ ժպտում էր:

— Հասանք:

Սալամանդրը հռնդյունով կանգ առավ: Անշնորհք սայթաքելով և ցատկելով՝ հրկիզողները դուրս թափվեցին: Մոնթազը կանգնել էր՝ կարմրակալած աչքերը սևեռած սառը, փայլուն բռնածոդին, որի շուրջը սեղմվել էին իր իսկ մատները:

— Ես չեմ կարող անել դա, ինչպե՛ս կարող եմ կատարել այս նոր առաջադրանքը, ինչպե՛ս կարող եմ շարունակել այրել: Չեմ կարող մտնել այս տունը:

Կողքին հայտնվեց Բիթին, ումից դեռ փչում էր քամու հոտը, որի միջով նա այդպես եռանդով սլանում էր քիչ առաջ:

— Լավ ես, Մոնթազ:

Անճոռնի ճոքավոր կոշիկներով հրկիզողները, որ ասես հաշմանդամներ լինեին, սարդերի պես անաղմուկ դեսուդեն էին վազվզում:

Վերջապես Մոնթազը բարձրացրեց հայացքն ու շրջվեց դեպի Բիթին: Վերջինս գննում էր նրա դեմքը:

— Ինչ-որ բան պատահեց, Մոնթազ:

— Ինչո՞ւ ենք,— դանդաղ արտասանեց Մոնթազը,— կանգ առել իմ տան առջև:

Ե Ր Ե Ք

Հրկիզում

Փողոցի բոլոր տներում լույսեր վառվեցին, բացվեցին շքամուտքերի դռները: Մարդիկ դուրս ելան՝ դիտելու ներկայացումը: Մոնթազը և Բիթին, առաջինը՝ չհավատալով աչքերին, երկրորդը՝ զուսպ բավարարվածությամբ, ակնապիշ նայում էին իրենց առջև գտնվող տանը, որը քիչ անց ներկայացման թատերաբեմի էր վերածվելու, ուր ջահերով ձեռնածություն էին անելու, կրակի բոցեր էին կոլ տալու:

— Դե,— ասաց Բիթին,— ահա վախճանը: Ծերուկ Մոնթազն ուզում էր մոտենալ արևին, և հիմա, երբ այրել է իր անիծյալ թևերը, զարմանում է, թե ինչու այսպես ստացվեց: Միթե բավականաչափ հասկանալի չակնարկեցի, երբ մեխանիկական շանը ձեր տան մոտ ուղարկեցի:

Մոնթազը կանգնել էր դեմքի անկենդան արտահայտությամբ. նա զգաց, թե ինչպես քարի պես ծանր գլուխը շրջվեց դեպի խավարի մեջ կանգնած տունը, որ բազմերանգ ծաղկաթմբերով էր շրջապատված:

Բիթին հեզնական ժպտաց.

— Օ՛, ո՛չ, միայն թե չասեք, թե այդ փոքրիկ տխմար աղջիկն իր ծրագրով հիմարացրել է քեզ: Ծաղիկներ, թիթեռներ, տերևներ, արևամուտ: Այդ ամենը, գրողը տանի, պահվում է մեր արխիվի քարտարանում: Թիրախին եմ խփում, չէ՛: Միայն թե այս պահին տեսնեիք Ձեր դեմքի հիվանդ արտահայտությունը: Մի քանի սիզախոտ, մեկ քառորդ լուսին: Սկզբում գուցե և հետաքրքիր էր հնչում, բա հետո՛: Ի՛նչ օգուտ այդ ամենից:

Մոնթազը նստեց սալամանդրի սառը կողին՝ գլուխը անհասկանալի մերթ աջ, մերթ ձախ շարժելով՝ ձախ, աջ, ձախ, աջ, և այդպես մի քանի անգամ:

— Աղջիկն ամեն բան տեսնում էր: Նա երբեք ոչ ոքի ոչինչ չէր արել: Նա պարզապես մարդախույս էր:

— Մարդախոնյա: Գրողը տանի, միթե Ձեր շուրջն անընդ-հատ չէր պտտվում որպես սրտակից բարեկամ՝ իր տագնա-պով լիցքավորված սրբազան լռությամբ և մարդկանց սեփա-կան մեղքի զգացում ներշնչելու արատավոր տաղանդով: Նրա պես անհիծյալները ծագում են, ինչպես արևը՝ կեսգիշերին, որպեսզի մահու չափ վախեցնեն քեզ սեփական անկողնումդ:

Շքամուտքի դուռը բացվեց: Տնից, ասես ցնորքի միջից, դուրս եկավ Միլդրեդը, աստիճաններով ցած վազեց՝ ճամպ-րուկն ափի մեջ ամուր սեղմած: Մայթեզրին սուլոցով արգելա-կեց տաքսին:

— Միլդրեդ:

Կինը, ասես փայտացած, նրա կողքով փութաց դեպի տաքսին՝ դեմքը դիմափոշուց ճերմակած, առանց շրթների կի գրեթե անէացած բերանով:

— Միթե դու ես ահազանգել, Միլդրեդ:

Նա ճամպրուկը խցկեց սպասող մեքենայի մեջ, ապա ինքն էլ տեղավորվեց՝ քթի տակ մրմնջալով:

— Իմ խեղճ ազգականներ, խեղճ իմ ընտանիք, հիմա ամեն բան կորած է, կորած է ամեն բան:

Բիթին բռնեց Մոնթազի ուսից, մինչ տաքսին սուլոցով պոկվեց տեղից, հասավ ժամում յոթանասուն մղոն արագու-թյան և անհետացավ փողոցի ծայրին:

Մոտիկ ինչ-որ տեղ գրնգոց լսվեց. ասես փշրվում էր ինչ-որ մեկի՝ հայելիներից և եզրահղկված ապակուց հյուս-ված բյուրեղյա երազանքը: Մոնթազն ակամա շրջվեց: Իրեն պատուհասած պտտահողմն ասես նրան մղձավանջի մեջ շարտած լիներ, ուր այժմ Սթոնմընն ու Բլեքը, կացիները ձեռքներին, փշրում էին պատուհանների ապակիները՝ միջան-

ցիկ քամի ապահովելու համար: Սառը, սև վահանակին խփվող գիշերաթիթեռի թևերի շրշյուն:

— Մոնթազ, Ֆաբերն է, Դուք ինձ լսում եք: Ինչ է կատարվում այդտեղ:

— Հիմա դա ինձ հետ է կատարվում,— պատասխանեց Մոնթազը:

— Ինչպիսի սոսկալի անակնկալ,— ասաց Բիթին:— Մեր օրերում, երբ բոլորը կարծում են, ավելին՝ բոլորը վստահորեն պնդում են, որ երբեք ոչինչ չի կարող պատահել իրենց: Ուրիշները մեռնում են, սակայն ես շարունակում եմ ապրել: Ինձ համար հետևանքներ չկան, չկա պատասխանատվություն: Բացի այն, որ դրանք իրականում գոյություն ունեն: Սակայն արի չանդարդառնանք դրան: Մեկ է, արդեն ուշ է: Երբ բանը հասնում է հետևանքներին, արդեն շատ ուշ է լինում, այդպես չէ՛, Մոնթազ:

— Մոնթազ, կարո՞ղ եք խուսափել այդ ամենից, փախչել կարո՞ղ եք,— հարցրեց Ֆաբերը:

Մոնթազը դանդաղ քայլում էր, սկզբում՝ ցեմենտի վրայով, ապա՝ գիշերային մարգագետնի, սակայն ոտքերի տակ ոչինչ չէր զգում: Նրան շատ մոտ կանգնած Բիթին շրխկացրեց բոցավառիչը. Մոնթազը կախարդվածի նման նայում էր այդ փոքրիկ նարնջագույն հուրհրացող կրակին:

— Ինչո՞ւ է կրակն այդքան սքանչելի: Նշանակություն չունի՞ քանի տարեկան ես, կրակը միշտ դեպի իրեն է ձգում քեզ:— Բիթին հանգցրեց բոցն ու կրկին վառեց:— Կրակի հմայքը հավերժական շարժումն է, այն, ինչին մարդը ձգտել է, սակայն երբեք չի կարողացել հայտնագործել: Կամ գրեթե հավերժական. եթե չփորձես հանգցնել, այն կայրվի ողջ կյանքիդ ընթացքում: Ինչ է, ի վերջո, կրակը: Առեղծված: Գիտնականները խրթին բացատրություններ են տալիս շփման և մոլեկուլների վերաբերյալ: Սակայն նրանք ամեն ինչ չէ, որ գիտեն: Կրակի իրական հմայքն այն է, որ ոչնչացնում է ամեն տեսակ պատասխանատվություն և հետևանք: Եթե որևէ

խնդիր ճնշող բեռ է դառնում ուսերիդ, նետիր այն հնոցը: Այժմ Դուք էլ, Մոնթազ, ծանրացած բեռ եք իմ ուսերին: Կրակը Ձեզ կհեռացնի իմ ուսերից, մաքուր և այնպես արագ, որ հետո նեխելու ոչինչ չի մնա: Հիգիենիկ է, հարմար, և գեղագիտությունն էլ ապահովված է:

Մոնթազն այժմ կանգնել նայում էր իրեն խորթացած այս տանը, որ գիշերվա այս ժամին հարևանների շշուկների ներքո, փշրված ապակիների խառնաշփոթի մեջ արտասովոր տարօրինակ էր թվում իրեն: Հատակին գրքեր էին, բզկտված կազմեր, կարապի փետուրների թեթևությամբ ամենուրեք խառնիխուռն ընկած էջեր: Հիմա դրանք անիրական ու անհեթեթ էին թվում, ավելորդ գլխացավանք, ոչ ավելին, քան սև ներկանյութ՝ դեղնավուն թղթին, և մաշված կազմեր:

Դե, իհարկե, Միլդրեդն է մատնել իրեն: Նա հավանաբար տեսել է, թե ինչպես է ինքը թաքցնում գրքերը պարտեզում, և ներս է բերել: Ա՛խ Միլդրեդ, Միլդրեդ:

— Ես ուզում եմ, որ Դուք ինքներդ կատարեք այս ողջ աշխատանքը, Մոնթազ: Ոչ թե նավթով և լուցկով, այլ հրցիրով, հիմնովին ոչնչացնել է պետք այս ամենը: Ձեր տունն է, Դուք էլ կստանձնեք մաքրումը:

— Մոնթազ, միթե չեք կարող փախչել, դուրս պրծնել այդտեղից:

— Ո՛չ,— անօգնական ճչաց Մոնթազը:— Անհնար է... մեխանիկական շունը:

Ֆաբերը հասկացավ ամեն բան: Բիթին, ում թվացել էր, թե Մոնթազի խոսքերն իրեն էին ուղղված, ակնարկեց.

— Այո՛, մեխանիկական շունն այստեղ է՝ ինչ-որ տեղ՝ մոտերքում: Չհամարձակվեք անմիտ բան անել: Պատրաստ եք:

— Պատրաստ եմ:— Մոնթազը շրխկոցով բացեց հրցիրի պաշտպանիչ վահանակը:

— Կրակ:

Հրցիրից դուրս ժայթքած հսկա բոցից գրքերը վեր թռան, զարկվեցին պատին: Մոնթազը ննջարան մտավ, երկու անգամ

կրակ բաց թողեց երկտեղանոց անկողինների վրա, որոնք մեկեն բռնկվեցին և խոլ ճարճատյունով այրվում էին այնպիսի ջերմությամբ ու կրքով, որն անկարելի էր երևակայել: Նա այրեց ննջարանի պատերն ու կնոջ արդուզարդի սեղանը, որովհետև ցանկանում էր փոխել ամեն բան՝ աթոռները, սեղանները, ճաշասենյակում՝ արծաթյա և պլաստմասե սպասքը, այն ամենը, ինչ հիշեցնում էր նրան, որ ապրել էր այստեղ՝ այս դատարկ տանը, տարօրինակ կնոջ հետ, ով վաղը ևեթ կմոռանար նրան, ով հեռացել էր և գուցե արդեն մոռացել էր իրեն, ով այժմ ականջալուր ռադիոխոսեցու՝ իր վրա շարունակ թափվող հնչյուններին՝ մեն-մենակ քաղաքի մի ծայրից մյուսն էր սլանում: Եվ այս պահին նախկինի պես հաճելի էր այրելը. կրակի օգնությամբ այժմ դուրս էր հորդում իր մեջ մոլեգնող զայրույթը. բզկտել, ծվատել, բոցակիզել ամեն բան, հրի մատնել անիմաստ խնդիրը: Չկարողացավ իր առջև ծառացած այս խնդրի լուծումը գտնել, ուրեմն խնդիրը ոչ էլ եղել է: Կրակը լավագույն միջոցն է ամեն բան ոչնչացնելու համար:

— Գրքերը, Մոնթագ:

Գրքերը, ինչպես խանձված փետրավորներ, թևածում էին օդում՝ դեղնակարմիր բոցերի մեջ:

Այնուհետև մտավ հեռուստասենյակ, որտեղ հսկա ճիվաղներն էին ննջում՝ իրենց ճերմակ երազների և ձյունասառն մտքերի մեջ ամփոփված: Նա ամբողջ ցատումով կրակ բացեց երեք դատարկ հեռուստապատերին, և վակուումային ապակիները թշուրտով ներքև թափվեցին: Դրանց դատարկությունը սենյակի ամայության մեջ բազմապատկվեց, Մոնթագին հասավ սկզբում սուլոցի, ապա անիմաստ ճիչի հնչեղությամբ: Նա ջանաց պատկերացնել դատարկությունը, որի ներսում ոչնչություն էր քարոզվել այսքան երկար տարիներ, սակայն չհաջողվեց: Շունչը պահեց, որպեսզի դատարկությունը չներթափանցի թոքերի մեջ: Մի քանի քայլ հետ եկավ՝ սոսկալի ունայնությունն իրենից վանելու համար, ապա սենյակին մի հսկա վառ դեղին հրե ծաղիկ նվիրեց: Պատերի

հրակայուն ծածկույթը լայն ճաք տվեց, և, ասես հնոցի մեջ, տունը սկսեց ցնցվել:

— Երբ հիմնովին ավարտեք,— հնչեց Բիթիի ձայնը նրա թիկունքում,— իմացած եղեք, որ ձերբակալված եք:

Տունն անթեղի էր վերածվել, միտում էր մոխրավարդագույն շեղջի մեջ, որից ալարկոտ ծուփ էր ելնում, փետուրի թեթևությամբ բարձրանում վեր ու ծուկորեն պար գալիս երկնքի ֆոնին: Առավոտյան երեքն անց կես էր: Մարդիկ քաշվեցին իրենց տները. կրկեսի հսկայական վրանները փայտածխի ու մանրախճի էին վերածվել: Ներկայացումը վաղուց ավարտվել էր:

Մինթազը կանգնել էր՝ դեմքը մրածածկ, հրցիրը ուժասպառ ձեռքերի մեջ պահած: Թևատակերից քրտինքի առվակներ էին հոսում: Նրա հետևում՝ մթության մեջ, լուռ սպասում էին մյուս հրկիզողները. միացող անթեղի թույլ ցուլը լուսավորել էր նրանց դեմքերը:

Մինթազը երկու անգամ խոսելու փորձ արեց, ապա վերջապես, մտքերն ի մի բերելով, հարցրեց.

— Կինս էր ահազանգել:

Բիթին գլխի շարժումով հաստատեց, որ այդպես է եղել:

— Սակայն նրա ընկերուհիներն ավելի վաղ էին ահազանգել, պարզապես ես չէի ցանկանում միջամտել: Այսպես թե այնպես, Դուք բախվելու էիք սրան: Միանգամայն անհեթեթ վարքագիծ եք դրսևորել: Ի՞նչ է նշանակում բացեիբաց աջուձախ բանաստեղծություններ կարդալ... անիծյալ տխմարին հատուկ սնապարծություն: Որևէ մեկի համար ընթերցեք մի քանի չափածո տողեր, և նա իրեն տիեզերքի Արարիչ կկարծի: Կարծում էիք՝ Ձեր գրքերի օգնությամբ կարող էիք հրաշքներ գործել: Իմացած եղեք, աշխարհն առանց Ձեր գրքերի էլ կարող է հրաշալի յուլա գնալ: Տեսեք, թե ուր հասցրին դրանք քեզ: Մինչև կոկորդը խրվել եք ճահճի մեջ, բավական է՝ ճկույթս շարժեմ, Դուք խեղդված եք:

Մոնթազն անկարող էր շարժվել: Հսկայական երկրաշարժը և կրակի լեզուները հողին էին հավասարեցրել նրա տունը. Միլդրեդը մնացել էր փլատակների տակ, իր ողջ կյանքը նույնպես փլատակների տակ էր, և ինքն այլևս անկարող էր մի քայլ անգամ անել: Նրա ներսում դեռ մոլեգնում էր քիչ առաջ իրեն պատուհասած երկրաշարժը, և նա կանգնել էր ցնցված, դողահար, անարգանքից, խոնջանքից ու հուզմունքից ծալվող ծնկներով՝ անկարող դիմակայելու Բիթիի հարձակումներին:

— Դուք տխմար եք, Մոնթազ, անիծյալ ապուշ: Ինչո՞ւ այդպես վարվեցիք:

Մոնթազը չէր լսում: Նա հեռվում էր: Մտովի նա փախչում էր, նա այստեղ չէր, հեռացել էր՝ սեփական անհոգի, մրաժածկ, ճոճվող մարմինը թողնելով գառանցող մի մոլագարի:

— Փախե՛ք, Մոնթազ,— շարունակում էր պնդել Ֆաբերը: Մոնթազն ականջ դրեց:

Գլխին իջած հարվածը նրան հետ շարտեց: Կանաչ ընկալուչը, որից Ֆաբերի ձայնն էր հնչում՝ մեկ որպես ճիչ, մեկ շշնջյուն, ընկավ մայթին: Հեգնական ժպիտ հայտնվեց Բիթիի դեմքին. նա ճանկեց այն և կիսով չափ ականջը խոթեց:

Մոնթազը լսեց հեռվից եկող ձայնը.

— Ամեն բան կարգին է, Մոնթազ:

Բիթին անջատեց ընկալուչը և գրպանը խոթեց:

— Այսպես ուրեմն, այստեղ շատ ավելին կա թաքցրած, քան ես կարծում էի: Տեսա, թե ինչպես էիք Ձեր գլուխը հակած՝ ականջ դնում: Սկզբում կարծեցի՝ ռադիոխոսքի է, սակայն ավելի ուշ, երբ այդպես խելոքացաք, սկսեցի տարակուսել: Ձեր ընկերն է, չէ՞: Մենք հետամուտ կլինենք և իր բնում կգտնենք աղվեսին:

— Ո՛չ,— ճշաց Մոնթազը:

Նա ձգեց հրացրի պաշտպանիչ վահանակը: Բիթին ականթարթային հայացք գցեց Մոնթազի մատներին. միայն չափազանց մոտ կանգնած մարդը կարող էր նկատել, թե ինչ-

պես լայնացան նրա բիբերը: Մոնթազը դրանց մեջ զարմանքի արտահայտություն տեսավ, և ինքն էլ մի պահ նայեց սեփական ձեռքերին՝ փորձելով հասկանալ՝ ինչ էին դրանք պատրաստվում անելու այս անգամ: Հետագայում, երբ հիշում էր կատարվածը, չէր կարողանում հասկանալ՝ արդյոք ձեռքերն իրեն դրդեցին սպանության, թե՛ դրանց հառած Բիթիի հայացքը: Ամպրոպի որոտներ թմբկահարեցին Մոնթագի ականջներում, ապա դանդաղ մարեցին: Նա մնում էր անվրդով:

Բիթիի դեմքին կրկին խաղաց հեգնական ժպիտը.

— Այո՛, դա էլ ուշադրություն գրավելու միջոց է: Պահեք զենքը մարդու վրա, և նա անկասկած կլսի Ձեզ: Շարունակեք խոսել: Հիմա՛ ինչ եք պատրաստվում մեջբերել: Ինչո՞ւ շեքսպիրյան որևէ հանճարեղ միտք չեք շարտում երեսիս, Դուք՝ տկարամիտ պարծենկոտ: «Ձեն վախեցնում ինձ, Կանիո, սպառնալիքները քո, // Քանզի ազնվության զրահազգեստ է հագիս, // Եվ դրանք անցնում են կողքովս հիմա պարապ քամու պես, // Որ չեմ հարգում ես»¹: Հը՛, ի՛նչ կասեք: Դե՛, Ձեզ տեսնեմ, գրչակ, սեղմեք ձգանը:

Բիթին մի քայլ արեց դեպի Մոնթագը:

— Մենք երբեք չէինք այրում այն, ինչ հարկավոր էր, — ընդամենը հասցրեց արտասանել Մոնթագը:

— Ի՛նձ տվեք հրցիրը, Գայ, — ասաց Բիթին սառած ժպիտով:

Հաջորդ վայրկյանին, երբ Մոնթագը նրա վրա բաց թողեց հեղուկ վառելիքի երկար շիթը, Բիթին վերածվեց ճղավոցներ արձակող կրակի շեղջի, սողացող, մոթմոթացող խրտվիլակի՝ այնպես անճանաչելիորեն փոխված, որ նրանից մարդկային ոչինչ այլևս չէր մնացել՝ բացի մարգագետնում բոցերի մեջ կծկված կիսակենդան մարմնից: Սկզբում թշուղ լսվեց, ասես թանձր թուք ընկավ շիկացած սալօջախին,

¹ Քաղված է Վիլյամ Շեքսպիրի «Հուլիոս Կեսար» ողբերգությունից (1599), արար IV, տեսարան III:

փրփուրներ ելան, ասես աղ լցրին հրեշավոր սև խխունջի վրա՝ նրան քայքայելու համար, որից հաջորդ վայրկյանին դեղին պղպջակներ պիտի ելնեին: Մոնթագը փակեց աչքերը, անընդհատ գոռում էր, ջանում ձեռքերով փակել ականջները՝ անմարդկային ձայներն իրենից վանելու համար: Բիթին թարտում, գալարվում էր խոտերին, ինչպես կրակների մեջ հալվող մոմե տիկնիկ, ապա կծկվեց, մնջացավ:

Մյուս երկու հրկիզողները անշարժ կանգնել էին: Նախքան հրցիրը նրանց վրա կպահեր, Մոնթագը ջանում էր զսպել սրտխառնուքը.

— Շրջվեք, — կարգադրեց նա:

Նրանք շրջվեցին. քրտինքի առվակներ էին հոսում նրանց գունատ դեմքերից: Մոնթագն ուժգին հարվածներով վայր նետեց սաղավարտները նրանց գլխներից, գցեց նրանց իրար վրա: Նրանք ընկան և անշարժ պառկել էին:

Մոնթագի թիկունքում աշնան տերևի մեղմ սոսափյուն լսվեց:

Նա շրջվեց. մեխանիկական շունն այնտեղ էր:

Շունը կիսով չափ կտրել-անցել էր մարգագետինը և այժմ ստվերների միջից հայտնվածի պես այնպիսի թեթևությամբ և այնպես անշշուկ էր մոտենում իրեն, ասես քամուց քշված մի գորշավուն ծխի քուլա լիներ: Նա մի վերջին ուսույնով ծառս եղավ օդում և երեք ոտնաչափ հեռավորությունից լայն չռված թաթերով ցատկեց Մոնթագի վրա՝ միակ առամի ծայրին դուրս ցցված պրոկաինե ասեղը նրա մաշկը խրելու դիտավորությամբ: Մոնթագը հասցրեց պատասխանել նրա հարձակմանը՝ բոցի շիթ արձակելով. մի սքանչելի հրեղեն ծաղիկ, որ իր դեղին, կապույտ ու նարնջագույն ծաղկաթերթերի ծփանքներն էր տարածել մետաղական շան շուրջը լորը՝ ամփոփելով նրան մի յուրօրինակ շղարշով, երբ վերջինս նետվեց Մոնթագի վրա և ձեռքի հրցիրի հետ շարտեց նրան մի ծառի բնի մոտ՝ մոտ տասը ոտնաչափ հեռու: Մոնթագը զգաց, թե ինչպես շունը ճանկեց ոտքն ու ասեղը մաշկը

խրեց, սակայն նույն վայրկյանին էլ բոցը շառաչունով օդ շարտեց գազանին. հողերի մետաղական ոսկորները ճրթճրթալով ճաք տվին, որովայնը պատռվեց, և բոսորագույն հրավառություն հիշեցնելով՝ դուրս թափվեց մեխանիկական շան փորոտիքը: Մի կողմ քաշված՝ Մոնթագը պառկած հետևում էր, թե ինչպես կիսակենդան արարածը, օդում աններդաշնակ շարժումներ անելով, ի վերջո անշնչացած գետնին տապալվեց: Թվում էր՝ նույնիսկ այժմ նա ջանում էր պոկվել տեղից, նետվել Մոնթագի վրա և ավարտել կիսատ թողած ներարկումը, որի ներգործությունն այժմ Մոնթագը զգում էր մաշկի տակ: Թվում էր՝ արդեն խաղաղվել էր, սակայն Մոնթագին դեռևս չէր լքել սարսափի զգացողությունը: Նա նման էր մի մարդու, ով հազիվ էր մազապուրծ եղել դեպի իրեն իննսուն մղոն ժամում արագությամբ սլացող մեքենայից, որի կողը միայն հարվածել էր ծնկին ու հետ շարտել: Նա վախենում էր վեր կենալ, վախենում էր, որ թերևս չի կարողանա իրեն ենթարկել ընդարմացած ոտքը: Թմբիրն ավելի ու ավելի էր տարածվում:

Հիմա ինչ կարող էր անել:

Փողոցը դատարկվել էր, բեմական հին դեկորի պես այրվել էր տունը, հարևանությամբ գտնվող տներն ընկղմվել էին խավարի մեջ, մեխանիկական շունը մի կողմում էր ընկած, Բիթին՝ մյուս, ավելի հեռվում՝ մյուս երեք հրկիզողները և սալամանդրը: Նրա հայացքը սևեռվեց հսկա մեքենային: Պետք է ոչնչացնել:

«Դե՛,— մտածեց նա,— տեսնենք՝ ընդունանկ ես քայլելու: Ոտքի՛ ել: Զգո՛ւյշ, զգո՛ւյշ... այդպես»:

Նա ոտքի ելավ: Սակայն միայն մի ոտք ուներ: Մյուսն ասես սոճու այրված քրթուկ լիներ, որը ստիպված էր քարշ տալ որպես ապաշխարանք, որով ջանում էր ազատվել ինչ-որ անհասկանալի մեղքերից: Երբ հենվեց ընդարմացող ոտքին, հազարավոր արծաթյա ասեղներ շամփրեցին սրունքը: Մոնթագը հեկեկաց:— Դե՛, դե՛, շարժվիր, հո չե՛ս կարող մնալ այստեղ:

Փողոցի երկայնքով ձգվող մի քանի տներում լույսեր վառվեցին գուցե միջադեպի պատճառած անհանգստության կամ միջադեպին հաջորդած անսովոր լռության պատճառով: Մոնթագր չգիտեր: Խոսելով ինքն իր հետ, հեծկլտալով, հայհոյելով, աղերսելով սեփական ոտքին՝ ծառայելու իրեն, երբեմն էլ ցուցումներ տալով՝ ուր գնալ՝ նա կաղեկաղ անցնում էր ավերակների միջով՝ ձեռքերով բռնած քարշ եկող հիվանդ ոտքը: Մթության մեջ գոռգոռոցներ և ճիչեր լսվեցին: Նա հասավ ետնաբակ, որն էլ նրան դուրս բերեց ծառուղի: «Բիթի,— մտքում ասաց Մոնթագր,— հիմա Ձեզնից որևէ խնդիր չի կարելի ակնկալել: Դուք միշտ ասում էիք՝ ցանկալի չէ առերեսվել որևէ խնդրի հետ, պարզապես այրե՛ք այն: Ես այդպես էլ վարվեցի: Բարո՛վ մնաք, հրկիզապետ»:

Կաղեկաղ նա շարունակեց ճանապարհը այժմ արդեն մթին ծառուղով:

Ամեն անգամ, երբ մարմնի ծանրությունն ընկնում էր ոտքին, ցավը շամփուրի պես ճեղքում էր ծունկը, և այդ պահերին Մոնթագր քթի տակ ասում էր իրեն՝ հիմար, անիծյալ հիմար, հիմարի՛ մեկը, տխմար, ապո՛ւշ, անիծյալ ապուշ, բթամիտ խելառ, տեն՝ ուր հասար, ինչպե՛ս ես դուրս պրծնելու այս խառնաշփոթից: Գրողի տարած հպարտություն, նզովյալ ցասում... ես կործանեցի ամեն բան, հենց սկզբից թքած ունեցա բոլորի վրա, այդ թվում և իմ: Ամեն բան միանգամից իրար գլխի լցվեց: Բիթին, կանայք, Միլդրեդը, Քլարիսը, բոլորը միանգամից: Բայց մեկ է, դու արդարացում չունես, ոչ մի արդարացում: Տխմար, անիծյալ տխմար: Գոնե այժմ մի հանձնվիր:

Ո՛չ, մենք կփրկենք այն, ինչ կարող ենք: Կանենք այն, ինչ մեզ մնում է անել: Եթե ստիպված լինենք այրվել, մի քանիսին էլ կտանենք մեզ հետ: Այդպես է պետք:

Նա հիշեց իր թիկունքում մնացած գրքերն ու հետ դարձավ: Ամեն դեպքում վերցնել էր պետք:

Գրքերը գտավ այնտեղ, որտեղ թողել էր՝ պարտեզի ցանկապատի մոտ: Միլդրեդը, Աստված օրհնի նրան, մի քանիսը տուն չէր տարել: Գրքերից չորսը դեռևս այնտեղ էին՝ իրենց թաքստոցում: Գիշերվա մեջ լաց ու կոծի ձայներ էին թևածում, հեռվում նկատվում էին առկայծող լույսեր. մի քանի այլ սալամանդրներ էին, որ գործի էին գցում ոռնացող շարժիչները: Քաղաքի բոլոր ծայրերից ոստիկանության մեքենաներ էին սլանում դեպքի վայր՝ լուսաձայնային ազդանշանները միացրած:

Մոնթագը վերցրեց մնացած չորս գրքերն ու ոստոստալով ու ցնցվելով հաղթահարեց ծառուղի տանող ճանապարհը: Հանկարծ վայր ընկավ, ասես գլուխը կտրեցին, և գետնին փռված մնաց գլխատված մարմինը: Ներսում ինչ-որ բան կասեցրեց նրան, գետնին տապալեց: Պառկած մնաց այնտեղ, որտեղ ընկել էր: Ոտքերը կծկած, դեմքը մանրախճի մեջ թաղած՝ հեծկլտում էր:

Բիթին ցանկանում էր մեռնել:

Սա այժմ ակնհայտ էր դառնում հեծկլտացող Մոնթագի համար: Բիթին ցանկանում էր մեռնել: Նա կանգնել էր այնտեղ՝ առանց փրկվելու որևէ իրական փորձի: Պարզապես կանգնել ու ծաղրում էր, խայթում Մոնթագին: Այս մտքից Մոնթագը խեղդեց հեծկլտոցներն ու խոր շունչ քաշեց: Որքան տարօրինակ է, անասելի տարօրինակ այդչափ ուժգին մահ տենչալը, երբ թույլ ես տալիս, որ դիմացինդ զենքը ձեռքին քայլի շուրջդ, իսկ հետո լռելու և կյանքդ փրկելու որևէ փորձ անելու փոխարեն այնպես ես ծաղրում նրան, գոռում վրան և այն աստիճան կատաղեցնում, որ...

Հեռվում ոտքերի տրոփյուն լսվեց:

Մոնթագը վեր կացավ, նստեց: Հեռանալ էր պետք: Դե՛, վեր կաց, չի կարելի նստած մնալ այստեղ: Սակայն հեծկլտոցները դեռևս խեղդում էին կոկորդը. հանդարտվել էր պետք: Կամաց-կամաց խաղաղվում էր: Նա չէր ուզում որևէ մեկին սպանել, նույնիսկ Բիթին: Սեփական մարմինը կլանեց նրան,

կծկեց, չորացրեց, ասես թթվուտի մեջ թաթախված լիներ: Ձեռքի ափով փակեց բերանը: Աչքերի առաջ Բիթին էր՝ անշարժ, ինչպես խոտերի մեջ նետված թրթռացող կերոն: Մոնթազը ջղաձիգ կծոտեց մատները. «Աստված իմ, ես չէի ցանկանում, ցավում եմ, չէի ցանկանում, չէի ցանկանում»...

Նա փորձեց հիշողության մեջ վերականգնել իր հետ պատահածի ամենափոքրիկ պատառիկներն անգամ: Ի մի բերեց ընդամենը մի քանի օր առաջվա իր սովորական կյանքի դրվագները, երբ այնտեղ դեռ չէին ներխուժել մաղն ու ավազը, «Դենհամ» ատամի մածուկը, գիշերաթիթեռի շրշյուններն իր թմբկաթաղանթին, լուսատտիկները, ահազանգերն ու իր վերջին օրերի գիշերային ուղևորությունները. չափազանց շատ բան մի քանի կարճ օրերի ընթացքում, այնքան շատ, որ մի ամբողջ կյանքում հազիվ կարելի լիներ ապրել:

Ծառուղու մյուս ծայրից ոտնաձայները մոտենում էին:

— Վեր կաց,— հորդորում էր ինքն իրեն,— ել, կանգնիր, գրոհը տանի,— կարգադրեց վիրավոր ուռքին ու վեր կացավ: Սուր ծակոցները սեպերի պես շամփրեցին ծունկը, ասեղների պես խրվեցին ծնկոսկրի մեջ, հետո, երբ արդեն հարմարվել էր ցավին, դրանք ավելին չէին, քան փշերի խայթոցներ: Երբ վիրավոր վերջույթը քարշ տալով՝ մի քանի տասնյակ ուսոյուններից հետո բավականին երկար տարածություն էր թողել իր հետևում, ձեռքի ափի մեջ փայտյա ցանկապատի տասնյակ տաշեղներ էին խրվել, իսկ ցավի թույլ գրգիռներն իրենց զգացնել էին տալիս այնպես, ասես սրունքին հեղուկացիրով եռացրած ջուր ցողեին: Եվ ոտքը վերջապես իրենն էր, գրեթե այնպիսին, ինչպիսին եղել էր անցյալում: Նա վախենում էր այն մտքից, որ վազելիս կրունկի հողախախտ ճանը կկոտրվի: Հիմա, երբ բերանը լայն բացած ներծծում էր գիշերային սառն օդն ու խուլ արտաշնչում, զգում էր, որ ամեն ներշնչման և արտաշնչման հետ մթության մի ստվար զանգված էր թանձրանում իր ներսում, սակայն

շարունակում էր աներեր առաջ շարժվել: Գրքերը պահում էր ձեռքերի մեջ:

Ֆաբերին հիշեց:

Ֆաբերը մնաց այնտեղ՝ կուպրի՝ գուլորշի արձակող թանձրուկի մեջ, ինքնությունը կորցրած, անանուն: Ինքը Ֆաբերին նույնպես այրել է: Նրան ցնցեց այն միտքը, որ Ֆաբերն իսկապես մեռել է, ձկան նման եփվել կանաչ պատիճի մեջ, որն այլևս ընդմիշտ կորել էր մի մարդու գրպանում, ումից այժմ ջլեր ու ոսկորներ էին մնացել:

«Հիշիր, պետք է այրել նրանց, թե չէ նրանք կայրեն քեզ,— մտածեց Մոնթապը:— Պարզից էլ պարզ է, որ այդպես է»:

Նա փողը փնտրեց գրպաններում: Այնտեղ էր: Մյուս գրպանում ռադիոխեցին էր, որի միջոցով այս ցուրտ քաղաքը մթին առավոտյան խոսում էր ինքն իր հետ.

— Ոստիկանությունը զգուշացնում է: Քաղաքում փնտրվում է փախուստի դիմած հանցագործ: Նա սպանություն է գործել, նրա այլ արարքներ որակվում են որպես ոտնձգություն պետության դեմ: Անունը՝ Գայ Մոնթապ: Մասնագիտությունը՝ հրկիզող: Վերջին անգամ նրան տեսել են...

Մոնթապն առանց դադար առնելու վեց թաղամաս վազեց ծառուղով, որը նրան դուրս բերեց տասը նրբանցքի լայնություն ունեցող մի հսկայական շրջադարձի վրա: Ճանապարհը նման էր նավերից լքված գետի, որ սառել ու հայելու պես ողորկ էր դարձել իր վրա զանգակածաղիկների պես կախված լապտերների լույսից: Նրան այնպես թվաց, ասես կխեղդվեր, եթե փորձեր հատել այն. չափազանց լայն էր, չափազանց անսքող: Հսկա թատերաբեմ լիներ ասես, ճարտարապետական որևէ հարդարումից զուրկ ամայի տարածություն, որ ձգում էր Մոնթապին որպես փախուստի վերջին հանգրվան, ծուղակ, որտեղ առատ լուսավորության ներքո առանց ճիգերի կարելի կլիներ նկատել ու սպանել նրան:

Խեցին միալար բզզում էր նրա ականջին.

— Հետևե՛ք փախուստի դիմած մարդուն... հետևե՛ք փախուստի դիմած մարդուն... նա մենակ է, հետիոտն... հետևե՛ք...

Մոնթագրը հետ քաշվեց ստվերների մեջ: Ճիշտ նրա առջև լցակայանն էր՝ հսկա, շողարձակող ճենապակու կտոր: Երկու բզեզ մեքենաներ կանգ առան կայանի մոտ՝ վառելիք լցնելու: Հիմա նա պարտավոր էր կոկիկ ու ներկայանալի երևալ: Խելամիտ կլիներ քայլել վազելու փոխարեն, այն տպավորությունը թողնել, ասես հանգիստ ճեմում էր ընդարձակ զբոսադուր: Ապահովության առավել հավանական երաշխիքներ կունենար, եթե լվացվեր ու սանրեր մազերը, հետո միայն ճանապարհվեր դեպի...

«Ճանապարհվել դեպի ո՛ր»,— միտք արեց նա:

Ոչ մի տեղ: Նա գնալու տեղ չուներ: Ոչ մի ընկեր չուներ, ում կարողանար դիմել: Իրոք: Ոչ ոք չուներ, բացի Ֆաբերից: Եվ միայն այդ ժամանակ հասկացավ, որ ինքը, փաստորեն, բնազդաբար վազում էր Ֆաբերի տան ուղղությամբ: Սակայն Ֆաբերը չէր կարող թաքցնել նրան: Մոնթագին թաքցնելու փորձն անգամ Ֆաբերի համար հավասարազոր էր ինքնասպանության: Սակայն նա գիտեր, որ ամեն դեպքում պետք էր այցելել Ֆաբերին գոնե մի քանի րոպեով: Միայն Ֆաբերը կարող էր բորբոքել նրա՝ ողջ մնալու արագ մարող հույսը: Նա պետք է տեսներ Ֆաբերին, համոզվեր, որ կենդանի է, չի այրվել քիչ առաջ մոխրացած մարմնի հետ: Փողի մի մասը պետք է թողներ Ֆաբերի մոտ, որպեսզի իր ճամփա ընկնելուց հետո նա կարողանար ծախսել այն իրենց պայմանավորվածության համաձայն: Գուցե իրեն դեռ հաջողվեր հեռանալ քաղաքից, ապրել գյուղական վայրերին մոտ, գետերի և մայրուղիների հարևանությամբ, բլուրների լանջերին, հովիտների մեջ:

Գլխավերևում ուժգին փրթփրթոց լսվեց և ստիպեց նրան երկինք նայել:

Հեռվում մեկը մյուսի հետևից օդ էին բարձրանում ոստիկանական ուղղաթիռները. այնքան շատ էին, ասես ինչ—որ մեկը փչել էր չոր խատուտիկի գլխիկին: Ուշ աշնան մոլորված

թիթեռների պես անվճռական երերում, խառնիխուռն թևածում էին Մոնթազից երեք մղոն հեռավորության վրա, ապա անսպասելի մեկիկ-մեկիկ վայր էին իջնում քաղաքի տարբեր փողոցներում, որտեղ մեղմ հավելով գետնին՝ դառնում էին բզեզ ավտոմեքենաներ, ճռինչով պոկվում էին իրենց տեղերից ու սլանում քաղաքի տարբեր ուղղություններով, հետո կրկին նույնքան անսպասելի պոկվում էին գետնից՝ վերևից որոնումները շարունակելու:

Մոնթազի ուշադրությունը կրկին լցակայանի կողմն էր: Աշխատակիցներն այժմ հաճախորդներով էին զբաղված: Մոնթազը ետնաբակով մտավ տղամարդկանց զուգարան: Այլումինե պատից այն կողմ ռադիոն հաղորդեց. «Պատերազմը հայտարարված է»: Դրսում մեքենաները դեռ վառելիք էին ցնում: Բզեզների վարորդները զրուցում էին աշխատակիցների հետ, քննարկում շարժիչները, բենզինը, հարցնում՝ որքան պետք է վճարեին: Մոնթազը կանգնել և փորձում էր գիտակցել այն ցնցումը, որն ապրեց՝ լսելով ռադիոյի կարճ հայտարարությունը, սակայն չէր հաջողվում: Ջանաջ գոնե մտքում մեկ-երկու ժամով հետաձգել պատերազմի մեկնարկը, որը, ըստ հայտարարության, ամեն վայրկյան կարող էր պատուհասել քաղաքին. մեկ-երկու ժամից ինքը հեռու լիներ գուցե, գուցե փրկված լիներ արդեն:

Լվացվեց, սրբվեց՝ հանգստության թեթև հնչյուններ արտաբերելով: Դուրս եկավ զուգարանից, զգուշությամբ փակեց դուռը և կրկին ընկղմվեց խավարի մեջ, իսկ քիչ անց արդեն ամայի զբոսայգու հակառակ ծայրին էր:

Իր առջև՝ սառնաշունչ վաղորդայնի մեջ, փռված էր յուրօրինակ մի խաղաղաշտ՝ բոսվինգի հսկայական հրապարակը: Այժմ քիչ էր մնում նվաճելու դժվար վաստակած հաղթությունը: Ծառուղին մաքուր էր, ինչպես հին հռոմեական արենաները՝ անանուն զոհերի և անհայտ արյունապարտների ասպարեզ գալուց ընդամենը երկու թուփ առաջ: Բետոնե

ընդարձակ գետի վրա օդը դողում էր Մոնթագի՝ ամայի մայրուղու միակ հետիոտնի մարմնից արձակվող ջերմությունից: Անհավատալի էր. զգալ, թե ինչպես էր սեփական մարմնի ջերմությունից թրթռում բովանդակ աշխարհի իրեն մերձակա հատվածը: Նա լուսածնային թիրախ էր. գիտեր, զգում էր: Եվ այժմ ստիպված էր հատել մայրուղին:

Երեք թաղամաս այն կողմ լուսարձակ լապտերներ շողշողացին: Մոնթագը խոր շունչ քաշեց: Թոքերն ասես կրծքավանդակում վառվող ջահեր լինեին: Երկարատև վազքից չորացել էր բերանը: Կոկորդում արյան ու երկաթի համ կար, ոտքերն ասես ժանգոտած երկաթ լինեին:

Այդ ինչ լույսեր էին: Բզեզ մեքենաներ կլինեին: Երբ սկսեր քայլել, ստիպված էր լինելու հաշվարկել, թե որքան արագ այդ մեքենաները մայրուղով կընթանային դեպի իրեն: Տեսնես որքան տարածություն էր բաժանում իրեն հանդիպակաց մայթից: Երևի մոտ հարյուր յարդ: Գուցե ոչ այդքան: Ամեն դեպքում ճիշտ հաշվարկել էր պետք: Պետք էր հաշվի առնել, որ մի քանի տասնյակ վայրկյաններ կպահանջվեին, որպեսզի նա, զբոսնելու տպավորություն ստեղծելով, դանդաղաքայլ հատեր ավտոճանապարհը, իսկ բզեզները... մեկնարկից հետո արագություն զարգացնելով այնպես կսուրան, որ տասնհինգ վայրկյան անց արդեն հետևում թողած կլինեն երեք թաղամասերը: Ինչպես վարվել ուրեմն: Իսկ եթե ճանապարհի կեսից սկսի վազել:

Նա քայլ արեց աջ ոտքով, ապա՝ ձախ, ապա՝ կրկին աջ: Այսպես նա քայլեց ամայի մայրուղով:

Անգամ այն դեպքում, երբ փողոցը կատարյալ դատարկ էր, իհարկե չէիր կարող վստահ լինել, որ ապահով կարող էիր հասնել հանդիպակաց մայթ: Որևէ մեքենա կարող էր հանկարծակի հայտնվել ոլորանին՝ չորս թաղամաս հեռավորության վրա, և աչքերդ չթարթած՝ հայտնվել կողքիդ:

Որոշեց քայլերը չհաշվել: Ո՛չ աջ էր նայում, ո՛չ ձախ: Միջօրեի բարկ արևի պես պայծառ շողում էին մեքենայի լուսարձակները:

Մոնթազը լսեց, թե ինչպես իրենից աջ՝ երկու թաղամաս այն կողմ, ինչ-որ մեկը գործի գցեց շարժիչը, ու մեքենան, արագություն հավաքելով, սուրաց իր ուղղությամբ: Լուսարձակները մերթնդմերթ վառվում էին, ապա նորից մարում, ասես նենգ խաղ լիներ. հանկարծ դավադիր կերպով կանգ առան Մոնթագի վրա:

Շարունակիր քայլել:

Մոնթազը երերաց: Ձեռքի մեջ ամուր սեղմեց գրքերը և ստիպեց ոտքերին, որոնք բնազդաբար վազելու փորձեր էին անում, ենթարկվել իրեն: Բարձրաձայն սկսեց ինքն իրեն հորդորել, որ հապաղի: Կիսով չափ հատել էր մայրուղին, սակայն բզեզի շարժիչի գվկոցը արագություն հավաքելուն զուգահեռ սաստկանում էր:

«Դե, իհարկե, ուստիկանությունն է,— մտածեց Մոնթազը:— Նկատել են ինձ: Սակայն պետք չէ աճապարել, հանգիստ քայլիր, անշտապ, մի՛ շրջվիր, մի՛ նայիր նրանց կողմը, փորձիր մտահոգ չերևալ: Ընդամենը քայլիր, քայլիր և վերջ»:

Անընդհատ արագություն հավաքելով՝ մեքենան սրընթաց մոտենում էր, շարժիչի դղրոյունը խլացնում էր Մոնթագին: Բզեզը գվկում էր. այնպիսի տպավորություն էր, ասես գետնին չէր հպվում, ասես թևերը բացել, սուրում էր օդում, սահում էր տարածության միջով, անտեսանելի զենքից արձակած փամփուշտի նման շվկոցով անշեղ սլանում միևնույն հետագծով: Արդեն հասել էր ժամում 120 մղոն արագության: Հիմա ուր որ է կհասներ 130-ի: Մոնթազը սեղմեց ատամները: Սրարշավ ընթացող բզեզի լուսարձակներն այրեցին այտերը, կոպերը ցնցվեցին, ողջ մարմնի վրայով գլուկ-գլուկ հոսում էր թթվահոտ քրտինքը:

Մոնթազը շարունակում էր քայլել անճոռնի քստքստոցով, ինքն իր հետ խոսելով: Հետո մեկեն սկսեց վազել: Ոտքերը նրան տանում էին որքան հնարավոր էր հեռու, որքան հնարավոր էր հեռու այս վայրից. գայթում էր, վեր կենում, նորից վազում առաջ, գայթում, վեր կենում, վազում առաջ:

«Աստված իմ, Տէր Հիսուս»: Գիրքն ընկավ: Ընդհատեց մոլեգին վագքը, որոշեց հետ դառնալ, վայրկենապես փոխեց միտքը, նետովեց առաջ, ճչաց, ճիչն արձագանքեց բետոնե դատարկության մեջ, բզեզի շեշտակի ընթացքն այժմ իրեն էր ուղղված, հարյուր ոտնաչափ հեռավորությունից այն սուրում էր դեպի իր զոհը, իննսուն... ութսուն, յոթանասուն: Հնասպառ վագում էր, ձեռքերն անօգնական կախ էին ընկել, ոտքերն ամբողջ ուժով առաջ էին մղվում, հանդիպակաց մայթը մոտ էր, ամեն քայլի հետ այն ավելի էր մոտենում. հևոցներ արձակելով, փնջացնելով՝ վագում էր: Գլուխը շրջեց. լուսարձակի ցուլքերն այրեցին աչքերը: Հիմա սեփական լույսը կլանել էր բզեզին, հիմա այն մի հսկա ջահ էր, որ գվվոցով ու հռնդյունով ուր որ է բախվելու էր Մոնթագին: Հիմա... արդեն հասնում էր:

Սայթաքեց, ընկավ:

Ես կործանված եմ: Սա վերջն է:

Սակայն նրա անկումը փոխեց իրերի ընթացքը: Նրան բախվելուց վայրկյան առաջ կատաղի արագությամբ սլացող բզեզը կտրուկ թեքեց ուղղությունը: Այն այլևս չկար: Մոնթագը, գլուխը մի փոքր կախ գցած, մնացել էր մեջքի վրա պառկած: Արտանետած գազերի կապտավուն ծխի հետ հեռացող բզեզից Մոնթագի ականջին հասան ծիծաղի պատառիկներ:

Նրա աջ ձեռքը՝ ափը լայն բացված, թուլացած ընկել էր ասֆալտին: Երբ ձեռքը մոտեցրեց աչքերին, միջնամատի ծայրին սևին տվող մի բարակ շերտ նկատեց. իր կողքով փութացող բզեզի անվահետքն էր: Ոտքի ելավ: Թերահավատությամբ նայեց սև բծին:

— Ոստիկանությունը չէր,— եղավ նրա առաջին արձագանքը պատահածին:

Նայեց ավտոճանապարհին: Ամայի էր: Բզեզի մեջ պատանիներ էին, դատելով նրանց գոռում-գոչյուններից, սուլոցներից ու հիացական բացականչություններից՝ տասներկուսից տասնվեց տարեկան հագիվ լինեին: Մայրուղին հատող միայ-

Նակ մարդու տեսարանը՝ խիստ հազվադեպ պատահող, արտասովոր մի բան, զարմացրել էր նրանց, և մտածել էին՝ քշենք վրան, զվարճանանք՝ չիմանալով, որ նա հենց ինքը՝ փախուստի դիմած հանցագործն է՝ պարոն Մոնթագը: Մի խումբ անչափահասներ էին, ովքեր այս լուսնաժամին դուրս էին ելել երկար գիշերային զվարճանքի. ցուրտ քամին փչում էր նրանց դեմքերին: Որքան հեռու էին պատրաստվում սլանալու: Հինգ, վեց հարյուր մղոն: Լուսաբացին կհասնեին տուն, չէին հասնի: Կենդանի կլինեին, թե՛ մեռած: Այս անորոշությունը սրում էր նրանց՝ արկածից ստացած հաճույքը:

«Նրանք քիչ էր մնում սպանեին ինձ,— երեքալով քայլում ու մտածում էր Մոնթագը: Նրա շուրջը, փոշու հատիկներն ուժգին հորձանքի մեջ առած, իրեն դեռևս զգացնել էր տալիս կայծակի արագությամբ սլացող մեքենայի առաջացրած օդի ծփանքը, հպվում վնասված դեմքին:— Քիչ էր մնում առանց որևէ պատճառի ինձ սպանեին՝ իրենք իրենց որևէ բացատրություն չտալով»:

Ոտքերին կարգադրելով շարժվել՝ նա շարունակեց քայլել դեպի մայթեզրը, որը դեռևս մնում էր հեռվում: Չգիտես ինչպես՝ ցաքուցրիվ եղած գրքերը կրկին հայտնվել էին նրա ձեռքում. չէր հիշում՝ ինչպես էր կռացել ու վերցրել դրանք: Շարունակ մի ձեռքից մյուսն էր տեղափոխում գրքերը, ինչպես խրթին իրավիճակում հայտնված փոքեր խաղացողը ձեռքերում պահած խաղաթղթերն անընդհատ կտեղափոխեր քայլ անելուց առաջ:

«Գուցե հենց նրանք սպանեցին Քլարիսին»:

Նա կանգ առավ և ականա շատ բարձր ճչաց նույնը.

— Գուցե հենց նրանք սպանեցին Քլարիսին:

Նրանց հետևից վազելու և այդ մասին բղավելու ցանկություն ունեցավ:

Աչքերի մեջ արցունքներ հայտնվեցին:

Սայթաքելը նրան փրկեց: Վարորդը, տեսնելով Մոնթագին ընկած, բնազդաբար կանխազգացել էր, որ այդ արագու-

թամբ ընթացող մեքենան պառկած մարդու վրաերթի ենթարկելիս կշրջվեր՝ նրանց բոլորին դուրս շարտելով: Իսկ եթե Մոնթագը, որն ականհայտ նրանց թիրախն էր, վայր չընկներ...

Չորս թաղամաս այն կողմ բզեզը դանդաղեցրեց ընթացքը, մի կողմի վրա թեքված՝ շրջադարձ կատարեց և այժմ, արագություն հավաքելով, հետ էր սլանում մայրուղու սխալ հատվածով:

Սակայն Մոնթագն այլևս հաղթահարել էր մայրուղին, ծառուղու խավարում նա գտել էր իր թաքստոցը: Հենց այս ապաստարանի համար էր նա այս երկար ճանապարհն անցել, որի համար իրենից պահանջվել էր մեկ ժամ, իսկ գուցե ընդամենը մեկ րոպե: Կանգնել դողում էր գիշերվա ցրտին: Հետ նայեց. բզեզը սլացավ մայրուղու՝ իրեն մոտ գտնվող հատվածով, հետ սահեց դեպի ճանապարհի կենտրոնական մասը և գիշերային օդի մեջ բարձր ծիծաղի ելևէջներ թողնելով՝ անհետացավ:

Ավելի ուշ, երբ Մոնթագը քայլում էր դեռևս չլուսացած գիշերվա մեջ, մեկը մյուսի հետևից վայրէջք կատարող ուղղաթիռներ երևացին: Հեռվից դրանք ասես ձյան փաթիլներ լինեին՝ առաջիններն այն երկարաշունչ ձմեռվա, որ դեռ պիտի գար...

Տունն ընկղմված էր լռության մեջ:

Մոնթագը մտավ ետնաբակ, գաղտագողի մոտեցավ տանը՝ նարգիզների, վարդերի և խոտերի ցողաթաթախ բույրը ռունգերի մեջ: Հրեց ետնաբակի ապակե դուռը. պարզվեց՝ չէին փակել: Ներս սողոսկեց նախասրահ: Ականջ դրեց:

«Տիկին Բլեք, Դուք հավանաբար քնած եք ներսում,— մտածեց նա:— Լավ բան չեմ անում, սակայն Ձեր ամուսինը միշտ նույնն է արել ուրիշների հանդեպ և երբեք իրեն հարց չի տվել՝ արդյոք արդարացի է վարվում նրանց հետ, երբեք չի հապաղել, որ մտածի իր արարքների վերաբերյալ, երբեք չի մտահոգվել այդ մարդկանց ճակատագրերով: Եվ հիմա, քանի որ Դուք հրկիզողի կին եք, եկել է հատուցման Ձեր ժամը.

Ձեր տունը պետք է այրվի՝ ի պատասխան բոլոր այն տների, որոնք Ձեր ամուսինն այրել է, և ի հատուցումն բոլոր այն մարդկանց զրկանքների, ովքեր տուժել են նրա անհիմն բռնաբարքներից»:

Ինքն իր մեջ ամփոփված՝ տունն անհաղորդ էր մնում Մոնթագին:

Նա գրքերը թաքցրեց խոհանոցում և կրկին դուրս եկավ ծառուղի: Հետ նայեց. տունը նիրհում էր՝ լռության ու խավարի մեջ ընկղմված:

Մոնթագը կրկին քաղաքում էր: Երկնքում ուղղաթիռները քամու բերանն ընկած թղթերի պատառիկների էին նման: Մի փակ խանութի հարևանությամբ գտնվող մեկուսի հեռախոսախցիկից ահագանգեց հրակայան: Ապա հեռվում կանգնած՝ պաղ գիշերվա մեջ սպասեց այնքան, մինչև լավեցին ավելի ու ավելի մոտեցող սալամանդրների լուսաձայնային ազդանշանները: Վայրկյաններ անց հրկիզողի տունը հողս կցնդեր, մինչ նա դեռ աշխատանքի մեջ էր: Կինը ստիպված կլիներ առավոտյան ցրտից դողացող մարմնով հետևել, թե ինչպես է տանիքն օդ թռչում, ապա շառաչյունով տապալվում հրդեհի ամենակույ բոցերի մեջ: Սակայն այս պահին նա դեռ քնած էր:

«Բարի գիշեր, տիկին Բլեք», — մտքում ասաց նա:

— Ֆաբեր:

Դռան թակոց: Շշուկով արտաբերած անուն: Ապա երկար սպասում: Մեկ րոպե անց Ֆաբերի տան ներսում փոքրիկ լույս նշմարվեց: Մի փոքր էլ ստիպված եղավ սպասել, և ետնաբակի դուռը բացվեց:

Ֆաբերն ու Մոնթագը կանգնել, աղոտ լույսի ներքո լուռ նայում էին իրար՝ ասես չհավատալով այն փաստին, որ իրենք ողջ են: Հետո Ֆաբերը մոտեցավ Մոնթագին, նրա ձեռքն առավ իր ծերունական ափի մեջ, փութկոտ ներս քաշեց նրան, առաջարկեց նստել, իսկ ինքը վերադարձավ դռան մոտ, ականջ դրեց դրսի անցուդարձին: Լուսաբացի անդորրի մեջ

ներխուժել էր ազդանշանային կանչերի ոռնոցը: Ներս եկավ:
Դուռը կողպեց:

— Վերջին մի քանի ժամերի ընթացքում ես ինձ կատարյալ ապուշի պես պահեցի: Երկար չեմ կարող մնալ: Պետք է ճամփա ընկնեմ Աստված գիտի, թե ուր,— ասաց Մոնթագրը:

— Համենայն դեպս ապուշություններ անելու Ձեր ելակետերը ճշմարիտ ուղու համար էին,— հանգստացրեց նրան Ֆաբերը:— Կարծում էի՝ սպանվել եք: Պատիճանման ընկալուչը, որ տվել էի Ձեզ...

Այրվեց:

— Լսում էի, թե հրկիզապետն ինչպես է զրուցում Ձեզ հետ, հետո ամեն բան լռեց: Քիչ էր մնում՝ դուրս գայի՝ Ձեզ որոնելու:

— Հրկիզապետը մեռած է: Նա հայտնաբերեց ընկալուչը, լսեց Ձեր ձայնը: Ուզում էր Ձեր հետքերով գալ: Ես նրան այրեցի հրցիրով:

Ֆաբերը նստեց աթոռին և երկար ժամանակ լուռ էր:

— Աստված իմ, ինչպե՞ս պատահեց այս ամենը,— շարունակեց խոսել Մոնթագրը:— Չէ՞ որ դեռ երեկ ամեն բան կարգին էր, իսկ այժմ ես կործանվում եմ: Մարդը քանի՞ անգամ կարող է այսպիսի անկումներ ունենալ և ողջ մնալ: Շնչահեղձ եմ լինում: Բիթին մեռած է: Բայց չէ՞ որ նա իմ ընկերն էր մի ժամանակ: Միլին հեռացել է ինձնից: Կարծում էի՝ կինս է: Սակայն հիմա ամեն բան անորոշ է: Տունս այրվել, մոխրացել է: Աշխատանքս չկա: Ես փախստականի նման թափառում եմ, իսկ այստեղ գալու ճանապարհին հասցրի հրկիզողներից մեկի տանը ծածուկ գիրք դնել: Տեր Հիսուս, այս որքան բան հասցրի անել վերջին շաբաթվա ընթացքում:

— Դուք արել եք այն, ինչ պարտավոր էիք անել: Այդ ամենը վաղուց էր խմորվում Ձեր մեջ:

— Այո՛, այդպես է, համաձայն եմ: Այդ ամենը երկար էր եփվել իմ մեջ: Վաղուց էի իմ մեջ զգում այս ամենի կուտակվելը: Մի բան անում էի, մեկ այլ բան մտածում: Աստված իմ, ինձնից

անկախ ամեն բան կաթիլ առ կաթիլ հավաքվել է մեջս բոլոր այս տարիների ընթացքում: Զարմանում եմ, որ ճարպի տեսքով չի արտահայտվել մարմնիս վրա: Հիմա եկել, Ձեր կյանքն եմ վտանգում, Ֆաբեր: Նրանք գուցե շուտով այստեղ լինեն:

— Երկար տարիների ընթացքում առաջին անգամ ինձ կենդանի եմ զգում,— ասաց Ֆաբերը,— զգում եմ, որ անում եմ այն, ինչը վաղուց պետք է արած լինեի: Ձեր այստեղ գալուց ի վեր կորցրել եմ վախս: Գուցե նրա համար, որ վերջապես անում եմ այն, ինչ ճիշտ եմ համարում: Գուցե նաև նրա համար, որ արդեն համարձակ քայլի եմ դիմել և այժմ չեմ ուզում Ձեր աչքին վախկոտ երևալ: Ենթադրում եմ, որ ստիպված եմ լինելու ավելի անզուսպ քայլերի դիմել՝ քողազերծելով իմ իրական եսը, որպեսզի այլևս ետդարձի ճանապարհ չունենամ, որպեսզի չերկնչեմ: Ի՞նչ եք պատրաստվում անելու:

— Շարունակելու եմ փախչել:

— Գիտե՞ք, որ պատերազմ է հայտարարված:

— Լսել եմ:

— Որքան տարօրինակ է, Աստված իմ,— հառաչեց ծեր մարդը,— պատերազմը հեռավոր, անիրական մի բան է թվում, երբ մենք մեր սեփական խնդիրներն ունենք:

— Ես դրա շուրջ մտածելու ժամանակ չեմ ունեցել:— Մոնթագը գրպանից հարյուր դոլարանոց թղթադրամ հանեց:— Ուզում եմ սա Ձեզ մոտ թողնել: Ծախսե՛ք այնպես, ինչպես անհրաժեշտ եք համարում, երբ ես այստեղ չլինեմ:

— Բայց...

— Մինչև կեսօր գուցե մեռած լինեմ, ծախսե՛ք ըստ էության: Ֆաբերը գլխի շարժումով համաձայնեց:

— Լավ կանեք՝ ուղևորվեք դեպի գետը, քայլեք գետափով, մինչև որ հասնեք հին երկաթգծին, որը ձգվում է դեպի երկրի խորքերը: Հետևե՛ք երկաթգծին: Թեև մեր օրերում տրանսպորտային ուղիները օդային են, և երկաթուղիների մեծ մասը լքված է, այս մեկը, թեև վաղուց արդեն ժանգոտած, պահպանվել է: Լսել եմ, որ երկրի որոշ անկյուններում թա-

փառաշրջիկների ճամբարներ են մնացել: Այդ մարդիկ իրենց քայլող թափառախմբեր են կոչում: Եթե երկաթգծով քայլեք դեպի երկրի խորքը, ուշիմ և սրատես լինեք, կգտնեք նրանց: Ասում են՝ երկաթգծի՝ այստեղից Լոս Անջելես ընկած հատվածում Հարվարդի շրջանավարտներ կան: Նրանց խմբերն այնքան էլ փոքրաթիվ չեն: Նրանց մեծ մասը փնտրվում և հետապնդվում է քաղաքի ոստիկանության կողմից: Սակայն, կարծում եմ, նրանց հաջողվում է խուսափել հետապնդումներից: Նրանք որևէ լուրջ սպառնալիք չեն ներկայացնում, դրա համար էլ կառավարությունը նրանց դեմ ուղղված հալածանքները չի սաստկացնում: Կարող եք որոշ ժամանակ պատուպարվել նրանց մոտ, հետո կապ հաստատել ինձ հետ Սենթ Լուիսում: Ես մեկնում եմ առավոտյան ժամը հինգի ավտոբուսով՝ այնտեղ թռչակառու ծեր տպագրիչին հանդիպելու համար: Վերջապես ինքս էլ կդադարեմ ընդհատակ լինելուց: Գումարը, իրոք, կծախսենք ըստ էության: Շնորհակալ եմ, Մոնթագ, Աստված Ձեզ պահապան: Կուզե՞ք կարճ ժամանակով աչք կպցնել:

— Ավելի լավ է՝ շտապեմ:

— Տեսնենք՝ ինչ է կատարվում այս պահին:

Նա Մոնթագին արագ ուղեկցեց ննջարան և բարձրացրեց պատից կախված նկարը, որն իր հետևում ընդամենը բացիկի մեծության մի հետուստաէկրան էր թաքցնում:

— Միշտ ուզել եմ այսպիսի փոքր հեռուստացույց ունենալ, որի հետ հնարավոր լինի խոսել, անհրաժեշտության դեպքում ծածկել ձեռքի ափով, ոչ թե հրեշավոր մեծ հեռուստաէկրաններ, որոնցից աղմուկի տարափ կթափվի վրաս: Նայե՛ք:— Նա միացրեց էկրանը:

— Մոնթագ,— հնչեց անմիջապես: Ապա հեռուստացույցի էկրանին հայտնվեց հետևյալ գրությունը՝ Մ-Ո-Ն-Թ-Ա-Գ, և հեռուստահաղորդավարը տառ առ տառ արտասանեց նրա անունը:— Գայ Մոնթագ: Դեռևս գտնվում է փախուստի մեջ: Որոնողական նպատակներով օդ են բարձրացել ոստի-

կանական ուղղաթիռները: Հարևան շրջանից նոր մեխանիկական շուն է բերվել...

Մոնթագի և Ֆաբերի հայացքները լուռ հանդիպեցին:

— Մեխանիկական շունը երբեք չի վրիպում: Իր օպերատիվ-հետախուզական առաջին փորձարկումից ի վեր այս անհավանական արարածը երբեք չի սխալվել: Այսօր մեր հեռուստաընկերությունը հպարտ է, որ իրեն է ընձեռվել մեխանիկական շանը ուղղաթիռի տեսախցիկից հետևելու պատիվը, մինչ այն կհայտնաբերի և կչեզոքացնի թիրախը:

Ֆաբերը երկու գավաթ վիսկի լցրեց:

— Կարծում եմ՝ սրա կարիքն ունենք:

Նրանք դատարկեցին բաժակները:

— ...և իր գերզգայուն հոտառությամբ շունը կարողանում է մտաբերել և տարբերակել տասը հազար մարդկանց հոտերի նմուշներ և այդ ցուցիչներով հայտնաբերում է թիրախի ինքնությունը միայն մեկ ծրագրային ներբեռնումով, — շարունակում էր էկրանից եկող ձայնը:

Ֆաբերի մարմնով անթաքույց դող անցավ: Նա հայացքը սահեցրեց սենյակի պատերի, դռան, բռնակների վրայով, այն աթոռի վրայով, որի վրա Մոնթագն այժմ նստած էր: Մոնթագը նկատեց այդ հայացքը: Նրանք երկուսն էլ հայացքով ինչ-որ բան փնտրեցին սենյակում. Մոնթագի ռունգերը լայնացան: Զգաց, որ փորձում էր գտնել սեփական հետքը, և մի պահ նրան թվաց, թե այս կարճ ընթացքների ընթացքում իր հոտառությունը ևս գերզգայուն է դարձել, և հիմա նա, ռունգերը լայն բացած, սենյակի օդը կլանելով, տարորոշեց օդի այն նեղ շերտը, որի միջով դռնից հասել էր այստեղ, քրտինքի փոքրագույն հյուլենները, որ սեփական ձեռքը թողել էր բռնակին: Դրանք այնքան աննշան էին ու անտեսանելի, սակայն շատ էին և ասես փայլում էին, ինչպես մանրիկ գոհարները՝ հսկայական ջահի վրա: Մոնթագն ամենուր էր, ամեն բան իր մեջ, իր վրա, իր շուրջը կրում էր Մոնթագին: Նա լույսի հյուլե էր, օդի մեջ տարրալուծված ուրվա-

կան, որով հիմա թանձրացել էր սենյակի մթնուլորտը, շնչելը դժվար էր դարձել: Նրան թվաց, թե Ֆաբերը պահել է շունչը այն վախով, որ օդի հոսանքի հետ Մոնթագի անկաղապար գոյությունը հանկարծ կլցվի թոքերը, որ նրա արտաշնչած ուրվականային մաղձը, նրա մարմնի արձակած քրտնքահոտը կապականեն իր ներսը:

Այժմ մեխանիկական շանն ուղղաթիռից իջեցնում են դեպքի վայր, որտեղից հանցագործը դիմել է փախուստի:

Փոքրիկ էկրանին հրդեհված տունն էր: Հսկայական ամբոխ էր հավաքվել: Կենտրոնում սավանով ծածկված ինչ-որ բան տեսան: Նույն պահին օդում հայտնվեց ուղղաթիռը, որը անճոռնի ծաղկի էր նման:

«Նրանք կամենում են խաղը հասցնել ավարտին,— մտածեց Մոնթագը:— Կրկեսը պետք է շարունակվի՝ անկախ այն հանգամանքից, որ ընդամենը մեկ ժամ է մնացել պատերազմի մեկնարկին...»:

Հնայվածի պես էկրանի առջև անշարժ կանգնած՝ նա հետևում էր դեպքերի զարգացմանը: Ամեն բան այնքան հեռու էր թվում, ասես իր հետ որևէ առնչություն չուներ: Այս ամենը դրամա էր, հրաշալի թատերական ներկայացում, որ անասելի հաճույքով ուզում էր դիտել որպես իրենից դուրս, առանց իր մասնակցության մի բան: Այս ամենը Աստված է բեմադրել ինձ համար, այս ամենը այս պահին միմիայն ինձ համար է տեղի ունենում:

Եթե կամենար, կարող էր նույնիսկ ոտքը կախ գցել, մնալ այստեղ՝ հարմարավետ սենյակում, և սկզբից մինչև վերջ հետևել հետախույզների ուղեկցությամբ մարդաորսի ելած շանը: Ամեն բան կտեսներ սեփական աչքերով, փուլ առ փուլ: Կհետևեր, թե ինչպես են ծառուղիներ, փողոցներ ու երկար ձգվող դատարկ պողոտաներ ոտքի տակ տալով, խաղադաշտեր ու ավտոկայանատեղիներ անցնելով, մերթնդմերթ անհրաժեշտ գովազդային հոլովակների ցուցադրման համար դադար տալով, ապա նորից էլի ուրիշ ծառուղիներ

ոտքի տակ տալով, պարոն և տիկին Բլեքների առանձնատան միջադեպին առերեսվելով՝ ի վերջո հասնում այդ տանը, ուր ինքն ու Ֆաբերը նստած խմում են, մինչ մեխանիկական շունը լռելյայն, ինչպես մահն ինքը, հոտոտում է արդեն թարմ հետքը, մեկեն դադար առնում դրսում՝ նույն այս պատուհանի տակ: Հետո, եթե ցանկանար, կարող էր ոտքի ելնել, քայլել դեպի պատուհանը՝ աչքերը չհեռացնելով հեռուստաէկրանից, բացել փեղկը, դուրս ցատկել, ապա հետ նայել և շարունակությունը տեսնել փոքրիկ էկրանին, հետևել, թե ինչպես են բեմադրության վերածում սեփական կյանքը, ինչպես են ներկայացնում իրեն, այլակերպում իր անձը, և թե ինչպես է ինքը դառնում օրվա հերոսը՝ հայտնվելով հարյուրհազարավոր հեռուստապատերի վրա: Կարելի էր պատկերացնել, թե ինչպիսի հետաքրքրությամբ էին դիտում իրեն այդ ընտանիքներում՝ հսկա էկրանների վրա, իր իրական չափերով, պատկերի՝ բնականին մոտ գունային գերազանց որակով, տարածաչափական կատարյալ լուծումներով: Եվ եթե կարողանար աչքը չկտրել փոքրիկ հեռուստաէկրանից, կհասցներ մի վերջին անգամ տեսնել իրեն, որսալ պահը, երբ հավերժական քնից վայրկյան առաջ թունավոր ներարկիչը կխրվեր մարմնի մեջ՝ հագուրդ տալով բոլոր այն քաղաքացիների ծարավին, ովքեր արթնացել էին ընկերներ առաջ, երբ իրենց հյուրասենյակներում տեղադրված ազդանշանային համակարգը կատաղի ոռնոցով ահազանգել էր պատահարի մասին, և հիմա լցվել էին իրենց հեռուստասենյակները՝ դիտելու այս մարդաորսը, այս՝ մեկ գործող անձով դրաման:

Արդյոք նա ժամանակ կունենամր իր վերջին խոսքն ասելու: Երբ գազանը ճանկեր նրան տասը, քսան կամ երեսուն միլիոն մարդկանց աչքերի առջև, կկարողանամր ինքն արդյոք հանրագումարի բերել վերջին մեկ շաբաթվա մեջ ամփոփված իր ողջ կյանքի իմաստն ու մեկ արտահայտությամբ բարձրաձայնել այն, կամ ընդամենը մեկ բառով, որը կմեխվեր նրանց հիշողության մեջ այն բանից հետո, երբ գա-

զանը, Մոնթագին իր հսկայական երախում սեղմած, կշռջվեր ու իր վրա անշարժ գամված տեսախցիկի առջև քառատրոփ կիեռանար մութի մեջ, և նրա ուրվապատկերը վայրկյան առ վայրկյան կհավվեր, կտարրալուծվեր խավարչտին գիշերվան: Մարդկանց հեռուստապատերին մթագույն մի բիծ կմնար: Սակայն ինչ, արդյոք ինչ բառ ընտրեր, որը կդադեր նրանց ընդարմացած դեմքերը, կարթնացներ նրանց թմբիրից:

— Այստեղ նայեք,— կամացուկ ասաց Ֆաբերը:

Ուղղաթիռից դուրս ցատկեց կանաչին տվող լուսավոր մի բան, որը ո՛չ մեքենա էր, ո՛չ կենդանի, ո՛չ մեռյալների աշխարհից էր, ո՛չ ապրողների: Կանգ առավ Մոնթագի տան մխացող ավերակների մոտ: Մի քանի մարդիկ մոտ բերեցին Մոնթագի՝ դեպքի վայրում թողած հրացիրը. հարկավոր էր մոտեցնել գազանի երախին: Շունը, ատամները սեղմած, գռմռաց՝ միևնույն ժամանակ մետաղական ճռինչ արձակելով:

Մոնթագը ընկճված տարուբերեց գլուխն ու վեր կացավ: Խմեց բաժակի մեջ մնացած վիսկին:

— Ժամանակն է,— ասաց,— շատ եմ ցավում, որ այսպես ստացվեց:

— Ինձ համար եք ցավում: Ցավում եք, որ իմ տոնն են գալու: Ես ամեն տեսակ պատժի արժանի եմ: Վազենք, Մոնթագ, ի սեր Աստծու: Միգուցե ինձ հաջողվի նրանց ուշացնել:

— Սպասե՛ք, մեր ինչի՞ն է պետք Ձեր բացահայտվելը: Երբ գնամ, այրե՛ք անկողնու ծածկոցը, ես հավել եմ դրան: Ձեր աղբակիզարանում այրե՛ք հյուրասենյակի աթոռը: Սպիրտով մաքրե՛ք կահույքը, դռան բռնակները՝ նույնպես: Այրե՛ք նաև նախասրահի ուղեգորգը: Բոլոր սենյակներում ողջ հզորությամբ միացրե՛ք օդորակիչները և տանն ամենուր նավթալին ցանեք, եթե ունեք: Այնուհետև միացրե՛ք պարտեզի ոռոգման համակարգը և փողրակներով մի լավ լվացե՛ք մայթերը: Գուցե բախտներս բերի, և մեզ հաջողվի կորցնել հետքը:

Ֆաբերը սեղմեց նրա ձեռքը:

— Կհոգամ այդ մասին: Բարին ընդ Ձեզ: Եթե հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում երկուսս էլ ողջ-առողջ լինենք, իմանց տվեք ինձ: Ինձ կարող եք գրել Սենթ Լուիս՝ Գլխավոր փոստատուն: Ցավում եմ, որ այս անգամ չեմ կարող ուղեկցել Ձեզ ընկալուչի օգնությամբ: Երկուսիս համար էլ լավ կլիներ: Սակայն լսող սարքն այլևս չկա: Միայն մեկն ունեի, հասկանում եք, որովհետև երբեք չէի հավատում, թե երբևէ կօգտվեմ դրանից: Ծեր հիմարի մեկն եմ: Ինչպես մտքովս չի անցել: Հիմար եմ, հիմար: Այս պահին ճիշտ նախորդի պես մեկ այլ պատիճանման ընկալուչ չունեմ, որ տեղավորեք Ձեր ականջի մեջ: Ինչ արած: Հիմա գնացեք:

— Հա՛, մի բան էլ: Ինձ շտապ մի ճամպրուկ է հարկավոր: Այն պետք է լցնել չլվացված շորերով. մի հնամաշ կոստյում, օրինակ, ցանկալի է՝ լվացված չլինի, շեշտում եմ, մի վերնաշապիկ, հնամաշ մարզական կոշիկներ, գուլպաներ...

Ֆաբերը դուրս եկավ սենյակից և քիչ անց վերադարձավ: Նրանք կաշուն ժապավենով փաթաթեցին սովորաբար թե ճամպրուկը:

— Որպեսզի պարոն Ֆաբերի հոտը չցնդի,— ասաց քրտինքի մեջ կորած ծերունին:

Մոնթագը վիսկի շաղ տվեց ճամպրուկի վրա դրսից:

— Ձեմ ուզում, որ շունը միևնույն ժամանակ երկու հոտն էլ առնի: Կարո՞ղ եմ վիսկին հետս վերցնել: Ավելի ուշ սրա կարիքը կզգամ: Տեր Հիսուս, հուսամ՝ մի բան դուրս կգա այս ամենից:

Նրանք կրկին միմյանց ձեռք սեղմեցին: Դռների մեջ կրկին հայացքները դարձրին հեռուստացույցին: Շունն արդեն երկնքում ճախրող ուղղաթիռի տեսախցիկների ուղեկցությամբ ճամփա էր ընկել՝ անձայն, անաղմուկ հոտոտելով գիշերային քամին, որ ասես անսահմանությունից էր փչում: Շունն արդեն առաջին նրբանցքն էր մտնում:

— Ցտեսություն:

Մոնթագն արդեն ետնաբալկում էր, նա վազում էր թեթև ու անձայն՝ կիսադատարկ ճամպրուկը ձեռքում պահած: Նա լսեց, թե ինչպես իր թիկունքում միացավ պարտեզի ոռոգման համակարգը՝ մթին գիշերը լցնելով անձրևի աղմուկով՝ սկզբում մեղմ, ապա ավելի ուժգին ու համաչափ: Ջուրը լվանում էր մայթերը, ցած հոսում ծառուղու երկայնքով: Անձրևի մի քանի կաթիլներ, որ հասցրել էին ընկնել դեմքին, նա տարավ իր հետ: Իրեն թվաց, թե Ֆաբերն իրոք իր հետևից մնաս բարով մաղթեց:

Նա արագ հեռանում էր տնից, ասես սուրում էր դեպի գետը:

Մոնթագը վազում էր:

Նա զգում էր, թե ինչպես էր մեխանիկական շունը հետևում իրեն ինչպես աշնան պաղ ու չոր քամի, որ իր թեթևասույր ընթացքի մեջ չէր օրորում խոտերը, չէր ցնցում պատուհաններն ու չէր ալեկոծում տերևների ստվերները ճերմակ մայթերին: Շունը չէր խռովում իրեն շրջապատող աշխարհի անդորրը: Նա լռությունն ամփոփել էր իր մեջ: Մոնթագը զգում էր, թե ինչպես էր այդ լռությունը ծավալվում իր թիկունքում, իջնում ողջ քաղաքի վրա, ճնշում իրեն: Ճնշումն անընդհատ սաստկանում էր, և Մոնթագը վազում էր:

Դեպի գետը տանող ճանապարհին նա կանգ էր առնում, որ շունչն ընկնի տեղը, աղոտ լուսավորված պատուհաններից նայում էր առավոտ կանուխ արթնացած տներին. ներսում մարդկանց ուրվապատկերներ էին, ովքեր իրենց հեռուստասենյակներում հետևում էին մեխանիկական շանը: Բոլոր տների հեռուստապատերին շունն էր՝ իր նեոնային շնչառությամբ, թեթև սարդանման թաթերի քառատրոփ վարճով, այնպես, որ տեսնում էիր, իսկ հաջորդ վայրկյանին այն արդեն չկար: Էլմթերասում էր, ապա՝ Լինքոլնում, հաջորդ վայրկյանին՝ արդեն Օուքում, ապա՝ Փարքում, աչքերդ թարթեցիր, արդեն շարժվում էր Ֆաբերի տան ուղղությամբ:

— Վազիր,— ինքն իրեն հորդորում էր Մոնթագր,— կանգ չառնես, շարունակիր վազել, չչեղվես ճամփից:

Հեռուստապատերին Ֆաբերի տունն էր, տան շուրջը ցնցուղ հիշեցնող ոռոգման համակարգը ջրի շիթեր էր ցողում գիշերային օդի մեջ:

Շունը ցնցվեց. կանգ առավ:

— Ո՛չ,— Մոնթագր կառչեց պատուհանագոգին,— այս կո՛ղմն արի, այդտեղ կանգ չառնեն:

Պրոկաինե ասեղը դուրս ցցվեց, ապա հետ քաշվեց, դուրս ցցվեց, կրկին հետ քաշվեց: Շան երախում անհետանալուց վայրկյան առաջ ասեղից կախ ընկավ, ու պոկվեց բյուրեղի պես վճիտ մահաբեր թույնի կաթիլը:

Մոնթագր պահեց շունչը, ձեռքերը բռունցքվեցին կրծքավանդակի մոտ:

Մեխանիկական շունը շրջվեց ու թեթև վարգով հեռանալով Ֆաբերի տնից՝ սուզվեց նրբանցքի կիսախավարի մեջ:

Մոնթագր մի վայրկյան վեր բարձրացրեց հայացքը: Միակ լույսի աղբյուրին ձգտող մժղուկների պարսի նման ուղղաթիռները թռչում էին իր ուղղությամբ:

Մոնթագից ջանքեր պահանջվեցին իրեն համոզելու համար, որ դեպի գետն ուղղված խելահեղ վազքի ընթացքում մտացածին տեսարանի չէր ականատես լինում այժմ, այն իրականության մեջ պատահում էր իր հետ, ինքն իրականում ականատես էր լինում, թե ինչպես էր իր աչքերի առջև քայլ առ քայլ զարգանում իր իսկ շախմատային խաղը:

Նա ճիչ արձակեց, որպեսզի համակվի անհրաժեշտ սթափությամբ և հեռանա վերջին տան պատուհանից, հեռուստապատի վրա ծավալվող իրեն կանչող տեսարանից: Գրողի ծոցը թող կորչի այս ամենը: Ինքն արդեն հեռու էր: Ծառուղի, ապա՝ փողոց, ծառուղի, հետո՝ երկրորդը, և ահա ռունգերին հասավ գետի բոյրը: Ֆիլմի դանդաղեցրած դրվագների նման զգում, գիտակցում էր ոտքի կտրվելը գետնից, ապա՝ վայրէջքը, կտրվելը գետնից... վայրէջքը... Եթե տեսախցիկները

որսային իրեն, շուտով հեռուստապատերին քսան միլիոն Մոնթագներ էին վազելու, ինչպես համր ֆիլմերի դարաշրջանին պատկանող ոստիկանների և կողոպտիչների, հետապնդողների և հալածվողների, որսորդների և որսի մասին Քեյսթոնյան կատակերգություններում, որոնք ինքը մի հազար անգամ տեսել էր արդեն: Իր հետևում Մոնթագը զգում էր իրեն հալածող քսան միլիոն շների քառատրոփ վազքը լուսության մեջ, պատկերացնում էր՝ ինչպես են նրանք բիլիարդի գնդակների նման խփվում աջ հեռուստապատին, ապա՝ հետհարվածով բախվում կենտրոնական պատին, հետո, ետթռչք կատարելով, զարկվում ձախ հեռուստապատին, անհետանում, ապա՝ կրկին աջ պատին, կենտրոնական, ձախ պատին, անհետանում...

Մոնթագը խեցին ականջը մտցրեց:

— Ոստիկանությունն էլմթերաս թաղամասի ողջ բնակչությանը առաջարկում է անել հետևյալը. յուրաքանչյուր փողոցի յուրաքանչյուր տանը գտնվող ամեն ոք թող բացի շքամուտքի կամ ետնաբակի դուռը կամ դուրս նայի պատուհաններից: Փախուստի դիմած հանցագործին չի հաջողվի ճողոպրել, եթե հաջորդ վայրկյանից բոլորդ միասին դուրս նայեք ձեր տներից: Պատրաստվել:

Դե իհարկե: Ինչո՞ւ նրանք նախկինում չէին արել դա: Ինչո՞ւ բոլոր այս տարիների ընթացքում որևէ մեկը չէր առաջարկել այս խաղը: Բոլորն արթուն են, բոլորը՝ դրսում: Նրանց աչքերը չեն վրիպի: Ինքը գիշերային քաղաքում վազող միակ մարդն է, միակը, ով ելել է փորձելու իր ոտքերի ուժը:

— Մինչև տասն ենք հաշվում և սկսենք: Մեկ, երկու...

Մոնթագը զգաց, թե ինչպես ողջ քաղաքը ոտքի ելավ:

— Երեք...

Ողջ քաղաքը շրջվեց դեպի հազարավոր դռները:

Ավելի արագ, հրամայի՞ր ոտքերիդ:

— Չորս...

Բոլորն արդեն իրենց միջանցքներում են՝ լուսնահարների պես:

— Հինգ...

Ձեռքները մոտեցրին դռների բռնակներին:

Գետից խոնավության զով բույր էր փչում, ինչպես տեղատարափից հետո: Կոկորդն այրվում էր, աչքերը չորացել էին վազելուց: Նա բղավեց, ասես այդ ճիչը խթանելու էր նրան, ցատկատախտակի նման նրան հարյուր յարդ առաջ էր նետելու, այնտեղ, ուր գետն էր:

— Վեց, յոթ, ութ...

Հազարավոր դռների բռնակներ պտտվեցին:

— Ինը...

Նա վազքով անցավ տների վերջին շարքի մոտով, ապա գառիթափով ցած վազեց դեպի իր առջև ծփացող խավարը:

— Տասը:

Դռները բացվեցին:

Նա պատկերացրեց, թե ինչպես հազարավոր, հարյուրհազարավոր դեմքեր ակնդետ հայացքներով մթին բակերում, նրբանցքներում փնտրեցին ինչ—որ մեկին, թե ինչպես իրենց հայացքները հառեցին դեպի երկինք. վարագույրների հետևում թաքնված գունատ դեմքեր, էլեկտրական քարանձավներից դուրս նայող գորշավուն գազանիկների դեմքեր՝ գորշ, անկրակ աչքերով, գորշ լեզուներով ու գորշ մտքերով, որ դաջված էին նրանց անզգայացած դեմքերին:

Սակայն Մոնթագն արդեն գետափին էր:

Նա ձեռքը մտցրեց ջրի մեջ՝ համոզվելու համար, որ իրական էր: Մտավ ջուրը, խավարում մերկացավ, հետը վերցրած վիսկին շաղ տվեց մարմնին՝ թևերին, ոտքերին, գլխին, մի քիչ էլ քթածակերը լցրեց, մնացածն էլ խմեց: Ապա հազավ Ֆաբերի հին շորերն ու կոշիկները: Իր հագուստը գետը նետեց և տեսավ, թե ինչպես ջուրը քշեց տարավ այն: Ապա, ճամպուրկը ձեռքին, ջրի մեջ ծանր քայլելով, հեռացավ ափից, մինչև որ ոտքերը կտրվեցին հատակից, և հորձանքը նրան քշեց տարավ խավարի մեջ:

Հոսանքը Մոնթագին երեք հարյուր յարդ հեռու էր քշել, երբ շունը հասավ գետին: Գլխավերևում գվվում էին ուղղաթիռի պտտվող թիակները: Լոյսերի հեղեղ թափվեց գետի վրա, ասես արևն ամպերը ճեղքող իր ցնցուղի տակ էր առել ամեն բան, և Մոնթագը սուզվեց՝ խոյս տալով ջրի մակերեսին ծփացող ճառագայթներից: Զգում էր, որ գետն իրեն ավելի հեռու է տանում, հեռու՝ դեպի խավարը: Էլեկտրական լապտերներից արձակված լոյսի շիթերն ուղղվեցին դեպի ամբար: Ուղղաթիռները կրկին ուղղություն վերցրին դեպի քաղաք, ասես մեկ այլ հետքի վրա էին ընկել:

Նրանք անհետացել էին: Շունը չկար: Հիմա միայն սառը գետն էր ընկերակցում իրեն: Հանկարծակի իջած լռության մեջ նա լողում էր քաղաքից հեռու, լուսարձակներից, հալածանքներից հեռու, հեռու ամեն ինչից:

Այնպիսի զգացողություն ուներ, ասես հետևում էր թողել բեմն իր բազմաթիվ դերասաններով, ասես հեռացել էր ոգեկոչության բազմամարդ սեանսից՝ այնտեղ թողնելով մրմնջացող ուրվականների: Անիրականությունից, որն այնքան վախեցնող էր, նա շարժվում էր դեպի իրականություն, որն անիրական էր, որովհետև նոր էր:

Սևին տվող ցամաքը սահում էր նրա կողքով, և ջուրը նրան քշում էր դեպի լեռների մեջ ծվարած գյուղական վայրեր: Շատ երկար տարիների ընթացքում առաջին անգամ նա իր գլխավերևում աստղեր էր տեսնում, որ տիեզերական պտույտի մի նոր շրջափուլ էին մտել: Նա այն զգացողությունն ուներ, ասես նրանց անսահմանությունն ուր որ է գլորվելու էր իր վրա, ճզմելու էր իրեն:

Երբ ճամպրուկը լցվեց ջրով և սուզվեց, Մոնթագը սկսեց լողալ մեջքի վրա: Մեղմ ու հաճելի հոսանքը նրան տանում էր մարդկանցից հեռու, ովքեր նախաճաշին ստվերներ էին ուտում, ճաշին՝ մշուշ, ընթրիքին՝ պատրանքներ: Գետը շատ իրական էր, այն իր ապահով գիրկն էր առել նրան և ի վերջո նրան ժամանակ էր տալիս, որպեսզի խորհեր այս վերջին

ամսվա, վերջին տարվա, գուցեև իր ողջ կյանքի մասին: Նա զգում էր, թե ինչպես են հանդարտվում սրտի զարկերը, խաղաղվում մտքերը:

Լուսինը շատ ցածր էր կախվել երկնքում: Որտեղից լուսինին լույս: Արևից, իհարկե: Իսկ ո՞րն է արևի լույսի աղբյուրը: Իր սեփական կրակը: Եվ արևը շարունակում է լինել օրեցօր, ժամ առ ժամ այրվելով: Արևն ու ժամանակը: Արևը, ժամանակը և կրակը: Գետը նրան մեղմօրոր առաջ էր տանում... Եվ կրակը... Արևը և յուրաքանչյուր ժամացույց՝ Երկիր մոլորակի վրա: Այս ամենը նրա գիտակցության մեջ ձուլվեց, դարձավ մեկ մարմին: Նա շատ երկար էր հոսանքով շարժվել ցամաքի վրա, և անհամեմատ շատ ավելի քիչ ժամանակ էր, ինչ լողում էր գետի հոսանքին համընթաց, և միայն այժմ կարողացավ հասկանալ, թե ինչու էլ երբեք իրավունք չունի այրելու Երկրի վրա:

Արևն այրում էր ամեն օր: Այն այրում էր ժամանակը: Աշխարհն արարվում էր իր հավերժական շրջապտույտի մեջ, իսկ ժամանակը զբաղված էր տարիները այրելով, մարդկանց տարիները, ուրեմն և հենց իրենց՝ մարդկանց: Առանց մարդ ստեղծածի օգնության էլ այդպես էր: Ի՞նչ էր ստացվում, ուրեմն: Եթե իրենք՝ հրկիզողները, այրեին մարդկանց արարածը, իսկ Արևն այրեր ժամանակը, նշանակում է՝ ամեն բան կայրվեր:

Նրանցից մեկը ստիպված էր դադարեցնել այրելը: Ոչ արևը, իհարկե: Մնում էր միայն, որ Մոնթազը և մյուս հրկիզողները, որոնց հետ նա աշխատում էր ընդամենը ժամեր առաջ, հրաժարվեին այրելուց: Ինչ-որ տեղ անհապաղ պետք էր սկսել մարդկանց ստեղծած արժեքները փրկելու և պահպանելու գործընթացը, ինչ-որ մեկը այս կամ այն կերպ պետք է սկսեր այդ արժեքները պահ տալ գրքերին, ձայնագրություններին, մարդկանց ուղեղներին, կարևոր չէ՝ ինչպես, միայն թե պահպանել ցեցից ու ժանգից, քայքայումից և լուցկիներով մարդկանցից: Աշխարհը լի է ամեն տեսակի ու

ծավալների հրդեհներով: Եվ շուտով ջուլիակների համքարությունը ստիպված կլինի կտավաքարից կարված հրակայուն հագուստի արհեստանոցներ բացել:

Մոնթագի կոշիկները դիպան գետի հատակին, ներբանները քերծվեցին մանրախճի, գետաքարերի և ավազի հետ շփումից: Գետը նրան գրեթե ափ էր հանել:

Նա նայեց շուրջը. հսկայական խավարը ծավալվում էր դեպի հեռուն՝ որպես անաչք, անլույս, անկաղապար ամայություն, որ սուկ տարածություն էր, հազարավոր մղոններով ձգվող տարածություն, որը չէր ուզում ավարտվել: Խոտածածկ բլուրներն ու անտառները նրան սպասում էին հեռվում:

Վարանեց լքել ջրի ամոքիչ հոսանքը: Այն զգացողությունն ուներ, ասես հիմա ուր որ է հանդիպելու է մեխանիկական շանը: Ասես ուր որ է ծառերի սաղարթները տարուբերվելու են ուղղաթիռների առաջացրած հսկայական քամուց:

Սակայն գլխավերևում լոկ սովորական աշնանային քամին էր, որ ասես հոսում էր գետին զուգահեռ՝ միայն թե ավելի վերում: Ինչո՞ւ մեխանիկական շունը չկար: Ինչո՞ւ երկրի սիրտը խորանալուն զուգահեռ հետապնդումն ընդհատվեց: Մոնթագն ականջ դրեց: Ոչինչ: Ոչ մի ձայն:

«Մի՛լի,— մտածեց նա:— Հեռացել եմ քաղաքից, լսում ես»: Ոչինչ: Ոչ մի ձայն: Համակ լռություն է: «Մի՛լի, տեսնես քեզ դուր կգամ: Գուցե ճչայիր՝ լռի՛ր, լռի՛ր: Ա՛խ, Մի՛լի, Մի՛լի»: Մոնթագը տխուր էր:

Միլին այստեղ չէր: Մեխանիկական շունն այստեղ չէր: Միայն հեռավոր դաշտերից քամու բերած չոր խոտի բույրն էր, որ Մոնթագին բնակելի տարածքների զգացողություն էր ներշնչում: Հիշեց, թե ինչպես մի անգամ, երբ դեռ շատ երիտասարդ էր, եղել էր ագարակում, մեկն այն եզակի դեպքերից, երբ բացահայտել էր, որ անիրականության յոթ սարից այն կողմ՝ հեռուստասենյակի պատերից անդին՝ քաղաքի անագե պարիսպներից շատ հեռու, կովերը խոտ էին արա-

ծում, խոզերը կեսօրվա տապին հանգիստ էին առնում տաք ջրափոսերի մեջ, իսկ շները բլուրների լանջերին հաչում էին ու վազում սպիտակ ոչխարների հետևից:

Այժմ չոր խոտի բույրը և ջրերի շարժը աղմկոտ մայրուղիներից հեռու՝ ինչ-որ անխռով ագարակի ամայի ամբարում, թարմ խոտի դեզերի մեջ, հնամենի հողմադացի շարունակական աղմուկի ներքո, քնելու ցանկություն առաջացրին, աղմուկ, որ նրա գլխավերևում պտտվող անցնող տարիների անընդմեջ շարունակականությունն էր գուցե, իր սեփական կյանքի անցնող տարիների հոսքը: Ողջ գիշեր կպառներ այնտեղ՝ ձեռնահարկի մարագում՝ ականջ դնելով կենդանիների, միջատների ու ծառերի հեռավոր ձայներին, ամենանուրբ շարժումներին ու ելևէջներին: Գիշերը մարագի երդիկից այն կողմ գուցե քայլերի ձայներ լսեր: Կլարեր լսողությունն ու վեր կկենար պառկած տեղից: Ունաձայները կհեռանային: Հետ կընկներ խոտերի մեջ և այդ ուշ ժամին դուրս կնայեր մարագի պատուհանից, կնայեր այնքան ժամանակ, մինչև մեկ առ մեկ կմարեին ագարակի լույսերը: Բավականին երկար ժամանակ նայելիս կլիներ, երբ կնկատեր գեղեցիկ դեռատի մի կնոջ ինչ-որ անլույս սենյակի պատուհանի մոտ. նա իր վարսերը հյուսելիս կլիներ: Դժվար կլիներ տեսնել նրան, սակայն նրա դեմքը նման կլիներ այն աղջկա դեմքին, ով այժմ մնացել էր իր անցյալում, ով այնքան վաղուց էր եղել իր կյանքում, աղջիկը, ով ճանաչում էր եղանակը, ում երբեք չէին այրել կայծոռիկներ հիշեցնող կրակի ծվենները, աղջիկը, ով գիտեր, թե ինչ է նշանակում, երբ խատուտիկներն իրենց փոշին թողնում են կզակիդ: Հետո աղջիկն էլ չէր լինի տաք պատուհանի մոտ և քիչ անց կերևար վերնահարկի իր լուսնաճերմակ սենյակում: Իսկ հետո, մահաշունչ ռմբակոծիչների սուլոցը թրատելով, երկու սև կտորների կբաժաներ երկինքը հորիզոնից այն կողմ, մինչ նա մարագի իր թաքստոցում ապահով պառկած հետևելիս կլիներ երկիր մոլորակի պոնկին հայտնված այդ

արտասովոր նոր աստղերին, որ լուսադեմի մեղմ գույնից պոկված ծվեններ կհիշեցնենին:

Առավոտյան քունը չէր տանի, որովհետև գյուղական կատարյալ գիշերվա բոլոր տաք բույրերն ու պատկերները հանգստություն բերած կլինեին նրա խոնջացած մարմնին. այդժամ աչքերը բաց կլինեին, իսկ շուրթերին, ի զարմանս իրեն, անակնկալ ժպիտ հայտնված կլիներ:

Ներքևում մարագի աստիճաններին, անհավատալի մի բան սպասելիս կլիներ իրեն: Վաղորդայնի վարդագույնի մեջ նա զգուշությամբ վար կիջներ, լիաթոք, գրեթե վախենալու չափ զգալով իր շուրջը ծավալվող աշխարհը՝ կկանգներ փոքրիկ հրաշքի մոտ և ի վերջո կխոնարհվեր՝ դիպչելու դրան:

Մի բաժակ լիքը թարմ, սառը կաթ կլիներ, մի քանի խնձոր ու տանձ այնտեղ, որտեղ աստիճանները կավարտվեին:

Սա այն ամենն էր, ինչ նա ուզում էր հիմա: Ինչ-որ նշան, որ հսկայածավալ աշխարհը պատրաստ էր ընդունելու իրեն և տալու այն երկար ժամանակը, որն անհրաժեշտ էր իրեն, որպեսզի կարողանար մտածել բոլոր այն հարցերի շուրջ, որոնք փոթորկում էին հոգին:

Մի բաժակ կաթ, մի խնձոր ու մի տանձ:

Նա ոտքը դրեց հողին:

Ցամաքը մակընթացության ալիքի նման հորդեց դեպի նա: Խավարը ջախջախեց նրան. երկար ձգվող գյուղական վայրերի տեսքից, քամու բերած միլիոնավոր բույրերից սարսափելի դող զգաց: Հետ ընկավ մթության բեկված ստվերների մեջ, իսկ շուրջն ամենուր ձայներ էին ու բույրեր, ականջներում անասելի աղմուկ էր: Շուրջն ամեն բան ասես հողմապտույտի մեջ լիներ: Աստղերը թափվում էին շուրջը ինչպես բոցավառ ասուպներ: Նա վերստին ցանկացավ սուզվել գետի ջրերի մեջ, որպեսզի հոսանքն իրեն գետն ի վար աննպատակ ու ապահով տաներ, ինչ-որ տեղ հասցներ: Մթին ցամաքի այս տեղատարափն իրեն մանկության մի դրվագ հիշեցրեց. ինքը լողում էր, երբ չգիտես որտեղից հայտնված

իր հիշողության պատմության մեջ երբևէ եղած ամենամեծ ալիքը նրան ներքև տապալեց՝ դեպի աղահամ տիղմը և կանաչ մթնոլորտը, երբ ջուրն այրում էր ռունգերն ու բերանը, տակնուվրա անում ստամոքսը: Նա ճշում էր՝ չափազանց շատ ջուր... չափազանց շատ ցամաք:

Իր առջև ձգվող սև պատից այն կողմ՝ շշնջյուն: Ինչ-որ արարածի ուրվապատկերը, որի մեջ տարորոշվեցին մի զույգ աչքեր: Այդ աչքերից գիշերն էր նայում իրեն: Անտառը որսացել էր նրան:

Մեխանիկական շունը:

Այս երկար փախուստից, խելահեղ վագրից, քրտնելուց ու տքնելուց հետո, երբ քիչ էր մնում՝ խեղդվեր, հիմա, երբ այսքան հեռվում էր, երբ իրեն արդեն ապահով էր զգում, երբ հասցրել էր վաստակած խաղաղությամբ հոգոց քաշել և ի վերջո ոտք դնել ցամաքին... Ինչ է տեսնում... մեխանիկական շանը:

Լարելով վերջին ուժերը՝ Մոնթագը մի վերջին ճիչ արձակեց, ասես ուզում էր գոռալ, որ սա չափազանց շատ է մի մարդու փորձություն կոչվելու համար:

Ուրվապատկերը մեկեն անհետացավ: Աչքերը չքացան: Տերևների կոյտերը չոր շրջյունով օդ բարձրացան:

Մոնթագը մենակ էր վայրի բնության հետ:

Եղջերու էր: Մոնթագը արյանը միախառնված մշկայուղի հոտ առավ և կենդանու խեժահոտ արտաշունչը. հիլ, մամուռ ու մարգարտածաղիկ բուրող հսկայական գիշեր էր, որտեղ ծառերն իր վրա էին գահավիժում, ապա վերստին հետ էին քաշվում, գահավիժում էին իր վրա ու հետո կրկին հետ քաշվում այնտեղ, ուր իր աչքերի հետևում տրոփող սեփական սիրտն էր:

Գետնին պետք է որ միլիարդավոր տերևներ լինեին: Նա առաջ էր վազում դրանց միջով. տաք մեխակներ ու փոշի բուրող չոր գետ: Եվ էլի բույրեր. հողից, որ սառն էր ու անմշակ ու գիշերվա լուսնի ճերմակն ուներ իր մեջ ամբարած, կտրած կարտոֆիլի բույր էր տարածվում: Շշի մեջ թթու դրած

վարունգի և տան սեղանին դրված մաղադանոսի բույր կար ռունգերի մեջ, ու նաև թույլ դեղնավուն մի հոտ, որ ասես ապակյա տարայի մեջ պահված մանանեխինը լիներ: Հիշողությունը շոշափեց, գտավ իր հարևանությամբ գտնվող բակի մեխակների բույրը: Ձեռքով դիպավ գետնին, մթի մեջ խարխափեց, զգաց մոլախոտերը. ասես ինչ-որ երեխա խուտուտ տար ձեռքը: Մատներից մատուտակի հոտ առավ:

Կանգ առավ, որպեսզի կարողանա լիաթոք շնչել: Եվ որքան ավելի էր ներշնչում ցամաքի բույրերը, այնքան ավելի էր ներսը լցվում ցամաքի մանրամասներով: Նա դատարկ չէր: Այստեղ ամեն բան լցվում էր իր մեջ: Այստեղ բույրերի պակաս չկար և երբեք էլ չէր լինի:

Նա սայթաքելով քայլում էր տերևների ոչ մեծ կույտերի միջով:

Եվ այն պահին, երբ ամեն բան օտար էր թվում իրեն, հանկարծ ինչ-որ հարազատություն զգաց:

Ուտքն ինչ-որ բանի դիպավ, որը խուլ զրնգաց:

Ձեռքով շոշափեց գետինը. կարճ գերաններ, ապա մեկ զույգ ռելսեր էին:

Երկաթուղին էր:

Երկաթգծերը, որ դուրս էին գալիս քաղաքից և գետի երկայնքով երկրի ներսը խորանալուն զուգահեռ ժանգոտվում անտառների ու մացառուտների մեջ, վաղուց էին այդպես լքված մնացել:

Երկաթուղին այժմ այն արահետն էր, որ նրան պետք է առաջնորդեր դեպի իր գնալու վայրը: Վերջապես նա գտել էր միակ ծանոթ բանը, որի մոզական հմայքը նրան դեռ մի փոքր էլ անհրաժեշտ կլիներ, դեռ մի փոքր էլ կշոշափեր այն, կապրեր դրանք իր ուտքերի տակ զգալու բերկրանքը, մինչ քայլելիս կլիներ մորենիների թփուտներում՝ բույրերի, զգացողությունների և տպավորությունների ծովի մեջ, մացառուտի շշուկների, տերևների սուսափյունի ուղեկցությամբ:

Քայլում էր ռելսուղով:

Հանկարծ զարմացավ, երբ զգաց, որ վստահորեն կարող է արձանագրել մի փաստ, որը չի կարող հաստատել:

Մի ժամանակ՝ շատ վաղուց՝ անցյալում, Քլարիսը քայլել է նույն այս ճանապարհով, որն ինքն է այժմ անցնում:

Կես ժամ անց մրսած, ռելսերի հարևանությամբ զգուշորեն քայլելիս, երբ լիովին զգում էր իր ողջ մարմինը, դեմքը, շուրթերը, խավարով լցված աչքերը, ականջները՝ հեղեղված ձայների նրբերանգներով, ոտքերը՝ քերծվածքներով պատված ու եղինջներով դաղված, նա իր առջև խարույկ տեսավ:

Խարույկն անհետանում, ապա կրկին հայտնվում էր, այնպես, ինչպես աչքերն են թարթում: Կանգ առավ՝ սարսափած այն մտքից, որ իր մի թույլ շունչը կարող է հանգցնել կրակը: Սակայն կրակն այնտեղ էր, և նա երկար ճանապարհ կտրել-անցնելուց հետո այժմ զգուշավորությամբ մոտենում էր դրան: Ամբողջ տասնհինգ րոպե պահանջվեց նրանից կրակին բավականաչափ մոտենալու համար, և հիմա իր թաքստոցում կանգնած՝ նայում էր: Ճերմակ ու կարմիր գույների այդ մի փոքրիկ շարժումը անսովոր կրակ էր, որովհետև այլ բան էր նշանակում իր համար այժմ:

Այս կրակը չէր այրում, այն տաքացնում էր:

Նա դեպի կրակի ջերմությունը պարզված բազմաթիվ ձեռքեր տեսավ, անդամատված ձեռքեր՝ մութի մեջ թաքնված: Ձեռքերից վեր՝ անշարժ դեմքեր, որոնց միայն դրանց վրա նետված կրակի լույսն էր կենդանություն տալիս: Նա մինչ այս չէր իմացել, որ կրակը այսպիսի դրսևորում կարող է ունենալ: Նա իր կյանքում երբևէ չէր մտածել, որ կրակը կարող է նաև տալ՝ վերցնելուց բացի: Նույնիսկ բույրն էր այժմ ուրիշ:

Չգիտեր՝ որքան ժամանակ էր այդպես կանգնած մնացել, սակայն մի հիմար և միևնույն ժամանակ հաճելի զգացողություն ուներ, այն կենդանու նման, որ անտառից եկել հասել է այստեղ կրակի կանչով: Ասես փափկամազ կենդանի լինել՝ ջրակալած աչքերով, մորթածածկ, դունչ ու սմբակներ-

րով, եղջյուրներ ուներ ասես, իսկ արյունը, եթե հեղեին հողին, աշուն կբուրեր: Նա կանգնել էր երկար, շատ երկար ժամանակ և ականջ էր դնում բոցերի տաք ճարճատյունին:

Խարույկի շուրջբոլորը թանձրացել էր լռությունը. լռությունը տղամարդկանց դեմքերին էր, և ժամանակն ասես կանգ էր առել: Բավականին շատ ժամանակ կար այս ժանգոտած երկաթգծերի մոտ՝ ծառերի տակ նստելու և աշխարհին նայելու համար, աչքերով այդ աշխարհը գլխիվայր շրջելու համար, այնպես, ասես այն ծավալվում էր խարույկի կենտրոնում՝ որպես պողպատի մի կտոր, որ կռում էին այս բոլոր տղամարդիկ: Այստեղ ոչ միայն կրակն էր ուրիշ, այլ նաև լռությունը: Մոնթազը քայլեց դեպի այդ յուրօրինակ լռությունը, որի մեջ ամփոփված էր ողջ աշխարհի մասին մտահոգությունը:

Քիչ անց ձայներ լսվեցին. նրանք խոսում էին, իսկ Մոնթազը ոչինչ չէր կարողանում տարրորոշել. լոկ հնչյուններ էին, որ ուժգնանում, ապա կրկին նվաղում էին, հնչյուններ, որ շուտ էին տալիս աշխարհը, ապա՝ նայում դրան: Ձայներին ծանոթ էին ցամաքը, ծառերը և քաղաքը, որոնք ընկած էին երկաթգծերից այն կողմ՝ գետի մյուս ափին: Ձայները խոսում էին ամեն ինչի մասին. ոչինչ չկար, որի մասին նրանք չէին կարող խոսել, նա դա զգում էր ձայների ռիթմից և հնչերանգից և դրանցում եղած հետաքրքրասիրության շարունակական ելևէջներից և զարմանքից:

Շուտով տղամարդկանցից մեկը բարձրացրեց հայացքն ու տեսավ նրան առաջին կամ հավանաբար յոթերորդ անգամ, և մի ձայն դիմեց նրան հեռվից.

— Ամեն բան կարգին է, կարող եք դուրս գալ Ձեր թաքստոցից հիմա:

Մոնթազը հետ-հետ գնաց դեպի ստվերները:

— Ամեն բան կարգին է, — ասաց ձայնը, — բարով եք եկել:

Մոնթազը դանդաղ քայլեց դեպի կրակը և դեպի այնտեղ նստած հինգ ծեր տղամարդիկ՝ մուգ կապույտ ջինսեր,

շապիկներ և մուգ կապույտ կոստյումներ հագած: Նա չգիտեր ինչ ասել նրանց:

— Նստե՛ք,— ասաց տղամարդը, ով, թվում էր, փոքր խմբի առաջնորդն էր,— սուրճ խմեք:

Նա տեսավ, թե ինչպես մուգ, գուրջի արծակող խառնուրդը լցվեց թիթեղյա ծավվող բաժակի մեջ, որն անմիջապես տվեցին նրան: Զգուշորեն փոքր կում արեց և զգաց, թե ինչպես էին նրանք հետաքրքրասիրությամբ իրեն նայում: Շուրթերն այրվում էին, սակայն դա հաճելի էր: Նրան շրջապատող դեմքերը մորուքավոր էին, սակայն մորուքները կոկիկ ու խնամված էին, նրանց ձեռքերը մաքուր էին: Նրանք կանգնել էին ի նշան այն բանի, որ հյուրի էին դիմավորում, և միայն այժմ նստեցին: Մոնթագը փոքր կում արեց:

— Շնորհակալ եմ,— ասաց նա,— անչափ շնորհակալ եմ:

— Բարով եք եկել, Մոնթագ: Իմ անունը Գրեյնջեր է:

Գրեյնջերը Մոնթագին մեկնեց անգույն հեղուկով լի մի փոքր շիշ:

— Սա՛ էլ խմեք: Այն կփոխի Ձեր քրտինքի քիմիական ցուցիչը: Կես ժամ անց Ձեր մարմինը երկու այլ մարդկանց բույր կարծակի: Հիմա, երբ մեխանիկական շունն ընկած է Ձեր հետևից, խելամիտ կլինի մինչև հատակը դատարկել այն:

Մոնթագը խմեց դառնահամ հեղուկը:

— Ձեզնից կատվի գարշահոտ կփչի, բայց հոգ չէ,— ասաց Գրեյնջերը:

— Դուք գիտեք իմ անունը,— ասաց Մոնթագը:

Գրեյնջերը գլխով նշան արեց դեպի մարտկոցներով աշխատող շարժական հեռուստացույցը, որը դրված էր խարույկի մոտ:

— Մենք դիտում էինք, թե ինչպես էին հետապնդում Ձեզ: Գլխի էինք ընկել, որ գետի երկայնքով հարավ կիջնեք: Երբ հայտարարեցին, որ Դուք հարբած հյուսիսային եղջերուի նման թափառում եք անտառում, չթաքնվեցինք, ինչպես սովորաբար անում ենք: Երբ ուղղաթիռների տեսախցիկները փոխեցին

իրենց ուղղությունը դեպի քաղաք, գլխի ընկանք, որ գետն եք մտել: Զավեշտալին գիտե՞ք՝ որն է: Հետապնդումները դեռ շարունակվում են, թեև ճիշտ հակառակ ուղղությամբ:

— Հակառակ ուղղությամբ:

— Եկե՞ք նայենք:

Գրեյնջերը միացրեց շարժական հեռուստացույցը: Այն, ինչ էկրանին էր կատարվում, իսկական մղձավանջ էր: Այս փոքրիկ արկղի մեջ, որ այժմ կարող էր հեշտությամբ ձեռքից ձեռք անցնել, անտառի անդորրը խաթարող ձայներ ու գույներ էին: Մի ձայն բղավում էր.

— Հետապնդումը շարունակվում է քաղաքի հյուսիսային հատվածում: Ոստիկանության ուղղաթիռները հանդիպել են 87-րդ պողոտայի և Էլմ Գրով Փարքի խաչմերուկում:

Գրեյնջերը գլխով նշան արեց դեպի էկրանը:

— Կեղծում են փաստերը: Դուք նրանցից փախաք գետի մոտ: Նրանք չեն կարող ընդունել այդ փաստը: Միայն այդ դեպքում նրանք կկարողանան պահել իրենց հանդիսատեսի ուշադրությունն իրենց վրա: Շոուն պետք է անսպասելի ավարտ ունենա, հանկարծակի: Եթե նրանք սկսեին որոնումները շարունակել այդ հսկա անիծյալ գետում, ստիպված կլինեին ողջ գիշերը ծախսել դրա վրա: Ուստի հոտոտում են, որ քավության նոխազ գտնեն, և այս ամենն ավարտին հասցնեն կտրուկ լուծումով: Հետևե՞ք: Հաջորդ հինգ թուփերի ընթացքում նրանք կբռնեն Մոնթագին:

— Բայց ինչպես...

— Հետևե՞ք:

Ուղղաթիռի ստամոքսում հանգրվանած տեսախցիկն այժմ ճոճվելով կախվեց մի դատարկ փողոցի վրա:

— Տեսնում եք,— շնչաց Գրեյնջերը,— դա կլինե՞ք Դուք. այնտեղ՝ փողոցի վերևի հատվածում, երևում է մեր զոհը: Տեսե՞ք, թե ինչպես է տեսախցիկը մոտենում թիրախին: Նախ ամրակայում է տարածքի համայնապատկերը: Անորոշություն: Երկարատև անդրադարձ համայնապատկերին: Հենց

այս պահին մի խեղճ մարդ զքոսնում է դրսում: Հազվադեպ հանդիպող բան: Գրեթե արտասովոր: Չկարծեք, թե ոստիկանությանը հայտնի չեն այսօրինակ արտասովոր քաղաքաբնակների սովորույթները. մարդիկ, ովքեր առավտներն աննպատակ քայլելու սովորություն ունեն կամ անքնությամբ են տառապում: Ինչևէ, ոստիկանությունը այս մարդուն ամիսներ, տարիներ շարունակ հաշվառման մեջ է պահել: Չգիտես՝ երբ այդպիսի տեղեկությունը պետք կգա: Եվ այսօր, պարզվում է, դրա կարիքն իրոք շատ է զգացվում: Այն իրենց պարզերես անելու միջոց է: Ա՛հ, Աստված իմ, հապա նայե՛ք:

Կրակի շուրջը խմբված տղամարդիկ հակվեցին առաջ:

Էկրանին մի տղամարդ թեքվեց փողոցի անկյունում: Մեխանիկական շունը մեկեն նետվեց... ասես հեռուստադիտողի վրա: Ուղղաթիռը շողարձակ երևութական սյունների տարափ թափեց մարդու վրա, որոնք ասես վանդակեցին նրան:

Մի ձայն ճչալով ազդարարեց. «Ահա՛ Մոնթագր: Հետապնդումներն ավարտված են»:

Անմեղ մարդը շփոթված կանգնել էր, մատների արանքում այրվում էր ծխախոտը: Ակնապիշ նայում էր մեխանիկական շանը՝ չիմանալով՝ ինչ է: Երբեք էլ, հավանաբար, չէր իմացել: Հայացքը վեր բարձրացրեց դեպի երկինք՝ դեպի ոռնացող ազդանշանները: Տեսախցիկները սուրացին ներքև: Մեխանիկական շունը ծառս եղավ օդում կշռույթի և ժամանակի փոքրիկ մասնիկի այնպիսի զգացողությամբ, որ անհավատալիորեն գեղեցիկ թվաց: Միլիոնավոր հեռուստադիտողներին մանրամասները գնահատելու ժամանակ տալու միտումով ասեղը դուրս ցցվեց, մի պահ անշարժացավ նրանց հայացքի մեջ, և նրանք տեսան զոհի հարցական դեմքը, դատարկ փողոցը, մետաղյա կենդանուն, որ ասես թիրախը հոտոտող վաղուց արձակած փամփուշտ լիներ:

— Չշարժվե՛ք, Մոնթագ, — բղավեց ինչ—որ ձայն երկնքից:

Տեսախցիկն անշարժացավ զոհի վրա: Նույնիսկ մեխանիկական շունը, թվաց՝ հապաղեց: Երկուսն էլ միաժամանակ

հասան նրան: Հսկա հողվածոտանու ճանկեր հիշեցնող վերջույթներով շունը տեղում գամեց զոհին. տեսախցիկն ամրակայեց պահը: Մարդը ճչում էր: Նա ճչում էր: Ճչում էր:

Կադրի լուսաքողարկում:

Լռություն:

Մթություն:

Մոնթազը ճչաց լռության մեջ և շրջեց հայացքը:

Լռություն:

Իսկ հետո, երբ կրակի շուրջ նստած մարդկանց դեմքերին անկարելի էր որևէ արտահայտություն որսալ, լուսաքողարկված կադրից այն կողմ հաղորդավարը հայտարարեց. «Հետապնդումն ավարտված է, Մոնթազը մեռած է, հասարակության դեմ գործած հանցանքը՝ պատժված»:

Մթություն:

«Այժմ առաջարկում ենք ձեզ տեղափոխվել մեզ հետ Հոթել յուքսի վերնահարկ, որտեղ դուք կարող եք կես ժամ միանալ մեզ՝ «Լուսաբացից քիչ առաջ» հաղորդման շրջանակներում...»:

Գրեյնջերն անջատեց հեռուստացույցը:

— Տեսախցիկը չամրակայեց մարդու դեմքը: Նկատեցիք: Նույնիսկ Ձեր մտերիմ ընկերները չէին կասկածի, որ Դուք եք: Տեսախցիկը հպանցիկ մոտեցրին միայն այնքան, որ բորբոքեին մարդկանց երևակայությունը: Գրո՛ղը տանի,— շշնջաց նա,— գրո՛ղը տանի:

Մոնթազը ոչինչ չասաց: Այժմ, կրկին դեպի հեռուստացույցը շրջված, նստել էր, աչքերը հառած դատարկ էկրանին՝ դողում էր:

Գրեյնջերը ձեռքը դրեց Մոնթազի ուսին:

— Բարի՛ վերադարձ մեռյալների աշխարհից:

Մոնթազը գլխով արեց:

Գրեյնջերը շարունակեց.

— Ձեզ մնում է միայն ծանոթանալ մեզ հետ: Սա Ֆրեդ Քլեմենթն է՝ նախկին պաշտոնակատար Քեմբրիջի համալսա-

րանի Թոմաս Հարդիի ամբիոնի նախքան այն կվերածվեր
ատոմային ճարտարագիտության ինստիտուտի: Մյուսը դոկ-
տոր Սիմոնսն է Յու Սի էլ էյ համալսարանից, գասեթագետ է,
պրոֆեսոր Ուեսթը Քոլումբիայի համալսարանում բավակա-
նին մեծ աշխատանք է կատարել բարոյագիտության ոլոր-
տում՝ հնացած ասպարեզ մեր օրերում: Վերապատվելի
Փադովերը, ահա նա, երեսուն տարի առաջ մի քանի դասա-
խոսություններ է կարդացել ու մեկ շաբաթվա մեջ կորցրել իր
հոտը իր հայացքների պատճառով: Բավականին երկար
ժամանակ է, ինչ մեզ հետ է: Եվ վերջապես ես: Ես մի գիրք եմ
գրել՝ «Մատները ձեռնոցների մեջ. հասարակության և ան-
հատի հարաբերության ճշգրիտ սահմանումը», և ահա այս-
տեղ եմ: Բարի գալուստ, Մոնթագ:

— Ես ձեր խմբին չեմ պատկանում: Ես մինչ այժմ տխմար
եմ եղել:

— Մենք սովոր ենք դրան: Մենք բոլորս էլ սխալվել ենք,
երբ ճշմարտությունն ենք փորձել բարձրաձայնել, այլապես
այստեղ չէինք լինի: Երբ մենք առանձին մարդիկ էինք, մեր
ունեցածը զայրույթն էր: Ես մի հրկիզողի եմ խփել, երբ նա
տարիներ առաջ եկել էր իմ գրադարանն այրելու: Այդ ժամա-
նակից ի վեր փախչում եմ: Ուզում եք միանալ մեզ, Մոնթագ:

— Այո՛:

— Ինչ ունեք մեզ առաջարկելու:

— Ոչինչ: Կարծում էի՝ ժողովողի գիրքն ունեմ և մի հատ-
ված էլ Հայտնությունից, սակայն հիմա այդ էլ չունեմ:

— Հրաշալի կլիներ ունենալ ժողովողի գիրքը: Որտեղ էր:

— Այստեղ, — Մոնթագը ցույց տվեց իր գլուխը:

— Ա՛խ, հա՛, — Գրեյնջերը ժպտաց և գլխով արեց:

— Ինչ է: Լավ չէ՞, — հարցրեց Մոնթագը:

— Ավելի քան լավ է, կատարյալ է: — Գրեյնջերը շրջվեց
դեպի վերապատվելին: — Մենք ժողովողի գիրքն ունենք:

— Մեկը կա: Հարիսը Յանգսթաունից:

— Մոնթազ,— Գրեյնջերն ամուր գրկեց Մոնթազի ուսը:— Զգո՛յշ քայլեք: Հետևե՛ք Ձեր առողջությանը: Եթե Հարիսին մի բան պատահի, Դուք ժողովողի գիրքն եք: Տեսե՛ք, թե վերջին պահին որքան կարևոր դարձաք մեզ համար:

— Բայց ախր մոռացել եմ:

— Ո՛չ: Ոչինչ իսպառ մոռացված չէ: Մենք միջոցներ ունենք քո մեջ եղած կրակն անթեղելու:

— Ես ախր փորձել եմ հիշել: Չի ստացվում:

— Մի՛ փորձեք: Կստացվի, երբ մենք դրա կարիքն ունենանք: Մենք բոլորս լուսանկարչական հիշողություն ունենք, սակայն մի ամբողջ կյանք պահանջվեց կոդազերծելու համար այն, ինչ իրականում կա մեր հիշողության մեջ: Սիմոնսը քսան տարի տրամադրեց դրան, և այժմ մենք ունենք այն մեթոդը, որով կարող ենք մեր հիշողությունից վերծանել այն, ինչ արդեն մեկ անգամ կարդացել ենք: Կուզե՞ք մի օր Պլատոնի «Պետությունը» կարդալ, Մոնթազ:

— Իհարկե:

— Պլատոնի «Պետությունը» ես եմ: Կուզե՞ք Մարկոս Աուրելիոսին կարդալ: Մարկոսը պարոն Սիմոնսն է:

— Բարև՛ Ձեզ,— ասաց պարոն Սիմոնսը:

— Ողջո՛յն,— պատասխանեց Մոնթազը:

Ուզում եմ Ձեզ ծանոթացնել Ջոնըթըն Սվիֆթի չարագույժ քաղաքական գրքի՝ «Գուլիվերի ճանապարհորդությունների» հեղինակի հետ: Իսկ այս երիտասարդը Չարլզ Դարվինն է, այս մեկը Շոպենհաուերն է, սա Այնշտայնն է, այս մյուսը՝ իմ հետևում, պարոն Ալբերտ Շվայցերն է՝ իրականում շատ բարի մի փիլիսոփա: Խնդրեմ, ծանոթացե՛ք նաև մյուսների հետ՝ Արիստոֆանես, Մահաթմա Գանդի, Գաութամա Բուդդա, Կոնֆուցիոս, Թոմաս Լավ Փիքոք, Թոմաս Ջեֆերսոն, պարոն Լինքոլն. ահա նրանք բոլորը: Մեր մեջ են նաև Մաթևոսը, Մարկոսը, Ղուկասը և Հովհաննեսը:

Բոլորը կամացուկ ծիծաղում էին:

— Անհնար է,— ասաց Մոնթազը:

— Հնարավոր է,— ժպտալով պատասխանեց Գրեյնջերը:— Մենք ինչ—որ իմաստով նաև հրկիզողներ ենք: Կարողում ենք գրքերը, այնուհետև այրում՝ վախենալով, որ դրանք կգտնեն: Միկրո տեսահուլովակները արդյունավետ չեղան: Մենք չէինք ուզում թաղել ֆիլմերը, այնուհետև գալ դրանց հետևից: Այդ կերպ միշտ բացահայտվելու վտանգ կար: Որոշեցինք, որ ավելի լավ է գրքերը պահենք մեր հին գլուխներում, որտեղ ոչ ոք չի կարող տեսնել դրանք կամ կասկածներ ունենալ: Մենք բոլորս պատմության, գրականության, միջազգային իրավունքի, Բայրոնի, Թոմ Փեյնի, Մաքիավելլիի կամ Քրիստոսի կրողներն ենք: Ամեն բան այստեղ է: Եվ մոտ է ժամը: Պատերազմն արդեն սկսված է: Ահա մենք այստեղ ենք, իսկ քաղաքը՝ այնտեղ՝ փաթաթված հազար ու մի գույների իր վերարկուի մեջ: Ինչ եք կարծում, Մոնթապ:

— Կարծում եմ՝ կույր էի, երբ փորձում էի իմ մոգոնած ճանապարհով լուծել խնդիրները՝ գրքեր թաքցնել հրկիզողների տներում և կեղծ ահազանգեր անել:

— Դուք արել եք այն, ինչ պետք է անել: Եթե Ձեր մտահոլացումը հնարավոր լիներ իրականացնել ողջ երկրի տարածքում, հրաշալի լուծում կլիներ: Սակայն մեր եղանակն ավելի պարզ է, և կարծում ենք՝ ավելի լավը: Այն ամենը, ինչ մենք ուզում ենք անել, անվնաս ու ապահով ամբարելն է այն գիտելիքը, որի կարիքը, կարծում ենք, կունենանք: Մենք դեռևս չենք ուզում դուրս գալ ընդհատակից, հրահրել կամ զայրացնել որևէ մեկին: Քանզի, եթե մեզ ոչնչացնեն, գիտելիքը կմեռնի, գուցե առհավետ: Մենք քաղաքացիների օրինակ ենք ծառայում մեր յուրահատուկ եղանակով. քայլում ենք երկաթգծերի երկայնքով, գիշերում բլուրների լանջերին, և քաղաքի մարդիկ թույլ են տալիս, որ մենք լինենք: Մեզ ժամանակ առ ժամանակ կանգնեցնում և խուզարկում են, սակայն ոչինչ չեն գտնում մեզ մեղադրելու համար: Մեր համայնքի կառուցվածքը ճկուն է, չամրագրված և հատվածական: Մեզնից ոմանք պլաստիկ վիրահատության են դիմում՝ փոխելով

իրենց դեմքը և մատնահետքերը: Այս պահին մեր վիճակը սարսափելի է. սպասում ենք, որ պատերազմը սկսվի և, որքան հնարավոր է, արագ ավարտվի: Թանկ է գինը, այո՛, սակայն այսպես էլ մի բան չէ: Պատերազմից հետո մեզ վրա այլևս որևէ վերահսկողություն չի լինի, մենք ստիպված չենք լինի կրել անտառներում թափառող խեղճուկրակ փոքրամասնության պիտակը: Երբ պատերազմն ավարտվի, հավանաբար կկարողանանք որևէ կերպ օգտակար լինել աշխարհին:

— Դուք իսկապես կարծում եք, որ նրանք այդ ժամանակ կլսեն ձեզ:

— Եթե ոչ, ապա ստիպված կլինենք սպասել: Մենք մեր զավակներին կփոխանցենք գրքերը՝ դրանք պատմելով, նրանց էլ, իրենց հերթին, կսովորեցնենք սպասել՝ ուրիշներին պատմելով: Շատ բան կկորչի այդ եղանակով, չեմ վիճում: Սակայն չես կարող մարդկանց ստիպել լսել: Նրանք էլ իրենց ժամանակին պետք է ուշքի գան ու մտածեն, թե ինչ է պատահել, և ինչու է հողը փախչում նրանց ոտքերի տակից: Սա երկար չի կարող տևել:

— Դուք շատ եք:

— Հազարներ: Բոլորս էլ ճանապարհներին, լքված երկաթգծերի հարևանությամբ, արտաքուստ անբան թափառաշրջիկներ ենք, ներքուստ՝ գրադարաններ: Սկզբում ոչինչ ծրագրված չէր: Ամեն մարդ ուներ ինչ-որ գիրք, որը կամենում էր հիշել, և այդպես էլ անում էր: Այնուհետև, մոտ քսան տարիների ընթացքում թափառելով, մենք գտանք միմյանց, կապ հաստատեցինք, ծրագիր կազմեցինք: Ամենակարևոր բանը, որ պետք է սերմանեինք մեր մեջ, այն էր, որ մենք որևէ կարևորություն չէինք ներկայացնում, մենք չպետք է մանրախնդիր լինեինք, չպետք է գերադասեինք մեզ այս աշխարհում ապրող որևէ մեկից: Մենք ավելին չենք, քան գրքերի շապիկներ, այլապես որևէ կարևորություն չունենք: Մեզնից ոմանք ապրում են փոքր քաղաքներում: Թորոյի «Ուոլդենի» առաջին գլուխն ապրում է Գրին Ռիվերում, երկրորդը՝ Մեյն

նահանգի Ուիլյու ազարակում: Մերիլենդ նահանգում մի քաղաք կա, ընդամենը քսանյոթ բնակիչ ունի, և ոչ մի ռումբ երբևէ չի ընկնի այդ քաղաքի վրա: Այն Բերթրան Ռասել անունով մի մարդու էսսեների ժողովածուն է: Ընտրե՛ք այդ քաղաքը, թերթե՛ք էջերը և կտեսնե՛ք, թե որքան շատ էջեր են բաժին ընկնում մեկ մարդու: Եվ երբ մի օր պատերազմն ավարտվի՝ ինչ—որ մի օր գալիք տարիների ընթացքում, այդ գիրքը վերստին կարող է գրվել: Մարդկանց կկանչեն մեկ առ մեկ՝ արտասանելու այն, ինչ իրենք գիտեն, և այդ ամենը կհանձնվի տպագրության մինչև մեկ այլ Մուֆ դարաշրջան, երբ մենք գուցե ստիպված լինենք ողջ այս գրողի տարած գործն անել նորից: Սակայն դա էլ հենց մարդու հրաշալի կողմերից մեկն է. նա երբեք այնքան չի հուսալքվում կամ խորշում, որ հրաժարվի կրկին նույնն անելուց, քանզի շատ լավ գիտի, որ այդ ամենը կարևոր է, և ջանքերն արդարացված են:

— Ի՞նչ ենք անելու այս երեկո,— հարցրեց Մոնթագը:

— Սպասելու ենք,— ասաց Գրեյնջերը,— ապա գետի երկայնքով մի փոքր էլ ենք շարժվելու՝ ապահով լինելու համար:

Նա սկսեց տիղմ ու փոշի լցնել կրակի վրա: Մյուսներն օգնեցին նրան, Մոնթագը՝ նույնպես, և այնտեղ՝ մթության ամայության մեջ, տղամարդիկ մոտեցրին իրենց ձեռքերն ու միասին հանգցրին կրակը:

Նրանք կանգնել էին գետի ափին՝ աստղալից գիշերվա մեջ:

Մոնթագը նայեց իր ջրակայուն ժամացույցի լուսային թվատախտակին: Հինգն էր: Առավոտյան ժամը հինգն էր: Եվս մեկ տարի տկոկալով անցավ մեկ ժամվա ընթացքում. լուսաբացը նրանց սպասում էր գետի հեռավոր ափին:

— Ինչո՞ւ եք վստահում ինձ,— հարցրեց Մոնթագը:

Մթության մեջ մի մարդ շարժվեց:

— Միայն Ձեր տեսքը բավական է: Վերջերս Ձեզ հայելու մեջ չեք նայել: Բացի այդ՝ քաղաքին երբեք չի հուզել մեր

գոյությունը, որպեսզի այսօրինակ մշակված հետապնդում իրականացվի մեզ գտնելու համար: Մեզ պես մի քանի խելագարներ, ովքեր գլուխները լցրել են տաղաչափությամբ, չեն կարող նրանց վնասել, և նրանք գիտեն այդ: Մենք էլ գիտենք, բոլորը գիտեն: Քանի դեռ բնակչության լայն հատվածներ չեն սկսել թափառել՝ մեջբերելով Ազատությունների մեծ խարտիան¹ և Սահմանադրությունը², ամեն բան դեռ կարգին է: Հրկիզողները բավական էին այս ու այնտեղ դա վերահսկելու համար: Այժմ քաղաքի բնակիչները մեզ չեն անհանգստացնում: Սակայն տեսեք՝ ինչ արեցին Ձեզ հետ այսօր:

Նրանք առաջ էին շարժվում՝ գետի երկայնքով գնալով դեպի հարավ: Մոնթագը փորձում էր տեսնել տղամարդկանց դեմքերը, այն ծեր դեմքերը, որ նա հիշում էր կրակի բոցերի հետևում՝ խորշումած և հոգնած: Նա պայծառություն էր փնտրում, որևէ վճիռ, վաղվա օրվա հաղթանակ, որն իր հորիզոնում գրեթե չէր երևում: Նա հավանաբար ակնկալել էր, որ նրանց դեմքերը կլուսավորվեին, կբոցավառվեին այն գիտելիքի պաշարով, որը նրանք կրում էին իրենց մեջ, կբորբոքվեին, ինչպես լապտերները՝ իրենց ներսի կրակով: Սկզբում հենց այդ տպավորությունն էլ ստացել էր, երբ ճամբարի խարույկի լույսն ընկել էր նրանց դեմքերին, սակայն հիմա զգում էր, որ նրանք պարզապես մարդիկ էին, ովքեր երկար ճանապարհ էին հաղթահարել իրենց փնտրածը գտնելու համար, տեսել էին լավ բաների ավերումը և այժմ՝ այս ուշ ժամին, հավաքվել էին՝ սպասելու այն վերջիններին, ովքեր դեռ միանալու էին իրենց, և որևէ կերպ չէին փորձում փչել հանգցնել լապտերները: Նրանց չէր այրում այն մարմաջը, որ

¹ Նկատի ունի Ազատությունների մեծ խարտիան (լատ.՝ Magna Carta Libertatum, անգլ.՝ The Great Charter)՝ Անգլիայի թագավոր Հովհաննես I Անհողինի կողմից 1215 թ. հունիսի 15-ին ստորագրված փաստաթուղթը, որը հետագայում դարձավ Մեծ Բրիտանիայի սահմանադրական-օրենսդրական հիմնարար փաստաթղթերից մեկը:

² Նկատի ունի Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ 1787 թ. սեպտեմբերի 17-ին ընդունված սահմանադրությունը:

այն ամենը, ինչ իրենք կրում էին իրենց հիշողության մեջ, կարող էր սրբազան լույսով բոցավառել գալիք լուսաբացները, նրանք ոչ մի բանում հավատացած չէին՝ բացի այն, որ իրենց խաղաղ աչքերի հետևում գրքերի շտեմարաններ կային, որ այնտեղ սպասում էին գրքերը, որոնց էջերին դեռևս մարդկային ձեռք չէր դիպել, որոնք դեռևս սպասում էին իրենց գնորդներին, ովքեր գալու էին տարիներ անց գուցե, ոմանք մաքուր, ոմանք էլ կեղտոտ մատներով դիպչելու էին իրենց:

Մոնթազը գաղտագողի զննում էր մարդկանց դեմքերը, մինչ նրանք քայլում էին:

— Գրքերի մասին կազմերով մի՛ դատեք,— լսվեց ինչ—որ մեկի ձայնը:

Նրանք բոլորը ցարժաձայն ծիծաղեցին՝ շարունակելով քայլել գետնի վրա:

Ահարկու սուլոց լսվեց, և քաղաքից դեպի երկինք սուրացող ռմբակոծիչները ավելի շուտ անհետացան, քան Մոնթազն ու մյուսները կհասցնեին երկինք նայել: Մոնթազը շրջվեց. ակնդետ նայեց քաղաքին, որ գետի հակառակ կողմում այժմ հեռու, թույլ լույսերի մեջ էր թաղված:

— Կինս այնտեղ է:

— Ցավում եմ: Քաղաքների վիճակը լավ չի լինի հաջորդ մի քանի օրերի ընթացքում,— ասաց Գրեյնջերը:

— Տարօրինակ է: Ես չեմ կարոտում նրան: Տարօրինակ է, բայց որևէ բան զգալու ընդունակ չեմ,— ասաց Մոնթազը,— եթե անգամ մեռնի, միայն հիմա եմ հասկանում, որ չեմ տխրի, կարծում եմ՝ չեմ տխրի: Այսպես ճիշտ չէ: Ինձ հետ ինչ—որ բան այն չէ:

— Լսե՛ք,— ասաց Գրեյնջերը՝ գրկելով Մոնթազի ուսը և քայլելու ընթացքում նրա ճանապարհից թփերը հեռացնելով, որպեսզի կարողանա անցնել:— Ես դեռ երեխա էի, երբ պապս մահացավ. նա քանդակագործ էր: Շատ բարի մարդ էր, մեջը մեծ սեր կար աշխարհին տալու համար: Նա օգնում էր մաք-

րելու մեր քաղաքի ետնախորշերը, մեզ համար խաղալիքներ էր պատրաստում և հազար ու մի բան էր հասցնում անել իր կյանքում. ձեռքերը միշտ զբաղված էին: Երբ պապս մահացավ, ես հանկարծ հասկացա, որ ամենևին էլ նրա համար չէի լալիս, այլ նրա արածների համար: Լալիս էի, որովհետև նա այլևս չէր անելու այդ ամենը, նա այլևս փայտի կտորից ինչ–որ նոր բան չէր քանդակելու, չէր օգնելու մեզ ընտանի ու վայրի աղավնիներ պահել ետնաբակում, չէր սովորեցնելու իր պես ջուֆակ նվագել, իր պես կատակներ անել: Նա մեր մի մասն էր և երբ մահացավ, մեր մեջ ունեցած նրա մի մասնիկն էլ մեռավ, էլ ոչ ոք չկար, որ այդ ամենը կարողանար անել ճիշտ այնպես, ինչպես ինքն էր կարողանում անել: Նա մեծ անհատականություն էր: Կարևոր մարդ էր: Ես նրա մահը երբեք էլ չեմ հաղթահարել: Հաճախ եմ մտածում՝ որքան գեղեցիկ քանդակներ չծնվեցին, որովհետև նա մեռավ: Քանի–քանի կատակներ են պակասում աշխարհին, քանի–քանի աղավնիներ չեն զգում նրա մատների ջերմությունը: Նա կաղապար էր տալիս աշխարհին: Նա աշխատի նոր բաներ ուներ տալու: Աշխարհը սնանկացավ. միլիոնավոր գեղեցիկ արարքներ դարեցին պատահելուց այն գիշեր, երբ նա մեռավ:

Մոնթազը քայլում էր լռության մեջ:

— Միլի,— շշնջաց,— Միլի:

— Ինչ:

— Կինս, կինս: Խեղճ Միլի, խեղճ Միլի: Ոչինչ չեմ կարողանում հիշել: Մտածում եմ նրա ձեռքերի մասին, սակայն չեմ տեսնում, թե դրանք որևէ բան են անում: Դրանք պարզապես կախված են նրա երկու կողքերից կամ ընկած են ծնկներին՝ մատների արանքում ծխախոտ, ոչինչ ավելին:

Մոնթազը շրջվեց ու հետ նայեց:

— Դուք ինչ եք տվել քաղաքին, Մոնթազ:

— Մոխիր:

— Ուրիշներն ինչ են տվել միմյանց:

— Ոչինչ:

Գրեյնջերը Մոնթագի հետ կանգ առել ու հետ էր նայում:

— Ամեն ոք պետք է իր հետևում ինչ-որ բան թողնի, երբ մեռնում է, ասում էր պապս: Երեխա կամ գիրք կամ տուն, մի պատ, որ ինքն է կառուցել, մի զույգ կոշիկ, որ կարել է: Կամ պարտեզ, որ ինքն է տնկել: Ինչ-որ բան, որին ինչ-որ կերպ հպվել են մատներդ, կամ մի բան, որտեղ կթափառի հոգիդ, երբ մեռած լինես, և երբ մարդիկ նայեն այդ ծառին կամ ծաղկին, որ դու ես տնկել, ուրեմն դու այնտեղ ես: Կարևոր չէ, թե ինչ ես անում, պապս էր ասում, կարևորն այն է, որ կարողանաս փոխել ինչ-որ բան այն վիճակից, որպիսին էր այդ ինչ-որ բանը քո հպվելուց առաջ, և հպվելուցդ հետո դարձնես այն քեզ նման, երբ մատներդ արդեն հեռացրած լինես դրանից: Մարգագետնի խոտերը պարզապես կարճացնող մարդու և իսկական պարտիզպանի տարբերությունը հենց այդ հպումն է՝ ասում էր: Մարգագետնի խոտերը կարճացնող մարդը նույն հաջողությամբ, որով հայտնվել է այնտեղ, կարող էր այնտեղ ամենևին էլ եղած չլինել, մինչդեռ պարտիզպանն այնտեղ կլինի դեռ շատ երկար, նույնիսկ երբ ինքն արդեն չլինի:

Գրեյնջերը ձեռքը հեռացրեց Մոնթագի ուսից:

— Պապս մի անգամ ինձ Վ-2 հրթիռներին վերաբերող ֆիլմ ցուցադրեց, հիսուն տարի առաջ էր: Դու երբևէ ատոմային ռումբի՝ գետնից երկու հարյուր մղոն վեր բարձրացող սնկանման ամպ տեսել ես: Մի փոքրիկ ասեղի հարված երկրակեղևին, կարծես թե ոչինչ է, մինչդեռ իր հետևից վայրի ավերածություններ է թողնում: Պապս ավելի քան տասն անգամ դիտել է այդ ֆիլմը և հույս ուներ, որ մի օր մեր քաղաքները կբացեն իրենց դարպասներն ու ավելի շատ բնություն ներս կթողնեն իրենց տարածք, ավելի շատ կանաչ, ավելի շատ հող՝ հիշեցնելու համար մարդկանց, որ մեզ երկրի վրա քիչ տարածք է վիճակված. չէ՛ որ մենք գոյատևում ենք վայրի բնության մեջ, որը կարող է հետ վերցնել այն ամենը, ինչ տվել է մեզ, և դա կարող է անել հեշտությամբ՝ մի փչելով միայն, կամ ծովի հետ լուր ուղարկելով, որ մենք այդքան էլ

մեծ չենք: Մինչ մենք մոռանում ենք, թե որքան մոտ է մեզ այդ վայրիությունը գիշերվա մեջ, ասում էր պապս, այն մի օր կգա ու կառերեսվի մեզ հետ, որովհետև մենք մոռացած կլինենք՝ որքան սարսափելի և իրական այն կարող է լինել: Հասկանում եք:— Գրեյնջերը դարձավ դեպի Մոնթագը:— Պապս արդեն հիսուն տարի է՝ չկա, սակայն եթե Աստծու կամոք բացելու լինեիք գանգս, ուղեղիս ծալքերում նրա մատնահետքերը կտեսնեիք ակոսված: Նա հպվել է ինձ: Ինչպես ասացի, նա քանդակագործ էր:— Ատում եմ ստատուս քվո անունով հռոմեացուն: Աչքերդ զարմանքով լցրու,— ասում էր ինձ,— ապրի՛ր այնպես, ասես տասը վայրկյան անց մեռնելու ես: Տե՛ս աշխարհը: Այն ավելի երևակայական է, քան քո մեջ ապրող ցանկացած երազանք, որի համար վճարում են գործարանները: Երաշխիքներ մի՛ ակնկալիր, ապահովություն մի՛ խնդիր: Այդպիսի կենդանի երբեք չի եղել: Եթե նույնիսկ լիներ, նման կլիներ ամեն օր, ամեն պահ ծառից գլխիվայր կախված հսկա համրուկի, որը քնած է անցկացնում իր ողջ կյանքը: Գրողի ծոցն ուղարկիր քո մեջ ապրող այդ կենդանուն,— ասում էր նա,— թափահարի՛ր ծառը և վայր գլորիր հսկա համրուկին:

— Նայե՛ք,— ասաց Մոնթագը:

Այդ պահին պատերազմը սկսվեց և նույն պահին էլ ավարտվեց:

Հաջորդ վայրկյանին արդեն Մոնթագի շուրջը հավաքված մարդիկ չէին կարող ասել՝ արդյո՞ք նրանք իսկապես տեսել էին ինչ—որ բան: Գուցե լույսի վայրկենական բոցավառում էր կամ լույսի սրընթաց շարժում երկնքում: Գուցե ռաբակոծիչները տասը, հինգ կամ մեկ մղոն բարձրության վրա բոլորը միասին հենց այս պահին վար նետեցին մեկական ռումբ, ինչպես գերմարդ սերմնացանի ափից նետված ցորեն, և այնպիսի վայրի արագությամբ, որ ռումբերը երկնքում կախված լինելու պատրանք ստեղծեցին, որ ընդամենը վայրկյան անց նետվեն վաղորդյան քաղաքի վրա, որը ռաբակոծիչները ռումբեր նետելու պահին իսկ իրենց հետևում թողած կլինեն:

Ռմբակոծությունն, իր բոլոր նպատակներով և ողջ դիտավորությամբ հանդերձ, ավարտվել էր: Ռմբակոծիչները թիրախը նկատելուն պես ժամում հինգ հազար մղոն արագությամբ արձակած ռումբերից շատ հեռու էին արդեն. արագ, ինչպես գերանդու մեկ հարվածի խշռոց, պատերազմն ավարտված էր: Ռմբարկու հրթիռների՝ ռումբեր արձակելու մեկնարկն ու պատերազմի ավարտը մեկ եղավ: Հիմա, ամբողջ երեք վայրկյանների ընթացքում, հսկա, դարակազմիկ երեք վայրկյաններ մարդկության պատմության մեջ, նախքան ռումբերը կհարվածեին երկրակեղևին, թշնամու նավերն անհետացան երկնքում, աշխարհի տեսանելի տիրույթից անհետացան, ինչպես զենքից արձակած փամփուշտներ, ինչին վայրենի նախամարդը չէր կարող հավատալ, քանզի դրանք անտեսանելի էին, սակայն վայրենու սիրտը կճեղքվեր, մարմինը առանձին, ընդհատ շարժումներով կտապալվեր հողին, կարկամած արյունը կվաթեր ազատ տարածության մեջ, ուղեղն ի մի կբերեր թանկագին հուշերի մի քանի պատանիկներ, և նա ապշահար կդադարեր լինելուց:

Հավատալու բան չէր ձեռքի ընդամենը մի շարժումի տևողությունն իր մեջ ամփոփած այս ամենը: Հեռվում փռված քաղաքի վրա Մոնթազը մետաղյա բռունցքի չափ ինչ-որ բան տեսավ, որ թռչնի թևաբախության՝ հեռվից եկող թույլ աղմուկով անհետացավ ինչ-որ տեղ. հիմա կհետևեր ռմբակոծիչների իրեն ծանոթ սուլոցը, եթե ինքն էլ քաղաքում լիներ: Մոնթազը միայն ենթադրել կարող էր, թե ինչ էր լինելու այս ամենից հետո, ինչպես էր կազմալուծվելու ամեն բան, չէր մնալու քարը քարի վրա, ամեն բան կործանվելու էր, մահ էր լինելու:

Մոնթազը մի պահ ռումբերը մտքով երկնքում պահեց՝ ձեռքերով անօգնական ձգվելով դեպի դրանք:

— Փախե՛ք,— բղավելով իր խոսքն ուղղեց Ֆաբերին: Բլարիսին: Միլդրեդին:— Դուրս պրծե՛ք, դուրս այդտեղից:— Սակայն Բլարիսն ախր մեռած էր. հիշեց: Ֆաբերը վաղուց արդեն քաղաքում չէր. առավոտյան ժամը հինգի ավտոբուսով

հեռավոր հովիտների միջով ուղևորվել էր դեպի երկրի խորքերը՝ դեպի մի ավերածությունից մյուսը: Թեև ավերածությունը դեռ չէր պատուհասել քաղաքին, դրա զգացողությունն արդեն զգացվում էր օդում իր ողջ հավաստիությամբ, ինչպես ցանկացած մարդու էր հայտնի: Ավտոբուսը չէր հասցնի ևս հիսուն յարդ անցնել մայրուղով, երբ դրա երթուղային վերջնականգառն այլևս անհմաստ կլիներ, իսկ մեկնակետը մետրոպոլիսից վերածված կլիներ աղբանոցի:

Իսկ Միլդրեդը...

Փախիր այդտեղից, վազիր:

Նա տեսավ Միլդրեդին հյուրանոցի իր սենյակում՝ ինչ–որ տեղ կես վայրկյանի մեջ կանգնած՝ ռումբերից մեկ յարդ, մեկ ֆուտ, հիմա արդեն մեկ դյույմ հեռավորության վրա: Նա տեսավ Միլդրեդին՝ հսկա պատի առջև հակված, որի վրա գույների ու շարժումների խաղ կար, որի վրա շաղակրատում ու դատարկաբանում էին ազգականները, տալիս նրա անունն ու ժպտում նրան և ոչինչ չէին ասում ռումբի մասին, որը գտնվում էր հյուրանոցի տանիքից մեկ դյույմ, կես դյույմ, հիմա արդեն մեկ քառորդ դյույմ հեռավորության վրա, մինչ նա հակվել էր հեռուստապատին ու այնպես կլանված էր նայում էկրանին, ասես այնտեղ կարող էր բացահայտել իր անքուն, անհանգիստ գիշերների գաղտնիքը: Միլդրեդը մտահոգ առաջ էր հակվել, նյարդային, ասես սուզվելու, նետվելու և այդ վխտացող գույների անսահմանությունն ընկնելու փորձ աներ, իր պայծառ երջանկության մեջ խեղդվելու փորձ:

Առաջին ռումբը հարվածեց:

— Միլդրեդ:

Գուցե, ո՞վ կարող է երբևէ ճշմարտությունն իմանալ, գուցե հսկայական հեռարձակման կայանները իրենց լուսային ու գունային ճառագայթներով, իրենց դատարկաբանությամբ և շաղակրատանքով առաջինն էին, որ մոռացության գիրկն անցան:

Մոնթազը թրմփոցով վայր ընկավ, գլորվեց, տեսավ կամ զգաց կամ երևակայեց, թե տեսնում կամ զգում է, թե ինչպես պատերին խաղացող գույների արտացոլանքը մարեց Միլդրեդի դեմքին, լսեց նրա ճիչը. ժամանակի մեկ միլիոներորդ միավորի մեջ կինը գուցե հասցրեց տեսնել հայելու մեջ անդրադարձած իր դեմքը, որն ամենևին էլ բյուրեղյա գնդի մեջ արտացոլված դեմք չէր, այլ սարսափելի դատարկ մի դեմք, որ այժմ սենյակում, բոլորովին մենակ, ոչնչի չհպվելով, քաղցած, ինքն իրեն էր լափում, այնպես, որ վերջապես կարողացավ ճանաչել իրեն, տեսնել այն, ինչ իրականում կար: Կինը գուցե վեր նայեց առաստաղին ճիշտ այն պահին, երբ այն և ողջ հյուրանոցային համալիրը փլվեցին նրա վրա՝ նրան էլ միլիոնավոր ֆունտ կշռող աղյուսների, մետաղի, գիպսի ու փայտի հետ վար շարտելով դեպի մրջնանոցը, ուր իր պես մարդիկ էին թափված նկուղներում, այնտեղ, որտեղ պայթյունը վերջնականապես կազատեր իրեն նրանց մարմինների ծանրությունից նույնքան անխոհեմ կերպով, որքան անխոհեմ որ տիրացել էր դրանց:

— Հիշում եմ:— Մոնթազը մատները խրել էր հողի մեջ:— Հիշում եմ: Չիկագո: Չիկագոյում էր, շատ վաղուց: Միլին և ես: Ահա թե որտեղ ենք հանդիպել: Հիմա հիշում եմ: Չիկագո: Շատ վաղուց էր:

Գետի հակառակ ափին՝ ներքևում, ուր քաղաքն էր փռված, պայթյունը ցնցեց երկինքը. մարդիկ իրար մոտ շարված դոմինոյի խաղաքարերի նման իրար վրա թափվեցին, գետը ցնցվեց, ջրի հսկայական շիթեր վեր ելան, ծառերը խոնարհվեցին հուժկու փոշու ամպի առաջ և սգաձայն խշռոցով ուղեկցեցին դեպի հարավ փչող քամուն: Ինչ-որ ուժ Մոնթագին գետին տապալեց, պիրկ փակված աչքերով նա կուչ եկավ: Թարթեց մեկ անգամ: Այդ վայրկյանին երկնքում սուրացող ռումբերի փոխարեն տեսավ քաղաքը: Ռումբերն ու քաղաքը ասել փոխել էին իրենց տեղերը: Եվս մի անհնարին թվացող վայրկյան, և քաղաքը, անճանաչելիորեն այլակերպված, այնտեղ էր՝ ավելի երկնուղեշ, քան երբևէ

եղել էր, ավելի երկնամուխ, քան մարդը կկարողանար կառուցել այն, քաղաքը վեր էր խոյանում քանդված բետոնի փշրանքների, այստեղ-այնտեղ փայլվող մետաղաջարդոնի շեղջերի մեջ՝ որպես ձյունահյուսի տակ մնացած միլիոնավոր գույների, միլիոնավոր տարօրինակությունների մի հսկայական որմնանկար, որտեղ դուռ ու պատուհան, գազաթ ու հատակ վեր ու վար իրար էին խառնված. հետո գլորվեց, վայր ընկավ ու անշնչացավ:

Մահվան շունչն իջավ այնտեղ, ուր քաղաքն էր եղել:

Մոնթագը դեռ ընկած էր գետնին. աչքերն անկարող էր թարթել, այնքան հաստ էր դրանց վրա իջած փոշին, ցեմենտի բարակ խոնավ շերտ էր նստել փակ բերանի մեջ: Հևալով և լաց լինելով հիմա կրկին ասես բարձրաձայն մտածում էր՝ հիշում եմ, հիշում եմ, էլի ինչ-որ բան եմ հիշում: Ինչ է այդ: Այո՛, այո՛, Ժողովողի և Հայտնության մի մասը: Գրքի մի մասը, դրա մի մասը, արագ, հիմա գործել է պետք, քանի դեռ այն չի մոռացվել, քանի դեռ ցնցումը չի մարել, քանի դեռ քամին չի հանդարտվել: Ժողովողի գիրքը: Այստեղ: Նա կրկին ու կրկին արտասանում էր նույն բառերը, կամացուկ, քթի տակ, այնտեղ՝ դողացող հողին ընկած, նա բառերը շատ անգամներ կրկնեց, և դրանք կատարյալ հնչեցին առանց ջանքերի անգամ, «Դենըմ» ատամի մաքրող միջոցների ուղեկցությամբ չէ այլևս, միայն քարոզիչն էր, միայն նա էր իր մտապատկերում, որտեղից նայում էր իրեն...

— Ահա և վերջ,— ասաց մի ձայն:

Մարդիկ հնասպառ, ինչպես ափ նետված ձկներ, ընկած էին խոտերին: Նրանք կառչել էին գետնին, ինչպես երեխաներն են ծանոթ իրերին կառչում. կարևոր չէ՝ որքան ցուրտու անկենդան, կարևոր չէ՝ ինչ էր պատահել, և ինչ կպատահեր, նրանք իրենց մատները մխրճել էին կեղտի մեջ, նրանք բոլորը գոռում էին, որպեսզի նրանց թմբկաթաղանթները չպատռվեին, որպեսզի չկորցնեին իրենց ողջամտու-

թյունը, բոլորի բերանները բաց էին, Մոնթագիւնը՝ նույնպես, նա գոռում էր նրանց հետ, այս ամենն ասես բողոք էր քամու դեմ, որ պատռել էր նրանց դեմքերը շուրթերից վերև, քամին, որի պատճառով արյունահոսում էին նրանց քթերը: Մոնթագը տեսնում էր, թե ինչպես էր իջնում հսկայածավալ փոշին, և ինչպես էր հսկայական լռությունը փռվում նրանց աշխարհի վրա: Եվ այնտեղ պառկած՝ նրան թվում էր, ասես տեսնում էր ամեն մի փոշեհատիկ, խոտի ամեն մի ծիլ. նա ասես լսում էր ամեն մի ճիչ, ամեն մի գոչյուն ու շշուկ, որ վեր էր բարձրանում աշխարհի ընդերքից հիմա: Լռությունը մանրամաղ փոշու տեսքով իջել էր ամեն բանի վրա, և այժմ նրանք կարող էին վայելել իրենց շուրջը նայելու, այդ օրվա իրականությունը սեփական զգայարաններով ճանաչելու հաճույքը:

Մոնթագը նայեց գետին: Մենք կգնանք ափի երկայնքով: Նա նայեց հին երկաթգծերին: Կամ կգնանք այդ ուղղությամբ: Կամ էլ կքայլենք մայրուղով հիմա, ու նաև մեզ ժամանակ կտանք եղածն իր ողջ լրջությամբ ըմբռնելու: Եվ մի օր, երբ այս ամենը մեր մեջ ամփոփած լինենք, այն դուրս կգա մեր ձեռքերի միջից և մեր բերանների: Եվ դրա մեջ շատ բաներ սխալ կլինեն, սակայն մի ծանրակշիռ մաս էլ ճիշտ կլինի: Մենք պարզապես կսկսենք քայլել այսօր և տեսնել աշխարհը ու տեսնել, թե ինչպես է աշխարհը քայլում մեր շուրջը, ինչպես է խոսում, տեսնել, թե ինչպիսին է այն իրականում: Հիմա ես ամեն բան եմ ուզում տեսնել: Եվ գուցե աշխարհից ոչինչ էլ իմը չլինի, երբ իմ միջով անցկացնելու լինեմ այն, ինչ-որ ժամանակ անց, երբ իմ ներսում ամեն բան ի մի գա, կուտակվի մեկը մյուսի վրա, այդ ես կլինեմ: Նայեք ձեր շուրջը ծավալվող աշխարհին, Աստված իմ, տեր իմ Աստված, նայեք այնտեղ գտնվող աշխարհին, որ ինձնից դուրս է՝ այնտեղ, դրսում, իմ դեմքից այն կողմ, և այդ աշխարհին իսկապես դիպել կարենալու միակ ձևն այն է, որ այն պետք է կարողանամ տեղավորել այնտեղ, որտեղ ի վերջո ես եմ, երբ այն կվերածվի իմ արյանը և ամեն օր տասնյակհազարավոր անգամներ կմղվի

ողջ մարմնովս մեկ: Ես կկառչեմ դրան, որպեսզի այլևս չփախչի
ինձնից: Մի օր ավելի ամուր կկառչեմ աշխարհից: Հիմա միայն
մի մատո եմ դրել դրա վրա: Սա արդեն մեկնարկ է:

Քամին մարեց:

Մյուս մարդիկ ինչ-որ ժամանակ մնացին պառկած վա-
ղորդայնի քաղցր քնի մեջ: Նրանք դեռևս պատրաստ չէին վեր
կենալու և սկսելու այդ օրվա իրենց պարտականությունները,
խարոյկ վառելն ու ճաշ պատրաստելը և այդ պարտականու-
թյունների այնպիսի մանրամասներ, որոնք ենթադրում են
ոտքերի և ձեռքերի անմիջական մասնակցության հազարա-
վոր հաջորդականություններ:

Նրանք դեռ պառկած էին և թարթում էին իրենց փոշոտ
թարթիչները: Սկզբում լսելի էին նրանց հևոցները, որոնք
շուտով նոսրացան, ապա խաղաղվեցին:

Մոնթագը վեր կացավ:

Առաջ չչարժվեց այնուամենայնիվ: Մյուսները հետևեցին
նրա օրինակին: Արևը թույլ կարմիր եզրաշերտով հավել էր
մթամած հորիզոնին: Օդը սառն էր ու վերահաս անձրև էր
բուրում:

Գրեյնջերը լուռ վեր կացավ, փորձեց զգալ սեփական
ձեռքերն ու ոտքերը՝ քթի տակ անդադար հայհոյելով, դեմքն
արցունքներով ողողված: Քստքստացնելով քայլեց դեպի
գետն ու նայեց հոսանքի հակառակ ուղղությամբ:

— Ամեն բան գետնին է հավասարվել, — երկար դադա-
րից հետո ասաց նա, — քաղաքն ասես փոշու կույտ լինի: Էլ
չկա, — ապա՝ երկար լռությունից հետո, ավելացրեց, — տես-
նես քանի՛ մարդ գիտեր, որ սա պատահելու է: Տեսնես քանի՛
մարդ զարմացավ: Եվ ողջ աշխարհում տեսնես քանի՛ քաղաք է
մահանում այսպես: Մեր երկրում քանի՛սն են այսպես ոչնչա-
նում: Հարյուր, հազար:

Ինչ-որ մեկը լուցկի վառեց և կրակը մոտեցրեց իր գրպա-
նից հանած չոր թղթին, մտքրեց այն խոտերի ու տերևների
կույտի տակ, իսկ քիչ անց ոստեր ավելացրեց, որոնք թաց էին

և այրվում էին՝ թշուղտ արձակելով, սակայն ի վերջո բոցն ուժեղացավ, և վաղ առավոտյան վառած խարույկը մեծացավ արևի ծագելուն զուգահեռ, իսկ մարդիկ գետից այն կողմ քաղաքին ուշադիր նայելուց կտրվեցին ու անճարակների նման ձգվեցին դեպի կրակը՝ առանց որևէ բան ասելու: Արևը լուսավորեց նրանց ծոծրակները, երբ հակվեցին դեպի կրակը:

Գրեյնջերը բացեց մոմլաթի մի կտոր, որի մեջ խոզապուխտ կար:

— Մի կտոր բան ուտենք: Հետո հետ կդառնանք ու կքայլենք գետի հակառակ ուղղությամբ: Այնտեղ մեր կարիքն ունեն:

Ինչ—որ մեկի մոտ փոքրիկ թավա հայտնվեց, խոզապուխտը թավայի մեջ դրեցին, և թավան տեղավորեցին կրակին: Հաջորդ վայրկյանին ապուխտն արդեն ճարճատյունով տապակվում էր՝ թշուղտով ու բույրով լցնելով առավոտյան օդը: Տղամարդիկ լուռ հետևում էին այս արարողությանը:

Գրեյնջերը նայեց կրակին:

— Փյունիկ,— ասաց նա:

— Ինչ:

Քրիստոսից առաջ մի անհեթեթ անիծյալ թռչուն կար՝ փյունիկ անունով: Մի քանի հարյուր տարին մեկ անգամ խարույկ էր վառում ու հրկիզում էր ինքն իրեն: Պետք է որ մարդուն ամենամոտ կենդանի էակը լինի, քանզի ամեն անգամ, երբ ինքնահրկիզումն ավարտվում էր, մոխիրների միջից հառնում էր, վերածնվում: Ասես նույն բանն անելիս լինենք, ամեն անգամ՝ նույն բանը, սակայն մենք մի յուրահատկություն ունենք, որ փյունիկը չունեք: Մենք հասկանում ենք, գրողը տանի, թե ինչպիսի անհեթեթ բան արեցինք հենց նոր: Մենք գիտակցում ենք, թե ինչ անիծյալ անհեթեթություններով ենք զբաղված եղել հազարավոր տարիների ընթացքում, և քանի որ գիտենք, հասկանում ենք ողջ լրջությունն այն ամենի, ինչը միշտ մեզ հետ է, մեր կողքին, գիտենք, որ մի օր գուցե հրաժարվենք ողջակիզման այդ անիծյալ խարույկները վառելուց և դրանց մեջ նետվելուց: Դրա համար էլ ընտրում

ենք ավելի շատ մարդկանց, նրանց, ովքեր կհիշեն, ամեն սերնդից ընտրում ենք մարդկանց, որ հիշեն:

Նա թավան վերցրեց կրակի վրայից, թողեց՝ խոզապուխտը մի փոքր սառչի, և նրանք դանդաղ, մտազբաղ սկսեցին ուտել:

— Իսկ հիմա եկեք բարձրանանք գետն ի վեր,— ասաց Գրեյնջերը,— և մտահան չանեք ամենակարևորը. դուք որևէ կարևորություն չեք ներկայացնում, դուք ոչ մեկը չեք: Այն բեռը, որ մենք կրում ենք մեզ հետ, մի օր գուցե պետք գա ինչ—որ մեկին: Սակայն նույնիսկ այն ժամանակ՝ շատ վաղուց, երբ գրքերը մեր ձեռքին էին, մենք չէինք կարողանում գործածել այն, ինչ գտնում էինք դրանց մեջ: Մենք միայն վիրավորում էինք մեռյալներին: Մենք թքում էինք բոլոր այն խեղճուկ-րակների շիրիմներին, ովքեր մեռել էին մեզնից առաջ: Հաջորդ շաբաթների, ամիսների և նույնիսկ տարիների ընթացքում մենք բազմաթիվ միայնակ մարդկանց կհանդիպենք: Եվ երբ նրանք հարցնեն մեզ, թե մենք ինչ ենք անում, դուք կարող եք ասել՝ մենք հիշում ենք: Հենց այսպես մենք կկարողանանք հաղթել և երկար պահել այդ հաղթանակը: Եվ մի օր մենք այնքան շատ բան հիշելիս կլինենք, որ կկառուցենք մարդկության պատմության մեջ ամենամեծ գրողի տարած դիակիզարանն ու կայրենք այնտեղ բոլոր պատերազմները: Գնանք հիմա, մենք պետք է հայելիների գործարան կառուցենք և ողջ հաջորդ տարվա ընթացքում միայն հայելիներ արտադրենք և երկար ինքներս մեզ նայենք դրանց մեջ:

Նրանք ավարտեցին ուտելն ու հանգցրին կրակը: Լուսացող օրը վարդագունել էր, ասես մի հսկայական լապտերի պատրույգ այրվելիս լիներ: Թռչունները, որ թռել հեռացել էին, հիմա եկել ու կրկին բնավորվել էին ծանոթ ծառերի մեջ:

Մոնթագը սկսեց քայլել, և մի քանի վայրկյան անց զգաց, որ մյուսները, որ հետ էին մնացել, հիմա հյուսիս էին քայլում: Զարմացավ: Մի կողմ քաշվեց, որպեսզի Գրեյնջերին ճանապարհ տա, սակայն Գրեյնջերը նայեց նրան և գլխի շարժումով

նշան արեց, որ առաջ անցնի: Մոնթազն առաջ ընկավ: Նայեց գետին, ապա՝ երկնքին, հետո կրկին հայացքն իջեցրեց, և այս անգամ սևեռուն նայեց ժանգոտ երկաթգծերին, որոնք վերադառնում էին այնտեղ, ուր ազարակներն էին, չոր խոտով լեցուն մարագները, ուր քաղաքից վերադառնալիս շատ մարդիկ էին եղել, անցել էին այդ նույն ճանապարհով լուսնկա գիշերներին: Ավելի ուշ, եթե ոչ մեկ ամսից, ապա գոնե մի քանի ամիս անց նա կրկին միայնակ կքայլեր այս ճանապարհներով, կգնար այնքան, մինչև հանդիպեր մարդկանց:

Սակայն այսօր նրանք դեռ շատ երկար էին քայլելու՝ մինչև կեսօր, և եթե հիմա տղամարդիկ լուռ էին, այդ նրանից էր, որ հիմա ամեն բանի շուրջ նորից պետք է ծանրակշիռ խորհեին, բացի այդ՝ շատ բան ունեին հիշելու: Գուցե կեսօրին մոտ, երբ արևը նրանց գլխավերևում լիներ, տաքացներ նրանց, նրանք սկսեին խոսել կամ արտասանեին այն բառերը, որոնք փորձում էին հիշել՝ վստահ լինելու համար, որ դրանք այնտեղ էին, բացարձակ վստահ լինելու համար, որ դրանք ապահով էին իրենց մեջ: Մոնթազը զգաց, թե ինչպես բառերը սկսեցին թեթև շարժվել, ապա եռալ, եփ գալ իր ներսում: Երբ իր հերթը գար, ինչ էր ասելու, ինչ կարող էր առաջարկել այսպիսի մի օր ուղևորությունը փոքր-ինչ ավելի դյուրին դարձնելու համար: Ամեն բան իր ժամանակն ունի: Կործանվելու ժամանակներ են լինում, լինում են նաև վերընձյուղվելու ժամանակներ: Լռելու և խոսելու ժամանակներ! Այո՛, ճիշտ է այս ամենը: Սակայն էլ ինչ: Ինչ-որ բան պակասում է: Ինչ-որ բան...

«Գետի այս կողմում և այն կողմում կյանքի ծառ կար, որ տասներկու կերպ պտուղ էր բերում. ամեն ամիս տալիս էր իր պտուղը, և այն ծառի տերևը բժշկում էր հեթանոսներին»²:

«Այո՛, — մտածեց Մոնթազը, — ահա թե ինչ կմտապահեմ կեսօրվա համար: Կեսօրվա համար: Երբ քաղաք հասնենք»:

¹ Ըստ Ժողովողի գրքի՝ 3.1-8:

² Հայտնություն 22.2:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿ

Սալամանդր 7

ԵՐԿՈՒ

Մաղ և ավազ 89

ԵՐԵՔ

Հրկիզում 141

RAY BRADBURY
FAHRENHEIT

451

A novel

Translated from English by
LUSINE HAROYAN

ՌԵՅ ԲՐԵԴԲՐԻ
ՖԱՐԵՆՀԱՅԹ

451

Վեպ

Թարգմանությունն անգլերենից՝
ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՅԱՆԻ



Հրատարակչության տնօրեն՝	ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Հրատարակչության խմբագիր՝	ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր՝	ՄԱՐԻԱՄ ԿԱՆԱՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝	ՆՎԱՐԴ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Լեզվական խմբագիր և սրբագրիչ՝	ԱԶՆԻՎ ՆԱՍԼՅԱՆ
Շապիկի ձևավորումը՝	ԱՐԱՐԱՏ ՄԻՆԱՍՅԱՆԻ
Հանակարգչային էջադրումը՝	ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 84 × 108 1/32: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 6,5 տպ. մամուլ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒՄՅԱՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

<https://1915.info>